



33(33)
5-98





461

93/55/, Եզանցան Հ.

Ե-13 | Ագրարային հարա-

ժամանելուն ները իրանում

Դիմումը կամաց է:

Գ-13, 04*

2

-

-

-



АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
СЕКТОР ВОСТОКОВЕДЕНИЯ

Г. М. ЕГАНЯН

АГРАРНЫЕ ОТНОШЕНИЯ
В ИРАНЕ
ВО ВТОРОЙ ПОЛОВИНЕ XIX ВЕКА

ИЗДАТЕЛЬСТВО АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1976

ՀԱՅՈՒԹԻՒՆ ՍՈՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ

ԱՐԵՎԵԼԱԳԻՑՈՒԹՅԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ


33(55)

Ե - 13

Հ. Մ. ԽԳԱՆՑԱՆ

ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
Ի Բ Ա Ն Ո Ւ Մ
XIX ԳԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ

46/



ՀԱՅՈՒԹԻՆ ՍՈՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՑՈՒԹՅԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԵՐԵՎԱՆ

1970

Գրքում քննության մեջ առկա հրկորչ էնսի Ռյանի սոցիոլ-տեսաբանական կյանքում տեղի ունեցած փոփոխությունները, առարկերից և մուսավորման ձևերի ու ժամանելու, հրկորչ ազգայտային համբային կցորդի, ապրանքահնորի արտահանման շահայի և կապիտալի ներդրման պարագաներ պատճենահանր, Մաներամանելուն լրացրածություն մեջ իրականան անուստիւտ մեջ կապիտալիստական հարաբերությունների թափանցման հորցերը, ինչպես նաև Իրանի ազգայտային հարաբերություններում տեղի ունեցած նոր անզարդեկը:

ՆՈՐ ՏԵՂԱԾԱՐԺԵՐ ԽՐԱՆԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ
ԿԸԱՆՔՈՒՄ

Իրանի գյուղատնտեսության մեջ կապիտալիստական հարաբերությունների ներթափառնցումը սկսվում է XIX դարի կեսերից։ Հողատիրության կապիտալիստական ձևերը և գյուղացիության կապիտալիստական շահագործումը, թեկուց սազմեային վիճակում, մուտք են գործում երկրի տնտեսության մեջ, իսկ նրա ներգրավումը համաշխարհային առևտուրի ոլորտը իր հնա բերում է գյուղատնտեսության ապրանքագնացում և նրա եկամտաբերության աճ, որի հետանքով և բարձրանում է հողի գինը. Առրաջնայի ավյաններով ՅՅ սարգա ընթացքում գյուղերի գինը աճում է մոտ 10 անգամ¹։

Հողագործության ասպարեզում այդպիսի գործոխուժությունը փաստորեն կապիտալ ներդրման նոր հորիզոններ բացեց և առևտուրական բուրժուազիայի ներկայացուցիչները սկսեցին մեծ հետարրըռություն երևան բներել զննի հողը, քանի որ այն շաշափելի եկամուտների աղբյուր էր գառնում. Գյուղատնտեսության մեջ ապրանքային արտադրության զարգացման հետ զուգահեռ կալվածատերերը իրենց բաժիններ և այլ հարկերը սկսեցին գյուղացիներից պահանջել դրամի ձևով։ Պետք է նշել, սակայն, որ այս վերջինը դեռևս գերիշխող չէր, քանի որ

¹ Агролет, Минист. Алю шах, Александрополь, 1909, стр. 140.

թեամբերային ռենտան շարունակվում էր լայնորեն կիրառվել:

XIX դարի նրկորորդ կեսի Իրանի սոցիալ-ռենտեական վիճակի ռեսունասիրությունը ցույց է տալիս, որ զբամական հարաբերությունների զարգացումը և Հոգի հկամարքի թյան աճը Հոգի նկատմամբ հետաքրքրաթյուն առաջ բերեցին բաղարային դասերի, Հատկապես առևտրականների ու պաշտոնյաների շրջաններում:

Հայտնի է, որ զեռու արդ ժամանակ Իրանում արդյունաբերական ձեռնարկությունները չկային, ազգային արդյունաբերությունը հանդեմ էր գալիս միայն արհեստային արտադրանքով, բացի մի քանի պղնձյա հանքերից, երկրի ընդերքի հարստությունները ընդհանրապես չեն օգտագործվում, կապիտալը իր գործունեության համար լայն շրջանակներ չուներ, մինչդեռ մյուս կողմից՝ Իրանի վերածումը և վրաբական երկրների հումքի շուկայի զյուղատնտեսական արտադրանքի նորանոր պահանջներ էր առաջադրում, ուստի և ակենայա էր Հոգի վրա կապիտալ և երկրումների շահավետությունը:

Իրանի սոցիալ-ռենտեական վիճակը խոր կերպով ռեսունասիրած ցարական դինվորության Տիգրանովը գրում է, որ XIX դարի կեսերից շեշտակի կերպով աճում է արտաքին առևտություն, որը իր հետ բերում է ապրանքային արտադրանքամբ կապիտալիստական եղանակ: Այդպիսի անցումը անդի և ունենում անխուսափելիորեն: Դա Իրանի հետամնացության պայմաններում, մի կողմից անհրաժեշտություն էր առաջացնում Հոգային սեփականությունների կուտակումներ կատարն և ամենի շատ հարկադիր աշխատանք կիրառել և, մյուս կողմից՝ ձգտում էր առաջանում ազատվել կառավարական վարչությունը ունեցած ծայրահեղ թանկ և քայլայիլ կախումները: Նոր իրավենակը ստիպում էր Հոգատիրությունը համակերպներ առևտությունների պահանջներին և ձեռք բերել բավականաշատ Հեղինակությունը և իշխանությունը:

Խան հասկացությունը, որքանով դա վերաբերում էր Հոգին, արգել կորցնում էր իր իմաստը: Նրան վոխարինում

է մուլտագուրք (կալվածատերը), որը ինչպես կտեսնենք, արդեն վարում էր առևտրային հողագործություն։¹

Ազ առա սկսվում է կապիտալի հոսքը դեպի հողագործություն։ Բայց հատկանշական է նաև այն, որ բաղաքային բուրժուացիայի և պաշտոնյաների շարքերից դուրս եկած հողամերների երեսն գալով, անտեսաւթյունների ընդհանուր վիճակի մեջ որոշակի փոփոխություններ շառադացան։ Դա միայն ուժեղացրեց հողային սեփականություններ ձեռք բերելու մըրցավազքը և խորացրեց գյուղացիության շահագործումը։ XIX դարի վերջը և XX դարի սկիզբը Իրանի սոցիալ-տնտեսական կյանքի գործացման պատճության մեջ հենց այն շրջանն է, երբ շնայրած կապիտալը սկսում է հոսէլ հողագործության մեջ, բայց դեռևս ի մինակի չէ փոխել երկրի գյուղանուտնաւթյան արտադրականակը։ Այս, ինչ կատարում էին հողի վրա կուպիտալ ներդրմած հողատերները, եկամուտների նորանոր աղբյուրների որոնումն էր։ Այդ նպատակին համեմու հրանք մի կողմից՝ ուժեղացնում էին գյուղացիության շահագործումը, մյուս կողմից՝ խուսափում վճարել պետական հարկերը և այլպիսով ավելացնում իրենց եկամուտները։ Այդ շրջանում Իրանի հողատերության ընույթի մեջ ամենաալքի ընկնող փոփոխությունը մուլտադարական հողատերության առաջացումն ու դարգացումն էր։ Այս արգեն հողի մասնավոր սեփականությունն էր, որը մեծապես տարբերվում էր ֆեոդալական հողատերությունից։

Նոր կալվածատերները՝ մուլտադարեները, հակայական եկամուտներ էին ստանում իրենց կալվածքներից։ Կորուսը նշում է, որ մուլտադարների եկամուտները գերազանցում էին պետության եկամուտներին (որոշ տեղերում մինչև իսկ տօսերակ անդամներ)։ Մուլտադարների իշխանությունը գնալով ուժեղանում էր, և նրանք իրենց իրավունք էին վերապահում

1. Л. Ф. Гиагарин. Из общественно-экономических отношений в Персии, СПб., 1909, стр. 11—12.

ավելացնել գրյություն ունեցող Հարկերը կամ մոցնել ենր Հարկեր¹։

XIX դարի 60—70-ական թթ. պետությունը որոշ միջոցների ղիմքն իր և կամուռները ավելացնելու և հոգային նոր կազմառու անցկացնելու համար:

Բայց խոշոր և հզոր մուլցագործերը կաշառքներով ու սպառնալիքով ու միայն թույլ շավեցին պետական հարկերը իրենց կալվածքներում ավելացնել, այլ մինչև իմակ աշխատացին դրանք պակասնցնել, հիմնավորելով, որ իր իրենց պահեցը բարերված են²:

Ծզ աշա այս նոր եկամուռները նույնական ներդրվում էին հաղի վրա, այլ կերպ՝ կալվածատերերը ընդարձակում էին իրենց հոգալին տարածությունները: Նոր տիպի հոգատերերը իրենց կալվածքներում վարում էին առևտությին հոգագործություն, այսինքն, ենթելով արտաքին շուկայի պահանջներից, մշակում ու արտադրում էին այնպիսի կուլտուրաներ, որոնք ապահովային նշանակություն ունեին:

Աւատմնափրությունը ցաւց է տալիս, որ XIX-րդ դարի վերջերին և XX դարի սկզբներին առևտրային հոգագործությունը արդին որոշակի գիր էր խաղում երկրի տնտեսական կյանքում՝ չնայած առևտրային արտադրությունը գեռն զերծանող էր ամբողջ պյուղատնտեսության մեջ։ Հասկանալի է, որ ապրանքային արտադրության զարգացման հետ միասին տեղի էր ունենում նաև մասնագիտացում պյուղատնտեսության մեջ, առաջանում էր պյուղացիության զառակարգային շիռագորում։

Առնարային Հողագործությունը, ինարկե, առաջավոր երևոյթ էր Իրաևի անտեսության մեջ և անշուշտ օգնություն էր Երկրի Ներքին շուկայի հետազա զարգացմանը: Առնարային Հողագործությունը, մյուս կողմից նպաստում էր հողերի պա-

¹ Корсун, Военный обзор Персидского передового театра, Тифлис, 1909, стр. 92.

2 *brownish antiquated*, fig. 93.

Հանդի ամին և նրանց գների բարձրացմանը, Արդեն 80-ական
թվականներից նկատվում է քաղաքային խավերի ուժեղ
զատում հողամասեր ձեռք բերելու ուղղությամբ։ Այսպիսով
անդի է ունենում առևտրականների և կալվածատերերի միա-
ձուլում, ըստ որում առևտրականների գներում հանդի էին գա-
լիս պաշտոնյաններ, մինչև իսկ հոգնորականներ և այլ խավերի
ներկայացուցիլներ։

Ինչպէս առացինք եռոր հողատերերը, եւնելով արտաքին
շուկայի պահանջներից, վարում էին առևտրային հողագոր-
ծություն և դրա հետևանքով երկրի գյուղատնտեսության մեջ
ներթափանցում էին ամեսիսի կուլտուրաների մշակումը։ Ինչ-
պիսիք էին բամբակը, ժիախոտը և այլ կուլտուրաններ, որոնք
նորություն էին Իրանում և պահանջում էին առևտրական աշխ-
ատավորությունների գործությունը։ Խել խոսք, որ դրանց զարգացման
և առարածման աստիճանից էլ կախված էր կուլիտուրիստ-
կան հարաբերությունների ներթափանցման աստիճանը։ Հենց
այդ ժամանակվանից էլ զյուղատնտեսության մեջ արդեն
նկատվում են վարձու աշխատանքի կիրառման առանձին
փաստեր։ 1895—96 թթ. իշխան Թաշեֆ էս Սալթաննեն վարձու
աշխատանքի կիրառմամբ փորձեց թեյի պլանտացիաներ
ստեղծել Մերձկասովյան շրջաններում, բայց համապատաս-
խան հովանավորություն շտանելով, չկարողացավ սկսած
դործ ընդարձակել։ Նա տարեկան ստանում էր ընդամենը
800—1000 ֆունտ թեյ, որը սպառվում էր երկրի ներսում։
Նման փորձերը, իշարկե, եղակի երևույթներ էին և գենու լայն
տարածում շէին զահել։ Վարձու աշխատանքի կիրառումը գյու-
ղատնտեսության մեջ ավելի լայն չափեր ընդունեց Իրանում
արդեն XX դարում։

Մրան զուղընթաց անդի էր ունենում նաև հակառակ պրո-
ցես։ Կալվածատերերը միաժամանակ զբաղվում էին առև-
տրով և վերածվում խոշոր առևտրականների։ Առբանալ նշում

1. З. Абдуллаев. Промышленность и зарождение рабочего класса Ирана. Баку, 1963, стр. 22.

է, որ շատ կարճ ժամանելում բազմաթիվ պյուղատերեր և կայացած հարստություններ դիզեցին և կապիտալիստներ դարձան:

Մինչև 1850 թ. խոշոր հողատերերը փոքրաթիվ էին, բայց 1800 թվականին նրանց թիվը արդեն հարյուրների էր հասնում¹:

Այս պրոցեսի դարդացումը պայմանավորված էր մի շարք հանգամանքներով, նախ՝ դա կապված էր սպասման ապրանքների արտադրության մակարդակի ընդհանուր ռարմացման հետ, որի հետևենքը նրան ներմուծվող ապրանքները արգելել էին սահմանափակվում միայն մի շարք անհրաժեշտ իրերով, այլ նրանք ընդդրկում էին նոր կենցաղի պահանջներից բխող բազմաթիվ առարկաները: Մյուս կազմից՝ վաշխառուական կապիտալի գործունեության շրջանի ընդլայնումը, անշուշտ, ստեղծում էր եկամուտների ավելի մեծ և նոր աղբյուր, ուստի հողի վրա կապիտալ ներդրումների գործը որոշ շափով գաղաքում էր ֆավադ Թարթիզիզադեն իր ոիրանի տնտեսական կյանքը և նրա սաստիկ աղքատության բուժման ուղինեացրում, անդրադառնալով, ինչպես ինքն է անվանում, և զանազանոր կապիտալիզմից ներթափանցման և նրա հետեւանքների հարցին, զրում է, որ կարվածքների և ընդհանրապես հողագործության եկամուտները զրամի տոկոսների համեմատ շատ շնչին գարձան, այնուհետ որ դրամի տոկոսները երեք շորս անգամ ավելի էին, քան հողի և շրի եկամուտը: Բնական է, որ վաշխառության եկամուտները զրամի մակոսների մինչև կամ շատ շնչին գարձան, այնուհետ որ դրամի տոկոսները մերեք շորս անգամ ավելի էին դիմումի մեջնակակ գոյություն ունեցող հողային և շրային սեփականություններն էլ աստիճանաբար անկում էին ապրում²:

Ապրանքային կապիտալիստական հարաբերությունների առկայության ապացույց է նաև հետեւյալ փաստը: կարվածատերերը գործը այնպես էին դասավորել, որ պյուղացին, կալ-

¹ Астрет, Мамед Али шах, Александрополь, 1909, стр. 141.

چواد تبریزی زاده و ندیگی اقتصادی ایران و وادی چاره فقر شدید آن
² جلد دیکم تهران ۱۳۷۷ مصطفی

վածտարիրական բաժինը և պետական հարկերը տալուց հետո, իրեն մեացած հացը և գյուղատնտեսական այլ մթերքները ոչ բազարում և ոչ էլ գյուղում իրավունք չունեն վաճառելու նըրանք կարող էին վաճառել միայն խանի կողմից նշանակված մեծագնորդներին և այն էլ սահմանված գնով, որի համար և խանը ստանում էր մեծ կաշառքներ¹.

Կայեմը ոՊարսկական Հողը իր գրքում գրում է, որ ՅՈ-ական թվականներին իրանական շուկայում գժվարությամբ էր իրացվում մեծ քանակի հացահատիկներ Պրան հատկապն խանգարում էր մուսուլմանական կրոնի այն գոգման, որի համաձայն հատագայում թանկ գնով ժամանելու նպատակով հացահատիկ կուտակելը համարվում էր հանցանք, որը հետմանու աշխարհում հնիթակա էր ամենախիստ պատիժներին հետևաբար հոգագործը պարտավոր էր ավելցուկները վաճառել 40 օրվա, իսկ մաքրերի տարիներին և օրվա ընթացքում Այսպիսով կրոնական մոլեկուլարության գերիշխման պարմանենքրում մինչև 1893 թ. առնարականները չեին համարձակմում բացահայտորեն հացահատիկի մեծ կուտակումներ կատարել՝ հետագայում բարեր գնով վաճառելու նպատակով։ Բայց վերջապես դրա ելքը նույնպես գտնվեց։ 1893 թ. Թավրիզի մոլեկինդ Միրզա Ջավադը Ղորանի մի առույթի յուրովի մեկնարանում մի երկու հարյուր գյուղերի հացահատիկը հավաքեց, ամբարեց մեծ պահանջման և այնուհետև վաճառեց ավելի բարձր գնով։ Այսպիսով կուտրվեց սառուցը։ Նրան անմիջապես հետևեցին բազմաթիվ կալվածատերեր և առնարականներ։ Այդ երկույթի տարածումով բարձրացավ հանկացավ հացը, առաջացան սովորական բունտեր և այլ²,

Անշուշտ, հասկանալի է, որ միայն ապրանքային արտադրությունը դեռևս բավարար չէր կապիտալիզմի դարպացման

1 Քրոզման հաստ բամբակի թերթարտինք Համայն անդամները է վաճառվեր կավաճառիրաց.

2 Г. Каэм. Персидская земля или «Новая апельсинка», 1914, Краснодарск, стр. 123—124.

Համար, անհրաժեշտ էին որոշակի այլ պայմանները: Ապրանքացին արտադրությունը պետք է դիտել նրան շրջապատռով անտեսական ընդհանուր պայմաններից հետ միասին: XIX դարի երկրորդ կեսին Իրանում ապրանքային արտադրության զարգացմանը զուգահետո նկատվում էր առևտրային հողագործության զարգացումը: Աշակերտ էին այնպիսի կուլտուրաներ, որոնք կարող էին սպառվել միայն արտասահմանում: Պարզ է, որ արտադրության ապրանքայինությունը տվյալ չտապահմիր հետ պիտի բերեր կապիտալիստական Հարաբերությունների որոշակի ներթափակում և պիտի խորառակեր շատ ուշատ էին պատճեններ: Սակայն կապիտալիստական հարաբերությունների զարգացման համար անհրաժեշտ էին նաև այլ նախադրյալներ, որոնք դեռ այդ ժամանակ բացակայում էին Իրանում: Արտադրական ուժերի զարգացումը պրոլետ կամուգում էր հատկապես միջնադարյան ֆեոդալական հարաբերությունների առկայությամբ՝ մի կողմից, և սուսրերկրյա կապիտալի մուտքի ուժեղացմամբ՝ մյուս կողմից¹:

Առնարային հողագործության զարգացումը պայմաններ ստեղծեցին գյուղում առնարական և վաշխառուական կտակիտալի մուտքի համար: Դրա արտահայտություններից մեկն էր հետեւալ երեսություն Իրանի համարյա բոլոր շրջաններում, հատկապես Աստրավատականում, տարածված էր բերքի վաճառքը ամիսներ առաջ, որ կոչվում էր «սալֆ»: Այդպիսի գնումներ կատարում էին ոչ միայն տեղի առնարականները, այլ երբեմն մինչեւիսկ նվազագական կապիտալիստները կամ առնարական ընկերությունները²: Դա շատ ժամը էր անդրա-

1 Դուզատնեսական գիտական մեթոդների մասին Իրանում խռով անքամ լինել էր հարող, առաջին գույքանեսական զգուցք, որը հուզվում էր «Մարդուներ» ֆիլատոթիւն Մոզաքարիք, Ծինազրվել է միայն Մոզաքար էղ-Դին շահի որքը: Դուզատնեսական նորագույն մեթոդների որով շափով հիբառման սկիզբը պնդու է Համարել այլ ոպրոցի Հիմազրականը (անշաբան առողջ կտեսացը)՝ Հարան Տեհրան Կենտրոնական գրադարան:

(78)

2 XIX դարի վերջերին կարելի էր արգել հանգիպձլ մի շարք շնկերու-

զառնում զյուղացիության վրա, քանի որ զյուղացին ընկնամ էր մշտական պարտի տակ և հաջորդ տարի ստիպված նույնը կրկնում ավելի աննպաստ պայմաններով. նման իրավիճակը վերընականապես քայլքայում էր նրան և զգում կախման մեջ:

Թե ինչպես էին զնահատում ժամանեակի առաջավոր գործիչները այս երեսոյթը, ինչպես նաև կապիտալի, այդ թվում և սաար կապիտալի մուսքը դապի զյուղ, կարելի է նկատել նազեմ ու նաևամ Թերմանիի Հետնյալ նկարագրություննից: Նազում է, որ եվրոպական տարրեր ընկերություններ մեծ ախորժակեներով զիսդի նրան էին շտապում: Այդպիսի ընկերությունների մի քանի հվարացի ներկայացուցիչներ նրան զալիս ևն Ստամբուլով, որտեղ Հանդիպում է տեղի ունենում նըրանց և տեղի պարսկերեն լեզվով հրատարակվող ունիթարութերթի խմբագրի Հետո: Ընկերության ներկայացուցիչները առում են, որ ծխախոտի կոնցեսիան օգտավեա է թե՛ պետությանը և թե՛ զյուղացիությանը: Խմբագրը հարցնում է, թե զյուղացիները ի՞նչ օգուտ կարող են ունենալ զրանից: Նրան պատասխանում էն, որ մինչև այժմ այուղացիները իրենց բերքը առարտիկ վաճառում են առևտրականներին կամ էլ փոխանակում իրենց անհրաժեշտ կտորեղեննի Հետ, իսկ այժմ մենք, բերքը ստանալով, կանխիկ դրամ ենք վճարենու Խմբագրը պատասխանում է, որ զա ավելորդ հավակնություն է, քանի որ զյուղացիները միշտ էլ բերքը կանխիկ են վաճառելի: Երբեմն մինչեւին նրանը երեք ամիս առաջ առևտրականներից դրամ են ստացել, որպեսզի բերքահավաքի ժամանակ այն վերադարձնեն մթերքով: Տարրերությունը միայն նրանում է, որ առաջ զյուղացին հաճախորդ ուներ և կարողանում էր ըստ իր ցանկության ապրանքը վաճառել, իսկ այժմ պետք է միայն մեկին վաճառի, այն էլ գնորդի սահմանած գնով!:

թաւանների, որոնք նպստում էին առևտրական զյուղատեսառներուն զարդարեց, նրանք, պարտիր առաջ, նման գնով զյուղատեսական մթերքներ լին գնում շուկաներում իրացնելու համար:

نظام الاسلام، کرمائی تاریخ بیداری ایرانیان مجلد اول تهران^۱

Սա ցույց էր տալիս, թե ինչպես էր ռատորերկրյա կապիտալը ցանկանում արդարացնել իր ներթափանցումը, բացառքելով, որ իրը զա իրանական զյուղացու օգտին է և աղաւում է նրան վաշխառումների ոտնձգություններից։ Միանգամայն նիշտ էին նկատում Իրանի առաջավոր գործիչները, որ զա միայն ուժեղացնում էր զյուղացիության շահագործումը։

Իրանում զիսկս այդ ժամանակ բացակայում էր Համազգային շուկան, որի առաջացմանը խանգարում էին բազմաթիվ հանգամանքներ։ Գյուղացին իր կարիքների մի շոշափելի մասը հոգում էր արհեստային արտադրանքի միջնորդ, որը կատարվում էր ոչ թե առուժախի, այլ ավելի շուտ փոխանակման միջոցով, քանի որ գյուղացին արհեստներից վերցրած արտադրանքի գիմաց վճարում էր ընամենքը։ Ըստ սրում արհեստային արդյունաբերությունն էլ մանր ապրանքային ընույթ էր կրում, որը պարբերականացնորդած էր երկրի զարգացման մակարդակով։ Դրա հիմքական պատճառը ֆեռդալական հարաբերությունների գերիշխումն էր, որը խոշնորությունն էր զանում արդյունաբերությունը հողագործությունից անջատելու գործին։

Խոշոր գյուղերում կազմակերպվում էին շուկաներ, որտեղ գյուղացիները վաճառքի համար բերում էին իրենց մթերքները կամ արհեստային արտադրանքը։ Հայտնի է, որ Սարարի զամանի գյուղացիները արտադրում էին տարրեր կտորներ, կարպետներ և վաճառքի էին տանում մինչև թավրիդ կամ էրզրում։¹

Իրանի համազգային շուկայի ստեղծման դորժում լուրջ խոշնորությունն էր կապիտալիստական հարաբերությունների թույլ զարգացումը, ապրանքա-դրամային հարաբերությունների անհրաժեշտ մակարդակի վրա շգտնվելը, երկրի արոճաժողությունը և վերջապես ճանապարհների պակասը, ներքին մաքսային սիստեմի առկայությունը, ընդհանուր միասնական շահ ու կշռի բացակայությունը և բազմաթիվ այլ երնույթներ։

Այս խոշնորությունը որոշ լափով վերցան և երկրում

¹ Н. Озородников, Зап. Ко ИРГО, 1876, т. 10, вып. I, стр. 229.

Նպաստավոր պայմաններ ստեղծվեցին ավելի ուշ, ուստի ուսումնասիրվեղ ժամանակաշրջանում խոսքը կարող է վերաբերվել կապիտալիստական հարաբերությունների միայն սաղմերի առաջացմանը: Ի՞ւրեքե, չի կարելի ասել, որ այդ սաղմերը հավատար շափով առաջանում էին երկրի բոլոր շրջաններում: Դա վերաբերում էր հատկապես երկրի հյուսիսային և հյուսիս-արևմտյան մասերին, որոնք ավելի զարգացած էին և շփման մեջ էին գտնվում ուստական շուկայի հետ:

Հումքի արտահանումը երկրից աճում էր տարեց-տարի և ՀՀ դարի սկզբներին այն մեծ շափեր ընդունեց: Այդ ժամանակ երկրից արտահանվող 23 տեսակի ապրանքներից 19-ը դրավատնտեսական մթերքներ էին: Հատկապես կարելի է նշել բամբակի արտահանումը, որը լայն տարածում էր գտել: Դարավերջին արտահանվող ամբողջ ապրանքների մոտ մեկ հինգերորդը բամբակ էր:

Միանգամայն հասկանալի է, որ գյուղատնտեսությունը, ինչպես նաև արհեստային արդյունաբերությունը պետք է հարմարվեին արտահանման այդ պահանջներին: Դա իր հետ բերում էր նաև գյուղացիության շահագրծման ուժեղացում, որովհետև կալվածատերերը մեծ գումարներ ձեռք բերելու համար բանում էին գյուղացուց վերցնել նրա արտադրանքի մեծագույն մասը: Մյուս կողմից էլ լավագույն հողերը հատկացվում էին արտահանման համար պահանջվող կուտարաների մշակմանը: Դրանք երկրում արտադրվում և կուտակվում էին այնպիսի լափերով: Որ կարող էին ծառայել միայն արտահանման նպատակին: Այդ կուտարաներից մի մասը ներքին սպառման ասպարեզ էլ շուներ: Բայց արտահանվում էր նաև ամենալայն ապառում ունեցող հացահատիկը:

Տարբեր նահանգներում վաճառքի համար կուտակված պյուղատնտեսական մթերքների ավելցուկները արգեն շոշափելի քանակ էին կազմում: Այսպիս 1880-ական թվականներին նորաստի Դարագաղի շրջանում յուրաքանչյուր տարի 2000 խարկար ցորենի և գարու ավելցուկ էր գոյանում, իսկ

Մաշհաղի շրջանում՝ 5000 խարվար ցորեն և 5000 խարվար գարի: Այս մթերքները հանվում էին վաճառքի: Ծուռ պաշտոնյաների հաղորդումների համաձայն Խոյի շրջանի հացահատիկի ավելցուկը XX դարի սկզբներին կազմում էր մոտ 2.000.000 փութ: Թամի շրջանի հացահատիկի ավելցուկը վաճառվում էր Քերմանի և Բոլուշիստանի նահանգներում¹: Սիսթանը հացահատիկ էր վաճառում Հեղկաստանի և Աֆղանստանի ու Համանամերձ շրջաններին²: Հյուսիսային շրջանները ցորեն էին արտահանում Ռուսաստան: Օրինակ՝ 1899 թ. Իրանից Ռուսաստան էր արտահանվել 270.093 փութ հացահատիկ՝ 170.001 ոուրլու արժողությամբ³:

Մի շարք շրջաններ մշակում էին միայն տեխնիկական կուլտուրաներ և հացահատիկը ստիպված թիրում էին այլ վայրերից: Այսպես՝ 1900 թ. Թաշանի շրջանը, որը մշակում էր բամբակ, ծխախոռ և ափիռն, ստիպված հացահատիկը ուրիշ շրջաններից էր գնում: Նույնպիսի փաստերի կարելի էր հանդիպել Թեհրանի և Եիրազի միջև ընկած մի շարք շրջաններում⁴:

Երկրի ներսում հաղորդակցության հանապարհների պակասի հետևանքով հաճախ ավելցուկ հացահատիկը արտահանվում էր ավելի մոտ տարածության վրա դանդող հարնակ երկիրը, քան փոխադրվում երկրի խորքերում գտնվող այն շրջանները, որոնք հացահատիկի խիստ կարիք էին զգում: Հետևաբար, եթե հյուսիսային կամ արևելյան շրջաններից հացահատիկ էին արտահանում, ապա հարավում հացահատիկ էր ներմուծվում: Այսպես 1899 թ. մի կողմից Իրանի հյուսիսարևելյան շրջաններից ցորեն է արտահանվել Ռուսաստան,

1 «Известия» АН Аз. ССР, Серия Общест. наук, № 5, 1961, стр. 93.

2 А. Миллер, Прошлое и настоящее Сейстана, СПб, 1907, стр. 14.

3 П. А. Рытых, Отчет о поездке в Персию, часть I, СПб, 1901, стр. 65.

4 ЦГВИА, ф. 76, д. 235, стр. 32—38.

իսկ միննույն ժամանակ հրկրի մի այլ ժայրամասի Համար Ռուսաստանից 943,847 գումբ ցորեն է ներմուծվել¹:

Հողային սեփականություններ ձեռք բերելու մրցավագը զերաբերում էր ոչ միայն իրանական շահագործող գասակարգերի տարրեր շրջաններին, այլև օտարերկրյա կապիտալին: Կայակամը դրում է, որ ինը Ռուսաստանից Իրան էր ճամփորդել ուսումնասիրելու այնանդ ուստ մնաժանարուատների կողմից հողային սեփականություններ ձեռք բերելու նպատակահարմարությունը, կապիտալ ներդրումների շահավետությունը: Նա նշում է, որ իր գիրքը դրում է, որպեսզի բառնե մի քիչ ժանուարացնի իրանական հողերով հետաքրքրությունը մարդկանց, արդյունաբերության զարգացման Համար այդ երկրամասի հարատությունների, այնտեղ իշխող կարգերի, մշակելի հողեր ձեռք բերելու հարավորությունների և այլնի մասին²:

Արդեն XX դարի սկզբներին Իրանում ուսումնապատակներին պատկանող հողային տարածությունները փոքր թիվ չեին կազմում: Այդ սեփականությունները շարունակեցին գոյություն ունենալ մինչև Հոկտեմբերյան հողափոխությունը:

Ստարերկրյա կապիտալը Իրանում իրեն համար ճանապարհ հարթելու գործում դիմում էր այլևայլ միջոցների: Այդ տեսակետից տիպական է հետևյալ փաստը:

Հայոնի է, որ իրանական կառավարությունը անգլիական մի ընկերության շնորհեց Իրանի ամբողջ ծխախոտի կոնցեսիան: Կոնցեսիոն պայմանագրի 12-րդ գլխում ասված էր, որ ծխախոտի ցանքսեր ունեցող գլուխացքիները պետությանը արգելիք հարկեցը վճարելու համար անհրաժեշտ չէ, որ իրենց ունեցվածքը վաճառին, այլ կարող են պահանջվող գումարը ընկերությունից պարագ վերցնել վեց կամ ութ տոկոսով և վճարել պետական հարկը հոգալ իրենց կարիքները: Իսկ

1. П. А. Руттих, Отчет о поездке в Персию, ч. I, СПб, 1901. стр. 58.

2. Г. Кази, Персидская земля... Красноводск, 1914, стр. IV.

ժխախտուի բերքը ստանալու ժամանակ բերքը վահառել ընկերությանց և փրկեց պարտքերը մուծել¹:

Սա Հողագործության մեջ ստարերկրյա կապիտալի ներթափանցման մի ակնառու փաստ է: Սակայն, ինչպես Հայանի է, Համաժողովրդական դիմագրության շնորհիվ այդ կոնցեսիան բեկանվեց և անզիացիներին շնարազվեց իրագործել իրենց մատադրությունները:

Իրանում Հողագործության մեջ ստարերկրյա կապիտալ ներդրումների գործում իրենց մասնակցությունը ունեին ետև ամերիկյան մանուպուլիատները: Իրանում ուսմական զննումն Պոլկոսուկին արտաքին գործերի նախարար Գիբսին ուղարկած 1888 թ. Հունիսի 30-ի զեկուցագրում հայտնում է, որ լուրեր են տարածվել, թե ինչ-որ ամերիկյան ընկերությունն արտեղյան ջրհորներ փորձելու կոնցեսիան է ուղղում վերցնել: Այդպիսով ամերիկացիների ձեռքը պետք է անցներ լայն Հողատարածություններ, որոնց վաճառքը նրանք կարող էին ջրջանցել կոնցեսիոն պարմանագրի 25-ամյա ժամկետը լրացնելուց հետո, քանի որ դժվար թե տեղացիների մոտ գտնվնին արգայինի կապիտալներ այդ Հողամասները վնելու համար: Պահանջանական կարևորություն չէր ներկայացնում ամերիկացիներին ուրված բամբակագաման տեխնիկական ձեռնարկություններ հիմնադրելու իրավունքը: Դա ցուց է տալիս, որ ամերիկացի կոնցեսիոնները ուղղում էին Իրանում լայն շափերով բամբակամշակությամբ զրազվել, որը անխուսափելիորեն ժամանակի ընթացքում վառնագավոր լրցակցություն կատաղելը Միշին Ասիայի բամբակի արտադրության հետ:

Այդ կոնցեսիոն պարմանագրի 6-րդ Հողգածում ասված էր, որ նշված Հողերի մշակումից ստացված եկամուխ մեկ տասներորդը պետք է վեարվեր պետությանը: Բացի այս հարկից, իրանական իշխանությունները իրավունք շունեին մշակման ենթակա Հողերից որևէ այլ հարկ գտնենել²:

¹ ابراهیم تیموری، قرارداد 1890-1905 ژری تحریر تنبیکو اولين مقامات
منفى در ایران تهران 1920 مصطفى

² АВПР, Гаваный Архив, V Аз., л. 36, л. 84.

³ Խույն անդամ, թիր ճճ.

Խնչպես տեսնում ենք, կապիտալիստական պետությունները և նրանց ներկայացուցիչները ոչ միայն շանքեր չեն իւնայում կապիտալ ներդրումներ կատարել նրանի պյուղատեսության մեջ և այդ միջոցով մեծ նկամուռներ ձեռք բերել, այլև նրանք, ինչպես մյուս ասպարեզներում, այդ գործում ևս մրցակցության մեջ էին և հետապնդում էին հեռու պնացող տեսանական ու քաջարական նպատակները

Այսպիսով մեղ հետաքրքրող ժամանակաշրջանի սոցիալ-անտեսական կյանքի մի շարք երեսույթներ, ինչպես, օրինակ, վարձավճարի աճը, հողը առուժախի առարկայի վերածելը, ապրանքային տեսանությունների զարգացումը և զրանցից բխող մի շարք այլ երեսույթներ ապացուց են այն բանի, որ նրանի պյուղատեսության մեջ արդին առաջանում էին կապիտալիստական հարարերությունների սաղմերը և նախադրյալներ էին ստեղծվում նրանց հետագա զարգացման համար:

* * *

Խնչպես նշեցինք նվազապահական կապիտալի մուտքը նրան առաջին հերթին մեծ զարկ տվեց նրանի առնարական կապերին: Իրանց, ընդգրկվելով համաշխարհային շուկայի ուղղուց և վերածվելով նվազապահական տերությունների հումքի ազդյաւորի, ընդգրածակեց իր արտահանումները, ինչպես նաև ներմուծումները: Առնարական այս հարարերությունները երկու կողմերի միջև համասար իրավունքներով տեղի ունեցող առնարի բնույթ չեն կրում: Այդ բանը ապացուցվում է արտահանվող ապրանքների ցածր և ներմուծվող ապրանքների բարձր գներով: Նշանակում է առնարուրը էկզիվալենտ առևտուր շեր և կատարվում էր հօգուտ նվազապահական տերությունների և ի վեստ նրանի:

Արդեն նշեցինք, որ հատկապես ստարերկրյա կապիտալի մուտքով քայլայվում էր նրանի արհեստային արդյունարերությունը: Տեսանական այդ ընդհանուր քայլայման հետևանքով XIX դարի վերջին, պաշտոնական տվյալների համաձայն, մի բանի տարում փակվեցին ավելի քան հիսում արդյունարե-

բական ձեռնարկությունները համարական պորդի, մետաքսի, ապակու, շաքարի և լուցկու): Աղբյուրները վկայում են, որ արդեն XIX դարի երկրորդ կեսից սկսած համարյա դադարում է իրանական պատրաստի գործվածքների արտահանումը, բացի գորդից, որը մինչև որս էլ շարունակում է մնալ որպես անդերազանցելի և արտահանման գլխավոր ապրանքներից մեկը: Նշանակում է երկրի արտահանության գնրակյուղ մասը գյուղատնտեսական մթերքներն էին:

Իրանի ներքրավումը համաշխարհային շուկայի ուղրու և նրա վերածումը նվազուական երկրների արգյունարերական ապրանցքների շուկայի մի այլապիսի իրողություն էր, որի մասին լէին կարող շխոսուազանել մինչնիսկ իմադերիալիստական բաղարականության շատագուվների: Այսպէս. Թերզոնը 1892 թ. գրում էր. «Մինչնիսկ նրանք, ովքեր որիտանական բաղարականությանը թիւ էին ժանոթ կամ անտարեր էին նրա նրկատմամբ գիտակցում էին, որ նրանք մի երկիր է, որը հանդիսանում է ընդարձակ և շահագետ շուկա անզյիտական ու անգույնդկական տունորի համար և որ համարական այդ հոգի վրա նրա դեկամերի հնա բարի հարարեցություններ ունենաւը առավելագույն շափով ցանկալի է»¹.

XIX դարի վերջներին իրանի արտաքին առևտուրը ուներ շնորհյալ պահակերը.

1893 թ. ներմուծումները կազմել են՝

Ռուսականից	7,771,000	ֆրան և անգլիաց
Հնդկանանից	1,225,000	«
Ակաբայից	251,000	«
ու երկրներից	477,000	«
Ընդամենը՝		8,024,000
		«

Դրան պետք է ավելացնել նաև նշանակալից քանակի ներմուծումները Բաղդադի վրայով, որոնք 250,000 ստերլինգ պահան լէին:

¹ G. N. Curzon, Persia and the Persian Question, vol. 1, London, 1892, p. 2.

Նույն թվականին արտահանումները կազմել են.

Թռամասան	1,549,000	ֆրանս ստերլինգ
Հեղիսատան	429,000	»
Անդրք	118,000	»
այլ երկրներ	535,000	»
Ընդամենը՝	2,792,000	»

Իրան պետք է ազելացնել նաև թաղաղողի վրայով կատարված արտահանումները, որոնք կազմում էին 318,000 ստերլինգ։¹

1901—1902 թվականներին Իրանի ներմուծումները ունեին հնայնալ պատկերը².

Թռամասանից	113,755,584	դրամ
Անդրքայց և Հեղիսատանից	125,253,553	»
Սումական պետությունից	10,815,173	»
Գերմանիայց	2,382,765	»
Ֆրանսիայց և Պազութենից	23,687,076	»
Անգլիայց	12,080,488	»
Հուանդայց և Պազութենից	2,167,511	»

Քերզոնը հաղորդում է, որ 1889 թ. Իրանի արտահանումները կազմում էին 7,144,000 թուման, իսկ այդ նույն թվականին ներմուծումները կազմում էին 13,696,000 թուման³։

Անգլապատեալով առանձին նահանգների առնորդն՝ կարիք է որպես օրինակ բերել Ասրպատականի առնորդը 1868—1870 թթ.⁴

	1868	1869	1870
Ներմուծումները	1,251,000 սմ.	1,575,776 սմ.	1,084,714 սմ.
արտահանումները	683,885 »	901,218 »	422,822 »

¹ М. Л. Тамара, Экономическое положение Персии, СПб, 1895, стр. 147.

² محمد على جمال، ادله گنج شایگان یا اوضاع الاقتصادی ایران
تهران ۱۹۱۷ صفحه ۱۵

³ G. N. Curzon, Persia and the Persian Question, vol. II, p. 559—561.

⁴ Խոյք անդամ, համ. I, էջ 525.

Բրանտական աղբյուրները տալիս են թվական այլ տվյալներ։ Այսպես, Հաֆանդիար Բահրամ Նգանեպին 1934 թ. նյութագրում անգլերին լեզվով հրատարակած ուրախի վերջին տարիների ֆինանսական և դրամական պատմությունը գրքում XIX դարի վերջերին Իրանի առնորի մասին տալիս է հետևյալ պատկերը։

	Անդամանություն	Կրամանություն	Ցնցնանություն
1875—1877	50,000,000 դրամ	50,000,000 դրամ	120,000,000 դրամ
1877—1880	50,000,000 *	40,000,000 *	100,000,000 *
1880—1882	125,000,000 *	100,000,000 *	225,000,000 *
1883—1890	145,000,000 *	100,000,000 *	245,000,000 *
1890—1895	154,000,000 *	110,000,000 *	254,000,000 *
1895—1900	250,000,000 *	125,000,000 *	375,000,000 *

Այսպիսով, ակսած 1875 թվականից մինչև Համաշխարհային առաջին պատերազմի սկիզբը, բացի 1875—1877 թվականներից, ներմուծումները ավելին են եղել, քան արտահանումները, որը և գնալով անել է։ Սա, իշխարքն, գեղիցիտային առնորուր էր, որ մեծապես հարվածում էր կյանքի ընդհանուր մակարդակին և կասեցնում երկրի տեսանական զորվացումը։

XIX դարի վերջերին ցարական կառավարությունը որոշակի միջոցներ է կիրառում Արևելքի երկների հետ առևտական կապերը ընդլայնելու ուղղությամբ։ Այդպիսի միջոցառումներից են բարակագործներին տրվող պարզմատրումները և ամենից գլխավորը՝ Կովկասի վրայով ազատ տրանզիտի արգելումը 1883 թ.¹։ Հենց այդ ժամանակներից էլ նկատվուի է Իրանի հետ ուժեցած Ռուսաստանի առնորի արագ աճի և նրա աստիճանական մենաշնորհ գերը ամրող հյուսիսային և արևելյան Իրանի առնորում։ Անգլիական մի աղբյուրում կարդում ենք, որ սընդհանուր առմամբ ոչ մի կասկած չի կարող լինել, որ ռուսական առնորությունը Իրանի այս մասում (իսությ

¹ П. А. Риггих. Железнодорожный путь через Персию, СПб., 1900, стр. 17.

վերաբերութ է Թերմանջանի շրջանին—Հ. Ա.), ոչ միայն աճում է, այլև աճում է ի հաշիվ բրիտանական-Ընդհանուր տնտեսութիւն կամ առնվազն այն պրոպրցիոնալ ձևով աճում է ավելի արագու¹:

Փաստերը ցույց նե տալիս, որ 1887—1897 թվականների ընթացքում, այսինքն տասը տարում, Ռուսաստանի արտահանումը նրան ութ միլիոնից անց 16 միլիոնի, իսկ ներմուծումը 9 միլիոնից՝ 18,5 միլիոնի: Այսպիսով տասը տարվա ընթացքում երկու երկրների առևտուրը աճել էր երկու անգամ: Մինչդեռ արտահանման և ներմուծման ննջավածքը այնքան էլ մեծ չէր, Ռուսաստանի ներմուծումները Իրանից ընդամենը երկուսուկին միլիոնով ավելի էին, քան արտահանումները: Աղյուսիները այնուամենայնիվ նշում են, որ չնայած Ռուսաստանի և Իրանի միջև տեղի ունեցող առևտուրը արդպիսի թափ էր ստացել, սակայն Իրանի ընդհանուր առևտուրը առաջնությանը պատկանում էր Անգլիային, որը Իրանին տարեկան մոտ 24 միլիոն ռուբլու ապրանք էր վաճառում²: Համաձայն այդ նույն աղյուսիքի տվյալների, Իրանի արտաքին առևտուրի ընդհանուրը գումարը 1898 թ. կազմում էր 60,768,550 ռուբլի, որից 39,759,340 ռուբլին ներմուծում և 21,009,010 ռուբլին արտահանումն էր³: Այդ թվերի մանրամասն ուսումնասիրումը ցույց է տալիս, որ ներմուծումը հարավից կազմում էր 31 միլիոն ռուբլի, իսկ Հյուսիսից ընդամենը 16 միլիոն, մինչդեռ արտահանումը հարավից կազմում էր 16 միլիոն, և Հյուսիսից 18 միլիոն ռուբլի⁴:

Արևմարտն նվազագույնի կառուտալիստական երկրները Իրանի հետ ունեցած առևտուրը գտնվում էրն ամենանպատակամութիւնը պայմաններում, քանի որ նրանք երկու անգամ ավելի շատ ապրանք էին ուղարկում Իրան, քան ստանում էին այն-աեղից: Մինչդեռ Ռուսաստանը մոտ երկուսուկին միլիոն

¹ H. J. The Persian Problem, London, 1903, p. 277.

² П. А. Раттх, Железнодорожный путь через Персию, стр. 17.

³ Նույն տեղում:

⁴ Նույն տեղում, էլ 19.

ռուբլին ապրանք ավելին էր ստանում Իրանից, որի գիմաց վճարում էր կանխիկ դրամ:

Ազներյանովը անդրադառնուով Ռուսաստանի Հետ Իրանի խոշորագույն նահանգներից Աստրավաստականի ունեցած առևտրի հարցին, նշում է, որ Ռուսաստանի անհուրը Աստրավաստականի Հետ գնարդում աճում էր, ընդ որում ուստական ապրանքների ներմուծումը անհամեմատ ավելի բիլ էր, քան Ռուսաստան արտահանվող ապրանքները¹, 1892 թվականին 862,700 ռուբլու շաբար էր ներմուծվել Աստրավաստական, իսկ 1895 թ. այդ գումարը Համել էր արդեն 1,4435,465 ռուբլու: 1895 թվականին Ռուսաստանից 353,495 ռուբլու մանուժակտուրային ապրանք էր արտահանվել Աստրավաստական, իսկ 1896 թ. արդեն 1,121,836 ռուբլու²:

Այս դեֆիցիտային առևտուրը անհանգուտացնում էր ցարկան իշխանություններին. և նրանք ուղիներ էին որոնում ավելացնելու արտահանումների գեղի իրանական շուկա և փակելու ճնշդվածքը:

Իրանի արտաքին առևտուրը Ռուսաստանի գերի հետքնետե բարձրացման մասին են խոսում Հետելյալ ավյալները: 1895 թ. Ռուսաստանից Իրան արտահանված ապրանքները կազմում էին Իրանի ամբողջ ներմուծումների ընդամենը 15 տոկոսը, իսկ անգլիական ապրանքների ներմուծումները՝ 70 տոկոսը, այն գնարդում, երբ 1905 թվականին, այսինքն ընդումներ առաջ առարի Հետո, անզյիշական ապրանքների ներմուծումը կազմում էր ամբողջ ներմուծումների 27,5 տոկոսը, իսկ ուստականի ներմուծումները՝ 29,5 տոկոսը³:

Տումարան նկարագրում է Ռուսաստանի և Իրանի միջև հղած առևտուրի ընդհանուր վիճակը և ցույց տալիս, թե ինչպես

¹ П. Н. Азербайджан. Отчет о поездке по Северному Азербайджану... в конце 1899 года, Тифлис, 1900, стр. 39.

² Եայլ անդում, էջ 44:

³ М. Павлович, Экономическое развитие и аграрный вопрос в Персии XX века, М., 1921, стр. 7

Իրանի տրոտահանումը գեղարի Ռուսաստան տարեց-տարի տնտեսէ էր և ներկայացնում հնունյալ պատկերը:

Խռանի առանձնահամբ	Խռանի ներծածառմը
1884 8,875,000 ռուբլի	3,921,000 ռուբլի
1885 8,921,000 *	3,931,000 *
1886 10,225,000 *	6,129,000 *
1887 8,145,000 *	7,523,000 *
1888 11,295,000 *	8,960,000 *
1889 11,830,000 *	8,819,000 *
1890 11,882,000 *	10,806,000 *
1891 10,854,000 *	8,957,000 *
1892 12,395,000 *	8,843,000 *
1893 15,835,000 *	11,880,000 *

Ազրյուրները որոշ մանրամասեռություններ են պարունակում Ռուսաստանի և Իրանի միջև հզար տունարի մասին: Հատ դրանց Եաշբուզի մաքսաման վրայով 1898 թ. Ռուսաստանից Արևմտյան Իրան էր ներմուծվել 968,261 ռուբլու, իսկ 1900 թ. 554,730 ռուբլու ապրանք: Դա ցուց է տալիս, որ ներմուծումների գումարը 1900 թ. իշխ էր 413,531 ռուբլով: Այդ նույն ժամանակից Ռուսաստան էր արտահանվել 1898 թ. 649,273 ռուբլու, իսկ 1900 թ. 600,661 ռուբլու ռապրանք: Նշանակում է՝ 1900 թ. արտահանումները իշխ էին 48,612 ռուբլով¹:

Այս տվյալները վերաբերում են միայն Արևմտյան Իրանի որոշ հաճանդների առևտրին: Անշուշտ, նման արտահանումներ և ներմուծումներ էին կատարվում նաև մյուս նահանգներից: Ուստի ազրյուրները արևմտյան Իրանի Ռուսաստանի հետ ունեցած առևտրի ամբողջ գումարը գնահատում են յոտ 3,000,000 ռուբլի²:

Որոշ ազյալներ կան նաև Արևելյան Իրանի առևտրի մասին: Այսպիս, Սարգսարի նահանգի ներմուծումները 1893 թ.

¹ М. Л. Томара, Экономическое положение Персии, стр. 149.

² Максимович-Васильковский, Отчет о поездке по губернаторствам Западной Персии (Азербайджана и персидского Курдистана). Тифлис, 1903, стр. 99.

³ Նույն անդամ, էջ 161.

մայիսի 1-ից մինչև 1894 թ. ժայրսի 1-ը կազմել է 746,300 ռուբլի, Այդ նույն նահանգից կատարված արտահանումների և նրա վրայով տեղի ունեցած տարածեցիկ փոխադրումների գումարը կազմել է 1,812,350 ռուբլի¹, 1892 թ. ներմուծումը նորասան կազմել է 2,396,000 ռուբլի, իսկ նորասանից Մուսատան արտահանված ապրանքների գումարը կազմել է 1,600,000 ռուբլի², նորասանը այն արանցիկ ուղին էր Հընդկաստանից զնապի Մուսատան փոխադրվող ապրանքների համար, որը անշուշտ, որոշակի ազգեցություն ուներ երկրի տնտեսության վրա։ Առնեն տարի նորասանի վրայով Հեղկաստանից Մուսատան և Նվրոպա էին փոխադրվում մոտ 2,400,000 ռուբլու արժողությամբ թել, ինդիգո, զանազան ալլայլ ապրանքներ, իսկ Նվրոպայից և Հեղկաստանից նորասան էր ներմուծվում տարեկան 800,000 ռուբլու մանուֆակտորաց Մուսատանից նորասանի վրայով Աֆղանստան էին փոխադրվում տարեկան 200,000 ռուբլու տարրեր ապրանքներ։

Բառամգարտենը, ուսումնասիրներով նորասանի նահանգի արտահանման և ներմուծման ամրոցք պատկերը, տալիս է հետեւյալ աղյուսակը³:

Խորասանց Ռուսականից ներմուծել է	Խորասանից արտահան- վել է Ռուսաստան	Տարեկան շրջա- նակը
1889 2,700,000 ռուբլի	1,200,000 ռուբլի	3,900,000 ռուբլի
1890 3,548,000 *	1,313,000 *	5,761,000 *
1891 4,336,000 *	2,400,000 *	6,735,000 *
1892 4,888,000 *	2,800,000 *	7,188,000 *

1889—1890 թթ. մեկ տարվա ընթացքում Հեղկաստանից նորասան էր ներմուծվել 84,300 ստերլինգ արժողությամբ ապրանք, իսկ ուստական ներմուծումները կազմել էին 110,400

¹ К. А. Баумгаартен, Повадка по Восточной Персии в 1894 году, СПб, 1895, стр. 49.

² Խույն տեղամ, էջ 276.

³ Խույն տեղամ, էջ 319.

առ է ըլինգ։ Թերզոնի տալիս է Խորասանի առնարի Հետևյալ աղյուսակը։

Առ մասնակից	Թուառատակից	110,400	ստերլինգ
Հեղասատակից		69,800	"
Մեծ Պրիունթայից		23,400	"
Նվազապայից		12,700	"
Աֆղանստանից		17,200	"
	Ընդհանուր գումարը՝	227,500	ստերլինգ
Առանձնահանձնելու	Թուառատակ & նվազապայ	111,400	ստերլինգ
	Հեղասատակ	29,000	"
	Աֆղանստան	18,300	"
	Ընդհանուր գումարը՝	158,700	ստերլինգ

Ներմուծումների և արտահանումների ընդհանուր գումարը՝ կազմում էր 396,300 ստերլինգ։¹

Ինչ վերաբերում է Անգլիայի Հետ ունեցած առնարին, առաջ Տաճարան տալիս է Հետևյալ պատեկերը².

Առանձնահանձնություն

1889	1890	1891	1892	1893
169,722 ստ.	204,473 ստ.	163,629 ստ.	243,984 ստ.	178,001 ստ.

Անբանական իրավունք

334,537 ստ.	400,010 ստ.	487,838 ստ.	518,390 ստ.	288,121 ստ.
Այդ թվում անզիական արտադրության				
209,334 ստ.	262,669 ստ.	469,396 ստ.	311,169 ստ.	261,383 ստ.

494,288 ստ. 504,485 ստ. 651,477 ստ. 562,374 ստ. 277,112 ստ.

Հարավային Իրանում առնարական խոշոր կենտրոն էր Բուշերը, 1888 թ. Բուշերի վրայով Իրան էր Ներմուծվել 790,532 ստերլինգի ապրանք, որից 743,018 ստերլինգը Անգլիական կայսրությունից։ Նույն թվականին արտահանումը Բուշերից կազմել էր 535,076 ստերլինգ, որի նշանակալիք

¹ G. N. Carson, Persia and the Persian Question, vol. I, p. 215.

² M. L. Томара, Экономическое положение Персии, стр. 149.

Ճամբը եղել է ափիոն: 1888 թվականի համեմատ 1889 թվականին ներմուծումները թուշենքի վրայով աճել էր 244-186 ստերլինգով, իսկ արտահանումները՝ 747,862 ստերլինգով¹:

* * *

XIX դարի երկրորդ կեսին Իրանի բնակչության թվին և նրա սոցիալ-դասակարգային բաղկացուցիչ մասերի վերաբերյալ տարրերը սկզբնապրաւըներում պահպանված տվյալները առույն չեն և երբեմն հակասական թրանք միայն ընդհանուր պատկերացնեմ են այլին այդ բնադավառում աիրող վիճակի մասին:

Թագմաթիվ հեղինակների համար հավաստի նյութ են ծառայել մի քանի տարի Իրանում պաշտոնավարած և երկիրը մասից ուսումնամիրած գեներալ Երնդիրի բերած տվյալները:

Մեզ հետաքրքրող ժամանակի Իրանի բնակչության թիվը կազմում էր 7.653.600 մարդ²: Նասր էդ Դին շահի թժեկ գոկտոր Փլաքը 1873 թ. գրել է, որ Իրանի բնակչությունը համարակիների և հատկապին սովոր հետևանքով պակասել և կազմում էր ոչ ավելիք քան 6 միլիոն մարդ³:

Իրանի բնակչության և նրա բաղկացուցիչ մասերի մասին գրել է նաև Թերզուրը: Ըստ նրա Խառովինսոնը 1850 թվականին Իրանի բնակչության թիվը համարում էր 10.000.000 մարդ: Թայց խոշերայի ավերի համաճարակից և սովոր հետո 1873 թ. բնակչության թիվը հասել էր վեց միլիոնի: Այսպիսով տարրեր աղբյուրների տվյալները Իրանի բնակչության մասին տառանդում են 5.000,000 և 10,000,000 միջև: Թերզոնը նույնպես հակված է ավելիք հավաստի համարելու գեներալ Երնդիրի բերած տվյալները և ինքն էլ մեշքերում է անուշ:

¹ J. B. Bishop, Journeys in Persia and Kurdistan, London, 1891, vol. 1, p. 3.

² А. К. Артаманов, Персия как наш противник в Закавказье, Тифлис, 1889, стр. 9. ³ А. Н. Медведев, Персия, военно-статистическое обозрение, СПб., 1909, стр. 399.

هزاری رتہ داھانی سفرنامہ از خراسان تایختیاری تهران ۱۳۲۵ مص.^{۲۰}

նրանից, շնայտ տալիս է իր ենթադրությունը նա կարծում է, որ Իրանի բնակչությունը կազմում էր 3 միլիոն մարդ¹:

Բիշովը պրում էր, որ Իրանի բնակչությունը տեղաբաշխված էր լեռների փեշերին և հովիտներում: Նրանց ընդհանուր թվի մասին ստույգ տեղեկաթյուններ չկան, բայց այն համարում են 6—8 միլիոն²: Ռիտիխը նշում է, որ 1895 թ. Իրանի բնակչությունը պետք է լիներ 8.200,000 մարդ³:

Իրանի բնակչության տեղաբաշխումը ըստ տարբեր շըալանների ու նահանգների մոտավոր հետևյալ պատկերն է ունեցել: Խոյի շրջանում 420,000 մարդ, Ռայլիո շրջանում՝ մոտ 300,000, Սուլյանաղում՝ 250,000, Թուրդիստանում՝ 350,000, Թերմանշահում՝ 400,000 մարդ և այլն: Ալրպատականում և Թորդիստանում բնակչության ընդհանուր թիվը կազմում էր 1,720,000 մարդ:

Իրանի բազմադպ երկիր էր: Հենց միայն Ալրպատականում և Թուրդիստանում բնակվում էին մոտ 800,000 քրդեր, իսկ ազրբեխանցիների, Հայերի, ասորիների և այլ ազգությունների թվի մասին ստույգ տեղեկություններ չկան⁴:

Բնակչության տեղաբաշխումը մեծապես փոփոխական էր: Երկրի տարբեր մասերում՝ Անրեբրի տարիներին սովոր և համաձարակի հետևանքով առանձին վայրերի բնակչությունը արտգ թափով պակասում էր: Այդ բանը կարելի է ստուգել Կենտրոնական Իրանի օրինակով: 1867—1868 թթ. Պամում անցկացրած մարդահամարի արդյունքները ցույց են տվել, որ այնտեղ բնակվում էր 25,382 մարդ, մինչդեռ ըստ 1874—75 թթ. յարգահամարի այդ թիվը իշել էր 14.000-ի⁵:

¹ G. N. Curzon, Persia and the Persian Question, vol. II, pp. 492—494.

² J. B. Bishop, Journeys in Persia and Kurdistan, vol. II, p. 249.

³ П. А. Ритих, Политико-статистический очерк Персии, СПб. 1896, стр. 37.

⁴ Максимович-Багилькоевский, Отчет о поездке по губернаторствам Западной Персии, Тифlis, 1903, стр. 24.

⁵ A. K. S. Lambton, Landlord and Peasant in Persia, London, 1953, p. 153.

Խել վերաբերում է թնակշության քաղկացուցիչ մասերին, ապա այդ հարցում ևս ավյալները տարրեր են: Որոշ ազգային ներ նշում են, որ գյուղերում ապրում էին 3.780.000 մարդ. իսկ քաղաքների թիվը կազմում էր 1.905.800 հոգի¹. Դա նշանակում է, որ թնակշության 3/4-ը զբաղվում էր հողագործությամբ և անասնապահությամբ: Այս թիվը համընկնում է Զամարգաղենի բնակած ավյալին, ըստ որի XIX դարի երկրորդ կեսին իրանի թնակշության մոտ 3/4-ը կազմում էր գյուղացիությամբ, իսկ մեկ շորրորդը քաղաքային թնակշությունը²: Ըստ Մեղքեղմի, հողագործությամբ և այգեգործությամբ զբաղվում էր թնակշության 2/3 մասը³: Մինչդեռ Դենչեն Հաղորդում է, որ XIX դարի երկրորդ կեսին գյուղացիության տոկոսային հարաբերությունը ազիլի ցածր էր: թնակշության ազիլի քան 40 տոկոսը զբաղվում էր հողագործությամբ, իսկ 30 տոկոսը անասնապահությամբ⁴:

Անհրաժեշտ է նշել, որ իրանում առաջին մարդահամարը անց է կացվել 1850 թվականին, Այդ մարդահամարը բացի մեծ ժախսերից ուրիշ որևէ արդյունք չի տվել: Ըստ այդ տվյալների գյուղերում ապրում էին մոտ երկու միլիոն մարդ, շնչացված քողվորները, Բայց, ինչպես նշեցինք, գյուղացիության թիվը 1851 թ. համեստ էր 3.780.000 հոգու, այսինքն ամբողջ թնակշության մոտ 49,4 տոկոսը: Այդ թիվը 900-ական թվականներին բարձրանում է 5 միլիոնի, այսինքն՝ ամբողջ թնակշության 52 տոկոսը:

Սա, իհարկե, միայն թվական արտահայտությունն է: Բայց ըստ Հության կարելի է ասել, որ իրանի ամբողջ թնակշությունը բաժանված էր երկու իրենց սոցիալ-տեսական

¹ А. К. Артамонов, Персия как наш противник в Закавказье, Тифлис, 1889, стр. 9.

² ۱۸۵۰-۱۹۱۰ میلادی ...، جمال درا

³ А. Н. Медведев, Персия, военно-статистическое обозрение, СПб, 1909, стр. 469.

⁴ Генче, Специальная статистика Персии, Известия, Ко ИРГО, 1876, вып. IV, стр. 17.

դիրքով միանգամայն հակաղիր խմբերի: Մի կողմում Հոգատեր կալվածատերերն էին, մյուս կողմում՝ նրանցից կախումունքունությունը¹: Մաքսիմովիլ Վասիլիկովսկին զիրքավագակիր դաշտանքամասի գործառնությունը՝ բնակչությունը բաժանելով էր Հիմնականում երկու գասակարպի՝ խան-կալվածատերերը — խոշոր Հոգատերերը և Հոգագործիկ հասարակ ժողովուրդը²:

Միանգամայն հասկանալի է, որ այսպիսի բաժանումը պիտի է ընկունել վերապահորնեն, քանի որ, ինչպես կտեսնենք Հետազայում, Հոգատիրական և գյուղացիական դասակարգերը միատարր հասարակական բաժանումներ չեն, նույն եռույնուն շերտավորված էին և բազկացած սոցիալական տարրեր խմբերից, որոնք որոշակիորեն զանազանվում էին մի շաբաթականիշներով:

XIX դարում Իրանում կային ավելի վաղ ժամանակներից ձևավորված մոտ 99 քաղաքներ³, որից 20-ը համեմատարար մեծ էին և հանդիսանում էին առևտուրա-արհեստավորներ խոշոր կենտրոններ, Այդ քաղաքներից էին՝ Թեհրանը, Թավրիզը, Ղազվինը, Ռաշտը, Մաշհադը, Համադանը, Խաֆաջանը, Շիրազը, Քերմանը, Ցաղղը, Բանդար Արբանը և այլն: Բացի այս խոշոր կենտրոններից կային և բազմաթիվ այլ քաղաքներ տարրեր մեծությամբ և նշանակությամբ: Իրանական այդ քաղաքների առանձնահատկություններից մեկն այն է, որ առևտուրին և արհեստին կից զարգացած էր նաև արգեգործությունը և բանշարարութեամբ, առանց որի բնակչությունը չէր կարող իր գոյությունը պահպանել: Դա վերաբերում էր ինչպես մեծ, առավել ևս փոքր քաղաքներին: Օրինակ, Մարանում բնակչող 2500 ծիսից մոտ 1353-ը, այսինքն ավելի քան

1 А. Н. Медведев, Персия, военно-статистическое обозрение, стр. 470.

2 Максимович-Васильковский, Отчет о поездке по губернаторствам Западной Персии... стр. 25.

3 А. К. Артаманов, Персия как наш противник в Закавказье, стр. 9.

կեսը, զյուլզատնահսությամբ էր զրադշում¹: Մի քանի խոշոր քաղաքներ վերածվել էին այնպիսի տակարական կենտրոնների: որոնք ոչ միայն ապահովում էին երկրի շատ և շատ վայրերի կարիքները, այլև տարածցիկ տռետրի երթուղի էին: Այդպիսի կենտրոն էր, որինակ, Թավրիզը, որով անցնում էր Ասիայից Եվրոպայի տարրեր երկրներ փոխադրվող ապրանքների նշանակալից մասը: 1895 թվականին Թավրիզից անցնէ է ոչ պահան, քան 40 միլիոն սուրլու արժողությամբ ապրանք: XX դ. սկզբներին Հազարավոր ուղարկով Թավրիզից փոխադրվում էին ծխախոտ, լոր միրդ, բամբակե և մետաքս կառուցեն, գորգեր, զենք և բազմաթիվ այլ ապրանքներ²:

Իրանի քաղաքները հազարար տեմուզով չեին զարգանում: Տարբեր ժամանակաշրջաններում այս կամ այն քաղաքը ժաղկում կամ անկում էր ապրում: Սակայն տվյալ աշխատության մեջ մեզ հետաքրքրում են գյուղը և այնանդ տիրող Հարաբերությունները:

Զեայած մշակելի հողերի տարածության մեջ Իրանում XIX դարի երկրորդ կեսին տեղի էին ունեցել որոշ տեղաշրջարժեր, սակայն արտագրական մակերեսը կազմում էր ամբողջ տարածության ընդամենը 25 տոկոսը: Մնացած 75 տոկոսը կազմում էին լեռները, անապատներն ու ամայի հողերը: Մշակվում էր ընդհանուր տարածության ընդամենը 10 տոկոսը, որը հասկանալի է չեր կարող բավարել ամբողջ երկրի կարիքները³: Մեղմեղներ տալիս է թվական այլ տվյալ: Նա Հասորգում է, որ մշակվում էր ընդհանուր տարածության 20 տոկոսը⁴: Այդ ավյալները համընկենամ են Քերզոնի տվյալներին.

1 АВПР, ф. персий. стол, д. 535, л. 68—74.

2 М. Павлович, Экономическое развитие и аграрный вопрос в Персии XX века, М., 1921, стр. 6.

3 А. К. Артаманов, Персия как наш противник в Закавказье, стр. 14.

4 А. Н. Медведев, Персия, военно-статистическое обозрение, стр. 469.

ըստ նրա մշակվող հողերի տարածությունը կազմում էր երկրի ամբողջ տարածության մեկ չինգերորդից պակաս¹:

Այս թվերը տարբերվում են Գենչեի հաղորդած թվերից: Նա նշում է, որ 70—80-ական թվականներին ամբողջ երկրի միայն 10 տոկոսն էր մշակվում, 10 տոկոսը զբաղեցնում էին արատավայրերը, 5 տոկոսը անտառները, իսկ մենացած 75 տոկոսը՝ անապատները և ճահիճները²: Իրանական աղբյուրները համարյա նույնապիսի թվեր են հաղորդում: Օրինակ Խամացի Թուշանին գրում է, որ ամբողջ տերիտորիայի մոտ 45 տոկոսը պիտանի էր մշակման, սակայն մշակվում էր գրա միայն մեկ երրորդը³: Հասկանալի է, որ առանձին նահանգներում մշակվող հողերի տարածությունը կարող էր ավելի շատ կամ քիչ լինել: Օրինակ, Թերմանում պիտանի հողերի միայն 20—40 տոկոսն էր մշակվում⁴: Խակ Միսթանում՝ 1/20-ից էլ պակաս⁵:

Իրանական պյուղերը, նայած շրջանի աշխարհագրական պիտին և այլ հանգամանքների, իրենց արտաքին տեսքով ու կառուցվածքով իրարից շատ տարբեր էին: Օրինակ, Հրուսակարմայան շրջաններում կարելի էր հանդիպել ամրություններ ունեցող պյուղերի: Կային նաև այսպիս կողման սիստեմ պյուղեր, որոնք փուլած էին պատղառու այդինքնի մեջ և մշակում էին շրջակա գաղտները: Պատահում էին նաև տարօրինակ բերգանման պյուղեր, երբ ինչ-որ բարձունքի վրա կանգնած էր լինում մի խոշոր աշտարակ: Որի մեջ բնակվում էր ամբողջ պյուղի բնակչությունը⁶:

¹ G. N. Curzon, Persia and the Persian Question, vol. II, p. 488.

² Генч, «Специальная статистика Персии», Известия Ко ИРГО, 1876, вып. IV, стр. 17.

³ سمعیل کوشانی تگاهی با قتصاد ایران استانبول ۱۹۷۶ جلد ۲

⁴ اول پخشش دوچه صفحه ۱۰۹

⁵ Сборник консульских донесений, 1908, вып. II, стр. 287.

⁶ A. Миллер, Прошлое и настоящее Сейстана, СПб, 1907, стр. 13—14.

⁷ В. Колокольников, Очерки Афганистана, Белуджистана и Персии, М., 1907, стр. 110.

Հնդկանուր տոմամբ XIX դարի երկրորդ կեսին իրանական գյուղերը մեծ չէին, նրանք հաճախ բաղկացած էին լինում ընդամենը մի քանի ծխից, Բայց կային, թեկուզ փոքրաթիվ, և այնպիսի գյուղեր, որոնք համարյա մի փոքր քաղաքի լավ բնակչություն ունեին: Օրինակ, Թաֆթ գյուղը ավելի քան 10,000 բնակչությում լուս 1000 ժուխտ ուներ¹:

Իրանական արխիվներում պահպանվել են մի շարք փառաթղթեր, որոնք հետաքրքիր տվյալներ են հաղորդում XIX դարի երկրորդ կեսին իրանական գյուղերի շափերի, ծխերի քանակի, և՛ ընդհանրապես նրանց բնակչության թվի մասին: Այդ փառաթղթերը ուսումնասիրներ է կամրտունը և Հրատարակել իր գրքում: Այսպիս, Պարաղանի մասին գրված մի գեղուցագրում (1298/1880—1881 թ.) նշված է, որ այստեղ գտնվող գյուղերը մեծ մասամբ փոքր էին: Այդ շրջանում եղած 34 գյուղերից 12-ը ունեին 50 ընտանիքից պակաս, 12-ը՝ 50—100 ընտանիք, 9-ը՝ 100—200 ընտանիք և 1-ը ավելի քան 200 ընտանիք²:

1297/1879—80 թվականի մի այլ զեկուցագրում, որը վերաբերում է Մալայերի շրջանի գյուղերին, ասված է, որ այդ շրջանում կար 59 գյուղ՝ 50 ընտանիքից պակաս բնակչությամբ, 48 գյուղ՝ 50—100 ընտանիքով, 24 գյուղ՝ 100—200 ընտանիքով, 8 գյուղ՝ 200—300 ընտանիքով և 15 գյուղ՝ ավելի քան 300 ընտանիքով: Մալայերի շրջանի գյուղերի ընդհանուր թիվը հասնում էր 154-ի: Մի շարք գյուղերի բնակչության թիվը զեկուցագրում լի նշված³:

1298/1880—1881 թ. զեկուցագրերից մեկում նահավանգի և հազարի գյուղերի մասին արվում են հետևյալ տեղեկությունները: այդ շրջաններում կար 7 գյուղ՝ 50 մարդոց պակաս բնակչությամբ, 14 գյուղ՝ 50—100 հոգի, 20 գյուղ՝ 200—300 հոգի, 10 գյուղ՝ 300—400 հոգի, 7 գյուղ՝ 400—500 հոգի,

1 A. H. Medesdes, Персия, военно-статистическое обозрение, СПб, 1909, стр. 394.

2 A. K. S. Lampton, Landlord and Peasant in Persia, p. 153.

3 Խոշի տեղամ:

4 գյուղ՝ 500—600 հոգի, 2 գյուղ՝ ավելի քան 800 հոգի բնակչությամբ:

Այս զեկուցագիրը ցույց է տալիս նաև այդ գյուղերի մշակելի հողերի տարածությունը ըստ Հողային այնպիսի բաժներ, որը կուզում էր զոյլ՝ Այսպես, 5 գյուղ ունեին 5 զոյլից պակաս հող, 9 գյուղ՝ 5—10 զոյլ, 20 գյուղ՝ 10—15 զոյլ, 12 գյուղ՝ 15—20 զոյլ, 17 գյուղ՝ 20—30 զոյլ, 7 գյուղ՝ 40—50 զոյլ, 5 գյուղ՝ 50—75 զոյլ, 1 գյուղ՝ 100—150 զոյլ և մեկ գյուղ 150—200 զոյլ, Այսպիսով յուրաքանչյուր զոյլ հողատարածությանը միշտին թվով ընկնում էր 9,9 գյուղացի: Բայց, փհարկե, գյուղացիների թիվը և հողատարածությունները բաշխված էին անհավասար: Օրինակ 37 գյուղում յուրաքանչյուր զոյլին ընկնում էր 10 մարգուց պակաս, 36 գյուղում՝ զոյլին ընկնում էր 10—50 մարգ և այլն²:

* * *

Իրանում գյուղատնտեսության հիմնական կուլտուրաներն էին ցորենն ու գարին, որոնք բնակչության հիմնական սնունդը դըն էին կազմում: Սակայն XIX դարի վերջերից սկսած սկսում են մշակվել նաև տեխնիկական կուլտուրաներ, որոնք դառնում են Իրանի գյուղատնտեսության ապրանքատին ճյուղը: Դրա զարգացման պինավոր պատճառը, իհարկե, եզրոպական շուկաների մեծ պահանջն էր 90-ական թվականներին ցորենի և գարու, մինչնիսկ բրնձի փոխարեն Իրանի մի շարք վայրերում մշակում են կակաչ ու ծխախոտ³: Փաստերը վկայում են,

1 Զայք Հողային այնքան տարածություն էր, որ կարելի էր մշակել մի շուրջ եղան սպասիրամբ:

2 A. K. S. Lambton, Landlord and Peasant in Persia, p. 155.

3 Միայնուհան մշակումը Իրանում սկսվեց 1875 թ., այն էլ Գիւտի հաւաքագում (տե՛ս G. N. Curzon, Persia and the Persian Question, vol. I, p. 368), Շետագայամ ավելյ մեծ թափ է առանում ծխախոտի մշակումը: Միայն Գիւտում 1878 թ. 17.374 ման միաբանու է արտադրվել, մինչդեռ 1910-ին այն հասել էր 235.000—270.000 մանի, այսինքն 34 տարվա ընթացքում աճել էր 15 անգամ: Տե՛ս ուստի այլ շաբաթական աշխատանքում աճել էր 15 անգամ:

որ կալվածառերերը ստիպում էին զյուղացիներին մշակել այնպիսի կուլտուրաներ, որոնք արտահանման տեսակետից մեծ նշանակություն ունեին: Բամբակը, ծխախոտը, բրինձը, չոր միրգը, կաշվի հումքը, բուրդը և այլն դասնում են նրանի արտահանման հիմնական ապրանքները: Դա իր հետ բերում էր նաև գյուղատնտեսության որոշ մասնագիտացում: Օրինակ, Գիլանը, որտեղ տեղաբնիրը բավականին առատ էին, վերածվում էր բնձնի մշակման կենտրոնի: Առրավատականը, որը աշքի էր ընկնում իր պառազներով, դառնում է չոր մրգի կենտրոն և այլն¹:

Դարավերջին մասնագիտացված կուլտուրաների մշակումը ավելի լայն տարածում գտավ և ընդգրկեց ամրող երկիրը: Խորասանը արտադրում էր բամբակ, չոր միրգ և բուրդ, Գիլանը, Մազանդարանը՝ բրինձ, մհետարս, Խաֆաճանը՝ ափին, Ասրավատականը՝ լոր միրգ, բամբակ, հացահատիկ, Համազանը՝ աննպամթերք և այլն:

Տեխնիկական կուլտուրաներից մեծ դարպացում էր դանի բամբակը, որը գրավում էր շատ կարևոր տեղ: Թանի որ տերըստիլ արդյունաբերությանը զարգացած չէր երկրում, ուստի բամբակը մեծ մասամբ արտադրվում էր արտահանման համար: 90-ական թվականներից սկսվել է բամբակի արտահանումը նաև Ռուսաստան: Եթե XIX դարի կեսերին Ցաղերի, Խաֆաճանի, Թավրիզի և այլ շրջաններում մեծ քանակությամբ բամբակ էր օգտագործվում ներքին կարիքների համար², ապա դարպամերջին օտարերկրյա մանուֆակտուրայի մուտքը այն նվազագույն շափէ հասցըց: Օրինակ, Խորասանի բամբակի 90 տոկոսը արտահանվում էր Ռուսաստան և միայն 10 տոկո-

1. Արտահանման մեջ մեծ տեղ էր բնելում չոր միրգը: 1899 թ. Ռուսաստանի էր արտահանվել մոտ 1,462,382 ֆութ չոր միրգ՝ 2,251,684 ռուբլի արժույթուայր, ՏԵ՛ս Պ. Ա. Բատիք, «Отчет о поездке в Персию», ч. 1, СПб., 1901, стр. 65—66.

2. Состоиние торговли в Персии, «Вестник промышленности», т VIII, № 4, 1880, стр. 63—64.

որ պահպան էր ներքին շուկայի համար¹: 1890 թ. Իրանի հարավային շրջաններում արտադրվող բամբակից 150,000 բաթման (Բազրիդի) արտահանվել էր Հնդկաստան²:

Ամրող արևմտյան Իրանում, Մազանդարանում և Խորասանում գյուղացիությունը բամբակամշակությամբ էր զբաղվում³: Բամբակագործության հիմնական նահանգներն էին Խորասանը, Խոֆահանը և Մասամբ Ալրապատականը:

Ովեզը գրում է, որ հատկապես ամերիկյան պատերազմի տարիներին, երբ բամբակի շատ մեծ կարիք զգացվեց, Իրանում մեծ զարկ ստացավ բամբակագործությունը: Բայց ու երկար չափեց⁴:

Այսպիսով, 900-ական թվականներին երկրից արտահանվող ապրանքների մեջ էին զերորդորդը կազմում էր բամբակը:

Մեծ թափով սկսեց զարգանալ մետաքսի մշակումը: 1893—1903 թթ. միայն Դիլանի Նահանգում մետաքսի հումքի արտադրանքը աճեց մոտ 45 տնգամ, իսկ մետաքսի բոժոքի արտադրանքը 1880—1900 թթ.՝ մոտ ութ տնգամ: Այսպիսով, XIX դարում մետաքսագործությունը և մետաքսի կուրքների արտադրությունը բավականին շոշափելի տեղ գրավեցին երկրի տնտեսության մեջ: Պարսկաստանի մետաքսի կառուները մինչ այդ մեծ համբավ էին ձեռք բերել ամրող աշխարհում և շարունակում էին մեծ պահանջներ ներկայացնել: 1864 թ. սկսված համանարակի տարածման հիմնաթուզ մետաքսագործությունը մեծապես տուժեց: 1869 թվականին մետաքսի արտադրանքը պահանջեց մոտ շորո հինգերորդում: Երկար տարիներ պահանջվեց այդ կորուստը վերականգնելու և մետաքսագործությունը նախկին վիճակին հասցնելու համար⁵:

¹ «Сборник консульских донесений», вып. V, 1905, стр. 347—348.

² П. А. Риттих, Отчет о посадне в Персии, ч. I, стр. 208.

³ П. А. Риттих, Политико-статистический очерк Персии, стр. 91.

⁴ С. І. Уіллз, Persia as it is, London, 1886, p. 234. Բամբակի ցանքարկությունը մեծ մասմբ Հազարք վերցնում էր բերքի 5/4-ը, իսկ զրոյթը՝ 1/4-ը: «Сборник консульских донесений», 1905, вып. V, стр. 349.

⁵ لـ دامغانی ... سفرنامه هاتری را

Մետաքսի արտադրանքի քանակի մասին գաղափար կազմելու համար ստորև արվում է Գիլանի նահանգի մետաքսի արտադրանքի պատկերը 1866-ից մինչև 1882 թվական-ները:

1866	612,500 կգ	1872	286,500 կգ
1867	503,400 *	1873	247,400 *
1868	403,400 *	1874	644,700 *
1869	328,800 *	1875	243,400 *
1870	418,100 *	1876	263,000 *
1871	330,400 *	1882	177,000 *

Մետաքսի արտահանմանը մասնակցում էին նաև օտարերկրյա մի շարք ընկերություններ Օրբինակ, XIX դարի կեսերին մետաքսի առևտուրը ընալի Ազգայատու ընկերության ձեռքում էր կենտրոնացնել: Մետաքսի 80%-ը արտահանվում էր Եվրոպա, 15%-ը՝ Բրուսաստան և միայն 5% -ն էր մեռում ներքին օգտագործման համար¹: Առաջնաց այդ պահանջից էլ ճշնելով՝ մետաքսի բոժոքի արտադրությունը և արտահանումը գնալով աճում էր: Եթե 1893 թ. Իրանից արտահանվել էր 2100 փութ բռնուժ, ապա 1900 թվականին այն աճել էր մինչև 45,700 փութի, իսկ 1909 թ. մինչև 80,400 փութի²:

Կակաչի մշակումը Իրանում սկսվել էր 1854 թվականից և ըստ ամենը տար ամարի հետո արդեն երկիրը ափիուն էր արտահանում:

Կակաչի կուլտուրայի մշակմանը աստիճանաբար սկսեցին ավելի մեծ ուշադրություն դարձնել կենտրոնական և Հարավային Իրանի շրջաններում: Տարեց-տարի այն ավելիք լայն տարածություններ ընդգրկեց: Դրա անձնական բացառական հետևանքը եղած այն, որ Հացահատիկի մշակումը մեծապես աշխաթող արվեց և հացի զինը բարձրացավ:

70-ական թվականներից սկսած կակաչի մշակումը արածվեց նաև այլ նահանգներում, ինչպես, Իսֆահանում, որ-

1 Состояние торговли в Персии. «Вестник промышленности», т. VIII, № 4, 1880, стр. 53.

2 «Сборник консульских донесений», вып. I, 1910, стр. 78.

առնոց գլուղացիները ցորենի փոխարեն սկսեցին կակաչ ցանելի¹: 80-ական թվականներին կակաչի մշակումը էլ ավելի մեծ շափեր ընդունեց, իսկ դարավերջին ափիոնի արտահանումը այսպիսի արտադրությունը է հասավ, որ սկսեց մրցել Հնդկաստանի հետ:

Հետաքրքրական է նշել, որ կառավարությունը ինքն էլ բարձալիքում էր ափիոնի մշակումը:

Ինրանի դյուլատնախության պատմությունը գրքի հեղինակ Թագի Բահրամին զրում է, որ կակաչի մշակումը սկսվել էր զաշարների իշխանության սկզբից և հատկապես լայն տարածում էր գտնել նաև էդ թիվ շահի օրոք: Թահրանում անգիտական դեսպանության բժիշկ Նելիքանը գտնում էր, որ ափիոնի սպառողթումը իրանում առաջացել էր XIX դարի երկրորդ կեսին: Իրանական ափիոնը առաջին անգամ լունդոն էր բերվել 1870 թվականին, այն էլ շատ ցածր որակի Միայն 1880 թվականից կակաչի մշակումը լայն ծավալ է ընդունում և ընդգրկում է Իրանի 26 նահանգներից 18-ը: Անգլիացի մայոր Նյումանը վկայում է, որ այդ ժամանակ մոտ 400 հազար քառակուսի մզոն տարածություն հատկացվել էր կակաչի մշակմանը²:

Վերը ասվեց, որ կակաչի մշակման այդպիսի լայն տարածումը երկրում ստեղծում էր սննդամթերքների մեծ գժվարություններ:

Կառավարությունը մեծ հկամուսներ ունենալով ափիոնի արտահանումից, խրախուսում էր այդ կուլտուրայի մշակումը, ուստի և 1888 թ. հրամայվում է լավագույն Հռղերը հատկացնել կակաչին: Այդ մասին է վկայում Ռիլզը: Նա գրում է, որ ափիոնի կակաչը մշակվում էր հատկապես ֆարսում ու թերմա-

فردوس آصیت امیر کبیر و ایران یا در حق از تاریخ سیاسی¹

ایران تهران ۱۳۲۳ چند دو صفحه ۶۶

تقی بهرامی تاریخ کشاورزی ایران تهران ۱۹۵۰ صفحه ۸۷-۸۸

նում, ինչպես նաև Կենարոնական ու Հարավային Իրանի առ նահանգներում, ցորենի դաշտերի հաշվին ընդարձակվում էր կակաչի մշակումը. Իսֆահանի շրջանում ինչըքան որ աշըը կարող էր տեսնել կակաչ էր ցանվում, միայն այս կամ այնտեղ փոքր հողամասերում ցորեն կամ զարի էր երևում, այն էլ անձնական կարիքների համար¹. Հենց այդ պատճառով էլ ուրիշ նահանգներից հացահատիկ յրերելու դեպքում այդ շրջանները մատնվում էին սովոր: Արխիվային նյութերը ուսւց են տալիս, որ Թաջանի շրջանը մեծ քանակությամբ ժիախոտ, բաժրակ և կակաչ մշակելու հետևանքով ստիպված էր Արտքից. Դոմից և առ տեղերից հացահատիկ ներմուծելու:

1869—1870 թթ. անդի ունեցած սարսափելի սովոր, որը ավելի քան մեկ միլիոն մարդկային կյանք խլեց, ստիպեց վերադառնալ նախկին կուլտուրաների մշակմանը:

Իրանի ափինը մեծ քանակությամբ արտահանվում էր Ասուլիս և բազմաթիվ շուկաներից, հատկապես Մինական շուկայից, գուրս էր մզում Օսմանյան կայսրությունից ներմուծվող ափինը: 1871 թվականին Իրանից արտահանվել է 696.000 ոռուի արժողությամբ ափին, իսկ 1881 թ. այդ գումարը հասել է 8.470.000 ոռուիին²: 1888 թ. Իրանից ափին է արտահանվել հատկապես դեպի Չինաստան 148.523 ստերլինգի, իսկ 1889 թ.՝ 231.521 ստերլինգի³:

Ափինի արտահանման շափերի մասին հավաստի նյութեր են պահպել հարավային Իրանի մի շարք նավահանգստների մաքսաների արխիվներում: Այդ նյութերից նրանում է, որ 1871—1872 թթ. ափինի արտահանումը Պարսից ծոցի վրայով կազմել է 870 արկղ՝ մոտ 1.522.000 ֆրանկ արժությամբ: 1881 թ. այդ քանակը ազելանում է մոտ տասը ան-

¹ C. J. Wills, Persia as it is, London, 1886, p. 235—238.

² Յ. Ս. Վոլֆոն, Персы в их прошлом и настоящем, М., 1909, стр. 61.

³ ՇԳԲԱԼ, ֆ. 76, լ. 235, լ. 32.

⁴ C. J. Wills, Persia as it is, p. 235—238.

⁵ J. B. Bishop, Journeys in Persia and Kurdistan, vol. I, p. 3.

դամ և Հասնում մինչև 7.700 արկղի՝ 21.175.000 ֆրանկ արժողությամբ¹:

Յազդից և Թերմանից Բանդար Արբասի վրայով ափիոնի արտահանումը 1880—1890 թթ. ամեն տարի միշին թվով 6348 փութ է կազմել, Հետագայում այն պակասել է և 1890—1900 թթ. տարեկան 2540 փութ է կազմել, Այդ ափիոնը արտահանվում էր Հնդկաստան, Անգլիա, Ամերիկա և Բելգիա²:

Մեծ գարգացում է ապրում նաև բրնձի արտադրությունը, բրինձը դառնում է երկրից արտահանվող կարևոր ապրանքներից մեկը: Որոշ ազգյուրենիրի ավալներով Մազանդարանից և Գիլանից բրինձ էր արտահանվում Ռուսաստան տարեկան մոտ 3,600,000 փութ, կամ 58,054 տոննա՝ մոտ մեկ միլիոն թուան արժողությամբ³: Ջեմալ զադեն հազորդում է, որ 1872—1910 թթ. Ռուսաստան արտահանվող բրնձի քանակը ազելացել էր 58 տեսամբ⁴:

Այս բնագավառում տեղի էր ունենում նույն պրոցեսը, ինչ հացահատիկի ասպարեզում, երբ մի կողմից երկրից բրինձ էր արտահանվում, իսկ մյուս կողմից բրինձ էր ներմուծվում: Օրինակ, Հյուսիսային շրջաններից մեծ քանակությամբ բրինձ էր արտահանվում Ռուսաստան, իսկ մյուս կողմից Հնդկաստանից ահազին բրինձ էր ներմուծվում⁵:

Պրոշակի աշխատանքներ Քին տարվում նաև շաքարի նակնդեղի արտադրության ուղղությամբ, կատարվում էին շաքարի արտադրության փորձեր. Նասր էդ Դին շահի ղեպի Մազանդարան կատարած ճամփորդության օրագրում նշված է Ալի Արազի մուտակայրում շաքարի եղեղնից հյութ քաշելու մի քանի արհեստանոցների մասին⁶:

1. *P. A. Риттих. Политико-статистический очерк Персии*, стр. 88.

2. «Сборник консульских донесений», 1908, вып. II, стр. 292—293.

3. *G. N. Sargson. Persia and the Persian Question*, vol. II, p. 486.

4. *تاج محل را داد ... جمال*

5. *Тер-Гукасян. Экономические интересы России в Персии*, СПб, 1915, стр. 68.

6. *میرنامه ناصر الدین شاه بخراسان ۱۳۰۲ صفحه ۴۸*

Իրանում շաքարի արտադրության առաջին քայլերը կատարվեցին XIX դարի վերջերին։ Այդ մասին հաղորդում է Համալ զաղեն, ինչպես նաև Ռիազին։ 1893-ին Թէհրանից ոչ շեուու գտնվող Թաճրիկաբում Հիմնադրվում է շաքարի գործարան։ Այդ գործով զրադվում էր վաղիր էմիրն էդ Շոլին, որը գործարանը հումքով ապահովելու համար ընդուրաձակում է նաև ճակնդեղի ցանքատարածությունները։ Մակայն սկզբան գործը տեսում է ընդամենը երեք տարի, բայնի որ ուստական առնարականները, որոնք իրենց ձեռքում էին կենտրանացրել իրանի շաքարի մենաշնորհը միջոցների են դիմում և գործարաններ փակվում է։

Մեծ գործ էր կատարվում նաև թեյի մշակությունը զարգացնելու ուղղությամբ։ XIX դարի վերջերին Իրանի կառավարությունը Լաթիշանում թեյի կուլտուրայի մշակումը աշարժեց համար 30,000 թուման զրամ է հատկացնում²։

* * *

Ինչպես ասացինք, Հողագործությունը իրանի անտեսության հիմնական ճյուղն էր, բայց ոչ երբեք ժողովրդական հարատության ազդյուրը։ Իրանի հարաբակական կյանքում տեղի ունեցող խմբումները փոխում էին նաև Հողատիրության ընույթը։ Մուլթադարության զարգացումը իր հետ բերում էր կապիտալիստական հարաբերությունների առզմնավորում իրանական գյուղում։ Այդ պրոցեսը տեղի էր ունենում գոնդար, բայնի որ ֆեոդալական կարգերը գեռեւ զերիշշառում էին և խանգարում կապիտալիստական հարաբերությունների զարգացմանը։ Իրանի իշխող խավերը՝ ֆեոդալական ազնվականությունը և ինքը՝ շահը, շահագրգոված էին այդ հարաբերությունների պահպանումով, իսկ մյուս կողմից այդ գործում

¹ ابراهیم ریاحی، تحقیق در تاریخ قلند ساری ایران تهران ۱۹۷۷ صفحه ۱۲۰-۱۲۱ جمال (اد) ... مسکن ...

² АВПР, ф. Персид. стол. д. 779, л. 70.

նրանց հովանավորում էին իմամբիալիստական տերությունները:

Հասկանալի է, որ այս ամենը խիստ բացասարար էր անդրագանում երկրի անահատիթյան ընդհանուր պիճակի վրա: Կենսածակարդակը Թրանում ընդհանուր առմամբ բավական ցածր էր: Կյանքը մեծապես թանկանում է հատկապես ՑՕ-ական թվականներին: Հարուստների և ունուրների պահանջները աճում են, նպաստելով շահագործման ուժեղացմանը: Տեղի էր ունենում հարստության անհավասար բաշխում, մի կողմէց՝ առաջանում էին փոքրաթիվ հարուստներ, մյուս կողմէց՝ գյուղացիական մասսաները իշխում էին ծայրանեղ ազգատության աստիճանի: Երկրը ապրում էր տնտեսական կրախ: Միսիսներ Ֆեյմ Բասեթը, Նկարագրելով ստեղծված ժանր զրությունը, գոլիս է այն եղանակացության, որ տայտ վիճակի միակ բուժումը. իրերի բնական ընթացքում, բնակչության նվազումն է՝ պատերազմի կամ սովոր միշտովման:¹

Սա ինչպես տեսնում ենք, մալթուսականության վառ դրսնորումն է, հակամարդկային իր էությամբ, և նպատակ ունի շրջանցել ստեղծված զրության մի շարք էական պատճառներ:

Տնտեսական զրության ժանրացմանը նպաստում են մի շարք հանգամանքներ: Դրան ազելանում է նաև 1859—1873 թվականների արտավճարի առվը, մետաքսագործության ապարհում տարածված համաճարակը և այլն:

Երկրի տնտեսական կյանքի խոր ճգնաժամը բավական երկարատև եղավ: Այն տևեց 1854—1884 թվականները: Եղնածամից դուրս գալու համար կառավարությունը անընդհատ ավելացնում էնակների պահության մեծամասնությունը կազմող գյուղացիության վրա: Հսու Թերզոնի պետական հարկերը աներեզակայելի շափերի հասան և միայն պարսիկ գյուղացիության և ստորին դասակարգերի, որոնց վրա բարդվում էր հար-

¹ J. Bassett, Persia, The Land of the Imams, 1887, London, p. 260.

կերի ամբողջ բնոր, չափավորությունն էր, որով և բացատըրվում է, թե ինչպես էին ընդհանրապես այդ հարկերը գանձվում։

Սովոր և համաճարակների ազերածությունների մասին բազմաթիվ փաստերի կարելի է հանդիպել տարրեր սկզբանաշրջուրեներում։ Օրինակ, Օգորովնիկովը վկայում է, որ սովոր և նրան հնանող խոլերայի համարակի հնուանքով 1869—1870 թվականներին ոչնչանում է երկրի ամբողջ բնակչության մոտ մեկ երրորդը¹.

Այդ տարիներին սովոր խրանիկական բնույթ էր կրում և մեծ ազերածություններ էր կատարում։ Որոշ հեղինակներ այդ երրույթը փորձում էին բացատրել կլիմայական ընդհանուր պայմաններով։ Սակայն միապամայն պարզ է, որ դա ուներ սոցիալական խոր արմատներ։

Երկրի տնտեսական ժամանակության և հանախակի համաշարակների պատճեններից մեկն էլ հազորդակցության ճանապարհների և ինֆորմացիայի բացակայությունն էր։ Հանիս սահմանամերձ շրջանները՝ անզիտակե երկրում իշխող բերքի վիճակին, իրենց հացահատիկը արտահանում էին, որի հետեւանքով և աննդամթերթները խիստ կերպով պահանջում էին երկրում և առաջացնում առվ ու գրան հնանող բռնմունք։ Օրինակ, 1889 թ. Իրանի Ռուսաստան է արտահանում 270,083 փութ հացահատիկ, ատիպված լինելով հենց նույն տարին Ռուսաստանից ներմուծելու 961,847 փութ հացահատիկ².

Հանրի մեջն թալմանը գտնում է, որ սովոր մեծ մասամբ պահպանատեսության մեջ իշխող անարխիայի արգումեր էր։ Դրան ազերանում էր նաև հազորդակցության ճանապարհների

¹ G. N. Carson, Persia and the Persian Question, vol. I, p. 440.

² Н. Озоробчиков, Записки Ко ИРГО, 1876, т. 10, вып. 1, стр. 229.

³ П. А. Ритих, Политико-статистический очерк Персии, СПб, 1896, стр. 83.

⁴ П. А. Ритих, Отчет о поездке в Персию, ч. 1, СПб, 1901, стр. 65.

պակասը, գյուղատնտեսական կուլտուրաների համարական են և այլն: Բացի այդ, գյուղացին աշխատում էր իր ուժերից ավելին և ստանում նվազագույն արդյունք: բերքի մոտ ութ տասներորդը տանում էր կալվածատերը և գյուղացին ստիպված էր դժվարին ապրուստ քարչ տալ¹:

XIX դարի երկրորդ կեսին անբերրի տարիներ են եղել 1860, 1868, 1869, 1870, 1871, 1879, 1890, 1893 թվականները:

* * *

Իրանի միահիմն զեկավարը շահն էր, երկիրը նա կառավարում էր յուրովի և ուներ իր ավանդական, մշակված ձևերը:

Ազրյուրները հետաքրքիր նյութեր են հազորդում շահի իշխանության և նրա թույլ տված անօրինականությունների վերաբերյալ: Թիշովից արժեքավոր դիտումներ է կատարել շահի զեկավարման ձևերի մասին: Նա գրում է. ակնհայտ է այն փաստը, որ շահը ինքը կառավարությունն էր: Նա բացարձակ քունապետ էր և ենթակա չէր ու մի վերահսկողության, բացի եվրոպական մարդուից քննադատություններից և եվրոպական դեսպաններից: Նա միակ գործադիր իշխանությունն էր, նրա մինիստրները բարձրաստիճան ծառաւներ էին, որոնց պարտականությունն էր կատարել շահի հրամանները: Բոլոր հպատակների կյանքն ու ունեցվածքը ենթակա էին: Նրա բաժանանությունն է Մինչնիսկ նրա որդիներն էլ գործիք էին նրա ձեռքում: Որոնք կարող էին բարձրանալ կամ իշնել նրա ցանկությամբ: Այդ իշխանությունը տարածվում էր նաև պետական բոլոր պաշտոնյաների վրա, որոնք նույնքան դաժան էին իրենց ենթակաների նկատմամբ: Երկրի բոլոր շրջաններում համատարած գժգոհությունն կար տեղական զեկավարների գիշատիչ ու թալանչիական կառավարման եղանակների դեմ: Փաստերը ցույց են տալիս, որ այդ գժգոհությունները և գանդատները միանգամայն հիմնավորված էին: Հարկերի սահմա-

¹ 19 հաշվում սգրության մեջ մատուցված է այս տեսական պատճենը:

նումը, պաշտոնների առուժախի ենթակա լինելը, կաշառակերպության տարածված սիստեմը, ապիկար աղմբինիստրացիան, պաշտոնյանների անկայում զինակը և նրանց շուրջը լարվող գավաղությունները ստեղծել էին բավական ժանր վիճակ և ոչնչացնում էին ամենաազնիվն ու լավը:

Եթե բոլոր պաշտոնները գնվում էին կաշառքով և ոչ ոք ապահովություն չուներ, որ կաշառքը կամ դավագրությունը կարող էր ամեն բոլք նրան պրկել իր պաշտոնից, ապա միանգումայն բնական է, որ ամենամեծ պաշտոններն զրադեցնող մարդիկ անգամ վտանգվելով՝ ստիպված ոչ մի միջոցի առաջ կանգ չէին առնեամ, նրանք թալանում էին ժողովրդին առաջելագույն շափուկը Պարսիկ գլուղացու ամենամեծ դժբախտությունն էլ հենց դրա մեջ էր, որ նրա աշխատանքի արդյունքը ոչ մի ապահովություն չուներ: Տալով նրանի կառավարման սիստեմի վերոհիշյալ պատկերը, Բիշովից հանգում է այն եղբակացության, որ նրանի թուլությունն ու քայլայվածությունը արդյունք էր իշխող վարչական սիստեմի և ոչ թե այլ պարագաների, որոնք նույնպես վերջինն հաջուկ արդյունք էին վատ կառավարման¹: Ծրմությների նման մեկնարաանություններելի է գտնել բազմաթիվ այլ հեղինակների աշխատություններում:

Հասկանալի է, որ շահի համար հեարավոր չէր ուղղակիորեն հարարերության մեջ մանել հողի վարձակալների, կալվածատերերի հետ: Անհրաժեշտ էր ունենալ այնպիսի պաշտոնյաններ, որոնք միշնորդ լինեին իրեն և հոգատերերի միջն, գանձենին հարկերը և տուրքերը, վարչական իշխանություն հանդիսանալով՝ հսկելու դատարաններին, մի խռովով իրականացնեին շահի գերիշխանությունը:

Այդ պաշտոնյաններից ամենակարևորը նահանգապետի կամ ինչպես նրանում նրան անվանում էին՝ հաքեմի պաշտոնն էր: Այդ պաշտոնը ենթակա էր առուժախի, բանի որ իշ-

¹ J. B. Bishop, Journeys in Persia and Kurdistan, vol. II, pp. 255, 257, 259.

խող խավերի առանձին ներկայացուցիչներ, շահին որոշակի դումար վճարելով, ստանում էին նահանգապետի պաշտոնը և փաստորների գառնում տվյալ նահանգի տերն ու տիրականը¹:

Նախքան այս հարցին մանրամասն անդրադառնալը, անհրաժեշտ է նշել, որ խանը կամ կալվածատերը պատասխանատու անձ էր նահանգապետի մոտ, որին նա պարտավոր էր յրիվ կերպով առանց որևէ պակասեցման տակ նշանակված դումարը՝ դրամով, հացահատիկով, անասունով, ինչպես նաև սեղամթերք և դրամ գյուղերում գտնվող զինվորների պահպանման համար օթե խանը իր այդ պարտականության մեջ թիրանար, նրան կամ ձերբակալում էին, կամ պատժում ճիպուսի հարգածներով, վճարվող գումարը նշանակելու ժամանակակիցու ժամաները սովորաբար սակարգություն էին հանդիսանում էին նահանգապետի հետ, նրանց հաճախ մատնում էին իրենց հարեւան հակառակորդին, շափազանցրած ձևով նկարագրում նրա հարստությունը և նվազեցնում իրենց ունեցվածքը: Այդպիսի հարաբերությունները նարպետների օգտագործվում էին նահանգապետների կողմից՝ հարկերը ավելացնելու նպատակով²:

XIX դարի երկրորդ կեսին, վարչական զեկավարման հարմարություններից ենելով, երկիրը բաժանված էր 12 նահանգների³: Թիրարը եղամ է, որ յուրաքանչյուր նահանգում նահանգապետը պարտավոր էր աշխարհիկ և հոգեոր հիերարխիային թոշակ նշանակել, հիերարխիա, որը շահի հենարանն էր: Այդ թոշակը նշանակելիս հաշվի էր տանը նրանց հասարակական դիրքը, անցյալի գործունեությունը, ժաղովությունը, անձնական ազգեցրությունը և բազմաթիվ այլ հանգամանքներ: Ոչ մի բան այնքան չէր նպատակ դաշտական հարստու-

1. Л. Бодамов. Персия в географическом, религиозном, бытовом, торговле-промышленном и административном отношении, СПб, 1909, стр. 119.

2. Максимович-Васильковский. Отчет о поездке по губернаторству Западной Персии, стр. 25.

3. А. К. Артаманов. Персия как наш противник в Закавказье, стр. 19.

թյան իշխանության շարում ակմանը և ապահովում տարրեր նահանգների և ծայրամասների հնմարկումը, որբան նահանգապետների և տեղական ազնվականության միջն գոյությունն ունեցող մշտական խռովությունը։ Երբեք նահանգապետներին չէր հաջողվառ լրիվ կերպով հենվել իրենց նահանգի վրա, որպեսզի հնարավորություն ունենան ապստամբել կենտրոնական իշխանության դեմ¹։

Նոր նշանակված նահանգապետը շահին տված նվերների և կաշառքների հետևանքով իր միջոցները սպառնելով, նահանգ գալու պես աշխատում էր արագ վերականգնել իր կորուստները և կուտակել նոր հարստություն՝ աև օրգա համար Բայց պատահում էր նաև այնպես, որ որևէ նահանգապետի նշանակելուց հետո գալիս էր և մեկ ուրիշը, որը ուզում էր նրա անոնց զրազեցնել։ Այդ զենքում վերադաս վարշավյունը, երկրորդից գումար վերցնելով, աշխատում էր ամենալնշյն առիթով հեռացնել առաջինին։ Այս նոր նահանգապետը անմիջապես սկսում էր նորից հարկեր հավաքել և այսպես շարումակ։ Սուշ-բուզաղի շրջանում 1900 թվականին այս նույն եղանակներով փոխվեցին երկու նահանգապետներ։ Առաջինը հարկերը հավաքելուց հետո հեռացվում է Աստրապատականի դեներալ նահանգապետի կողմից, երկրորդը՝ հարկերի հավաքից հետո, որովհետև խաները, հենց նույն գեներալ նահանգապետին գանգառներ ներկայացնելով և կաշառքներ տալով, պահանջել էին հեռացնել նաև երկրորդ նահանգապետին։ Վերջապես գալիս է երրորդը, բայց քուրդ խաները հրաժարվում են երրորդ անգամ հարկ տալ։ Երբ նա սպառնում է, որ ինքը անձամբ բռնի կերպով հարկերը կհավաքի, ապա խաները հայտնում են, որ նրանք զինված դիմադրություն ցույց կտան։ Գեներալ նահանգապետը ստիլված նրան ևս հեռացնում է և նշանակում Արդարիլի նահանգապետ։ Այս գործը հասնում է մինչև Թեհրան, որտեղից նշանակվում է շորրորդ նահանգապետը։ Մոզաֆար Մոլքը, որը

¹ В. Берар. Персия и персидская смута, 1912, стр. 268.

երրորդ անգամ լինելով, Հարկերը հավաքում և նվերներ է տանում Թէհրան։ Թիակլությունը նորից դիմում է գեներալ նահանգապետին, բայց վերջինս պատասխանում է, որ նահանգապետը նշանակված է Թէհրանի կառավարության կողմից և ինքը ուշինչ անել չի կարող նա խորհուրդն է առաջին վճարել պահանջվող գումարները և Հաշտ ապրել Մոզաֆար Մութի Շատ, մինչև Հարմար առիթ լինի նրան հեռացնելու համար, այլապես լրիվ կերպով կավերվեն նրանց կալվածքները։ Խաները և կալվածատերները սկզբում մտադիր էին Համենայն դիպու շվեյցարելի Բայց Մոզաֆար Մութի նրանց ճարպկորեն խարում է։ Նա սպասում է մինչև որոշ շափով Հանդարտվում են կրթերը և, Հանկարծակի գրուելով դժուռ խաների երկու կազմակերպիչների վրա, ձերբակալում է նրանց և ուղարկում Թէհրանի բանագույն Զնայաժ խաները սպառնում են ոչինչ լվացարել մինչև բանտարկվածները շագատվեն, սակայն իրենց մորթու վախից յուրաքանչյուրը առանձին-առանձին Մոզաֆար Մութին վճարում է պահանջվող գումարը¹։

Այսպիսի փաստերի կարելի էր հանդիպել ամենուրեք իրանական սկզբնաղբյուրները Հարուստ նյութ են պարունակում վարչական ապարատի նման պրակտիկայի վերաբերյալ, որը որոշ իմաստով արդեն վերածվել էր կարգի։

Ուկլուը, որը որպես թժիշկ աշխատել էր Իրանում, 1886 թ. Հարատարակած իր «Իրանը ինչպես որ կա» գրքում նշում է, որ պետական պաշտոնյաները ունեին իրենց ոռոճիկները՝ Յուրաքանչյուր պաշտոնյան ուներ իր արտօնությունները՝ ճճշելու ենթականերին և պաշտպանվելու ուրիշներից։ Սակայն պաշտոնյաները Հաճախ ոռնիկ չեին ստանում, այլ ընդհակառակը, իրենց ոռոճիկից շատ ավելի մեծ գումարներ նվերներ էին տալիս շահին կամ նրա մինիստրներին։

Թուրք պաշտոնյաները՝ սկսած մեծ վեզիրից մինչև ներքեւ ունեին իրենց օրինականացված եկամուտները կամ, ինչպես

¹ Максимович-Васильковский. Отчет о поездке по губернаторствам Западной Персии... Тифлес, 1903, стр. 25—26.

Իրանում էին անվանում, մողախելը, որի շափերը կապված էին պաշտօնյայի գիրքի համար։ Այն ամենից, ինչ անցնում էր պաշտօնյայի ձեռքով, ինչ-որ բան մնում էր նրան, և ինչքան շատ լինեին նրա գործերը, այնքան շատ էին նրա եկամուտները։ Իրանում ամեն ինչ վաճառվում էր՝ նահանգապետի, զատավորի, Հոգմոր գործերի պաշտօնները և ամեն ինչ¹։

Այսպիսով, բոլոր պաշտօնյաները՝ նայած իրենց պաշտօնի եկամտարերության, իրենց վերադասներին ինչ-որ բաժին պիտի տայինն²։

Նասր էդ Դին շահի ժամանակ տարրեր նահանգների համար որոշակի գումար սփեշբաշը էր սահմանվել, որը նահանգապետները պարտավոր էին վճարել շահին նախանձ իրենց պաշտօնավայրը մեկնելը, իսկ այնուհետև կրկնել յուրաքանչյուր տարի։ Օրինակ, Զարսի և Խորասանի նահանգապետները յուրաքանչյուրը տալիս էր 200 հազար թուման, այն էլ ամեն տարի նոր տարվա նախօրյակին որպես սփեշբաշը (ընծա) շահին³։

Միանգամայն հասկանալի է, որ եթե որևէ նահանգապետ իր պաշտօնը գնելու համար շահին տալիս էր, որինակ, 30,000 թուման, այն էլ մի պաշտոն, որից նա կարող էր զրկվել ամեն բոլոր համարար նա պետք է ձեռք բերեր դրանից շատ ավելին և քանի զբաղեցնում էր այդ պաշտօնը, պիտի քամեր ժողովությունից հետո պատճեն կարող էր։

Թիշոփը, որ 1890 թ. եղել է Իրանում, գրում է, որ նահանգապետի կողմէից շահին տրված գումարը վերջինիս եկամուտն էր, իսկ եթե նահանգապետը 60,000 թուման հարկ գանձելու իրավունքը զիշում էր 80,000 թումանի, ապա արդ 20,000 թումանը նրա եկամուտն էր։ Եվ այսպես այդ սիստեմը տարածվում էր բոլոր պաշտօնների և նշանակումների վրա և գիշատիչ շա-

¹ C. J. Willis, Persia, ss II 18, p. 13.

² J. Bassett, Persia, The Land of the Imams..., p. 275.

مرتضى حسینی تهرانی اصول علم مالیه و کوانتین مالی ایران ³
تهران 1905 صفحه ۱۳۰

Հազործման եկամտաբեր աղբյուր էր: Դա կիրառվում էր պետության բոլոր հիմնարկներում, ազգ թվում և բանակում¹:

Հարեմների և այլ պաշտոնների առուժախի առարկա լինելու մասին ուշադրավ փաստ է Հաղորդում Քերզոնը, ավաստիքացի բարոն Ֆոն Թեոֆիլոնշտեյնը, որ Սավելի շրջանում որպես Ֆինանսական պաշտոնյա է աշխատել, 1881—1882 թվականներին, կատարել է մի շաբթ ուսումնասիրություններ և հետագայում հրատարակել այն: Ըստ սրբ՝ իր նախորդը այդ պաշտոնի համար վճարել էր 25,000 ֆրանկ, որը համարվում էր շահնի կամ այդ պաշտոնը շնորհող մինիստրի եկամուտը, այն գեղքում, երբ ինքը մեկ ամրում հավաքել էր 80,000 ֆրանկ:

Եթե վերցնելու լինենք այն մարդու վիճակը, որը իր պաշտոնը ստանալու համար նշանակալից գումար էր վճարել, ապա կտեսնենք, որ նա, բացի նախապես վճարած գումարի հատուցումից, պետք է նոր գումարներ հավաքեր շահնի կամ մինիստրին յուրաքանչյուր տարի վճարելու համար, պետք է պատրաստ լիներ զնել իր վերադասի բարյացակամությունը և վերջապես, իմանալով, որ ինքը երկար շի մնալու այդ պաշտոնում, ապահովեր նաև իր ապագանք:

Անդրադառնարկ պաշտոնների վճարութի և պաշտոնյաների ապօրինի եկամուտների հարցին, Ուֆլզը գրում է, որ ժողովրդի մեջ բնականորեն տարածված էին այսպիսի հարցեր, թե ինչքա՞ն է այսինը վճարում, որքա՞ն է նրա եկամուտը կամ մոդախելը: Մառայողի մոդախելը այն է, ինչ նա կարողանում էր պոկել առևտրականներից, նաև անգամ պետի մոդախելը՝ ինչ սահմանված նորմայից ավելին նա կորզում էր հարկատությունը, շահնի մոդախելը՝ նահանգապետի վաճառմած պաշտոնը և այսպիս ամենուրեք²:

Այս փաստերը ցույց են տալիս երկրի վարչական ապարատում իշխող բառուային վիճակը, երբ գրամը նշանակումների և ղեկավարման հիմք էր:

¹ J. B. Bishop, Journeys in Persia and Kurdistan..., vol. I, p. 115.

² G. N. Curzon, Persia and the Persian Question, vol. I, p. 442.

³ C. J. Wilts, Persia as it is, p. 238.

Իսկ ինչպես էր Նահանգապետը զեկավարում Նահանգը, ի՞նչ ապարատի վրա էր հենցում նա և պաշտոնական ինչպիսի՝ Հիերարխիա դոյլություն ուներ երկրում:

Խելպես նշանակեց, Նահանգապետի նշանակումը, փոքրաթիվ բացառությամբ իրականում ամբողջ Նահանգը վարձով տալ էր նշանակում, այս էլ անուրդով եթե որևէ տեղ էր ապատվում, ապա հավակնորդներից նրան էր հաջողվում այդ պաշտոնը ստանալ, ով ավելի մեծ գումար էր տալիս և վայելում էր պալատական ինչ-որ ազգեցիկ անձնավորության հովանավորությունը:

Նահանգներում և գավառներում կառավարման գործը իրականացվում էր հոգևորականության, կապաշառու կառավարական վարչության և գյուղական վարչության միջոցով¹:

Հարկահան պաշտոնյաները, խելպես վկայում է Թաղի Բահրամին, Նախարան որևէ գավառ կամ Նահանգ մեկնելը, վճարում էին Նախապես աահմանված որոշակի գումար Տեղերում նրանք գանձում էին պետությանը հասանելիք հարկարը, բայց բանի որ նրանք ազատ էին Հարկերը հավաքել իրենց ցանկացած ձևով, ուստի գյուղացուց վերցնում էին ինչքան որ կարող էին, Այս կարգը գոյություն ուներ մինչև Պաքարների իշխանության վերը, որից հետո պաշտոնյաների համար հատուկ ոռնիկներ է սահմանվում և Հարկահանվաքարությունը դրվում պետական Հսկողության տակ, բայց իրականում նախկին կարգը ավանդական ձևով, բողոքրկված շարունակվում է²:

Մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում Հարկերի հավաքման գործում կարևոր դեր էր խաղում նաև քաղյառութան՝ գյուղի ավագը: Թագիուրաներին նշանակում էին խաները՝ գյուղական գործերը կառավարելու և Հարկերը գանձելու համար: Թագիուրաները հաճախ լինում էին նույն գյուղի բնակիչներից և իրենք էլ զբաղվում էին հողագործությամբ: Ար-

1. Л. Твериков. Из Общественно-экономических отношений в Персии. СПб, 1909, стр. 56.

2. تاریخ کشاورزی ایران تهران ۱۹۵۱ مسکو

րեմն մի քաղխուղա կառավարում էր մի քանի գյուղ: Մրինակ, 1898 թ. Ռահանթարադի շրջանում քաղխուղա Միրզա Աղախան-նը 4 գյուղ էր զեկավարում, մի ուրիշ քաղխուղա՝ 10 գյուղ, մի այլը՝ 6 գյուղ¹:

Քաղխուղաները իրենց պարտականությունների դիմուց կամ ազավամ էին Հարկերից, կամ ավելի պակաս էին Հարկ տալիս²:

Քաղխուղաների Հիմնական ֆունկցիան Հարկերի Հա- վաքան ապահովումն էր: Հարկանաներին ուղարկում էր նահանգապետը, որոնց հաճախ ուղեկցում էր քաղխուղան, նաև վածատիրական բաժնի Հավաքան ապահովման գործում քաղխուղան իր դերը ուներ: Սակայն շնայած այն բանին, որ հաճախ քաղխուղաները նշանակվում էին կալվածատերերի կողմից, վերըիններս իրենց բերքարաժինները հավաքում էին Հատուկ ներկայացուցիչների կամ մորաշիրների միջոցով³:

Որոշ վայրերում քաղխուղան գյուղավորում էր գյուղա- կան խորհուրդը, որը ուներ որոշակի պարտականություններ՝ ցանքսի և ոռոգման գործերը կարգավորելու համար⁴:

Պատշում էին դեպքեր, երբ քաղխուղաները նույնագես- ունենում էին Հողային սեփականություններ, բայց, իհարկե, անհամեմատ ավելի փոքր շափներով, բան կալվածատերերը կամ խաները: Սակայն, բանի որ քաղխուղաների իշխանու- թյունը գնալով աճում էր, ապա XIX դարի վերջերին վերոհիշ- յալ երևույթը արդեն դառնում է համատարած և քաղխուղա- ները հանդիս էին գալիք որպես Հողատերեր: Երբեմն նրանց էին պատկանում մեկ-երկու գյուղ:

Նահանգապետները իրենց իշխանությունը իրականաց- նելու համար ստիպված որոշակի թվով հեծյալներ էին պա- հանմ, որոնք հավաքած Հարկերի որոշ մասը պիտի պահեին

¹ ЦГВИА. ф. 76, л. 183, л. 15.

² Максимович-Басмаковский. Отчет о поездке по губернаторствам Западной Персии..., стр. 27.

³ J. Bassett, Persia, The Land of the Imams, p. 277.

⁴ П. А. Риттих, Политико-статистический очерк Персии, стр. 145.

իրենց կարիքները Հոգալու համար, բայց իրականում հեծյալ-ների մեծ լասց արձակվում էր տուն, իսկ նրանց համար առանձնացված գումարը անցնում էր Նահանգապետին:

Ըսդհանրապես կարելի է տսել, որ փոքր թիվ չեր կազմում իրանի բանակը: XIX դարի երկրորդ կեսին անկանոն հեծելազորը կազմում էր մոտ 150—200 հազար մարդ: Կառավարությունը փաստորեն ի վիճակի շեր հազարելու ու ավելի, բայց 80 հազար մարդ, այն էլ թույլ մարտունակություն ունեցող զորամասեր:

1870 թվականին զորակույինների համար հաստատվում է Հետելյայ կարգը, այն գյուղերը, որոնք տարեկան 20 թուման հարկ էին վճարում, պետք է տրամադրեին մեկ զինվոր՝ 16 տարեկան հաւաքով: Զինվոր ուղարկելու պահին համայնքը պարտավոր էր միանվագ տալ նրան մոտ 15 ուորլու շափ գրամ, մեկ բրդյա շուխու, արխալուզ, շալվար, շապիկ և այլն: Բացի այդ, նրան պետք է տրվեր 100 բաթման ցորեն և մեկ էջ: Սառայության ժամկետը սահմանված էր 20 տարի¹:

Ավերյանովը հազորում է, որ Խոյի հարեմի Հեծյալները նրան պատմել են, որ իրենց ծառայության զինաց նրանք պետք է ստանալին տարեկան երեք խարվար հացահատիկ և 15 թուման կանխիկ գրամ, բայց իրականում նրանք ստանում էին միայն 15 շուք հացահատիկ, իսկ մեացածը հրամանաւարը վերցնում էր իրեն²:

Զինվորներ էին տրամադրում բոլոր գյուղերը, բայց առանձ թյամք այն գյուղերի, որոնք պատկանում էին մոշինիդներին, շեյխ ու փալամիններին:

Վերլուծելով վարչական պատրատի ամրող գործունեությունը Ավերյանովը գալիս է այն եզրակացության, որ զեկավարման ամրող այդ սիստեմը, բայտ էլության, միայն թալանի սիստեմ էր: Բոլոր պաշտոնյաները, սկսած ամենասուրբինից

¹ И. Ограженов. Провинция Персии Ардебильская и Серабская. 1875, стр. 51.

² П. Н. Аверьянов. Отчет о поездке по Северному Азербайджану... в конце 1899 года, Тифлис, 1900, стр. 10.

մինչև բարերագույն կառավարական վարչությունը Թէհրանում և Թավրիզում թալանում էին ժողովրդին։ Այդ գործում պաշտանվաներից ետ չէր մնում Հազմորականությունը։ Եվ այդ բոլորի հետևանքով իրավունքների կատարյալ շարադառում աղմինիստրատիվ ոչեկազմների մոտ՝ մի կողմից, և քայլայված ու աղքատացած ժողովրդի զայրույթը՝ մյուտ կողմից¹։

Իրանի ֆինանսական սիստեմի հիմքը պետական նկամուտների բոլոր բնագավառների վաճառքն էր, որը իր հարուստ էր ֆինանսական, վարչական ու գատական օրգանների, ֆունկցիաների քառու։ Այսպիսով վեզիրները, զենքրալ նահանգապետները և այլ պաշտոնյաներ ոչ այլ ինչ էին, եթե ոչ մեծագույքներ, որոնց հետաքրքրում էր միայն առավելագույն նկամուտը։ Պաշտոնների վաճառքը կարող էր կրկնվել ամեն տարի, իսկ երբեմն էլ տարիւ ընթացքում մի քանի անգամ, եթե զանվեճին թեկնածուներ, որոնք ազելի մեծ գումար առաջարկեին, քան արգել նշանակված ոմեծագնորդից առաջարկած գումարը²։

Այդ ոմեծագնորդներին ներկայացուցիլները աշխատում էին հարավորին շափ շատ կորզել խոզն զյուզացուց, քանի որ բացի պետությանը հասանելիք բաժնից, որոշ մաս պետք է արվեր նաև նահանգապետին ու նրա ներկայացուցչին։

Գետական հարկերի շափերի և նրանց գտնձման նղանակների հարցին կանդագառնանք աշխատության երրորդ գրւխում, Այժմ նշենք միայն այն, որ խանը կամ կալվածատերը հարկերի հավաքան գործում ենթարկվում էր նահանգապետին։ Նրանք պարտավոր էին առանց որևէ այլնայլության աղածովի և նահանգապետին հանձնել նրա նշանակած հարկերը, լիներ դա կանխիկ դրամ, կամ բնամթերք՝ հացահատիկ

¹ Խովն տեղում, էջ 19.

² М. Л. Токарев, Экономическое положение Персии, стр. 79.

على أكبر هيئة تاريخ سياسى ودبلوماسي ايران جند اول
تهران ۱۳۷۷ صفحه ۹۹

կամ անասուն։ Նրանք պարտավոր էին նաև գյուղերում գրա-
նցվող դինվորներին ազատովել ոնեղամթերով և այլ հարմա-
րություններով։

Հարկերի գումարը նահանգապետների կողմից առնման-
վելիս հաճախ սակարկություն էր տեղի ունենում։ Խաները և
կալվածատերերը իրենցից գտնելով հարկերի շափշ պակա-
սեցնելու համար դիմում էին դանաղան խարդախությունների,
իսկ նահանգապետն էլ օգտվելով դրանցից, ավելի էր մեծաց-
նում հարկերը, որոնք գտնելում էին տարին մեկ անգամ,
որով և սովորաբար սկսվում էր նոր նահանգապետի գործու-
նելությունը¹։

XIX դարի երկրորդ կեսին զատական պաշտոնները նույն-
ոքս վաճառվում էին առանձին անձանց։

Արդյունք Մոսթրֆին գրում է, որ կալվածատիրական
գյուղերում հողատերերը հանդիս էին զալիս որպես զատա-
վոր։ Նրանք իրենց այդ ֆունկցիան իրականացնում էին քաղ-
խանգայի կամ իրենց ներկայացուցիչ մորաշիրի միջոցով։
Նույնպիսի վիճակ էր ամբում թիուզային զյուղերում։ Իսկ խոր-
գիմալիքային (Ճանք կալվածատիրական) գյուղերում սովո-
րաբար գտնվում էին հզոր մարդիկ, որոնք իրենց վրա էին
վերցնում զատավորի ֆունկցիաները²։

Այսպիսով, ընդհանուր առմամբ, կալվածատերերի ձեռ-
քում էր զանվում զարշական և զատական իշխանությունը։ Այդ
վիճակը ընդհանուր գերբով շարունակում էր իշխել գյուղում
մինչև XX դարի սկիզբը։ Դա առաջին հերթին նշանակում էր,
որ արտատեսական շահագործումը դեմք շարունակում էր
կարևոր գեր խաղար։

Համբանը այն կարծիքն է հայտնում, որ զաշարների
օրոք, որոշ խմատով, երկրի կառավարման գործում վերա-
դարձ կատարվեց սելլուկների ժամանակվա պրակտիկային։

1. Максимовы Василевские, Отчет о поездке по губернаторствам Западной Персии, стр. 25.

2. مید آنده مستوفی شرح زندگانی من یا تاریخ اجتماعی واداری
دوره قاجاریه چند اول تهران ۱۴۵۰ صفحه ۱۷۸

Նորից նահանգային իշխանությունը տրվեց իշխող Հարստության անդամներն, մի պրակտիկա, որից Հրաժարվել էին սեփական իշխանությունը՝ Ազգելի փոքր նահանգների և գավառների Հարստության նույնագեն նշանակվում էին կենտրոնական կառավարության կողմից, բայց, ինչպես նշում է միսիոներ Ջեյմս Թամերը, ոչդ պաշտոնները հաճախ զբաղեցնում էին տեղի կալվածատերը։ Կալվածատերը միշտ էլ ճանաչվում էր որպես իր ռայախների կամ վարձակալների տերն ու տիրականը։ Դրա համար էլ համընդհանուր վախ որյություն ուներ այն իշխաններից կամ պաշտոնյաներից, որոնք կալվածքներ ունեին ավալ նահանգում։

Թագավորական ընտանիքի անդամների և պաշտոնյաների տանձտությունների ու դաժանությունների, ինչպես նաև զյուղացիական մասսաների՝ նրանց նկատմամբ ունեցած վախի կամ ատելության մասին բազմաթիվ նյութեր են տպագրվել ժամանակի ուստական, անգլիական և գերմանական թերթերում։ Հետաքրքիր է, օրինակ, «СПб Ведомости» թերթի թղթակցի մի նյութը՝ տպադրված 1876 թվականի մայիսի 15 (27) համարում։ Թղթակիցը հազորդում է Թավրիզից, որ իրանում տիրում է Համատարած աղքատություն, ֆանատիզմ և ազգառություն։ Արքայազների բըռնապետության ու շահախնդրության հետևանքով, ժողովուրդը ատում է իր կառավարությանը։ Դյուլի բնակիչների համար չկա ազելի դաժան պատիճ, քան որևէ շահզագեի ժամանումը։ Դժբախտ զյուղացիները այդ դեպքում պատրաստ են լքել իրենց տները և փախչել պաշտերն ու լեռները։ Եթե ալդ Շատրավոր լի լինում, ապա նրանք կառավարական պիշտաբլների հայացքից շտապ կերպով թաքցնում են իրենց թիւ թե շատ պիտանի ունեցվածքը։ Բարձրաստիճան Հյուրի զարու կամ անցնելու օրը նրանք հագնում են իրենց ամենահին հագուստները և մուրացկանի տեսք ստանում։ Բայց այդ խորամանկու-

¹ A. H. S. Lambton, Landlord and Peasant in Persia, p. 135.

² J. Bassett, Persia, The Land of the Imams, p. 278—279.

թյունը ոչ միշտ է հաջողվում, որովհետև ժեմի ու խոշտածնականների միջոցով դուրս են բերվում թարգման արժեքավոր իրերը և զավթվում տեղի ու տեղը¹:

Հոսեյն Թեհրանին գրում է. «Սահմանադրությունից առաջ ընկած ժամանակաշրջանը համարվում է Իրանի տեսականական, ֆինանսական և բարոյական անկման շրջան։ Զարգանֆարմաններն ու հարեմները և ընդհանուրապես պաշտոնյանները ոտքնձգություն էին անում ժողովրդի ուժեցվածքի նկատմամբ և անտեղի ժախսերի հետման և կամ այլ անվան տակ հարավորին լափ խուսափում էին հարկային եկամուտները գանձարան մուժել²։

Կառավարական պաշտոնյանների ոտնձգությունները այնպիսի շափերի էին հասնում, որ հոգատերերը՝ կաշառքներ տալով ձգտում էին լավ հարաբերություններ պահպանի նրանց հետ, այլապես կարող էին գրիվել իրենց հողերից և կալվածքներից, որոնք կրօնագրավվեին և կդարձվեին խալիսներ։ Պատահում էին նաև զեպքեր, երբ կալվածատերները շտապում էին մուժել պետական հարկերը, որպեսզի կանխին պաշտոնյանների մուտքը իրենց կարվածքը³։

Այսպիսին էր ընդհանուր գծերով իրանի սոցիալ-տնտեսական վիճակը XIX դարի երկրորդ կեսին։ Այդ ամենը, անշուշտ, իր կոնկրետ արտահայտությունն էր գտնում հոգատիրության ձևերի, զյուղացիության շահագործման հզանակների և ընդհանրապես ազրարային հարաբերությունների մեջ։

¹ Газетные вырезки из русских, английских и немецких газет относительно Персии 1875—1901 гг., Ленинградская библиотека им. Святых Космы и Дамиана.

² ایز حسینی تهرانی اصول علم مالیه ... ص

³ چمال زاده ...

⁴ G. N. Curzon, Persia and the Persian Question, vol. II, p. 471.

ՀՈՂԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԶԵՎԵՐԻ ՄԵջ ԱՌԱՋԱՑԱՆ
ՓՈՓՈԽՈՒԹՅԱՌՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՄԱՍՆԱՎՈՐ
ՀՈՂԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԴԱՑՈՒՄԸ

XIX դարի երկրորդ կեսին Իրանի սոցիալ-ռազմական կյանքում առաջացած մի շարք փոփոխությունները իրենց անգրագարձումը ունեցան երկրի բոլոր բնագավառներում։ Հողային հարաբերություններում ամենակարևոր տեղաշարժը խոշոր կալվածատիրության ստեղծումն էր, երբ իշխող դասակարգերի տարրերի խավերից դուրս եկած ներկայացուցիչները հակայական հողային սեփականություններ ձեռք բերեցին։ առաջացած հողատիրության նոր ձև, այսպես կոչված մուլգադարային հողատիրություն, որը մեծապես տարբերվում էր հողատիրության նախկին ձևերից, ժառանգական հողատիրությունից, թիուլից և այլն։

Ֆեոդալական-ազնվական դասակարգը և նրանց շահերի պաշտպան պարսից շահը նոր պայմաններում այլնո ի վիճակի շքին խանգարելու անխուսափելի արդ պրոցես, ընդհակառակը, նրանք իրենք էլ, համակերպվելով նոր պայմաններին, ընդգրկվեցին ընդարձակ հողային սեփականություններ ձեռք բերելու մրցավազքի մեջ։

Մուլգադարության առաջացումը և նրա հետագա զարգացումը նոր էտապ էր Իրանի հողային հարաբերությունների պատմության մեջ, որը և գրավել է մի շարք ուսումնասիրողների ուշագրությունը։

Արոշ աղբյուրների վկայությամբ Ֆաթէ Ալի շահի թագավորության շրջանում **XIX** դարի սկզբներին խոշնորուներ էին ստեղծվում Խոշոր կալվածատիրության զարգացման համար, վախենալով նրանց քաղաքական աղղեցության ուժեղացումից: Սակայն հետագա ժամանակներում հետաքորչ չեղավ այդ քաղաքականությանը իրագործել: Առանձին ականատեսներ վկայում են, թե ինչպես աղղեցիկ և պաշտոնյանձինը, մասր հողատերների նկատմամբ զանազան խոշնորական էին նրանց կարևորությունը:

Այդ պրոցեսը, իհարկե, ընթանում էր տարրեր եզանակներով և կրում էր տարրեր ընույթ: Այդ եզանակների ուսումնասիրումը, անշուշտ, հետաքրքիր է և կարևոր, քանի որ այն զբանորում է ճրկրում աիրոզ ընդհանուր սոցիալ-տնտեսական և քաղաքական վիճակը:

Դյուոթյունն ունեցող օրենքների համաձայն նրանում հազարին սեփականություններ կարելի էր ձեռք բերել ժառանգար, զիումով, թագավորի կողմից կատարված նվիրատվության կամ թե ամայի հողամասը մշակելի դարձնելու եզանակով: Ընդունված այս կարգի տարրերը ձևերը տարրեր ժամանակաշրջաններում ունեցել են իրենց նեղ կամ ավելի լայն կիրառումը: Հատկապես ուշադրավ է այն կարգը, ըստ որի յարաբանլյուր մարդ իրավունք ուներ, որնէ անապատային կամ ամայի հողամաս վերցնելով, ստեղծել շրային պաշտր, մշակել հողը և ստացված բերքից պետությանը հասանելիք ընդունված հարկը տալուց հետո համարվել այդ հողամասի սեփականատերը:

Մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում լայն տարածում էր զունում նաև հողի առուժախը:

Ապրանքա-դրամային հարաբերությունների զարգացման հետանքով հողի վրա կապիտալ ներդրումը զարնում էր շահավիտ և հենց այդ պատճառով էլ **XIX** դարի վերջին հողային

զեռութեաները լայն շափեր են ընդունում։ Էղվարդ Սթեքը իր ուկեց ամիսն Խրանում գրքում խոսում է այդ պրոցեսի մասին։ Նա ընութագրում է ոմն Լոթֆ Ալի խանի որպես ոմի գործեակուն և իր շահերը բավականաշափ գիտակցողք անձնավորություն, որը գեռում է աղե լիռան փեշերին գտնվող Թաւուա գյուղը։ Դյուզը նա գնում է 200 թումանով, կառուցում է մի ամրոց, որի համար ժախսում է 250 թուման, իսկ կանաթի նորոգման համար ժախսում 1000 թուման, հողը մշակելու համար գյուղացիներին նա տրամադրում է սերմացու և բանող անառուներ և արդպիսով գառնում նշված վայրի միահիմքան տերը¹։

Նույնպիսի մի գործարք է կատարվել Սարգա գյուղում։ Դա մի ամերկած փոքր վայր է եղել։ Անս գտնվում է մեկը, որ այն գնում է 700 թումանով, գումարներ է ծախսում ամերկած կանաթիները նորոգելու համար և գառնում գյուղի տերը²։

Այսպիսի երմութեան տեղի էին ունեում երկրի բոլոր մասերում։ Աներաժեշտ է նշել, որ արդյունաբերության բացակայությունը Խրանում սահմանափակում էր կապիտալ ներդրութեանը հարավորությունները։ Մյուս կողմից Խրանը վերածվել էր եվրոպական տերությունների հովաքի բազայի, հողատիրությունը դարձել էր եկամաքարեր, ուստի և կապիտալ ունեցող անձինք գերազանցում էին իրենց գումարները հատկացնել հոգային սեփականություններ ձեռք բերելուն և առնարային հոգագործությամբ պարզվելուն։ Դրան նպաստում էր նաև ոյն հանգամանքը, որ հողագործ աշխատութը Խրանում շատ էժան էր և գոյություն ունեցող հողային հարաբերությունների, հողի վարձակալման եղանակների պայմաններում այն հսկայական եկամտաներ էր խստանում հողատիրոջը։

Փաստերը ցույց են տալիս, որ խօշոր հողատիրերը մեծ եկամտաներ ձեռք բերելով, այն ներդնում էին ոչ թե գյուղատնտեսության զարգացման, այլ նորանոր հողեր ձեռք բերելու ասպարեզում։ Առաջեց գրում է։ որ Հաջի Սադը ոչ Մութը

¹ E. Stack, Six Months in Persia, vol. II, London, 1882, p. 256.

² Նույն տեղում։

300 գյուղ ուներ և տարեկան 300 հազար թուման եկամուս էր ստանում, որի մեջ մասը հատկացնում էր նոր գյուղեր ձեռք բերելում։¹

Խոշոր կալվածատերերը միաժամանակ ընդարձակ ազեկուլատիվ գործարքներ էին կատարում, որը իր հերթին մեծ եկամուսների աղբյուր էր գառնում։ Այս հանգամանքը նպաստում էր նոր հողատերերի՝ մուլքադարների վարչական ինքնավարության ուժեղացմանը, որը, անշուշտ, ուղղակիորեն կապված էր հողի նկատմամբ մասնավոր սեփականության ամբ և երկրի տնտեսական կյանքում իրենց դիրքերի ամրապնդման հետ։

Մուլքադարների ձեռքում հողային ընդարձակ սեփակատերթյունների կուտակմանը նպաստում էր երկրում հշխառդ ֆինանսական սիստեմը։ Միծահարուսանները և պաշտոնյա ու ազգեցիկ մարդիկ պետությանց համարյա ոչինչ կամ չատ քիչ բան էին տալիս, իսկ վերջինս մշտական դրամական կարիքի մեջ էր Մյուս կողմից դրամի արժեքը գնալով իրում էր Այս ամենի հետևանքով բնականարար երկրի ֆինանսական ծանր թերը ընկենում էր միշտակ և մանր սեփականատերերի վրայ իսկ վերջիններս սենականալով՝ ձեռքից տալիս էին իրենց հողային սեփականությունները և խոշոր մուլքադարները, հանգամանքը օգտվելով, նորանոր կալվածքներ էին ավելացնում իրենց առանց այդ էլ ընդարձակ սեփականություններին։

Կենարունական հշխանության թուլության հետևանքով հողի վարձակայնները աստիճանաբար անժամկետ վարձակալներից վերածվում էին ժառանգական հողատերերի և գտնում այդ հողերի փաստական տերերը։ Հողային սեփականությունների ընդարձակման մոլուցքը հաճախ մեծ ընդհարումներ էին տուարացնում հարեան հողատերերի միջն։ որոնք վերքանում էին մեկի պարտությամբ, նրա հողերի բուրացումով մյուսի կողմից։ Կառավարությունը ի վիճակի շեր կասեցնելու այդ պրոցեսը, նա միայն բավարարվում էր կալվածատեր դարձած

1 Այրուց, Մամեդ Ալի շահ, Ալեքսանդրովա, 1909, стр. 36.

նախակին վարձակալներից իր հասանելիքը հարկերը գանձելով։ Առաջինանքարար պետությունը ստիլված էր լինում նաև այդ նկամուտներից լզրկվելու համար սեփականատիրական թշութեր տալ նոր հողատերերին, նրանց վերապահելով նաև ժառանգական իրավունք։ Սակայն այդ ևս չեղ կարող բավարարել հողատերերին, որոնք չուտով այդ հողը դարձրին առուծիով առարկա։

Իրավական տեսակետից հողային այդ նոր սեփականությունները կայտն չեն։ Հողերի առուծախուց, գյուղացիության ունեղորդումը, վարչական ապարատի նեխամաժությունը մեծ խճճվածություն էր մատցրել։ Հաճախակի կարելի էր հանդիպել այնպիսի վիճակի, երբ մի որևէ հողամասի նկատմամբ սեփականատիրական հավակնությամբ հանդես էին գալիս մի քանի անձինք։ Սա շատ տարածված երևույթ էր և բազմիցս տեղի էր տալիս մեծ անախորժությունների։ Սակայն այն ձեռնարկ էր խոշոր կալվածատերերին, որովհետև այդ հղանակը նույնապես նրանք օգտագործում էին նորանոր հողային սեփականություններ ձեռք բերելու համար։

Կառավարությունը իրեն էր վերապահել հողի առուծախի թույլտվությունը, բայց իրականում նահանգներում հոգատերերի ուսեցած իշխանությունը և վարչական ապարատում իշխող կաշառակերությունը մեծ դժգարություններ չեին ներկայացնում ևման թույլտվություն ձեռք բերելու համար։

Աղբյուրները ցույց են տալիս, որ արքարի հողերի մի մասը այն հողերն էին, որոնք ժամանակին պետության կողմից տրվել էին առանձին մարդկանց որպես մուլք։ Օրինակ, Իրաշիմ Դե՛Շանը վկայում է, որ Արքաթի խալիսն գյուղերը տրվել էին Սամսամ ոլ Մոլթին որպես մուլք։

Սակայն դարավերջին միհնակը արդեն փոխվել էր։ Եթե XIX դարի կեսերին արքարի հողերի գգալի մասը շահի կողմից տրված այն մուլքերն էին, որոնք լուրացվել էին մուլքագրների կողմից, ապա դարավերջին արդեն գերակշռութ էին

¹ 118 ժամանակակից 1770 մայիսի 20-ի արձակ գումարությունը կազմում էր 1,5 մլն ռուբլի։

գնված Հողերը։ Ծիչա է Հողերի առուծախը գոյություն ունեց
նաև XIX դարի առաջին կեսին, սակայն դա մեծ շափերի հա-
սագ 1883—1884 թթ. ակտած, երբ տեղի ունեցավ խալիսն Հո-
ղերի վաճառքը։

Ահա Հենց այդ ժամանակ արգել կարելի էր զանազաններ
մասնավոր հողատիրության տարբեր ձևերը։ Ժառանգարար
ձեռք բերված արբարի Հողերը կուլպում էին առրարիյն դա-
դիմք, իսկ նոր գնված խալիսն Հողերը կուլպում էին տարրա-
րիյի շաղիդք¹։

Տիրելով ընդարձակ Հողամասերի և իշխելով նրանց վրա
ընակվող բազմահազար գյուղացիությանը՝ կարվածատերերը
ստեղծում էին նշանակալից ուժ ներկայացնող զինված քո-
կատերը, որոնց օգնությամբ ունշացնում էին մասն Հողամա-
սերին և բռնագրավում նրանց Հողերը։ Այդ պրոցեսին մենք
կանորագառնանը հետագայում։ Սակայն այստեղ նշենք, որ
պարսիկ բազմաթիվ Հողինակեներ մանր Հողատերերի ոչնչա-
ցումը և խոշոր կարվածատերերի առաջացումը, ինչպես և
բազմամիջին ունեցուրկ գյուղացիության առկայությունը Հո-
մարում են ժումանակեկից իրանի ընդուանուր հետամնացու-
թյան գլխավոր պատճեններից մեկը։

Այս Աքրար Բինան ժիրանի բազաքական և գիշանադի-
տական պատմությունը գրքում վերըուժում է խոշոր կարվա-
ծատիրության առաջացման հարցը և հանգում այն եղբակա-
ցության, որ աշխարհում քիչ կան այնպիսի երկրներ, որտեղ
խոշոր կարվածատիրական ռեժիմը այնպես տարածված լինի,
ինչպես Իրանում։ Գյուղացիները գտնվում էին կառավարու-
թյան և կարվածատերերի կատարյալ գերիշխանության աղ-
գեցության ներքո և կրում ու հանգութում էին նրանց բանու-
թյունները առանց ալլեալլության, մինչև իրենց կարողության
վերջին սահմանը։ Երբ հարկահան պաշտոնյաների և կարվա-
ծատերերի ճնշումը հասնում էր ծայր աստիճանի, նրանք

¹ ԱՐԲИԱ, Փ. 75, Ա. 361, Ա. 24.

ըրում էին Հողն ու վարուցանքը, տունն ու տեղը և փախչում
պնդի անապատաւ¹:

Իրանական տարբեր արխիվներում պահպանված Հողա-
յին Հարարերություններին վերաբերող կալվածագրերում,
առուծափիի գրանցումներում և այլնայլ փաստաթղթերում,
որոնց մի մասը հնապատերազմյան շրջանում լույս տեսած
տարբեր գրքերում օգտագործվել կամ բերվել են Հավելվածի
ձևով, արտացոլված են Հողային սեփականություններ ձեռք
բերելու գործում կիրառվող եղանակները, շարաշահումներն
ու խարդախությունները:

Նորանոր Հողեր զավթելու և եղած սեփականությունները
ընդարձակելու գործին նպաստում էին նաև Հողային սեփակա-
նությունների գրանցման եղանակները: Սեփականատիրական
իրաւուաթղթերում կամ կալվածագրերում Հաճախ չէին նշվում
գրանցման հեթակա Հողեր տարածությունը, այլ արձանագր-
վում էին միայն նրա սահմանները, այն էլ փափոխության են-
թակա հատկանիշներով: Այսպիս, սահման էր Համարվում
ինչպէս ճանապարհ, ջրանցք, ցանկապատ, առվակ, անտառա-
մաս, որոնք հեշտությամբ կարելի էր տեղաշարժել և արդարի-
սով ընդարձակել Հողատարածությունը:

Արբեմն նշվում էր միայն Հարկան Հողատիրոջ անունը,
որը անշուշտ կարող էր փոխվել: Այսպիսով Հողային վեճերը
անցնդհան գոյություն ունեին, քանի որ որևէ փոքր Հողամաս
դեած կալվածատերը դիտավորյալ կերպով չէր նշում նրա
սահմանները և աստիճանաբար ընդարձակում էր այն: Այս-
տեղ էլ ծագում էր մի այլ կարգի դժվարություն: շարիաթի
դոզմանների և տեղական սովորությունների համաձայն Հողը
մշակողը Հողի տերն էր: Այս հանգամանքի շարաշահումից
դեռ մելառ նպատակով, նախքան որևէ Հողամասի գնումը
կամ վարձակալումը ձևակերպելը, պահանջվում էր ներկա-
յացնել վերջին տառը տարիների ընթացքում Հողատիրոջ վճա-

حق اکبر بینا تاریخ سیرا سی و دیپلوماسی ایران جلد اول ۱
تهران - ۱۳۵۰ صفحه ۴۰

բաժ պետական հարկերի մասին նահանգապետի վավերադիրը նթե ինքը չէր մշակել հողամտուր, ապա պահանջվում էր հաստատել, որ ևս իր հողամտուր վարձով է տվել ուրիշին Բայց դա ևս հողի վերշնական սեփականման ոչ մի երաշխիք չէր տալիս: Ազրյուրները խոսում են մի շաբթ այնպիսի դիպութերի մասին, երբ ատրիները առաջ գնված և գրանցված որևէ հողամտուր նախկին տերը, խանը պահանջ է ներկայացրել վերդին վճարելու հողի գնված գնի և նրա ներկա արժեքի տարբերությունը: Նթե հողի նոր տերը չէր համաձայնվում, կամ ի վիճակի չէր լինում այդ գումարը վճարելու, ապա խանը վերադարձնելով ստացած գումարը՝ նորից գրավում էր հողամտուր և շեղյալ համարում գործարքը: Այստեղից է՝ մանր հողատերերի անկայուն վիճակը և անկարողությունը պահպանելու իրենց հողային սեփականությունները, որի հետեւ վանքով և նրանք հեշտությամբ կլանվում էին խոշոր կալվածատերերի կողմից¹:

* * *

Հողային սեփականությունների խոշոր կենտրոնացումները անդի էին ունենում տեսդային ձևով: Այդպիսի կենտրոնացումներ էին կատարում սկսած ամենարձրից՝ շահից, փոխարքայից, արքայազններից մինչև սովորական հողատեր մուլտադարները: Դա նշանակում է, որ մուլտադարների թիվը համալրվում էր արքայազններից, հոգևորականներից, առևտրականներից և այլ խավերից, որոնք, համակերպվելով ստեղծված դրության հետ, դրավում էին զերիշխող դեր թե՛նյութական և թե՛քաղաքական տեսակետից և ստեղծում հասարակական նոր ուժ և նոր հարաբերություններ²:

XIX դարի երկրորդ կեսի հողատերերի կազմը ծագման տեսակետից ուսումնասիրելիս կարելի է տեսնել, որ խոշոր

¹ Максимович-Васильковский, Отчет о поездке по губернаторствам Западной Персии..., стр. 27.

² Л. Ф. Тигրомов, Из общественно-экономических отношений в Персии, стр. V.

կալվածատերերի նշանակալից մասը նախկին Հողատեր արքունիկրամբայի ներկայացուցիչներն էին, սակայն այժմ գրանց ավելացել էին նաև մեծ վեպիրը, վեպիրները, նահանգապետները և այլ պաշտոններ ունեցող մարդիկ, որոնք իրենց զիրքը չարաշածելով, հսկայական հողային սեփականություններ էին ձեռք բերել:

Մեծ տարածություն էր կազմում շահի հողային սեփականությունը: Շահը փաստորեն երկրի ամենախոշոր կալվածատերն էր. նու հսկային սեփականություններ ուներ երկրի համարյա բոլոր մասերում: Այդ հողերը բռնագրավել և յուրացվել էին տարրեր ժամանակներում և տարրեր հղանակներով¹: Հայուննի է, որ զաջարական ցեղը երկար ժամանակ բնակվում էր Կասպից ծովին հարսավային շրջաններում² Ասուրաբագրում, Այդ պատճառով էլ շահը այդ գավառում ուներ պատճանական հոգեր, որոնք հետագայում ընդարձակվեցին բռնագրավումների միջոցով:

Շահը իր հողերի մի մասը տալիս էր իր մտերիմներին ժամանակավոր օգտագործման համար, կամ՝ քոչվորներին, որոնք փոխարենը զինված հեծյալներ էին տրամադրում, երբեմն էլ իրենց վրա վերցնում սահմանային այս կամ այն հատվածի պաշտպանությունը:

Ընդարձակ հողային տարածությունների էր տիրում փոխարքա Մոհամեդ Ալի Միրզան: Նազեմ ոչ էսլամ Թերմանին նշում է, որ փոխարքա Մոհամեդ Ալի Միրզան, բացի կաշառքների և ընծաների հղանակով ձեռք բերած հողերից, բռնի կերպով յուրացրել էր հսկայական հողային սեփականություններ, հատկապես Թավրիզի և Մարարի միջև ընկած շրջանում:

Հենց նույն աղբյուրի վկայությամբ Մոհամեդ Ալի Միրզայի զոլամեները բռնի կերպով կամ դավադրությամբ խեղճ ուայթների հողերը թեկուզ կես դանդ կամ մեկ դանդ բռնագրա-

¹ А. К. Артаманов, Персия как наш противник в Закавказье, стр. 14.

² Боде, Очерки туркменской земли и юго-восточного пребрежья Каспийского моря, 1890, стр. 139.

վում և մացնում էին թագաժառանգի Հողային սեփականությունների մեջ¹:

Սկզբնապրյուրներում թագմաթիվ փաստեր կան այն մասին, թե պալատականները, արքայազնները և այլ պաշտոնյաներ ինչպես էին շարադառում իրենց իշխանությունը, կարծամանակում Հողային ընդարձակ տարածություններ ձեռք բերում և հարստություն դիցում: Դա եշանակում էր, որ փաստորներն ահատությունը ինքն էր մասնակցում այդ Համապարագ թալանին և իրավական տեսք տալիս զանազան խախտումներին և ապօրինի գործարքներին: Նաոր էդ Դին շահնարքեկիլ Միրզա Ռեզան, գառավարության ժամանակ խոսելով ապօրինի եղանակով Հողային սեփականություններ ձեռք բերելու փաստերի մասին, որպես օրինակ եղում է ոմն Հաջ Սայահի մասին, որը մի կողմից մասնակցում էր օպոզիցիոն շարժումներին, իսկ մյուս կողմից, ժառայելով արքայազն Զել և Սոլթանին, ձկուում էր, որ նա շահ գուռնա և ինքն էլ մեծ հարստություններ ձեռք բերի²: Հենց այդպիսի եղանակներով էր, որ փոխարքայի գլխավոր ախոռոապետը՝ Հաջի Սադր ոչ Մոլթը, իր ձեռքում էր կենտրոնացրել մոտ 300 պյուղ, որոնցից սուանում էր տարեկան ավելի քան 300 հազար թուման եկամուտ³: Թերմանին գրում է, որ թագաժառանգի կարգադրությամբ Աստրապատականում բերքահավաքի սկզբում ցորենն ու գարին կուտակում էին պահեստներում և տարվա վերջին թանկ գներով վաճառում ժողովրդին, թագաժառանգին էին ընդօրինակում կալվածատերերը, ինչպես, օրինակ, Հաջի Միրզա Թարիմ Բամաջումեն, Սայեդ ոչ Մոլթը և ուրիշներ, որոնք, տասններկու տարվա ընթացքում ժողովրդին թալանելով, հսկայական հարստություն պիզեցին և իրենց Հողային սեփականությունները ընդարձակեցին:

¹ اعظم الاسلام کومنیس تاریخ جیدواری ایرانیان ۳۳۲- تهران صفحه ۱۹۵-۱۹۶

² Խոյն անգամ, էջ 84.

³ «Материалы по изучению Востока», вып. I, стр. 11.

Հողային խոշոր սեփականություններ էր ձեռք բերում նոտր էս Դին շահնի որդի Զել էս Սոլթանը, որը իր ժառանգներին մի քանի միլիոն արժողություն ունեցող հողային սեփականություն թողեց։ Նա այդ հողերը ձեռք էր բերել կամ գնումով, կամ այնպիսի փաստաթղթերով, որ իրը այդ հողերը եղել են խալիսե և ինչ-որ ժամանակ տրվել են արարեներին¹, Զել էս Սոլթանի հուշերում բազմաթիվ փաստեր են բերված նրա առնարական զորժարքների մասին։ Նա հողեր էր զնել Ծննդանի, Թարումի, Մարրինի, Մահալաթի և այլ շրջաններում²։

Այսպիսով, նայու էդ Դին շահնի ավագ որդի Զել էս Սոլթանը ՅՅ ապրի Ֆարսի և Խաֆահանի Խանանգապետ եղած ժամանակ խալիսն կամ մասնավոր հողերի բռնագրավման, էժան զնով գնման և այլ եղանակներով ձեռք բերած հողերով գործ է Իրանի ամենախոշոր հողատերերից մեկը։ Նրա զնած զյուղների թիվը անցնում էր մի քանի հարյուրից։ Բռնագրավումներ էին կատարում նաև նրա ազգականները։ 1900 թ. նրա եղբոր որդիները զավթել էին Խաֆահանից ոչ հեռու գտնվող Ռիզ գյուղը³։

Արքայազնի հողային սեփականություններ ձեռք բերելու այս եղանակների ուսումնասիրումը ընդհանրապես խոչըն կարգածատիրության առաջացման պատմության շատ հետաքրքրիր էտերն է բացահայտում։ Էինելով արքայազն՝ նա մեծ իշխանություն ուներ և շարաշահելով այն՝ ոչ մի միջոցի առաջ կանդ չէր առնում հողային սեփականություններ և մեծ հարցստություններ ձեռք բերելու համար։ Օգտագործելով անթույլատրուլի ձևեր, նա կարճ ժամանակում հսկայական հողային տարածություններ կհետրոնացրեց իր ձեռքում և զարձակ երկըրի ամենազորեղ իշխանավորներից մեկը։

¹ «Ученые записки института востоковедения», VIII, Иранский сборник, Москва, 1953, стр. 125.

² Խոյին անգում։

³ 191 Ճախու 1570 اصفهان سرگنشت مسعودی تاریخ

⁴ АВПР, ф. period. стол. д. 386, л. 192.

Հողային նման սեփականություններ էին ձեռք բերում նաև բազմաթիվ այլ պաշտոնյաներ: Ատրպետը հաղորդում է, որ Աթարբեկ Ազամը 1500 գյուղ ուներ, որից մոտ երկու միլիոն թուման հկամուտ էր ատանում¹: Գիլանի Լեշտանշան Համարյա ամրողովին Սադր Ազամ Ամին ու Դոլեհին էր²: Գիլանի մոսթոփի Միրզա Արդուլ Սահմբը Գիլանի ամենախոշոր հողատերից էր³: Սեփական Նասր ու Սալթանին 1894 թ. մի տվյալի համաձայն տիրում էր 50 հազար ժիշտ⁴: Բալիջի խան Սիլֆ ու Մուլք Մոլթան Ահմադ խանը Արդարիի շրջանում 109 գյուղ ուներ⁵: Խափահանի շրջանում XIX դարի սկզբում խոշոր կալվածատերեր չկային, բայց հետագայում Սադրը և նրա որդի Ամին էդ Դոլեն մեծ թվով կալվածքներ ձեռք բերեցին: Թարինի և Սիսթանի էմիրը⁶: Հեշմաթ ու Մուլք Միր Ալամ խանը տիրում էր մոտ 324 գյուղերի⁷:

Մողաքար էդ Դին շահի օրոք արքայազն Շոա էս Սալթանին Ֆարսի նահանգապետ եղած ժամանակ էժան զնով պետական հողեր է գնում և մասնավոր հողեր զավթելով, ընդարձակ հողատարածությունների տիր դառնում⁸: 1877 թ. Ղարադարդի հրամանատար նշանակված Ռահմադ խանը տասը տարվա ընթացքում հարյուրից ազելի գյուղերի է տիրանում: Նա սպանում էր հողատերերին կամ բանտարկում նրանց և սեփականատերական վավերագրեր սամանալուց հետո միայն ազատում⁹:

Կոսոգովսկին 1896 թ. հազորգում էր, որ մեծ վճարիր Ամին ու Մուլք բացի հորից ստացած ժառանգական կալվածքներից,

¹ Атракет, Мамед Али шах, стр. 79.

² ЦГВИА, ф. 76, д. 371, л. 107.

³ Խոյք տեղանք:

⁴ ЦГВИА, ф. 76, д. 179, л. 25.

⁵ Н. А. Озранович, Провинции Ардебильская и Серабская, Тифлис, 1876, стр. 70.

⁶ «Ученые записки института востоковедения», VIII, Иранский сборник, М., 1953, стр. 124—125.

⁷ ЦГВИА, ф. 2000, д. 1028, л. 99.

⁸ Атракет, Рагим хан Сардар. Александрополь, 1910, стр. 19.

պաշտոնը լարաշահելով, մի զարք գյուղեր, իսկ Թեհրանում
մռա երկու միլիոն ոռությի արժեցող տներ, այդինքը էր գնել¹,

Տեղական վարչական պաշտոնյաները Խույնպես նպաս-
տում էին Հոգային սեփականությունների կենտրոնացմանը:
Նրանք ընդարձակ շրջանների հարկերի հավաքման իրավուն-
քը գեռամ և մեծ լարաշահումներ էին կատարում: Թանի որ խո-
շոր կարվածատերերը այնքան զորեղ էին, որ չեին թույլա-
տրում պաշտոնյա հարկանների մուտքը իրենց կալվածք-
ները, ապա բնուան ամբողջ ժանրությունը ընկնում էր մասն
հոգատերերի վրա, որոնց և վերջնականապես քայլայվում էին
և նրանց հոգերը անցնում էին խոշոր կալվածատերերի ձեռքը:
Սա իր էությամբ արդեն պետական թալանի բնույթ էր կրում,
քանի որ երկրի հոգային սեփականությունների յուրացման
դորժին ոչ միայն նպաստում, այլև փաստորեն մասնակցում
էին պետական պաշտոնյաները, սկսած ամենաբարձրից մինչև
ստորինը: Սեյթ Մոթեզա Հուսեյնի Թեհրանին գրում է, որ
սահմանադրությունից առաջ նահանգապետները, մեծամեծ-
ները և ընդհանրապես պաշտոնյաները թալանում էին ժողո-
վորդին և տարրեր պատրվակներ հորինելով, հրաժարվում էին
գանձված հարկերը պետությանը հանձնելուց: Նրանք յուրաց-
նում էին մեծ թվով խալիս զյուղեր, դասնում խոշոր կալվա-
ծատերեր և մինչնիսկ, օգտվելով կենտրոնական կառավարու-
թյան թույլայնից և ապիկարությունից, խուսափում էին
հարկեր վճարել պետությանը².

Այսպիսով՝ պետական պաշտոնյաները ոչ միայն թալա-
նում էին ժողովրդին, այլև հենց իրեն՝ պետությանը, քանի որ
հարկերի գանձման և պետությանը հանձնելու գործում թույլ
աված նրանց լարաշահումները երկուամենք հարվածում էին
թե՛ ժողովրդին և թե՛ պետությանը:

Ազերյանովը, Խույնպես անդրազանազ մահաների
կառավարիչների իշխանության հարցին, գրում է, որ նրանք

¹ «Из Тегеранского дневника полковника В. А. Косоговского», стр. 122.

² مرتضی حسینی تهرانی اصول علم مالیه ... صفحه ۱۰۷

իրականում խոշոր կալվածատերեր էին, որոնց հողերը ընդարձակ տարածություն էին կազմում։ Այդ հողերի սահմանները հանախ համընկնում էին հնաց տվյալ մահալի սահմանների հետ¹։

Նշանակում է, վերանուա՞լ էր պետական պաշտոնյայի և տեղական կալվածատերոջ միջև նղաժ անշրջետը և այդ երկուց հանդիս էին գալիս մեկ դեմքով։ Այս երկուվիթը, անշուշտ նոր էր և փր հատ բերում էր մի շարք այնպիսի հետեանքներ, որոնք ունեին շատ հեռու, գնացող անդրադարձումներ։ Նոր կալվածատերը, ունենալով իր ձեռքում նաև քաղաքական իշխանություն, բարիս իսկական իմաստով դառնում էր իր շրջանում, հետեարար և իր կալվածքներում աշխատող ույաթների տերն ու տիրականը։ Այսպիսով, սոցիալ-տնտեսական նոր պայմանները նպաստում էին, որպեսզի տեղական խաները դառնային հողատերեր։ Տիգրանովը նշում է, որ կալվածքները նոր տերերին էին անցնում ժառանգարար։ Պայց երկիրը մշտական ներքին խոռվություններից քաշրայված պեսք է ընդուներ նվաճման իրավունքը։ Եթե վերշինը կարող էր սասանի սեփականատիրական իրավունքը, ապա ժառանգության հատ միասին առաջ էր քաշում կալվածքը օտարերկու հետքավորությունը։ Պետությունը գաստաթղթեր էր տալիս նոր տերերին։ Այսպիսով կալվածքները դառնում էին քաղաքացիական գործարքների առարկա, ուր ակտիվ գեր էին խաղում խաները², Դա նշանակում էր, որ ազօրինի յուրացումները հեշտությամբ ստանում էին իրենց իրավական ձևակերպումը և օրենքի պաշտպանությունը։

Ընդօրինակելով տիրակալներին՝ նոր հողատեր-մուլքադարները նույնպես ոչ մի միշտցի առաջ կանգ լէին առնում հողային սեփականություններ ձեռք բերելու գործում։

1. П. А. Аверьянов. Отчет о поездке по Северному Азербайджану... в конце 1899 года, стр. 7.

2. Л. Ф. Гиляровский. Из общественно-экономических отношений в Персии, стр. 5.

Երկրի առանձին նահագների և շրջանների հողատիրության ձևերի ուսումնախրումը ցույց է տալիս, թե ինչպիսի շափեր էր ընդունել խոշոր կալվածատիրությունը. Ատրպատականի Հյուսիսային մասում գտնվող Մեշքինի շրջանում նոր 118 գյուղերը բոլորն էլ պատկանում էին կալվածատերին, ընդ որում նրանցից 75-ը՝ Հազնոր ժագում ունեցողներին կամ նախկին պաշտոնյաներին. Խոկ Արաշի շրջանի 51 գյուղերը գտնվում էին երկու կալվածատերին ձեռքում:¹ Կորսունը վկայում է, որ նույն շրջանի 126 գյուղերը համարվում էին խաների սեփականություններ:² Վիճակը նույն էր նաև Մաքմի շրջանում: Եթե Պարամիջին (1853) Մաքմի խանին էր պատկանում ոչ ամենի բան 70 գյուղ, ապա XX դարի սկզբներին (1905) նրան էր պատկանում արդեն 300 գյուղ:³ Ակնհայտ է, թե ինչպիսի ան էր տեղի ունեցել, Կավամ ու Մուրքը Զարսի նահանգում մեծ թվով կալվածքներ ունեցել: Համադանի շրջանի հոգերի մեծագույն մասը նաևր ու Մուրքին էր պատկանում:⁴ Նրա անշարժ գույքը մեկ միլիոն թուման էր գնահատվում:⁵ Մաքմիլլիչ-Վասիլկովսկին հաղորդում է, որ նրանի և Թուրքիայի առհմանամերձ շրջանների մեծ թվով գյուղերում քուրդ խոշոր հողատերեր կային:⁶ 1898 թ. Սեմենանի և Դամգանի նահանգապետ արքայազն Ջիա էղ Դոլեն այդ շրջաններում բազմաթիվ գյուղեր ուներ:⁷ Քերմանի նահանգի մշակելի հո-

¹ نظام الالسلاع كرمانى قاریخ بیداری ایرانیان تهران مجدد أول

89 صفحه

² Корсун, Военный обзор Персидского передового театра, Тифлис, 1909, стр. 114—116.

³ Л. К. Артаманов, Северный Азербайджан, Военно-географический очерк, 1899, стр. 26.

⁴ ЦГВИА, ф. 76, д. 236, л. 58.

⁵ «Из Тегеранского дневника полковника В. А. Косяковского», стр. 89.

⁶ АВПР, ф. первая, стол. д. 397, л. 217.

⁷ Максимович-Васильковский, Отчет о поездке по губернаторствам Западной Персии, т. II, стр. 723—763.

⁸ ЦГВИА, ф. 76, д. 236, л. 8.

զերի մոտ 90%-ը կենարոնացված էր խոշոր կալվաֆատերերի ձեռքում։ Արդարիլի շրջանի 210 գյուղերից 174-ը պատկանում էին խոշոր կալվաֆատերերին։

Այսպիսի վիճակ տիրում էր ոչ միայն Հուսիսային նահանգներում՝ Ասրապատականում, Խորասանում, Գրիանում, Մազանդարանում և Աստրաբադում, այլև կենարոնական Իրանում և Հարավային նահանգներում։

Նոր հողատերերի (մուզբագարների) խոշոր կալվաֆատերի վերաճելու պրոցեսն իր հետ բերում էր ոչ միայն մասն Հողատերերի սեփականությունների, այլև քայրարված ու աղքատացած խաների կալվաֆերների յուրացում։ Այս փաստը, անշուշտ, որոշակի հետաքրքրություն է ներկայացնում, քանի որ նա ցույց է տալիս մուզբագարության զարգացման մի աղբյուր ևս։ Դրամի գերիշխանությունը ոչ մի սահման կամ պատճեց չէր ճանաչում, նա վերացնում էր իր ճանապարհին կանգնած բոլոր խոշոր գոտիները, բնական ու արհեստական գժվարությունները։

Հատկապես հետաքրքիր է Հարավային Իրանում գտնվող Հարուստ և բերրի նահանգ Խուզիստանի հողային հարստությունների յուրացման պատմությունը Ենյիս Խողալի կողմից, որը ոչ միայն ամբողջ նահանգի խոշորագույն հողատերն էր, այլև նրա տերն ու տիրականը։

Նաշմ ու Մոլքի տվյալներով զաշարների օրոք Հաֆեղիներ, Ահզազի, Ֆալահիներ, Մոհամմարայի և Ռամ Հորմոզի, ինչպես նաև ամբողջ Խուզիստանի հողերը և շուրջ խայիսն էին։ Նար էղ Դին շահը և Մոզաֆար էղ Դին շահը ժամանակին մեծ թվով կալվաֆերներ էին հանձնել նեղամ էս Սալթանիներ նրա մահից հետո այդ հողերը վաճառվեցին Ենյիս Խաղալին, իսկ կառավարությունը մեծ թվով կալվաֆերներ էր տվել Ենյիսի հորը և հղբորը։ Այդ հողերը նույնպես մտան նրա Հարստության մեջ։ Այդ բոլորից բացի պետությունից ընդար-

² A. K. S. Lambton, Landlord and Peasant in Persia, p. 253.

Ճակ Հողեր էր ստացել Հինգ ինքը՝ Եելիշ: Թասրավին ռեուլիս-
տանի հինգ հարյուրամյա պատմությունը զբառ, անդրադառ-
նալով Եելիս Խաղալի Հողային հարստություններին, զբում է,
որ Խուզիստանի բերրի Հողերի ավելի քան երկու երրորդը
պատկանում էր Եելիսին, որից Նա ստանում էր Հակայական
հկամուտներ: Նախապես սահմանված կարգի համաձայն Եել-
իշը որպես Խուզիստանի հարկ առաքեկան 40,000 թուման պետք
է վճարեր պետությանը: Մինչդեռ ևս Խուզիստանի բնակչու-
թյունից կորպում էր հինգ-վեց անգամ ավելի¹: Նա, մինչեւսկ
իր հարազատ եղբորը սպանելով, բռնադրավում է նրա Հողա-
յին սեփականությունները²:

Եելիս Խաղալի Հողային սեփականությունները չեին սահ-
մանափակվում միայն նրանի տերիստորիայով, Նա մեծ թվով
կալվածքներ ուներ Իրաքում, մինչեւսկ մի շուկա Բասրա քա-
ղաքում³:

Եելիս Խաղալի, այդպիսի ֆանտաստիկ շափերի հարստու-
թյուններ դիպելով, ձեռք էր բերել նաև քաղաքական մեծ իշ-
խանություն և փառառքն համարվում էր հարավային նրանի
միակ տիրակալը: Նրա այդ իշխանությունը անեց շատ երկար:
Նրանի կենտրոնական կառավարությունը և անձամբ շահը նրա
հետ հաշվի էին նստում և չեին համարձակվում միջամտել նրա
գործերին: Խուզիստանի նահանգի և նրա տիրակալի սեպա-
րատիզմը շարունակվեց մինչև XX դարի 20-ական թվական-
ները և վերջ տրվեց Ռեզա շահի թագավորության օրոք:

Այդպիսի դրություն էր տիրում նաև նրանի մյուտ նա-
հանգներում: Հայտնի է, որ մինչև XIX դարի կեսերը նրանի
հյուսիս-արևմտյան շրջանի կալվածքները գերազանցապես
գտնվում էին խաների տնօրինության ներքո: Նրանք իրենցից
ներկայացնում էին կալվածատեր-Հողատեր արիստոկրատիա-

¹ میرزا حسن خان شیخ جابری از صفات تاریخ اصفهان و دری اصفهان ۱۳۷۷ صفحه ۲۶

² Նույն տեղում,էջ 256,

³ Նույն տեղում,էջ 177:

յի դասակարգը, որը որոշ իմաստով կրում էր նաև զինվարական բնույթ։ Մյուս դասակարգերից և խավերից գեպի հողատերերի շարքերը նշանակալից հոսանք սկսվեց XIX դարի կեսերից¹. Պավլովիչը հաստատելով այդ միացը՝ նշում է, որ մինչև XIX դարի կեսերը Հյուսիսային Իրանի կալվածքները պատկանում էին Խաներին, որոնք ներկայացնում էին տիրու դասակարգը, հողային ազնվականությունը։ Այդ ազնվականությունը իր առաջացման օրից հանդիսանում էր թե՝ հողատեր և թե՝ զինվարական խավ։ Բայց XIX դարի երկրորդ կեսից մյուս դասակարգերի, հատկապես բուրժուազիայի և Հոգևորականության ներկայացուցիչները նույնպես սկսեցին հողեր գնել²։

Հյուսիսային Իրանում առանձին մարդկանց կողմից մեծ թվով կալվածքներ յուրացնելու մասին փաստեր և հաղորդում Ավերյանովը։ Օրինակ, Ղարագազի գավառում մի քանի քուրդ հարուստներ բռնազրագել էին մասր բեկերի և խաների հողերը և, թե՛րան ու Թավրիզ դրամական խոշոր նվիրներ ուղարկելով, զարձել էին այդ հողերի լիակատար տերերը։ Դա ցույց է տալիս, որ որոշ գեպերում ցեղերին պատկանող իլլաթի հողերն էլ հափշտակումներից գուրս չեին մնում և զավթվում էին արրարների կողմից։ Մինչևիսկ ուղմական նպատակով տրված թիուզներն էլ աստիճանաբար զառնում են թիուզարների մասնավոր սեփականությունը։ Խելափես կտեսնենք, հետագայում, XIX դարի երկրորդ կեսի արքարի հողերի նշանակալից մասը հենց այդ նախկին թիուզներն էին։ Օրինակ՝ Արդարիլի շրջանի 210 գյուղերից 97-ը 1870 թվականին մուլքադարների սեփականությունն էր, այս գյուղերի մեծ մասը

1. Л. Ф. Тиаганов, Из общественно-экономических отношений в Персии, стр. 9.

2. М. Павлович, Экономическое развитие и аграрный вопрос в Персии XX века, Москва, 1921, стр. 20.

3. П. И. Аверьянов, Отчет о поездке по Северному Азербайджану... в конце 1899 года, Тифлисъ, 1900, стр. 19.

նախկին թիուլային հողերն էին¹: Հենց այդ ժամանակ էլ նոր հազարերեք—մուլքադարները սկսել էին նեղել մինչև իսկ նախկին ցեղասենությունը կալվածատեր գարձած յաներին՝ ջնայած վերտիններս մասամբ շարունակում էին ներկայացնել պինդորական լուրջ ուժու Այսպիսով դավթում էին մինչեւսկ ուղարկած ժառայությունների գիրմաց ուղարկի քուղարքական պարբերության կողմից արված հսկերը:

Տիգրանովը միանգամայն համոզիլ կերպով ցույց է տալիս, որ խոշոր հողաաներերի հողային սեփականությունների ընդարձակումը հիմնականում տեղի էր ունենում մանր հողատերերի և հողատեր գյուղացիների հաշվին: Արոնք ի վիճակի չէին դիմադրելու մուլքադարների ճնշմանը: Ըստ որում, առաջինների նկատմամբ տեղի էր ունենում հողատիրության իրավունքը տարածումը, իսկ գյուղացիների հողերի նկատմամբ հաստատվում էր մուլքադարների մասնավոր սեփականատիքական լրիվ իրավունքները²:

1908 թ. ուսուական ներկայացուցիչները Մարանդից հագորդել են, որ մոտ 80-ական թվականներից սկսած իրենց հողանակաները վաճառած և ապրուսի որևէ միջոց որոնելու համար Ռուսաստան գնացած հողատեր գյուղացիները երկիր մերձականալուց հետո, հողագորկ լինելով, պատրաստ են ընդունել ամեն տեսակի և աշխատանք³:

Զգալով հողատիրության շահավետությունը՝ արքայազնները և բարձր ստահնան պաշտոնյաները իրենք ևս միջոցների էին դիմում մանր հողատիրերի հողերը գավթելու կամ գյուղացիներին իրենց փոքր հողամասերից զրկելու ուղղությամբ: Ըստ որում, այդ նպատակին հասնելու համար նրանք կանգ չէին առնում ոչ մի միջոցի առաջ, ընդունակ մինչև բանի ուժի գործադրում:

1 Н. А. Огановеч, Прожитки Ардабильской и Серабской, Тифлис, 1876, стр. 39.

2 Л. Ф. Гиеромов, Из общественно-экономических отношений в Персии, СПб, 1909, стр. 15.

3 АВПР, ф. Персид. стол., д. 535, л. 80.

Հետաքրքրական է նշել, որ այս երևույթը ուներ նաև որոշ հակառակ պրոցես. մի կողմից մանր հողատերերը կուլ էին զնում մեծ հողատերերին, իսկ մյուս կողմից առաջանում էին նոր մանր հողատերեր։ Օրինակ՝ 80-ական թվականների գի-լանին ել ու մուտք գրքում 21 պյուղեր էին խորդամալեցային հող են համարվել, իսկ մի շարք գյուղեր էլ նշվել են որպես նոր խորդամալեցային հողեր¹.

Տիգրանովը նշում է, որ բացի հողերի բռնագրավման ուղղակի ճգանակներից հաճախ կիրառում էին նաև անուղղակի եղանակներ, որոնք հատուկ էին այդ ժամանակվա թրանին։ Հաճախ արհեստական վեճեր էին առաջացնում ժառանգների միջն կամ, մինչեսկ, պյուղացիներին գրգռում էին կալվածատերերի դիմ։ Թույլ ժառանգները, չկարողանալով իրենց սեփական ատիրական իրավունքները վերականգնել, ատիրակած էին լինում լնջին դումարի դիմաց իրենց սեփական ատիրական իրավունքները վաճառել ավելի ուժեղ կալվածատերերի։

Բայց կասկածից վեր է, որ մանր սեփական եռթյունների միերացման պատճառներից պիտի ավորը նեխված վարչական ապարատի առկայությունն էր. խոշոր կալվածատերերը նախապես պետության էին վճարում պետական հարկերը և այդպիսով արգելակում հարկածաններին և պետական պաշտոնյանների մուտքը իրենց կալվածքները։ Մանր հողատերերը, այդ հետրազորությունից զուրկ լինելով, չեին կարողանում խուսափել աղետից, որը, ինչպես կտեսնենք հետագայում, կատարյալ անանկության էր հասցնում նրանց².

Տիգրանովի ազատ այս վկայությունը համարյա համատարած բնույթ էր կրում։ Այն կիրառվում էր երկրի բալոր ժամաներում, բայց, իհարկե, ավելի շուտ հյուսիսային և հյուսիսարևմտյան նահանգներում, որտեղ ավելի ուժեղ էին զարգա-

¹ ЦГВИА, ф. 76, д. 361, л. 2.

² Л. Ф. Гиероним, Из общественно-экономических отношений в Персии, СПб, 1909, стр. 17—18.

շաժ ապրանքա-դրամային Հարաբերությունները և ավելի ուժ-գին էր գյուղացիության էքսպրոպրիացիան:

Իրանի Հյուսիսային շրջանում գտնվող Մազանդարանի եաւանգի Հողային սեփականությունների մասին որոշ տեղեկություններ են պահպանվել Նասր Էդ Դին շահի օրագրում։ որը կազմվել էր Նրա ճամփորդություններից մեկի ժամանակ։

Օրագրում թվարկված 53 գյուղերից և կալվածքներից մեջ պատկանում էր առնտրականի, մեկը սեյիդի (այսպես կոչված մարզարենի ժառանգործներից մեկին), երեքը վակիֆային էր, երեքը խալիսն, մինչդեռ մնացած 44-ը պատկանում էր Ֆեղալ ազնվականներին։ Այստեղ միայն մեկ գյուղ դեռևս չէր յուրացվել և պատկանում էր գյուղացիներին¹։

Աստրաբադի նահանգում կային ընդամենը 229 բնակեցված գյուղեր։ Դրանցից 168-ը պատկանում էր կալվածատերներին, 19-ը խալիսն էր, մնացածի մասին տեղեկություններ չկան։

Թուրքիստանում կալվածատերները բանագրավել էին գյուղացիներին պատկանող բոլոր հողային տարածությունները, Մարսիմովիլ Վասիլկովսկին, շրջելով իրանական Թուրքուստանում, գրանցել է, որ բուրդ խանները մեծահարուստ հողատերներ էին գարձել, նրանց հողերի վրա ապրում էին նատակյաց, կիսաբռնչվոր և քոլչոր քուրդ ցեղերը։ Հարկերի և տուրքերի շափերի տեսակետից քուրդ ուայթները, աննշան բացառությամբ, գտնվում էին նույնպիսի գրության մեջ, ինչ Իրանի մյուս ուայթները²։

Երկրի այս շրջանում քուրդ քոլչորները աստիճանաբար նստակյաց էին գառնում, մի պրոցես, որը ընթանում էր շատ

¹ «Путешествие шаха Наср за Днин по Мазавидраку», СПб, 1887, стр. 50—54.

² «Учебные записки института востоковедения», VIII, Иранский сборник, М., 1953, стр. 123.

³ Յույն տեղում, էջ 124.

⁴ Максимович-Басальковский, Отчет о поездке по губернаторствам Западной Персии., стр. 44.

զանդաղ և շարունակվեց մինչև XX դարի կեսերը։ Սուկայն, ինչպես կտեսնենք թուզոր ցեղերի հողերի մասին խստէլիս, նստակյաց ցեղերի մշակելի հողերը անցնում էին ցեղապետներին, որոնք վերածվում էին ցեղապետ կալվածատերերի և արդպիսով իրենց ցեղակիցների նկատմամբ պահպանում երկակի իշխանություն։

Հողային մասնավոր սեփականության նույնպիսի կենտրոնացում էր տեղի ունենում նույն կենտրոնական իրանում։

Ղարազանի շրջանի մասին հղած 1880—81 թթ. զեկուցագրում նշված է, որ այնտեղ մոտ 46 գյուղ լրիվ արբարի էր, իսկ 13 գյուղ՝ մասամբ արբարի Դրանցից 17 գյուղ լրիվ և 5 գյուղ մասամբ պատկանում էին շահսեներին¹։

Մալայերի շրջանի մասին հղած 1879—80 թթ. զեկուցագրից պարզվում է, որ այնտեղ գտնվող 236 գյուղերից 206-ը լրիվ և 7-ը մասամբ արբարի էին։ Այդ գյուղերից 8-ը պատկանում էր թուրքմեն խաներին²։

Այսպիսի փաստեր կարելի է բերել Իրանի բոլոր նահանգների և շրջանների մասին։ Դրանք ակնհայտ կերպով ցույց են տալիս, որ համարյա ամենուրեք գերիշխում էր մասնավոր հողատիրությունը, իսկ հողատիրության մյուս ձևերը աստիճանաբար իրենց տեղը զիջում էին այդ նոր ձևին— մուլժադարությանը, կամ արբարի հողատիրությանը։

Մուլժադարային հողային ֆոնդը անում էր ոլխավորապես խալիս և վակիքային հողատիրության հաշվին։ Տիգրանովը այն կարծիքն է հայտնում, որ եթե Ալիներին արտաքին հատուկ պայմանները, ապա երկրի ներքին տեսական վիճակը շատ նախադրյալներ էր պարունակում մանր սեփականատիրության կամ համայնական հողատիրության համար։ Արտաքին հատուկ պայմաններ տեսլով՝ Տիգրանովը, ան-

¹ A. K. S. Lambton, Landlord and Peasant in Persia, p. 156.

² Նույն տեղում։

³ Л. Ф. Гызраков, Из общественно-экономических отношений в Персии, стр. 8.

շուշտ, նկատի ուներ ստարերկրյա կապիտալի մուտքը և դրա
հետ կապված հետեւնքների ամրող կոմպլեքսը:

Այս խնդիրը հատուկ ուսումնասիրության է արժանի, քանի
որ գրան անգրադարձն են բազմաթիվ հեղինակներ և կան
շատ վիճնջի հարցեր: Ակնհայտ է միայն այն, որ ստեղծված
պայմաններում խոշոր կալվածատիրության զարդարումը ի
հաշիվ հողատիրության մյուս ձևերի անխռուագնելի էր և բխում
էր երկրի սոցիալ-տնտեսական ամրող կառուցվածքի մեջ
առաջացած գոփություններից:

Մենք խալիսենք պետական հողերին կանդրադառնանը հե-
տո, սակայն առաջմունքներն, որ այդ կալվածքների նշանա-
կալից մասը դարձավ մասնավոր սեփականություն: Հատկա-
պես ՑՕ-ական թվականներին, խալիսենք հողերի վաճառքից
հետո, արրարի հողատիրությունը շեշտակելուրեն անեց: Աղ-
րյունների վկայությամբ, եթե 70—80-ական թվականներին
արրարի հողերը գետես ամրող հողատիրության մեջ մեծա-
մասնություն չէին կազմում, ապա XX դարի սկզբներին դա
արգելվ հողատիրության գերիշխող ձևն էր:

Խալիսենք վաճառքի փաստաթուղթը ստորագրում էր
ինքը շահը: Նահանգապահեաները միայն միջնորդի գեր էին կա-
տարում, երբեմն էլ, իրենց պաշտոնը շարաշահելով, էժան
զնով հող էին ձեռք բերում և հետագայում վաճառում ավելի
բարձր զնով: Անսարին զրում է, որ արդպիսի գործարքների
ֆիրմաներ ձեռք բերելու համար պահանջվող ծախսերը, կա-
շառները և այլն անձն էին 10, մինչեւսկ 20 անգամ¹:

Ազգայինները վկայում են, որ սկզբում խալիսենք զնում
էին ավելի ցածր խավի ներկայացուցիչները, բայց երբ հողի
հեկամտարերությունը բարձրացավ՝ արքայազումները, մեծա-
մեծները և ուրիշներ նույնպես մասնակից դարձան այդ մրցա-
վազքին²: Օրինակ Աստրաբագում խալիսենք հողեր էր զնել նասր
էս Սալթանեն, որը 1900 թ. արդեն այստեղ եղած խալիսենք հո-

միօրահասն խան Միշ Ջայրի աշխարհ աշխատ ուրի¹
աշխատ աշխատ, էջ 82:

² Խավի տեղում, էջ 82:

ղերի մեծ մասը իր սհփականությունն էր գարձրիլ¹: Առարտ-
րադի Խաթումարադ դյուցք ՀՀ դարի վերշերին վաճառվեց
էմին Հովհայուսին², Նույնը կարելի է ասել և Երբազի շրջանի
մասին, որտեղ խալիս հողերի մեծագույն մասը անցել էր
մասնավոր մարդկանց ձեռքը³, Այդ նույն պրոցեսը տեղի
ունեցավ Մաքվի շրջանում, 1829 թ. Կոստովվակին հաղորդում
էր, որ էղքալ էս Սալթանին և Մոհամադ փաշան գնել էին
Մաքվի խալիս կալվածքները⁴, Թէ՛քանի Հյուսիս-արևմտյան
մասում գտնվող Սալֆեյի գավառում մոտ 300 գյուղ նախկի-
նում պատկանում էին պետությանը, բայց ՀՀ դարի սկզբնե-
րին դրանց չորս հինգերորդը արդեն յուրացվել էին կալվածա-
տերերի կողմից⁵:

Հետաքրքրական է նշել, որ արքայազունները և այլ բարձ-
րաստինան պաշտոնյաներ, այդ հողերը ձեռք բերելով, հար-
կերի բնագավառում էլ արտօնություններ էին ստանում: Մինչ-
դեռ այլ ժագում ունեցող հողատերերը, ընդհակառակը, ազն-
ին մեծ հարկեր էին տալիս: 80-ական թվականների Դիլանի
ելամուտի գրքում ասված է, որ Դիլանում վաճառված խալիսն
պյուղեր զնած մարդիկ թէ՝ հողի գինն էին վճարում պետու-
թյանը և թէ՝ ստիպված էին հարկեր տալ նախկինից մի քանի
անգամ ավելի: Օրինակ՝ Լեշտենեցա պյուղի հարկը առաջներում
5505 թուման է եղել, իսկ նրա նոր տերը՝ Մոյին ոլ Մոլը,
տարեկան 8500 թուման հարկ էր վճարում պետությանը⁶:

Խալիսնի որոշ մասն էլ խորդեմալեթներն էին զնում, Դի-
լանի ելամուտի գրքից երեսում էր, որ Դիլանի 42,668 թումա-
նի չափով տարեկան հարկ վճարող կալվածքներից 21,409
թուման վճարող մասը վաճառվել էր խորդեմալեթներին:
Սրանց մեծ մասը պետական ստորին պաշտոնյաներ էին⁷:

1 ԾԲՎԱ, ֆ. 76, դ. 241, լ. 6.

2 Նույն տեղում, թ. 1:

3 Նույն տեղում, գործ 236, թ. 54:

4 Նույն տեղում, գործ 374, թ. 3:

5 Արքուտ, Մամեդ Ալի շահ, տր. 44.

6 ԾԲՎԱ, ֆ. 76, դ. 361, լ. 1.

7 Նույն տեղում:

Ի Հաշիվ պետական խույսի հողերի հողային սեփականությունների և կալվածքների խոշոր կենտրոնացումները այսպիսի շահմատի հասան, որ XX դարի սկզբներին առանձին կալվածատերներ տիրում էին մինչև 1200 դրամ՝ մինչդեռ պետության սեփականության ներքո ամբողջ երկրում մնացի էր ընդամենը 1345 գյուղ¹:

Խնագետ ասացինք, հողային մեծ սեփականություններ էր ձեռք բերում նաև բարձր հոգևորականությունը, որոնք, հողային ընդարձակ տարածություններ սեփականելով, փաստորներածում էին խոշոր կալվածատերների:

Առաջետը հազորոգում է, որ Թեհրանի, Թավրիզի և Խաչառի մոշթեհիդների սեփականության տակ գտնվող հողային տարածությունները անել էին շորս անգամ, իսկ նրանցից յուրաքանչյուրի գնած գյուղերի թիվը 50—200-ի էր հասնում², նույն վիճակն էր տիրում և Դիլանում, ուր բարձր հոգևորականները բազմաթիվ գյուղերի էին տիրում և առնարային պյուղատեսություն վարում³. Դիլանի հայտնի մոշթեհիդ Հոմամին մի քանի հարյուր գյուղերի էր տիրում և վաճառում էր դրանցից ստացած մթերքները⁴, Սարգսվարի մոշթեհիդ Հաշի Միրզա Բրրահիմը մեծ տարածության հողեր ուներ: Մոշթեհիդի հկամուտը կազմում էր 200.000 թուման⁵, XIX դարի վերջին Թավրիզի մոշթեհիդ Միրզա Հավազը իր սեփականության տակ ուներ մոտ 200 գյուղ⁶: Նրա ժառանգները, տիրելով այդ գյուղերին, տարեկան մոտ 300 հազար թուման եկամուտ էին ստանում: Ահարի մահալի մոշթեհիդը տիրում էր մոտ 100 գյուղի:

1 Атласет, Мамед Али шах, стр. 135.

2 مسعود کیهان جغرافیای سفلی ایران تهران ۱۹۷۰ جلد سوی
178 آنکه

3 Атласет, Мамед Али шах, Александрополь, 1909, стр. 137.

4 АВПР, ф. Персид, стол. д. 77б, л. 135.

5 ЦГВИА, ф. 76, д. 197, л. 121—122.

6 П. Н. Огородников, Страна Солица, СПб, 1881, стр. 91.

7 Г. Кази, Персидская энциклопедия, Ташкент, 1914, стр. 35.

Թարձր հոգևորականները տարբեր եղանակներով զավթում էին գյուղացիներին հողամասները. Թավրիզի իմաստքում և Հաշի Միրզա Արդուլքարիմը, զարավերքին թույլ հողատերերի հողերը բռնապրավելով, իր առանց այդ էլ մեծ տարածություն կազմող հողային սեփականությունը հսկայական շափերի էր հասցրել:

Թարձր հոգևորականությունը վերածվում էր խոշոր կուլվածատերերի՝ օգտագործելով մինչիսկ հանդանակությունների և այլ նվիրատվությունների եղանակներով կուտակված գումարները. Նրանք այդ գումարները շրջանառության մեջ էին դնում և նորանոր հողային սեփականություններ ձեռք բերում:

Խելպես ասվեց, այդ տարիներին մեծ թվով առնարականներ նույնպես հողային սեփականություններ ձեռք բերեցին, որովհետև օտարերկրյա կապիտալը ոչնչացնում էր նրանի արհեստային արդյունաբերությունը և ստիլում այդ ընադավառի անձանց զրազմել գյուղատնտեսությամբ: Անարին վկայում է, որ Խսֆահանում արհետներից հեռացած և օտարերկրյա մրցակցությանը շղիմանալով մի շարք ունեոր անձինք 90-ական թվականներին սկսեցին զրազմել գյուղատնտեսությամբ: Նրանք իրենց ամբողջ ունեցվածքը հատկացնելով, հողեր ձեռք բերեցին, զանթարներ փորեցին և սկսեցին ընդարձակ հողեր մշակել: Այդ գործին մասնակցում էին նաև մեծահարուստները, որոնք իրենց կապիտալը ներդնում էին գյուղատնտեսության մեջ:

1903 թ. ոռուական հյուպատոսը Խսֆահանից հաղորդում էր, որ վերջին 20 տարիների ընթացքում մասնավոր հողատիրությունը Խսֆահանի շրջանում շատ է զարգացել: Դա և՛ եկամցուի ազգյուրը էր և թէ՝ կապիտալ ներդրման ասպարեզը Խսֆահանում հաղվագյուտ ունեոր մարդու կարելի էր հանդիպել, որ կենքանում, Ֆերիզոնում և Գահարմահալում ինչ-որ հողամալունենարք¹: Այդպիսի օրինակներ կարելի է բերել և այլ շրջան-

¹ АВПР, ф. Персид. стол. д. 331, л. 4.

² ον δοκίμων ἡγετούς
انصاری

³ АВПР, ф. Персид. стол. д. 3869, л. 368.

ներից, օրինակ, Դամդանի շրջանում առևտրական Հաշի Ղուլամը, Ղազվինի շրջանում առևտրական Հաշի Միհզա Էմինիյին քննարժակ հողային տարածություններ էին ձեռք բերել¹:

Այդ տարիներին Հողեր էին ձեռք բերում նաև առևտրական որոշ ընկերություններ: Օրինակ, 60-ական թվականներին Թումանյանցի առևտրական տունը, արտահանվող ապրանքների կարևորությունը զգալով, որոշում է ինքը արտադրել դրանք Ահա հենց այդ նպատակով էլ երանք Արդարականում, Գիշանում, Մազանդարանում, Ղազվինում և այլ շրջաններում հողամասեր են գնում և գյուղատնտեսական մթերքներ արտադրում²: Նման փաստեր կան նաև Ջամշիդյան առևտրական տան վերաբերյալ, որը Թեհրանի, Խորասանի և Ֆարսի շրջաններում մշակելի հողեր էր ձեռք բերել³:

Այսպիսով, խոշոր կարգածատիրությունը այնպիսի շափերի էր Հասիլ, որ որոշ գիտորդների վկայությամբ, կարծես աճ-րող իրանի ժողովուրդը բաժանվել էր երկու դասակարգի՝ խան-կալվաֆատերերի և Հողագույք Հասարակ ժողովովի: Հաս որում, չնայած գյուղացին ուներ անձի ազատություն, սակայն կատարյալ հողագորկության պայմաններում նա որոշ շափով կախված էր կարգածատիրությունը, և միայն այդպիսով էր նա ի վիճակի իր գոյցությունը պահպանել⁴:

Այս հարցը, այսինքն նորոտափերության բացակայությունը իրանում և գյուղացու անձի հարաբերական ազատության հարցը գրավել է այդ տարիներին տարրեր առիթներով իրանում հղած ուսւ հեղինակների ուշագրությունը, որոնք իրենց գրքերում ընդգծված ձևով անդրագարձել են այդ խնդրի բացահայտմանը: Թերենք թեկուզ մեկ օրինակ: Ռուս բժիշկ Յի-

¹ ЦГВИА, ф. 76, д. 197, л. 60.

² تاریخ اسلام و ایران میلادی ۱۳۰۷-۱۳۷۸ می تهران

³ М. Павлович. Экономическое развитие и земельный вопрос в Персии XX века, М., 1921, стр. 20.

⁴ Максимович-Васильковский. Отчет о поездке по губернаторствам Западной Персии..., стр. 25.

լատովը, որը երկար տարիներ աշխատել էր Իրանում, այդ կտպակցությամբ գրում է, որ այդ ժամանակ ամբողջ Իրանը չի բնից ներկայացնում էր առանձին կալվածատերերի սեփականություններ: Գյուղացիները ազատ կերպով կարող էին մի կալվածատիրոջից մյուսի մոտ գնալ, ինչպես որ կալվածատերը կարող էր յուրաքանչյուր գյուղացու վարարել՝ վճարելով նրան ցանքսի, անսպանի և այլ ունեցվածքի դիմաց, բանի որ կալվածատիրոջը պատկանում էր միայն Հոգն ու ջուրը¹:

Գյուղացու իրավունքների հարցին մենք կանդրագունաքանչանք աշխատության վերջին գլխում, իսկ առաջմ նշենք այն, որ նոր պայմաններում, ապրանքա-դրամաշին հարաբերությունների զարգացման, խոշոր կալվածատիրության առաջացման պայմաններում իրանական գյուղացիությունը զըրկվեց նաև իր իրավունքներից և ուժիգացավ նրա կախումը կալվածատիրոջից:

Խոշոր կալվածատիրության զարգացման մասին խոսելիս անհրաժեշտ է կանգ տռնել մեկ հարցի վրա ևս: Դա ցրի և նրա սեփականության հարցն էր Իրանում: Զուրը Իրանում գյուղատեսության հիմնական պրոբլեմներից մեկն էր: Ձրառատ զետերի պակասը, տեղումների ցածր մակարդակը, հատկապին կենտրոնական և Հարավային Իրանում, գյուղատեսության մեջ կարևոր տեղ են հատկացրել սովորմանը: Ուսումնական հղանական հղանակներից մեկը, ինչպես մենք արդին նշել ենք, զանաթային սիստեմն էր, որը կիրառվում էր երկրի բոլոր մասերում: Ղանաթների կառուցումը, նրանց նորոգումը և սարքին պահելը ընդհանրապես մեծ ժախսեր էին պահանջում: Ըստ որոշ աղբյուրների, երեմն զանաթների ժախսերը հասնում էին տաս և քսան հազար թումանի, ինչ խոսք, որ այդպիսի գումարներ կարող էին հատկացնել կամ պետությունը և կամ առանձին հարուստ մարդիկ: Ընկերություններ և նման այլ հիմնարկներ այդ ժամանակ դեռ չկային Իրանում²:

1. П. Физалов, Письма из Персии, Одесса, 1909, стр. 108.

2. J. Bassett, Persia, The Land of the Imams, p. 253.

Բիշոփը Քաշանի շրջանի մասին գրում է, որ հարյուրավոր ավելիքած և լորացած լրանցքներ կային: Որևէ դանաթի կառուցում նշանակում էր մի կամ մի քանի գյուղերի ստեղծում, իսկ նրա ավելումը նշանակում էր գյուղերի ամայացում: Հենց այդ պատճառով էլ դանաթների կառուցումը սպեկուլյացիայի հետ միջոց էր¹:

Իրանում ոչ միայն հողը, այլև ջուրը մասնավոր սեփականություն էր Շատ տեղերում խոշոր կալվածատերերը բազմաթիվ գյուղերի և ընդարձակ հողամասերի տիրություն, տիրում էին նաև շրին: Կորանը գրում է, որ մուլքագարները բացի հողից տիրեցին նաև ջրին, որը նոր եկամուտների աղբյուր էր նրանց համար: Այսպիսով ոռոգված հողերի վարձակալման պայմաններից անկախ՝ մուլքագարները իրենց մասնավոր սեփականատիրական իրավունքները տարածեցին նաև ոռոգման ազրյուրների վրա, թեկուղ եթե այն կատարվեր գետից²:

Այս երկույթը տարածված է եղել ընդհանրապես շրագարկ երկրներում, այդ թվում և Իրանում Ռմելոր իրակի

¹ I. B. Bishop, Journeys in Persia and Kurdistan, vol. I, pp. 241—2:
Իրանի բնակող ցըսանների տառաջանար ենթկայացուցիչները մեծ ուշադրություն էին զարգացման ուստինքի կառուցման և կորպին պահելու գործին, քանի որ զրա մեջ տեսնամ էին երկրի պաշտոնականության զարգացման հրաշնչիքը: Տևանյ Մաքրին Իրանի ականավոր զորքի, մեծ վնչեր Ամիր Թարիքի կյանքին ու գործառնությանց նվիրված իր աշխատություններում, անգա զանազան ուսումնական ասպարեզներ նրա կատարած աշխատանքներին, զրում է, որ նո շատ լավ զիտակցություն էր, որ երկրի ցեղաներու արտադրույթականությունը պետք է բարձրացնել, իսկ այդ նպատակին կորելի է հասնել զնուրքի ցերեց սպասարքներ՝ ամայի և անմշակ Ծովեր մշտիկի զարձենքով, Օրինակ, հու զիտակ ուժքատու Ծովեր և այնակ Ծուղ Ծինդ զնուրքի ցրեց սպասարքները կորելի էր կարծ ժամանակում այդ երկրամասը զարքել երկրի ամենա հիմտարեր և շնչ ցըսաններից մեջ: Հնաց այդ նպատակով է նո կարգացրեց և հասուն պաշտանյաններ ուղարկեց հուպիստանում շրապատնեշներ կոռուցելու համար:

مکی زندگانی میرزا تقی خان امیر کبیر تهران ۱۹۵۹
III دوایمه

² Корсун. Военный обзор персидского передового театра, стр. 100.

այս սեփականատիրությունը, այսինքն հողին և ջրին տիրելը, որոշակի գործոխություն էր մատնում ազգարային հարաբերություններում, այն էլ ինչպես կտեսնենք, հոգուտ կալվածատիրուշ և ի վեաս գրուղացու

Առանց ջրի հողը ընդհանրապես արժեք չուներ և փաստութեան որևէ հողամասի գինը որոշելիս նկատի էր առնվորմ ջրի այն քանակը, որը այդ հողը մշակելի էր դարձնում: Սա մի հանգամանք էր, որ ուժեղացնում էր նաև պյուղացու կախումը հողի և ջրի տիրողից:

Ճրի նշանակության տեսակետից ուշագրավ է անդրագառնալ նաև հետեւյալ երևոյթին:

Մենք արգեն նշեցինք, որ մասնավոր սեփականությունը ձեռք էր բերվում ժառանգաբար, զնումով և պետական հողերի յուրացումով: Բայց հողային սեփականությունները ընդարձակելու գործում նշանակալից տեղ էր դրավում նաև ամայի հողերի յուրացումը: Որևէ ամայի, անապատային հողամաս ոռոգման եղանակով մշակող անձը, պետությանը համապատասխան հարկ վճարելով՝ դառնում էր նրա լիիրավ սեփականատերը¹, ուշագրության արժանի է նաև այն, որ հողի գինը որոշելիս մեծ նշանակություն ունենին նրա ոռոգման պարագաները: Հաճախ էր պատահում, որ որևէ հողամասի ոռոգմանը անհրաժեշտ չըին վճարվում էր անհամեմատ ավելի մեծ դումար, քան իրեն հողամասին²: Հենրի Ռեննն զրում է, որ մշակելի հողի գինը կախված էր ջրի քանակից և հողի բերդությունից: Որևէ կալվածքի գինը կարող էր այդպիսով կես միլիոն ֆրանկի հասնել, բայց կարող էր և ցածր եկամուռների պատճառով մի քանի հազար ֆրանկից ավելին լինել³: Հենց այդ պատճառով չէ խանճրը և խոշոր կալվածատերերը՝ բացի հողային սեփականություններ և ջրի օգտագործման թնագավառում

1. М. Л. Томара, Экономическое положение Персии, стр. 4.

2. Խոյն տեղում, չը մ.

3. نزد داماشی سفرنامه ... هانری رند

անեաշնորհը իրենց ձեռքը վերցնում։ Թարձրաստիճան Հոգևորականությունը, մաշթեհիդները, խոշոր կալվածատեր գառեայով, միջամտում են նաև զրի սեփականատիրական իրավունքի հարցին, որի հետևանքով դրուղացիության պինակը էլ ալեյի է վատանում։ Նախկինում բնակչությունը ինքը շրանցըներ էր կառուցում, հետևում երա պահպանությանը, բայց 1880 թվականին լրացուցիչ եկամուտներ ստանալու նպատակով դյուլատերերը, մոշթեհիդների հետ լեզու գտնելով, թույլտրվություն են ստանում, շարիաթի վրա հիմնվելով, շուրջ արամացրել որոշակի վճարի դիմաց¹։

Զրի կանալները կամ առուները պատկանում էին պետությանը, կամ մասնավոր անձանց։ Առաջին դեպքում պետական պաշտոնյաներն էին հակում զրի բաշխմանը՝ ըստ սուսպահ անհրաժեշտության գանձելով համապատասխան հարկ, որը մեծապես կախված էր տեղից և տարվա ժամանակից։ Եթերորդ դեպքում հոսող զրի տերերը իրենց սեփականատիրական իրավունքի համար պետությանը որոշակի գումար էին վճարում և հարկ էին գանձում զուրը օգտագործողից՝ ըստ օգտագործված զրի բանակի և տարվա ժամանակի։ Եթե լեռներից հոսող ջուրը առատ լիներ, ապա յուրաքանչյուրը կարող էր առվակներով տանել այն իր հողամասը, որա զիմաց ոչ ոքի ոչ մի բան չվճարելով։ Կար նաև այսպիսի կարգ, որ զրի սեփականատերը համարվում էր նա, ով առաջինն էր այն հայտնարերում և առվակով փոխադրում²։

Դնայած շարիաթի նորմաների համաձայն արգելվում էր բնական ավագանեների զրի առ ու ծախը, սակայն շատ զետեր ու առուներ ունեին առանձին տերեր, որոնք զրի առնարով էին պազվում։ Այդ պատճառով էլ հողերը գնելու գեղքում անհրաժեշտարար ուշադրություն էր դարձվում տվյալ վայրի ուսումնական հնարավորություններին կամ նրա նկատմամբ հնա-

1. Г. Казн., Персидская земля или «Новая азельсния», 1914, Красноводск, стр. 125.

2. П. Овородников, Очерки Персии, СПб, 1878, стр. 212.

բավոր սեփականատիրական հավակնությունների հանգամանքներին¹: Այսպես որ հողի հկամարերության գնահատման համար հիմք էին ընդունվում զանազան գործոններ, աշեղայն գլխավորապես ըրի այն բանակը, որը գտնվում էր սեփականատիրոջ տրամադրության տակ²:

Ոռոգման ասպարեզը նույնպես գուրս չէր մնացել օտարերկրյա մոնոպոլիաների ուշադրությունից: Մենք արդեն անդրադարձել ենք, որ ուստական դիսպան Պոլգոռուկին արտաքին գործերի մինիստր Գիրսին գրած 1888 թ. Հուլիսի 10-ին զեկուցագրում հայտնում է, որ ինչ որ ամերիկյան ընկերությունն ուզում է իրանում ձեռք բերել արտեզյան հորեր փորեկլու կոնցենտրոն իրավունք³: Փաստաթղթերում բերված են նաև կոնցենտրայի պարսկերեն բնադիրն ու ուստերեն թարգմանությունը: Կոնցենտրոն պայմանագրի հինգերորդ հոդվածում ասված էր, որ կոնցենտրոնի փրավունք ունի արտեզյան հորեր փորեկլու հղանակով ուղղել ամայի, լմշակված, ոչ մի հկամում շտվող և տեր լունեցող հողերը, այդիներ տնկել այնտեղ, անտառներ ստեղծել կամ այն վարել ցանքսի համար⁴: Ինչպես տեսնում ենք այս կոնցենտրան օտարերկրացիների համար մեծ հնարավորություններ էր ստեղծում ձեռք բերել հոգային սեփականություններ:

Այսպիսով՝ XIX դարի վերջերին և XX դարի սկզբներին մուգքադարային տիպի հողատիրությունը հսկայական չափերի հասավ: Որոշ ազգայուրների տվյալների համաձայն այդ ժամանակներում իրանի հողայինն սեփականությունների ընդհանուր քանակի մոտ 66—68 տոկոսը կազմում էր մուգքադարային հողատիրությունը⁵:

1 Г. Казм, Персидская земля... 1914, Красноводск, стр. 53.

2 М. Л. Томара, Экономическое положение Персии, стр. 77.

3 АВПР, Главный Архив, V Аз, д. 36, л. 64.

4 Նույն տեղում:

5 Сенджаби, К изучению земельного вопроса в Персии, Баку, 1930, стр. 15—16.

Հողատիրության այս նոր ձևը, ինչպես տեսնում ենք, արդեն իրենից ներկայացնում էր սոցիալական նոր ուժի արտահայտություն։ Դա իր հետ, անշուշտ, բերում էր նաև կապիտալիստական հարաբերությունների զարգացման նախադրյալներ։

Հողային սեփականությունների այսպիսի կուտակում առանձին կալվածատների ձեռքում աննախադեպ էր իրանի հողատիրության պատմության մեջ։ Խոշոր կալվածատիրությունը իր գոյությունը շարունակեց մինչև XX դարի 80-ական թվականները, լսալած երկրում տեղի էին ունեցել հսկայական սոցիալ-քաղաքական փոփոխություններ։ Այս խավե էր, որ ունակցիայի հիմնական հենարանը հղավ իրանական 1905—1917 թթ. հեղափոխության տարիներին և 1917 թվականից հետո երկրում ծավալված օգգային-աղաւազրական շարժումների ժամանակաշրջանում։

Խելպես նշեցինք երկրում գերիշխում էր խոշոր հողատիրությունը, սակայն շպետք է կարծել, որ հողատիրական դասակարգը միատարր էր։ Նա անշուշտ կազմված էր սոցիալական տարրեր խմբերից, որոնք մի շարք հատկանիշներով տարրերգում էին միմյանցից։ Այստեղ ես կարելի էր զանազաններ երեք հիմնական շերտ։ խոշոր, միջին և մասն հողատերեր։

Ազգյուրները վկայում են, որ խոշոր հողատերերը, որոնք կազմում էին բոլոր հողատերերի մեկից-երկու տոկոսը, տիրում էին մշակելի հողերի ամբողջ տարածության ավելի քան կեսին։ Միջին հողատերերը կազմում էին բոլոր հողատերերի մոտ 30 տոկոսը և տիրում էին մշակելի հողերի մոտ 15 տոկոսին։ Նրանց շարքերում էին մեծ մասամբ նախկին թիուզարները, առևտորա-վաշխառուական շրջանների ներկայացուցիչները, պետական պաշտոնյաները և միջին հոգեռականության ներկայացուցիչները։ Մասն հողատերերը կազմում էին

1. М. Павлович, Экономическое развитие и аграрный вопрос в Персии XX века, М., 1921, стр. 20.

բոլոր Հոգատերերի մոտ 70 տոկոսը, բայց աիրում էին մշակելի հոգերի մոտ 30 տոկոսին¹:

Խոշոր կալվածատերերը XIX դարի վերջին սկսում են բռնագրավել նաև համայնական կամ քրմումիք կոչվող հոգերը: Դեռևս գարամկղրին իրանական գյուղաբնակում գործություն ունեցող գյուղական համայնքը դարի ընթացքում վերջնականապես քայլարյվեց: Նույն ճակատագրին արժանացան նաև գյուղացիական առանձին հոգամասեր, որոնք ամրությունների կլանվեցին խոշոր կալվածատերերի կողմեց²:

Այստեղ անհրաժեշտ է նշել, որ շնայտ և XIX դարի վերջին և XX դարի սկզբներին իրանում գերիշխում էր խոշոր հոգատիրությունը, սակայն հոգօգտագործումը շարունակում էր մնալ մանր և արտօնված:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ նոր աիրի հոգատերերի՝ մուլքադարների առաջ գալը էական փոփոխություն շմացրեց գյուղատնտեսության եղանակների մեջ: Հողագոտագործման ֆեոդալական եղանակները շարունակում էին տիրել առաջվա պես և բավականին ցածր աստիճանի վրա էին պահում գյուղատնտեսության ընդհանուր մակարդակը:

Վարձակալման սիստեմի զարգացումը տեղի էր ունենում մասնավոր սեփականության աճի և ծաղկման հետ զուգահեռ: Դրա հետ կապված էլ մուլքագարների հկամուտները մեծանում էին ոչ թե վարձակալման սիստեմի աճի հետ, այլ ի հաշիվ ոննատայի աճի: Առաջվա պես գյուղացին շարունակում էր հողը մշակել նախնադարյան եղանակներով: Նոր պայմաններում փոփոխությունն այն էր, որ նա ստիպված էր ավելի շատ աշխատել և ավելի նեղ ապրել:

Թիշովը գրում է, որ մեծաշրուտները և կալվածատերերը ապրում էին գլխավորապես քաղաքներում. գյուղերում

1. Н. А. Зиновьев, Статистические сведения о провинциях Галиции и Шахруд-Бастам, СПб, 1887, стр. 13—28.

2. «Ученые записки института востокознания», VIII, Ирвинский сборник, М., 1953, стр. 121.

ապրում էին ազելի Համեստ Հարստություն ունեցող խաները, աղաները կամ գյուղատերերը:

Հարստում և խոշոր գյուղատերերը բնակվում էին Թեհրանում, Թավրիզում, Իսֆահանում, Քերմանջանում և այլ քաղաքներում: Իրենց կալվածքները կառավարելու համար նրանք նշանակում էին ներկայացուցիչ, որը կոչվում էր Շեասր: Առ կարգավորում էր վարձակալների գործերը և գանձում կալվածատիրոջ բաժինը: Գյուղերը և գյուղացիները թողնվում էին նասրի բմահանուցին իշխանություններից Հովանավորության առանց որևէ հույսի¹:

* * *

XIX դարի երկրորդ կեսին Իրանում գեռնս նշանակալի տարածություն էին կազմում պիտությանը պատկանող Հողերը կամ խալիսեները: Խալիսն Հողատիրությունը Իրանում գոյշություն ուներ գեռ վաղ ժամանակներից, բայց նա մշտական փոփոխության մեջ է եղել: Որոշ ժամանակաշրջանում նրա տարածությունը աճել, իսկ մի այլ գեղագրում նվազել է: Խալիսները իրենց ժաղովով նույնպես տարբեր էին՝ նայած թե ինչ պայմաններում և ինչ աղբյուրներից էին անցել պիտությանը: Խալիսն Հողերի ժագումը կամ նրանց տարածության ստույգ շափը երբեմն հայտնի չէր մինչև իսկ պիտությանը: Տարբեր ժամանակներում եղել են խալիսն Հողերի պրանցումներ և կազմվել տարբեր ցուցակներ և մատյաններ, որոնք ինչոր շափով արտացոլել են խալիսն Հողերի վիճակը: Այդպիսի ցուցակներ կազմվել են նաև նասր էղ Թին շահի (1848—1896) օրոք, որոնք պահպանվել են արխիվներում:

Խալիսների տարբեր կատեգորիաների պարզաբանման տեսակետից կարեռ են այդ ցուցակներում նշված մի քանի

¹ J. B. Bishop, Journeys in Persia and Kurdistan, vol. II, p. 251.

Անի խալիսները, որոնք հնտագայում ևս սպառքորժում են ֆինանսների մինիստրության կողմից։ Դրանք չին.

1. Խալիսներին էնքեղալի կամ փոխանցելի խալիսներ։ Մրանք այն հոգածաներն էին, որոնք պնտության կողմից տրվել էին առանձին անձանց և որոնք ենթակա էին փոխանցման նրանց ժառանգներին, բայց ոչ որևէ երրորդ անձնավորության։ Այս տիպի հոգածարիրությունը առաջանում է խալիսների ընդհանուր անկման պայմաններում, երբ նաև էղ Դին շահնի մինիստր Ամին էս Սոլթանը գալիս է այն եղբակացության, որ այդ կալվածքները ավերումից փրկելու համար նպատակահարմար է զրանք փոխանցել առանձին անհատների տեօրինմանը՝ փոխանակ նրանց տալու այդ կալվածքների եկամուտները զանձելու իրավունքը։ Այդ փոխանցումների համար նա համապատասխան հրավարտակներ է հրապարակում, այդ կալվածքների հարկերը, որոնք զնահատվում էին բնամթերքով, բարձրացվում են, իսկ հետո փոխադրվում կախինիկ գումարի։ Դա կոչվում էր տթասիբ։ Այդ գումարներից որոշ պակասեցումներ թույլատրվում էին հատուկ նոպատակների, ինչպես օրինակ զանաթեների կառուցման համար և այլն։ Ահա հենց այս խալիսներն չին, որ հայտնի զարձան ընալիք սեղաթե էնթեղալիք անունով։

Նոր կարգի համաձայն այդ հոգերը կարող չին ժառանդվել, բայց չեն կարող վաճառվել որևէ երրորդ անձնավորության։ Այստեղ հետաքրքրական է նշել նաև այն, որ այդ կալվածքների արժեքը ընդհանրապես ավելի ցածր էր նշանակվում, քան արրարի կալվածքները, որովհետև պիտությունը միշտ էլ կարող էր դրանցից որևէ մեկը ետ պահանջել։

Այսպիսով խալիսներին էնթեղալին կամ խալիսներին վագուզարին այն հոգերն էին, որ արվում էին ոչ լրիվ սեփականության, այսինքն դրանք կարելի էր փոխանցել, բայց չէր կարելի վաճառել, չնայած որ հետագայում հատուկ ֆարմանով թույլատրվեց նաև վաճառքը։

Էնթեղալի հոգերի եկամուտներից պետական բաժինը շատ մեծ էր լինում, երբեմն մինչև եկամարի 70%-ը, ուստի նը-

բանց տերերը մեծ ջանքեր լէին թափում այդ հողերի բարեկարգման համար²:

2. Խալիսելարք զարքի կամ բռնազրավված խալիսեներ: Սրանք այն խալիսեներն էին, որոնք նախկինում պատկանելիս են եղել պետությանը, ապատամբած կամ պիտական հարկերը լվճարած խաներին և հետապայում զավթվել ու մտել են խալիսեների ֆոնդը: Օրինակ՝ Թեհրանում, Դիլանում, Բորուշերդում և Խարում շատ հողեր ունեցող Աստֆ էդ Շուկի մոտ 50 զյուղերը բռնազրավվել և համարվել էին խալիսեր զարթիչ, Պատահում էին նաև դեպքեր, երբ որոշ ժամանակ հետո այդ հողերը վերադարձվում, կամ ավելի շուտ վաճառվում էին նախկին տերերին, բայց դրանք շարունակում էին մնալ խալիսեների ցուցակում³: Լամբտոնը զրում էր, որ նասր էդ Դիլ շահը թագավորության սկզբում Խոֆահանի շրջակայթում մոտ 1000 զյուղ և հողամասեր կային: Դրանցից մի մասը մասնավոր էր, մի մասը վակիֆային, իսկ մնացածը խալիսե, որոնք համարյա շէին մշակվում⁴: Ֆինանսների մինիստր Միրզա Արդուլ Հոսեինիին 14,000 թուման կանխիկ և 1000 խարզար ընտմթիրը է տրվում, որպեսզի նա հետ վերցնի այդ հողերը: Մինիստրը այդ դումարը օգտագործում է զինվելու և կառավարության գեմ ապստամբելու համար: Երբ ապստամբությունը հնչվում է մասնակիցների կալվածքները բռնազրավվում և մացվում են խալիսեի մեջ: Չեայած այդ կալվածքները հետագայում վերադարձվեցին իրենց նախկին տերերին, սակայն

گیهان جغرافیای مفصل ایران تهران ۱۳۱۱ جلد سوم
۸۵ հաջո

تقى چەرامى قارىچ كشاورزى ایران تهران ۱۹۷۰.

۳ ۱۷۰ հոգու ۱۷۷:

۴ ۱۷۱ հոգու ...

۴ Պատահում էին զնուցքը, երբ մի զյուղի ասրերը մասնը կազմակերպության էին խալիսե կամ վակիֆների, ԱՊՎԱ, ֆ. 76, լ. 213, լ. 4—8. Օրինակ՝ 1880—81 թվականին Նորուղանում մի զյուղի մեկ երրորդը խալիսէ էր, կամ մեկ ուրիշ զյուղի հետ, Մյուսի մեկ երրորդը կամ մեկ վեցերորդը՝ վակիֆների, Տ. Ա. Լ. Lambton, Landlord and Peasant in Persia, p. 156.

դրանք շարունակվեցին գրանցվել խալիսելաթե զարթի՝ այսինքն բռնագրավված խալիսենքը։ Այդ հրադարձություններից որոշ ժամանակ անց Միրզա Արգուկ Վահարը և որպագարձավ Խաֆաշանի Հողերին, և գրանք բաժանվեցին երկու կատեգորիաների՝ վակֆային խալիսենքը և արրարի խուլիսենքը¹։

Յ. Խալիսելարի բազրի կամ սերմացուի խալիսենքը։ Ղաշարների թագավորության օրոք Խրանում բազմիցս ոռվլ էր տեղի ունենում։ Կալվածատիրական շատ գյուղեր ավերվում էին և պետությունը ստիպված էր լինում այդ գյուղերի գյուղացիներին սերմացու տալ, որպեսզի նրանք վերական Հողագործությունը, պայմանով, որ բերքը ստանալուց հետո ստացած սերմացուն վերադարձվի։ Այդ գյուղերի սերների մի մասը գյուղերի վիճակը բարելավվելուց հետո վերադանում էր և տերկանգում գյուղերին։ Զանազան պատճառներով չվերադարձած կալվածատերների դժուդերը անցնում էին պետությունը և կոչվում շսերմացուի խալիսենքը²։

Դա առաջին անգամ սկսվեց Մոհամադ շահի օրոք Խաֆաշանում։ Սովոր վերանալուց հետո հողերը վերադարձվեցին տերերին, բայց մնացին խալիսենքը ցուցակներում³, Համրատունը նշում է, որ երբ 1869—1872 թթ. մի քանի հրար հաջորդող սովի տարիներ եղան, մեծ թվով խալիսն և արրարի հողեր նորից ամայացան, բազմաթիվ Հողատերեր պարզորեն լրեցին իրենց հողերը, որոնք և մտան խալիսի ֆոնդի մեջ⁴։

Գ. Խալիսելարն սարբի, կամ գրանցված խալիսենքը։ Դրանք այն Հողերն էին, որ պետությանը չեին պատկանում, բայց քանի որ գրանցված էին դեռևս նադիր շահի ժամանակ կազմված ռեազարեյն նադերից ցուցակում, ուստի պետու-

1 Նույն տեղում, էջ 152—153.

2 محمد حسون اقتصاد کشاورزی جلد اول تهران ۱۹۷۸
٢٧٩ صفحه

3 ۷۱ صفحه ... انصاری

4 A. K. S. Lamdon, Landlord and Peasant in Persia, p. 152—153.

թյումը այդ հոգերը համարում էր խալիսն, չնայած դրանք զանգում էին մասնավոր տնօրինության ներքո¹:

Թացի խալիսնի այս շորս ձևերից աղբյուրները նշում են նուև հինգերորդ ձևի մասին, որը կոչվում էր խալիսնյի սահիկ դիվանի, որոնք տրվում էին մորաշիրներին և կամ վարձով տրվում առանձին մարդկանց²:

Աւագումնասիրությունները ցույց են տալիս, որ զաջարների որոք խալիսների վիճակը փոփոխական էր, հատկապես շահերի փոփոխումով նրանց վիճակը անկայում էր դառնում: Ընդհանրապես պետք է նշեն, որ զեռևս XIX դարի երկրորդ կեսին պետությանը կամ շահին պատկանող հոգերի սահմանագոտությունը դժվար էր: Այդ բանը միայն առաջին և երկրորդ մեջիսների (1905—1911) ժամանակ կատարվեց³:

Ֆաթէ Ալի շահի սահմանից հետո խալիսների վիճակը այնքան անորոշ դարձավ, որ կառավարությանը հայտնի չէր նրանց քանակը, որովհետև բոլոր մատյանները և փաստաթղթերը ունեցացիլ էին: Իրանական շահերը որոշ միջոցների էին զիմում այդ բնագավառում պարզություն մտցնելու համար: Հենց այդ պատճառով էլ նասր էղ Դին և Մոզաֆար էղ Դին շահերի օրոք նույնպես խալիսն հոգերի ցուցակներ կազմվնցին⁴:

Այդ տեսակեաից հետաքրքիր է հետևյալ փաստը. Մոհամադ շահի ժամանակ մեծ վեղիր Հաջի Միրզա Աղասին 1840—1841 թվականներին մի հրովարտակ է հրապարակում հետեւյալ բովանդակությամբ. Խախ և առաջ բոլոր այն նախկին խալիսները, որոնք դրանցված էին մատյաններում և արքարի չէին, պետք է նախաշնեին որպես խալիսն կարվածքներ երկրորդ՝ այդ նախկին խալիսները, որոնք այժմ արդեն արքարի էին դարձել, խալիսնի մեջ չպետք է մտնեին, երբորդ՝ Աղա

1 Նույն տեղում:

2 77 صفحه ... الصاري

3 مرتضى حسینی تهرانی اصول علم مالیه ... صفحه ۱۸۰

4 احمد هونمن اقتصاد کشاورزی تهران ۱۳۷۴ صفحه ۲۸۱

Մոհամադ խանի և Ֆաթէ Ալի շահի այն բանագրավումները, որոնք որոշակի ժառանգներ ունեին, և Հողերը նրանց ձեռքում էր, պետք է համարվեին արբարի, բայց պետությունը այդ հողերը չեր տալիս նրանց, այլ զրանց դիմաց վճարում էր ինչուր գումար. շորրորդ՝ բայց այն խալիսները, որոնք գրանցված էին կամ դրանցված չեին, եթե օրինական հավակենորդ ունենալին, ապա պետք է արվեին նրանց և խալիսն շհամարվեին:

Այս հրովարտակը վերաբերում էր խալիսն բայց դյուզերին, որոնք ցրված էին Թեհրանի, Բաֆանանի, Աստրատականի, Թերմանի, Ֆարսանի, Ֆարանդանի, Աստրաբադի, Սավենի, Գիլանի, Ղազինի, Թերմանշահի և մասամբ էլ Բորուջերդի, Լորեստանի, Թուրքիստանի, Գոլփայենանի, Խոնսարի և այլ նահանգներում ու շրջաններում¹:

Թերզոնը այն կարծիքն է հայտնում, որ խալիսն հողերը իրանում մեծ մասամբ տանցած դարի քաջարական, ներքին կորմնարի ծնունդ էին²: Դա մասամբ ճիշտ է, բայց մեզ հետաքրքրող ժամանեակաշրջանում արբարի հողերի բռնադրավճան և խալիսն հողերի ֆոնդի մեջ մտցնելու փաստերի էլ կարելի է հանդիպել: Պատահում էին դեպքեր, երբ հողատերերը ի վիճակի շեին լինում բավարարեւ պետական պաշտոնյաների պահանջները և նրանց հողերը բռնադրավճան և դառնում էին խալիսն: Այդպիսի բռնադրավճանները երբեմն կատարվում էին դեկրետով, պահպանվելի են նաև էդ Դին շահի օրոք Բաֆանանի նահանգապետ Ջել էս Սոլթանի դեկրետները, որոնցով արբարի հողերը հայտարարվում էին խալիսներ³:

1882 թ. լույս տեսած էպվարդ Սթելլի ժողովում կատարվում էր պարագաներու գրքում կարդում ենք, որ արբարի հողերը կարելի էր առնել և ժամանել, ինչպես ամեն մի ունեցվածք: Բայց թե պետությունը երբեմն դիմանի հողերը վաճառում էր մասնավոր անձանց, թե ոչ, ոմի հարց էր, որի համար ես չկարողա-

¹ 187 ժամանակաշրջան Իրան Թերան: 190:

² G. N. Curzon, Persia and the Persian Question, vol. II, p. 486.

³ A. K. S. Lambton, Landlord and Peasant in Persia, p. 154.

շա բավարար պատասխան ստանալու բայց անկախ այն բանից, թե դիմանե՞ Հողերը կարող էին արբարի դառնալ, թե ոչ, գոյություն ունեն մշտական առնդենց արբարի հողերը դիմանի դարձնելու ուղղությամբ՝ բռնագրավման կամ այլնայլ հղանակներով¹:

Սա, իշարկե, միակողմանի զնաշատական է, քանի որ ժամաները ցույց են տալիս, որ տեղի էին ոմանաւում նաև խալիսն հողերի վաճառք մասնավոր անձանց:

Ուստինասիրությունները ցույց են տալիս, որ զարարների թագավորության շրջանում, հատկապես Աղա Մոհամադի խանի և մեծ վեզիր Հաջի Միրզա Աղասու օրոք, ավելանում էր խալիսն զյուղերի թիվը: Որոշ վակֆային կալվածքներ են, որոնք որոշակի նշանակում չունեին, զավթվում են պետության կողմից և առցգում խալիսների ֆոնդի մեջ: Նաև չոր թին շահը իր թագավորության սկզբնական շրջանում խալիսն կալվածքները ընդարձակեց, բայց վերջում սկսեց դրանք բաժանել:

Ընդհանրապես խալիսն հողերի ֆոնդի անի պատմության տեսակետից բնորոշ օրինակ կարող է ծառայել հենց մեծ վեզիր Հաջի Աղասու կալվածքների պատմությունը: Հաջի Միրզա Աղասին ասանչորս տարի Խրանի մեծ վեզիրն էր: Այդ տարիներին նա մեծ թվով կալվածքներ է գնում, որոնց բարեկարգման ու մշակման համար մեծ քանաքեր է թափում: Իր իշխանության վերջին տարում՝ 1264 թ. (1847—48) նա իր կալվածքները, որոնց թիվը հասնում էր 1438-ի, իսկ արժեքը մոտ հինգ միլիոն թումանի, նվիրեց Մոհամադ շահին: Այդ հողերը մտան խալիսների ֆոնդը և հայտնի դարձան որպես «Հաջ Միրզա Աղասու խալիսներ»²:

Սիսթանի նահանգի խալիսների պատմությունը նույնպես սրոշակի հետաքրքրություն է ներկայացնելում Խրանի խալիսն հողատիրության ընդհանուր պատմության ուսումնասիրման տեսակետից:

¹ E. Stack. Six Months in Persia, vol. II, London, 1882, p. 247.

² مرتضی حسینی تهوانی اصول علم مالیه ... صفحه ۱۱۶

³ تقى جهرامى تاریخ کشاورزی ایران تهوان ۱۹۰۱ صفحه ۷۹

Սիսթանի խալիսեի պատմությունը սկսում է Նասր Էդ Դին շահի թագավորության առաջին տարիներից, Նահանգը գրավվեց 1856—1857 թվականներին։ Իրանական կառավարության գերիշխանությանը դիմադրում էին անզական խաները, բայց այդ դիմադրությունը չախախավեց և Թայփինի ամիսը Միր Ալամ խանը գրավեց ամբողջ Նահանգը։ 1874 թվականին Սիսթանը արվեց նրան որպես թիուզ։ Նրա մահից հետո թիուզը անցավ որդուն։ Միր Ալամ խանը իր իշխանության տարիներին ստիպեց անզական հողատեր Հոգնորականներին իրենց Հոգերը վարձով տալ նրան։ Ցեղապետներին, որոնք կուլպում էին ասրաբարներ, նա ստիպեց մեծ հարկեր տալ և որոշ թվով աշխատող ուժ տրամադրել։ Ամսիճանաւրար այդ վճարումները և ժառանգությունները գիտվեցին որպես հողային ռենտա, իսկ ամբողջ Սիսթանը համարվեց խալիսել։

Բլուզիստանում Նույնպես խալիսեի պատմությունը սկսում է Նասր Էդ Դին շահի ժամանակվանից։ Նա կրկին նրանի կառավարության իշխանության տակ անցավ XIX դարի կեսերից։ Բլուզիստանի մշակելի հողերի մեծ մասը գարեավ խալիսե, քանի որ նրա նախակին տերերը անհայտացել էին և ուշնացել նրանց սեփականատիրական գրանցումները²։

Խալիսե հողերը ընդհանրապես բարվոք վիճակում չէին։ Պետության ներկայացուցիչները կամ խալիսեի անօրինողները ոչ մի ուշադրություն չէին դարձնում այդ հողերի բարեկարգման վրա։ Նրանք հետապնդում էին միայն մեկ նպատակ՝ ձեռք բերել առավելագույն եկամուտ։ Այդ ամենի հետևանքով պյուղերը սկսում են ամերգել և զյուղացիները մասսայարար հեռանում են խալիսե պյուղերից։ Նահավանդի և Խազարի շրջանների մասին 1850—51 թթ. զեկուցագրում ասված է, որ այնտեղ կալին 13 լրիք խալիսե և 4 մասամբ խալիսե գյուղեր։ Այդ գյուղերից երեքը միանգամայն ավերված վիճակում

¹ A. K. S. Lambton, Landlord and Peasant in Persia, p. 244.

² Նույն տեղում, էջ 255։

էին: Իրանի ֆինանսների մինիստրությունում պահպանված 1879—80 թվակիր մի զեկուցագրում Խարի և Թէ՛քանի շրջակայրի մասին նշված է, որ Խարի գյուղերի մեջ մասը, անկախ խալիսն կամ արբարի լինելուց, անկման վիճակում էր: Այդ զեկուցագրում նշված է նաև այն փաստը, որ արբարի կալվածքները ամենուրեք ավելի լավ վիճակում էին, քան խալիսն կարվածքները¹: Էթեմադ էս Սալթաննեն նույնպես նշում է, որ հսկողության պահանի և վատ կառավարման հետևանքով պետական շատ կարվածքներ ավերվել էին: Խակ Անսարին՝ գրելով, որ արբարի հողերը ծաղկում, իսկ խալիսները ավերվում էին, պատճում է, թե ինչպես շահը, իր հանապարհորդություններից մեկի ընթացքում շեն և ժաղկող գյուղի Հանդիպելով, Հարցիում է, թե սա ում կարվածքն է, իսկ ավերակ գյուղերի Հանդիպելով՝ Հարցնում է, առ պետական խալիսն՝ չէ:

Պետության գողմից վարձով տրված հողերն էլ առանձնապես բարզոր վիճակում լին, քանի որ վարձակալները առանց կապիտալ ներդրումներ կատարելու ձգտում էին առավելացնելով օգուտ քաղել, որի հետևանքով էլ հողերը ուժառպատ էին լինում:

Այս ամենի հետևանքով 70—80-ական թվականներին խալիսն հողատիրությունը որպես հողատիրության ձև անկում էր ապրում: Այդ պրոցեսի առաջն առնելու նպատակով և, մյուս կողմից, մեծ գումարների կարիք գդալով՝ նասր էդ Դին շահը սկսեց խալիսները վաճառելու Մտեղդվեց մի մինիստրություն, որը կոչվում էր Աշխաղարթի խալիսներթու: Այդ մինիստրությունը փաստորեն միշնորդի դեր էր կատարում, եթե խալիսն հողերը վաճառվում էին կամ տրվում որպես թիուլ Խալիսն հողերի վաճառքի մասին է խոսում նաև Զամալզադեն, որը գրում է, թե պետությունը, որպամի կարիք գդալով, 1876—

¹ A. K. S. Lambton, Landlord and Peasant in Persia, p. 156.

² Խոյի տեղում, էջ 152:

محمد حسن خان اعتماد سلطنه کتاب امثال و الالاير تهران ۱۳۰۲ صفحه ۱۳۰۲

* 58 صفحه ... الصاری

1877 թթ. սկսած որոշեց վաճառիլ խալիսները¹, Դիվանի կալվածքները և Հողերը ունենոր և Հարուստ մարդկանց էին վաճառվում և համապատասխան փաստաթղթեր արգում²:

Խալիսն Հողերի վաճառքի մասին այս հրամանից մի քանի տարի հետո, օրինակ, Գիլանի եւլուստի մասին կազմված գրքույկում ցույց է արգած, որ շահի կողմից անցյալում բռնադրավված և խալիսն դարձած Հողերի վաճառքի հետեւնքով Գիլանում մնացել էր ընդունենոց խալիսն երկու պյուլ: Այդ հոգերը ժամանակին պատկանելիս են եղել Գիլանի հահագապետ Մեջդ էդ Դուերին, իսկ այժմ վաճառվել էին նրա որդուն էմջադ էդ Դուերին³:

Այսպիսով, նամար էդ Շին շահի թագավորության վերջում մեծ քանակությամբ խալիսն գյուղեր, հատկապես Խաֆահանի շրջանում, ամբողջովին վաճառվեցին և մեծ թվով մարդիկ Հողեր գնեցին պետաքանչից: Անսարին զրում է, որ խալիսները մեկը մյուսի ձեռքից խլում էին և միմյանց վաճառում: Պատահում էին դեպքեր, երբ տասը տարվա ընթացքում նույն գյուղը հինգ ձեռքից էր անցնում⁴:

Ուրեմն, ինչպես տեսնում ենք Հարկերից, գլխահարկից և Հողային Հարկերից բացի եկամուտների մի նոր աղբյուր էլ է առաջանում և դա խալիսն Հողերի վաճառքն էր, խալիսն, որը մինչ այդ անընդհատ աճում էր առանց համապատասխանորեն ազելացնելու պետական եկամուտները:

Մողաքար էդ Շին շահի ժամանակ էլ վիճակը եռոյնն էր: Եաւ հրամայել էր խալիսներին՝ վաճառքը շարունակել և կազմել մի ցուցակ, որի մեջ պետք է նշգնին այդ Հողերի բանակը և յուրաքանչյուրի գինը: Պետական պաշտոնյաները և ազելացները ցուցակը կազմելիս շարաշահումներ կատա-

¹ 178 համար ... Ջմալ Զադե

² 179 համար ... Հերան Հերան 1921: Հերան

³ ԱՇՎԱ, ֆ. 76, լ. 361, ա. 107.

⁴ ԱՇՎԱ համար ... Իջարի

⁵ O. N. Curzon, Persia and the Persian Question, vol. II, p. 485.

բեցին և մի շարք կալվածատերերի սեփականությունները և ույնպես մացրին ցուցակի մեջ որպես խալիսն հռղեր:

Թաղի Բահրամին նշում է, որ Մողաֆար էդ Դին շահը փոխանակ հեռավոր և քայլայզած կալվածքները վաճառքի հանելու, քաղաքների մոտակայքում գտնվող ընտիր և բարդավան կալվածքները էժան գնով անգործունյա և ապիկար մարդկանց վաճառեց, որի հետևանքով էլ այդ խալիսները լրիվ բարերայվեցին²: Այս շահի ժամանակ էր, որ Խուզիստանի համարյա ամբողջ խալիսները վաճառվեցին մասնավոր անձանց³:

Խալիսն հռղերի վաճառքը տեղի էր ումենում պետության համար աննպահու պայմաններում: Այդ հռղերը վաճառվում էին չեղին գումարների դիմաց նրբեմն էլ գրանք հատկացվում էին առանձին մարդկանց, որոնք հետո յուրացնում էին: Օրինակ, Մողաֆար էդ Դին շահը Ղազվինի և Ջանքանի միջև ընկած Միահղունուց, որը ուներ երկու հազար ծուխ և տարեկան 2000 թուման կանխիկ, 1000 խարզար ցորեն և 456 ման դարման հարկ էր տալիս, հանձնեց պալատական մի բարձր պաշտոնյայի: Իսկ նա ինչպես շատ ուրիշները, տարրեր պատըր-վակներով աստիճանաբար կարողացան հարկերը իշխցնել: Մինչև որ լրիվ յուրացրին այդ հռղերը⁴, Այսպիսի դեպքերի մտնին բազմաթիվ վկայություններ կան տարբեր սկզբնաղբյուրներում:

Խալիսն կալվածքների պատմության տեսակետից հետաքրքրիր է 1324 թ. (1906) իրադարձությունները Եիրազում: Մողաֆար էդ Դին շահի որդիներից Եռա էս Սալթանին Ֆարսի և անդամակեան էր Նա Ֆարսի խալիսն կալվածքները շատ էժան գնում է պետությունից և սկսում յուրացնել նաև Եիրազի խալիսները: Նա բռնագրավում է նաև Նասր էդ Դին շահի ժամանակ առանձին առիթներով պյուղացիներին վաճառված

2 158 հատ 3 1905 թվական 1905 թվական
شمس الدین چراغی چوایین مالیه تهران 1335 1335 թվական
جعیل زاده ... 138 հատ

խալիսեները, Խալիսեների այս գնումները և յուրացումները աստիճանաբար Հասցեում են նրան, որ պաշտօնյաները սկսում են ոտնձգություններ անել հան կալվածատերի սեփականությունների և կատմաժր: Նվ եթե որևէ կալվածատեր սեփականագիր չուներ, ապա նրա Հողերը անմիջապես յուրացվում էին, իսկ ֆաստաթզիք անկայության դեղոքում սեփականագիրը առնելով նրա ձեռքից, յուրացնում էին նաև այդ կալվածքները: Այս ոտնձգությունները մեծ դժուռություններ առաջացրին:

Նազեմ ոչ հսկամ Թերմանին և իրանցիների զարթոնքի պատմությունը գրքում զետեղնել է այդ ժամանակներում Եփրազում կայացած մի մեծ միտինգում հասարակական անվանի գործի Թարաթարայու արտասանած ճառը, որը պարզ կերպով ցուց է առաջին խնդրի ամբողջ էռությունը: Թարաթարայու նաուից իմանում ենք, որ առկա գրությունից դժուռ Յարսի թնակլությունը գահնգատ է ներկայացրել և հեռագիր ուղարկել շահնին, սակայն ոչ մի պատասխան չի ստացել, ուստի որպես բողոք Եփրազի խանութները և բազարը մեկ ամբողջ ամիս փակ են եղել: Ի վերջո շահնին ուղարկված գիմունի պատասխանը ու ստացվում է Աթարեկից: շահը հասաւառում է, որ Յարսի այդ կալվածքները պատկանում են պետությանը, բայց շնորհվել են Շոա էս Սալթանեին, և որ գյուղացիությունը իրավունք լունի առարկելու Շահի պատասխանը բերող Ազամ օլ Մամալերին բռնորում են, որ շահը Յարսի խայիսներն է տվել Շոա էս Սալթանեին և ոչ թե մասնավոր անձանց կալվածքները, մինչդեռ նա բռնագրավել է բազմաթիվ բարգավաճ կալվածքներ, իսկ եթե պատահել է, որ Հողատերերը դիմադրել են, ապա նրանից կալվածագիր են պահանջել և տարբեր մերենայություններով բռնագրավել նրա կալվածքը և Համարել խայիսի: Թարաթարային ասում է, որ իր այն պահանջին, որպեսզի ստուգվեն խալիսների մասյաններն ու գըրքույկները և Յարսի թնակլության հետ արդարիսի դաժանու-

نظام الاصلاح كرمانى تاريخ بيدارى ايرانيان مجلد اول تهران^۱
صفحة ۲۲۰

թամբը չվարվեն, քանի որ նման վիճակը հեռու գնացող հետեւ վանքներ կունենա, թէ ըրանի ներկայացուցիչը պատասխանում է, որ պետք է ենթարկվել շահն ըրամանին¹:

Աւլիսն կալվածքների նկատմամբ հղած կամայականությունների բացահայտման տեսակետից տիպական է նաև հետեւյալ դեպքը, Ամին էս Սոլթանի ազգականներից Մոլին Հուզուրը նարի և Վարամինի որոշ խալիսն գլուղեր վարձակալում է: Բայց այդ գլուղերից նա մի սեփականություն էլ ուներ Թէ ըրանի և նորասանի ճանապարհի վրա էլյվանե Թեյֆ կոչված զայրի մոտ, որի արժեքը գնահատվում էր մոտ 100 հազար թուման: Էյն ոլ Շոլին որդին Եամս ոլ Մոլթը ցանկանում է այդ կալվածքը ձեռք բերել, որի համար միջնորդություն է հարուցում, որպեսզի Մոյին Հուզուրը այդ կալվածքը վաճառի իրեն 60 հազար թումանով: Բայց վերջինս չի համաձայնվում: Եամս ոլ Մոլթը Հանդիսանում էր Վարամինի շրջանի խալիսն կալվածքների կառավարական կալվածքների պատասխանառու պաշտոնյան: Չարաշահելով իր գերքը՝ նա գոգում է այդ շրջանում բնակվող քոչվորներին, որպեսզի նրանք թալանեն և հրկիվնեն այն կալվածքները, որոնք վարձով էին որզել Մոյին Հուզուրին, իսկ նրա մյուս կալվածքի նկատմամբ սեփականատիք բնակչությունը բնակվորդ գտնում է: Այս գեպօւմ արդեն վերջին հայտնում է, որ 30 հազար թումանից ավելին չի տա: Գործարքը կատարվում է, հոգատիրացը վճարում են 30 հազար թուման, նրանից վերցնելով 60 հազար թումանի ստացական, իր մնացած 30 հազարը խալիսնի հոգերից նրա ունեցած պարտքերի դիմաց²:

Այս փաստերը ակնհայտ ցույց են տալիս այն կամայականությունները, որոնք տիրում էին խալիսն կալվածքներում

1 Նույն տեղում:

2 Խոյն տեղում, էջ 292.

և վկայում են այն շարաշահումների մասին, որոնք կատարում էին խալիսների տնօրինողները:

Կիրառվում էր նաև այն պրակարիկան, երբ պետությունը իր իրավունքները վերականգնում էր այս կամ այն հողի նըկատմամբ այն ակնկալությամբ, որ այդ նույն հողը կարող էր հետո ստալ ուրիշի՝ սեփականության իրավունքով։ Բայց ոչ միշտ էր դա հաջողվում։ Այսպես, որինակ, 1870-ական թվականների վերջին Կողաքլուփ շրջանի մի ամբողջ ցեղ՝ լզիմանալով վարչական մարմիններին նեշուաններին և կեղերումներին, լթեց իր բնակեցրած շրջանը և իր խաների հետ միասին դադթեց Ռուսաստան։ Նրանց հոգերը տմեացին ազատ, բայց ոչ ոք այնուեղ էիր վերաբնակվում, քանի որ այդ շրջանի պետական հարկերի շափերը մինչենիսկ կազմում էին 1200 թուման գրամով և 1700 խարզար ցորեն բնամթերքով, որը, անշուշտ, շտամ ժանր էր և ոչ ոք իր վրա վերցնել էիր կարող։ Մի քանի տարի հետո Արդարիլի նոր նահանգապետը Կողաքլուց ենդի զեկավարների համանակցության մեջ է մտնում և առաջարկում է նրանց վերադառնությունը իրենց նախկին հոգերը, խստանալով պետական հարկերը իրեցնել մինչև 730 թուման գրամով և 1300 խարզար բնամթերքով։ Նրանց վերադարձի համար միաժամանակ համակացվում են նաև որոշ միջնցներ, անհանուններ և այլն։ Այդ միջոցները տրվում են որպես պարագ ոցեղի այն հողերի գրավականին դիմաց, որոնք ժամանակին ոչ ոքի կողմից լգնվելով՝ դարձել էին բանակցություններ վարող Հաջի Մոշիր Մոյթամանի սեփականությունը։ Այդ հողերը պատկանում էին ցեղին և անցյալում ինչպես նստակյաց, այնպես էլ քոչվոր ցեղերից նրանք իրենք էին հագարում հարկերը¹։

Ազգյուրները վկայում են նաև հետեւյալ միշոցառումների մասին։ Խալիս հողերի տեսքին սուզները երբեմն իրենց իշխանությունը շարաշահում էին ոչ միայն իրենց իրավասության

1. Л. Ф. Тиаганов. Из Общественно-экономических отношений в Персии, СПб., 1909, стр. 4.

առակ եղած կալվածքների յուրացման, այլև հարկան կալվածտաերերի հոգային սեփականությունները զավթելու և իրենց հողային հարստությունները մեծացնելու տեսակետից նասրէդ Դին շահի թագավորության արքիներին խալիսն հողերի կառավարիչների, կամ ինչպես նրանց անվանում էին՝ մորաշիրների սանձգությունների և յուրացումների առաջն առնելու համար որոշեցին այդ հողերն հանձնել մորաշիրներին վերջին երեր տարիների եկամուտների միջին չափի գիմաց՝ անկախ այն բանից, թե դա կազմեր մեկ տարվա եկամուտից ավելի կամ պակաս։ Այդ որոշակի գումարը յուրաքանչյուր տարի մորաշիրը պետք է վճարեր պետությանը։ Այս կարգը շարունակում էր գոյություն ունենալ մինչև 1928 թ., երբ հատուկ օրենքով այդ հողերը համարվեցին արրարի և գարձան մասնավոր սեփականություն։

Խնդիր տեսնում ենք, առ նույնպես պետական հողերը վաճառելու կամ մասնավոր սեփականություն գարձնելու հղանակներից մեկն էր, որը որոշ տարածում էր գտել XIX դարի երկրորդ կեսին։

Այսպիսով՝ խալիսն հողերի վաճառքը այնպիսի չափերի հասավ, որ նրա ֆոնդը պակասեց և գարձավ ամրող մշակելի հողերի և տոկոսը՝ կամ բառով, վերլուծելով խալիսն հողերը վաճառելու և յուրացնելու պատմությունը, զալիս է այն հղուակացության, որ այդ տժամանակաշրջանի ընդհանուր տեղենացը խալիսն վաճառքով և որոշ գեպքերում նաև ուղուրպացիալով մասնավոր սեփականության վերածելն էր²։

Իրանի հասարակական կյանքում առաջացած առաջավոր գաղափարները ինքնշատինքյան կարևոր նշանակություն էին տալիս ազգարային հարցին, այդ թվում և պետական հողերի

مصنفوی هرودی تحولات قوانین مسالیات پردرآمن ایران تهران ^۱
۱۸ ماهیه ۱۳۷۲

² A. K. S. Lambton, Landlord and Peasant in Persia, p. 152.

Հարցին¹: Այդ խնդրին մենք մանրամասն չենք անդրադառնա: Նշենք միայն, որ Իրանի խոշորագույն լուսավորիչ, զիշկանագետ հրապարակախոս Հայազգի Մալթոմը իր «Դավթարե թանգիմաթե» գրքում գտնում էր, որ խալիս հողերը պետք է վաճառի պյուղացիներին և ոչ թե կալվածատերներին, իսկ այդ հողերի վաճառքից ստացված գումարներից կես միլիոնը պետք է հանկացնել առևտինի մինիստրությանը՝ «Ազգային բանկ հիմնադրելու համար»:

Ամփոփելով խալիս հողերի հարցը, պետք է ասել, որ այդ հողերը պահած XIX դարի երկրորդ կեսից սկսում են կարցնել իրենց նշանակությունը, որովհետև տարրեր ժամանակներում և առարքեր եղանակներով բռնազրավճած և պետական հողերի ֆոնդը մատանշական տարածություններ ընդուրեկող խալիս հողերը անցնում էին կալվածատերների ձեռքը: Մի կողմից առանձին մեծահարուսատները, օգտագործելով կենարունական իշխանության թուլությունը, լուրացնում էին ընդուրածակ պետական կալվածքներ և, մյուս կողմից՝ ինքը պետությունը, խաչոր գումարների կարիք զգալով, վաճառում էր կալվածքները առանձին մարդկանց և վերածում գրանք մասնավոր սեփականությանը:

Այսպիսով XIX դարի սկզբներին խալիս կալվածքներից ամրագլ երկրում մեացել էր ընդամենը 1345 գյուղ², ընդ որում Ասրապատականում այդ հողերը կազմում էին ամրագլ մշակելի հողերի ընդամենը 8—9 տոկոսը:

* * *

Դաշտարական դինաստիայի թագավորության տարիներին մշակելի հողերի բավականին ընդուրածակ տարածություններ

¹ Տհ' և Հ. Եղանյան, Հասարակական-քաջարական հասանելերը Իրանում XIX դարի վերջին և XX դարի սկզբին, Երևան 1988,

² فردیون اصیت قدر ازادی و مقدمه تهیث مشروطیت ایران

تهران ۱۹۷۱ صفحه ۱۳۵

مسعود کیمان حفاریای مفصل ایران تهران ۱۹۷۱ جلد سوم

138 صفحه

շահերի ցանկությամբ տրվում են որպես Թիովներու Վեզիր-ները, նայիրները, Հարեմները և պետական այլ պաշտոնյաներ ընդարձակ Թիովների են ստանում: Թիովներից շոշափելի քանակ տրվում էր նաև շահի ընտանիքի անդամներին: Այդ տարիներին հատկապես լայն տարածում էր գոճը տարեկան ռոխիկի գիմաց առանձին պաշտոնյաներին տրված Թիովը: Թիովի այդ մեջ ավելի մեծ սովորություն էր կազմում, քան մյուս ձեւերը: Մյուս կողմից էլ Թիովդարները ձգում էին իրենց Թիովները գործնել մշտական և փոխանցելի, պետության միջամասությունը Թիովի ներքին գործերին նվազագույնի հասցել և, փաստորին նրանց տերերը զառնալով, դրանք որպես ժառանգություն փոխանցել իրենց հաջորդներին¹:

Գոյություն ուներ նաև այսպիսի կարգ: Նրա շահը մահանում էր, նոր շահը զերահաստատում էր Թիովները: Ծիչտ է Թիովները ժառանգաբար փոխանցվում էին², ասկայն պատահում էին նաև զեաքեր, երբ Թիովը վերցվելով տրվում էր ուրիշի: Սրինակ՝ Թիշրանի մոտակայքում գտնվող էլվանե Թեյֆը 1888—89 թթ. Գիւանի նահանգապետ Արդուկաշ խանին էր տրվել որպես Թիով, ինչ 1898 թ. այն արգեն պատկանում էր Ամին Խալվաթին և Համարվում էր նրա Թիովը³:

Ժամանակավորապես օգտագործման տրված կալվածքները կամ Թիովները մեր ուսումնասիրած ժոմանակաշրջանում դեռև հոկտյական տարածություն էին կազմում: Խալիս հոգերը թարգայումից և ավերումից փրկելու համար պետությունը ընդարձակ տարածությամբ խալիս հոգերը որպես Թիով տալիս էր առանձին մարդկանց այն հույսով, որ որոշ շափով կթեթմանա երկրի կառավարման գործը, կրարձրացմի ստացվող եկամուտների լավոց և, ամենից կարևորը, պետությունը հենարան ձեռք կրերի ունենոր խավերի մեջ՝ լինեն դրանց քաղաքաբնակ ազնվականության ներկայացուցիչներ, թե քովոր

¹ احمد هومن اقتصاد کشاورزی "جند اول تهران ۱۳۴۴" ص ۷۸۲-۹

² ЦГВИА, ф. 76, л. 236, л. 99—100.

³ Խույզ տեղամ, գործ 212, թ. 4:

Ցեղերի պետեր, Մինչդեռ իրականում հակառակը ստացվեց, որովհետև Հոգային այդպիսի հատկացումները ուժեղացրին ազնվականությանը, որը իր հետ, բնականաբար, բերեց շահից ունեցած կախվածության նվազում և կենտրոնական իշխանության թուլացում:

Անդրածեղատ է ուշադրությունը գարձնել մի այսպիսի երեսույթի վրա ևս. երբեմն թիուլ էին տրվում տարրեր Հողերից գանձման Հարկերը: XIX դարի երկրորդ կեսին էլ դեռ այդ պրակտիկան շարունակվում էր և պնտությունը որոշ արբարի գյուղերի Հարկերի գանձումը տալիս էր որպես թիուլ առանձին պաշտոնյաների կամ բարձր Հոգևորականների¹: Օրինակ՝ Դիլանի ելամուտի գրքում նշված է, որ արբարի թալըց մահալից լրացուցիչ կերպով գանձվող 200 թուման պետական Հարկը տրվում էր թահմասեազ Ղուլուն՝ ոռնիկի դիմաց²: Խորդեմաշիքային կալվածքների պետական Հարկերն էլ նույնպես թիուլ էին տրվում: Թեհրանից ոչ հեռու գտնվող Շարիֆարադ խորդեմաշիքային գյուղի մեկ վեցերորդը տրվել էր շահի ախուսապաններից Հաջի Նայիրին, միաժամանակ նրան վերապահելով նույն գյուղի մնացած միջ-րդ մասի պետական Հարկերի գանձումը³:

Թիուլներ հանձնելու գործում XIX դարի սկզբների համեմատությամբ նկատելի էր այսպիսի փոփոխություն. եթե այն ժամանակաշրջանում թիուլը որպես պետական ոռնիկ տրվում էր իշխաններին, Հոգևորականներին, պետական պաշտոնյաներին կամ տրվում էր ինչ-որ որոշակի ծառայության դիմաց, ապա XIX դարի երկրորդ կեսից սկսած թիուլ կարող էր ստանալ նա, ով ավելին կվճարեր: Հասկանալի է, որ նոր պայմաններում Հոգային սեփականությունը տալիս էր մեծ եկամուտ, ուստի ունենոր խավի տարրեր ներկայացուցիչները ոչ մի միջոցի առաջ կանգ չեին առնում և կաշառքով ու այլնայլ եղանակներով ընդարձակ թիուլներ էին ձեռք բերում:

¹ ԲԳ Ճշ. մասնակի Համար ...

² ԱՐՎԱ, ֆ. 76, ձ. 361, լ. 3.

³ Նույն տեղում, գործ 313, թ. 2.

Կորսումը խոսում է Ալտրապատականի թիովդարերի մասին։ Նա նշում է, որ երբեմն մահալի ամրողք գյուղերը տըրմում էին որպես թիուլ Օրինակ 1900 թվականին Մեշքինի մահալի 118 գյուղերը թիուլ էին առվել¹։ Կամ նաև էդ թին շահը Ամին էս Սոլթանին թիուլ էր տվել Մաշհազսարի բազմաթիվ գյուղերը²։ Օգրանովիլը, որ ուսումնասիրել է Արդարիլի և Սարարի սոցիալ-անտեսական վիճակը և ազյուսակներով ցույց է տվել Հողատիրության ուարքեր և ների տոկոսային հարարիրությունը, նշում է, որ կալվածատիրական հողերը չնշին բացառությամբ են ժառանգական սեփականություններ եղել և առաջներում պատկանելիս են եղել առանձին խաների և մոշթիներին, որոնք այդ հողերը շահից ստացել են որպես թիուլ՝ նրանցից ստացվող եկամուտները գանձելու համար, որոշակի ժառայության դիմաց, կամ վարձատրության փոխարհեն³։

Այդ երկույթը գոյություն ուներ նաև դարավերջին, օրինակ՝ 1898 թ. որոշ ավյալների համաձայն թե՛րանի մոտ գյունը վող Ամինարադ գյուղը մեծ վեզիր Ամին էս Սոլթանի, Մահմադովարադ գյուղը պալատի գաղտնի գործերի վերակացու նազեմ Խալվաթի, Ֆերնարադ գյուղը շահի գյուղոր խոհավոր խոհարարի թիուներն էին⁴։

Այդպիսի թիուներ տրվում էին նաև երկրի բոլոր շրջաններում։

Իրանի ֆինանսների մինիստրության արխիվներում պահպանված մի ցուցակի համաձայն, որը կազմված էր 1878—79 թվականներին, Զանշանում և նրա շրջակայթում 800—900 գյուղեր համարվում էին թիուլայիններ։

¹ Н. Корсун. Военный обзор персидского передового театра, стр. 114.

² مرتضی حسینی تهرانی اصول علم مالیه ... ص ۱۷۸

³ Н. Огановиц, Прозинции Персии, Ардабильская и Серабская, 1875, стр. 30.

⁴ ЦГВИА, ф. 76, д. 213, л. 1.

⁵ А. К. Lambton, Landlord and Peasant in Persia, p. 154.

Այսպիսով՝ դարավերջին թիուզների թիվը շոշափելի քանակ էին կազմում և հիմնականում գտնվում էին սահմանամերձ շրջաններում։ Ծիչտ է այդ ժամանակ երկրում արդեն կազմակերպվել էր կանոնավոր բանակ, բայց պետությունը հատկապես սահմանամերձ վայրերում դեռևս կարիք ուներ անկանոն զորքերի և այդ պատճառով էլ առանձին ֆեոդալներ շարունակում էին թիուզներ ստանալու նամար էդ Դին շահի նամփորդության օրագրում այդ մասին բազմաթիվ փաստեր կան։ Օրինակ, Ռուդհան գյուղը տրվել էր Քուրդակն ցեղեն որպես թիուզ՝ ՅՈ ձիավորի դիմաց¹, Այս պարագայում էլ պետությունը ցանկության գեպքում կարող էր թիուզ վերցնել և տալ ուրիշի։

Թերարը, անդրադառնալով զաշարների կողմից այդպիսի առաջարկանալով թիուզներ տալու փաստին, նշում է, որ դաշտաները, վերջին հարյուրամյակի ընթացքում բաժանելով թիուզները, զրկվեցին իրենց հողային նվաճումների ավելի քան կեսից և հողային եկամուռների ավելի քան երկուերրորդից²։

Ինչ վերաբերում է գյուղացիությանը, ապա թիուզը նրանց համար նշանակում էր անեանհմանափակ կեղծքումներ։ Հենց այդ պատճառով էլ նա մեծ գժիամությամբ էր ընդունում նոր թիուզարի հանդես գալը, լավ զիտակցելով, որ զա իր հետ բերում է նորանոր տառապանքներ։

Ինչպես ասացինք, չնայած պետության կողմից տրված այդ կալվածքները շարունակում էին կռվել թիուզ, սակայն նոր պայմաններում թիուզարները փաստորին այդ հողերի տերն ու տնօրիններն էին։ Այդ հողերը պետությունից ստանալով, նրանք սկզբից ևեթ նպատակ էին հետապնդում դրանք լուրացնել, այլ կերպ՝ թիուզներ ձեռք բերելը խոշոր կալվածատերների ձեռքում դառնում էր հողային նոր սեփականություններ կենտրոնացնելու ձևերից։ Այս հանգամանքը սկզբում որոշ շափով անհանգատացնում էր պետությանը, որը այդպի-

¹ سقرنامه تاصر ابدیون شاه پخروسان ۱۳۰۲ ص ۱۰

² В. Берар, Персия и персидская смута, 1912, стр. 260.

առև պրկվում էր իր եկամուտներից, բայց շուտով հենց ինքը կառավարությունը, չկարողանալով հարկերի բարձրացման եղանակով հոգալ իր զրամական մեծ կարիքները, ձեռնաւուխ եղավ այդ հոգերի վաճառքին, հաճախ հենց իրենց թիուզարներին, այն էլ կալվածքների արժեքի ոլ ազելի քան 5—10 տոկոսի գնումը:

Ուրեմն պարզորեն նկատվում էր, որ նոր պարմաններում թիուզային հողատիրությունը այլևս իրեն չէր արդարացնում և ընականաբար այն իր տեղը պետք է պիշեր մասնավոր հողատիրությանը կամ մուլքադարությանը, մի պրոցես, որը տեղի ունեցած XIX դարի երկրորդ կեսին և աստիճանաբար թիուզը դադարեց գոյություն ունենալուց:

Այստեղ, իհարկե, պետք է անել հետևյալ վերապահությունը. Հնայած XIX դարի վերջերին թիուզարներից շատերը փաստորեն արդեն այդ կալվածքների մասնավոր սեփականատերերն էին, սակայն, իրավական տեսակետից որոշ սահմանափակումներ շարունակում էին գոյություն ունենալը. Հենց այդ պատճառով էլ խալիսեների վաճառքի ժամանակ թիուզարները իրենց տրամադրության տակ եղած թիուզային հոգերը էժան գնով գնեցին, որպեսզի զրանց լրիվ սեփականատերը լինեն¹:

Արխիվային փաստաթղթերը ցույց են տալիս, որ 1871 թ. իրանի կառավարությունը վարչական բարեփոխման մի նախադիմ էր մշակել, որը սկզբում պետք է գործադրվեր Առըսպատկանում: Այդ նախադիմը վերաբերում էր հարկերին ու թիուզներին: Ըստ այդ նախադիմի թիուզները պետք է դրվեին պետության հակողության տակ: Բնականորեն դա մեծ զժգություն առաջացրեց թիուզարների մեջ, քանի որ այդպիսով նրանք պետք է դադարեին թիուզների մասնավոր տերերը լինելուց և զրկվեին իրենց խոշոր եկամուտներից: Հետաքրքրական է, որ գլուղացիներն էլ առանձնապես գոհ չեին այդ նախ-

1. Л. Ф. Тагранов. Из общественно-экономических отношений в Персии. Тифлис, 1905, стр. 84.

խազմից, քանի որ նրանք պարզորեն տեսնում էին երկու տերերի կողմից շահագործվելու հեռանկարը և զերադասում էին իրերի նախնին վիճակը¹: Այդ նախագիծը շնչիրառվեց կյանքում:

Ամփոփելով կարելի է ասել, որ եթե սկզբում թիուզը իրենից ներկայացնում էր վարչական, դինվորական կամ այլ ժողովայությունների դիմաց Հողից ստացվող եկամուսք գանձելու պայմանական իրավումը, ապա Հետագայում այն վերածվեց Հողի պայմանական տիրման իրավունքի՝ պետական Հարկերի պարտադիր վճարման պայմանով: XIX դարի վերջերին վերցավակ նաև թիուզային Հողերի տիրման պայմանականությունը թիուզարները հրաժարվեցին ընդհանրապես իրենց պարտականությունները կառարել պետության նկատմամբ: Դարավերջին և XX դարի սկզբին ժառանգական թիուզը արդեն դարձել էր ընդունված ձև և թիուզարները փաստորներ վերածվել էին Հողատերերի: Իրերի փոփոխված այդ փաստական վիճակը Հետագայում իր իրավական արտացոլումը գտավ քաղաքացիական սրննողությունում:

* * *

XIX դարի երկրորդ կեսին գեներ շարունակում էին շոշափելի լափեր կազմել մզկիթապատկան կամ, արտօն կողմանը, վակֆային Հողերը: Թիշզես տրդեն նշել ենք, վակֆային Հողային սեփականության ֆոնդը արբերը ժամանակաշրջաններում անընդհատ փոփոխության է ենթարկվել: Փաստերը ցույց են տալիս, որ XIX դարի վերջերին վակֆային Հողային սեփականությունների բնագավառում տեղի էին ունենում երկակի փոփոխություն: Մի կողմից Հոգևորակունությունը ոչ մի քանի շեր ինտեյնմ նորանոր Հողեր ձեռք բերելու ուղղությամբ, որովհետև երկրում ունեցած իր զիրքերի ուժնպացման համար տնտեսական հիմք էր ժառայում վակֆային Հողատիրության ամրապնդումը, իսկ մյուս կողմից ապրանքա-դրամային հա-

1. АВПР. Главный Архив, V Аз. д. 19, л. 81.

բարերությունների զարգացման հետևանքով վակֆային սեփականությունները մասնաւովում և կրօնաւովում էին:

Առաջնասիրությունները ցույց են տալիս, որ զուտ աշխատական և ոչ քաղաքական շահագրգուժածությունը հոգի նկատմամբ այլևս թույլ չէր տալիս կալվածքների և հողերի նվիրատվությունը մզկիթներին և կրոնական հիմնարկներին։ Հոգերը փոխանակ նվիրաբերվելու՝ վաճառվում էին մասնավոր անձանց, որը և նպաստում էր կալվածատիրական հոգատիրության արագ անբնի։ Բայց սա չէր բացառում նվիրատվության առանձին փաստեր այլևս պատճառներով։ Բոդրովը նշում է, որ իրենն, ինչպես տռաշներում, ինչ որ հարուստ անձնավորություն, պետության յուրացումներից վախենալով, իր հոգերը նվիրում էր մզկիթներին, որի պիմաց ցմահ ստանում էր նյութական ապահովածություններ։

Մենք արդեն խոսել ենք այն մասին, որ այս ժամանակաշրջանում բարերաստիճան հոգևորականությունը, լրավարարվելով փաստորին իրենց տնօրինության տակ գտնվող վակֆային հողերով, ինքն էլ է արարվում հողային սեփականություններ ձեռք բերելու մոլուցքով և տարրեր եղանակներով կալվածքներ է ձեռք բերում։ Մինչև իսկ քաղաքաբնակ բարձրաստիճան հոգևորականներից մոշթեհեղիները² սկսում են պետություններ, առանձին խաներից և կալվածատերերից զյուղեր և թիուզներ գնել և այսպիսով կարև ժամանակում գտնում են կալվածատերներ։ Այս հանգամանքը որոշ իմաստով փոխում էր նրանց սոցիալական դիրքը և նրանք այլևս հավատացյալ շըրշանների վրա շէին կարողանում պահպանել իրենց նախկին ազգեցությունը։ Ժողովուրդը նրանց անվանում էր կեղծ մոշ-

1. Е. Багров. Персия и персы. Москва, 1903, стр. 55.

2. Մոշթեհեղիները այդ հոգերից և կայուական հետառանձնելու էլի ստանում, 1826 թ. նոսովագովին գրում էր, որ Թեհրանի վակֆերց կառավարող Թեհրանի իմամրամբն ստացվող 34,000 թուման հետառանձնելու համարյա ամբողջության յարացնում էր։ Այդ պատճենով էլ մութափակի գառնալու համար մոշթեհեղիների միջն մեջ պայմանը էր վեռմ (Из тегеранского хронике полковника В. А. Касоговского, стр. 86).

թեհիգներ, քանի որ նրանք, խռովությունը բարձր դադա-
փարներից, իրականում պյուղացիներին շահագործում էին
նույնպիսի դաժանությամբ, ինչ կալվածատերները, զեռ զուցե-
ինչ-որ շափով ազնիին:

Թուղօր ցեղերի բարձրաստիճան Հոգնորականությանը
կամ շեյխներին նույնպիս պետք է ֆեոդալական գառակարդի
մի խավ համարել, որովհետև նրանց անտեսական վիճակը
ոչնչաց չէր տարրերիցում նույն ցեղի խաների վիճակից. Նրանք
նույնպես օգտագործում էին արտատնտեսական շահագործ-
ման եղանակներ, պարտադիր, ձրի աշխատանք և այլն:

Անհրաժեշտ է նշել, որ ցեղերի հոգնորական խռովը միա-
տարր չէր. ազնիվ ստորին հոգնորականությունը հողային ան-
փականությունների անսակնարից չէր կարող համեմատվել
բարձրաստիճան հոգնորականության հետ, բայց նրանք ևս,
ցեղի զրադեցրած շրջաններում հողային անփականությունները
ձեռք բերելով, փաստորին մասնակցում էին հոգերի կուտակ-
ման ընդհանուր մրցավագրին:

Ազերյանովը այն կարծիքն է հայտնում, որ հոգնորակա-
նության նկատմամբ տարրեր վերաբերմունք կար քաղաքային
բնակչության և պյուղական շրջանների մոտ, առաջին-
ները ավելի մոլեկուլու էին և ազնիվ շատ էին ննթակա հոգնո-
րականությանը, իսկ շրավոր գյուղացիները ավելի թիւ էին
հնթարկվում նման ազդեցության: Հոգնորականների միջին
խավը հաճախ պյուղերում չէր բնակվում, քանի որ անդնդում
օգտատ ստանալու որևէ հույս չէր ունենում: Նրանք՝ նահանգա-
պետներից, բարձրաստիճան հոգնորականություններ, վակֆա-
յին կալվածքների անօրեններից հոգեր վարձակալելով, մեծ
եկամուտներ էին ստանում և բնակվում էին քաղաքներում:
Հարկեր հավաքելու իրավունք ձեռք բերած անձանց ցուցակում
հաճախ կարելի էր հանդիպել հոգնորականների: Դրա վատ
օրինակներին կարելի է հանդիպել Դարագաղի շրջանում: Այդ
հոգնորականները գիշատիւ կերպով թալանում էին իրենց
անօրինության տակ զանվոր պյուղերի պյուղացիներին: այս-
պիս, Դարագաղի շրջանի մի պյուղի 170 ժիսից մոտ 130-ը

մոլլաների անասելի շահագործումից խույս տալու համար լրել էր իր հայրենի գյուղը և ապաստանել այլ վայրերում¹:

Այս փառերը ցուց են տալիս, որ Հոգևորականության պես հոգային, որը բարձրաստիճան Հոգևորականության պես հոգային ընդարձակ սեփականություններ լուսներ, հոգային հարաբերություններում լէր կարելի զատել վարձակալներից և շահագործողական այլ տարրերից: Դեռ ավելին, նրանք, հանգիս գալով հավատթի բողի տակ, երբեմն ավելի մեծ շարաշահումներ էին կատարում: Այդ գործին նպաստում էր նաև նըրանց ունեցած մի շարք այլ արտօնությունները:

Ուշագրավ է կառավարության վարած քաջարականությունը վակիֆային հողատիրության հարցում:

Իրանական տարրեր շահերը վակիֆային Հոգերի նկատմամբ տարրեր վերաբերմունք են ունեցել, որինակ, նադիր շահը բռնագրավեց վակիֆային Հոգերը և մուցրեց պետական Հոգերի ֆունդը: Սակայն նրանից հետո աստիճանաբար վիճակը փոխվեց և XIX դարի վերջերին վակիֆային հարստությունները նորից հասան իրենց նախկին բարձրությանը: Ահա հենց այդ պատճառով էլ,—գրում է Ռիտիխը,—սպասվում էր, որ շուտով կառավարությունը ամրող հասարակական տնտեսական բարեկեցությունը հավասարակշռելու նորատակով միջոցների կղիմի, կսահմանափակի Հոգերը հիմնարկների հոգային սեփականությունները, Հոգևորականություններից կվերցնի նրանց հարստությունը²: Եվ իսկապես կառավարությունը մզկիթների և բարձրաստիճան Հոգևորականության Հոգային սեփականությունների սահմանափակման քաղաքականությունը վերսկսեց: Ըստ կառավարական հրահանգների վակիֆային Հոգերի մի մասը անցնում էր պետության հսկողության ներքո:

¹ П. Н. Аверьянов, Отчет о поездке по Северному Азербайджану.. в конце 1899 года, Тифlis, 1900, стр. 18.

² П. А. Ритих, Политико-статистический отчет Персии, СПб, 1896, стр. 80.

և միայն որոշ հողեր թողնվում էին հոգևորականների տևորի-
նությանը¹:

Վակֆային հողերը՝ նայած թե ում կողմից էին նրանք
տնօրինվում, բաժանվում էին չորս կատեգորիաների²:

Առաջինը խոշորագույն վակֆերն էին, այսինքն՝ Մաշհա-
դի, Թեհրանից ոչ հեռու Շահ Արդուլ Ազիմի և Ղոմի, ինչպես
նաև երկրի տարբեր մասերում գտնվող սրբավայրերի՝ իմամ-
գաղենների, մասնաւում աների հողերը, որոնք ուղղակիորեն
ենթակա էին շահին և տնօրինվում էին նրա նշանակած խնա-
մատարեների՝ մոթավալիների կողմից: Նրանք արդ հողերի
լիակատար տերն ու տնօրենն էին, միայն պարտավոր էին
ունենալ ելեմուտի գրաւուկներ՝ անհրաժեշտության գիպում
գրանք ստուգելու համար:

Երկրորդ կատեգորիան խոշորագույն մոշթեհիդների տնօ-
րինության տակ եղած հողերն էին:

Երրորդը այն վակֆերն էին, որոնք արվել էին ժառանգ-
ների տնօրինության տակ մնալու պայմանով: Յվ վերջապես,
շորորորդը այսպես կոչված ովակֆն ովաւոք կոչվածներն էին.
Պրանք այն վակֆերն էին, որոնք հողային սեփականությունը
փրկելու համար արվում էին վակֆ՝ հօգուտ զավակից: Դա եր-
րեմն կատարվում էր նաև այն մտադրությամբ, որպեսզի լայն
ժամանակած հողերի առուժախի պայմաններում հողային սե-
փականությունը տվյալ ընտանիքի ձեռքից գուրս չգա, քանի
որ այդ վակֆերը վաճառել չէր կարելի: Այս տիպի վակֆերը
երբեմն կոչվում էին ովակֆն ովլադն զոքուրու, այսինքն՝ արու-
զավակների վակֆ:

1. ՀՀՀ գարի 80-ական թվականների Ֆիլանք ելեմուտի զբանաց ցուցը է
արված, որ այնուզ վեց սերիզի արվազ ունիները շեշտու ևն համարվել: Դա եռաշնչակա հոգևորականներին սահմանափակելու մի ձև էր: ԱՌՎԱԼ, Փ.
76, լ. 361, լ. 3.

2. Կուպաց գուցիչ պատճենահանության համար համարվում է այս գուցիչը:

3. Խոյի տեղում:

XIX դարի կեսերից սկսած հոգմորականների ազդեցությունը սահմանափակելու ուղղությամբ մի շարք նոր միջուցառումներ կիրառվեցին։ 1843 թ. որոշմամբ նոտարական պարտականությունը Հոգևորականներից վերցվեց և պետական հիմնարկների վրա դրվեց։ Մեծ վեղիր Միրզա Թաղի խանը նշանակալից լավերով պականցրեց պետության կողմից Հոգմորականներին տարրեր անվանումներով տրվող գումարները, ետ վերցրեց Մահմադ շահի օրոք նրանց տրված թիւունները և այլն։

1872 թ. մեծ վեղիր Միրզա Հոսեյն խան Անդանալարը 9 մինիստրություններ ստեղծելու ծրագիր է ներկայացնում։ Ըստ այս ծրագրի կարգաժամատիրական վիճելի Հարցերի լուծումը Հոգմոր գատարաններից վերցվում դրվում էին արդարադատության մինիստրության վրա։ Սա ինքնին ցույց է տալիս պետության ձգումը ինչ-որ Հոկողություն հաստատել վակֆային հողատիրության վրա։

1875 թ. ստեղծվում է ռեմելիսե թանգիմաթօ («Թարեփոխումների խորհրդարան»), որը կազմում է ռէկեզարաթե վագայիք վա օկաֆչ՝ մինիստրությունը։ Այդ խորհրդարանը 1875 թ. կազմում է նաև Հարանգների մի դրույկ, որը հետաքրքր նյութեր է պարունակում վակֆային հողատիրության տարրեր ձեւերի մասին։

Վակֆային Հոգերի սահմանափակման պրոցեսը տարրեր տեմպերով շարունակվում էր զարավերշին, և դա ունեցավ այն հետևանքը, որ քարձու Հոգևորականությունը սկսեց օպոզիցիոն դիրք դրավել շահի և նրա կառավարության նկատմամբ։

Վակֆային հողատիրության կրնատման ավելի վառ օրինակի կարելի է հանդիպել Առրաջատականում։ Այսառ Յջով վակֆային գյուղերից XX դարի սկզբներին մեացել էր միայն 12—15 գյուղ։ Մաքվի խանության Հոգևոր հիմնարկները XIX դարի վերջերին իրենց տրամադրության տակ ունեին 14 վակ-

ֆային գյուղեր, իսկ XX դարի սկզբներին այլնս ոչ մի վակֆային գյուղ չէր մնացել. դրանք անցել էին մասնավոր կալվածառերի ձեռքը¹:

Անհրաժեշտ է նշել, որ վակֆային կալվածքների այսպիսի շեշտակի կրնատումը չէր վերաբերում սրբավայրերին կամ նման այլ կենտրոններին, որոնց հոգային սինֆականությունները որոշ տառանումներով մնում էին՝ համարյա նույնը:

Այս բոլորով հանդերձ XIX դարի վերջին վակֆային հոգերը շարունակում էին ընդգրկել ընդարձակ տարածություններ: Նախքան վակֆային կալվածքների քանակի և նրանցից ստացվող հկամուտների մասին խոսելը անհրաժեշտ է նշել, որ գոյություն ունեին վակֆերի տարրեր ձեռք: Ալտպես, որինակ՝ կրոնական հիմնարկներին նվիրված վակֆերը կոչվում էին ովակֆեր խելյրիք (բարեգործական վակֆեր), իսկ հոգերը անձանց նվիրատվությունները՝ ովակֆեր աշլիք: Ըստ որոշ աղբյուրների տվյալների XIX դարի վերջին ովակֆեր աշլիքն կորցրել էր իր նշանակությունը, մինչդեռ ովակֆեր խելյրին ձեռք էր բերել գերիշխող դեր:

Ընդունված կարգի համաձայն վակֆային հոգերը առուծախի ենթակա չէին: Սուկայն այդ կարգը սկսվում է խախտվել XIX դարի վերջերին, այն էլ հենց իրենց հոգերականների կողմից, որոնք պատճառաբարենում էին, որ գա իրը կրոնական հիմնարկների բարեկարգման համար էր արվում: Այս պրոցեսը շարունակվում է նաև հետագայում և նպաստում վակֆային հոգատիրության նվազեցմանը:

Վակֆային հոգերը կենտրոնացած էին հատկապես Խորստանում, Ֆարսում, Բիֆահանում, Արդարիլում և այլուր: Մաշհաղի այսպես կոչված Խմամ Ռեզայի շիրիմի սրբավայրի վակֆային հոգերը հսկայուկան տարածություն էին կազմում և տարեկան 60.000 թուման դրամ և 10 հազար խարզար հացանատիկ եկամուտ ունեին: Զնայած վակֆային կալվածքները ընդհանրապես հարկերից ազատված էին, սակայն շահը

1 «Материалы по изучению Востока», вып. I, 1909, стр. 27.

այդ սրբազնայրից գանձում էր տարեկան հազար թուման՝ ոհակ ոչ թուլիչք անվան տակ¹:

1881 թ. Մաշհաղում եղած փոխազնապետ Մելիքցեկին զրել է, որ մի տարում Խմամ Ռեզայի մզկիթի եկամուտը կազմել է 45 հազար խարզար տուրքն և 30 հազար խարչար դարի². Թերզոնը դրել է, որ XVIII դարի սկզբներին այս սրբազնայրի հողային եկամուտները կազմում էին 15 000 թուման, իսկ 1878 թ., 40 000 թուման՝ Վլասովը այդ գումարը ցույց է տալիս 40 450 թուման³. Այդ եկամուտները դարավերջին բարձրանում են մինչև 60 000 թումանի, որը ցույց է տալիս թե ինչպիսի շեշտակի ան էր տեղի ունեցել: Մըրբազնայրի հողային սեփականությունները տարածված էին ամբողջ Իրանով մեկ. Նրան էին պատկանում նաև տներ, քարվանսարաններ, խանութներ, բազարներ և այլն⁴, Օգորողնիկովը վկայում է, որ Խմամ Ռեզայի մզկիթը ուներ 1200—1700 ժառայողներ⁵:

Ենդարձակ հողային սեփականություններ ունեին Արդարիի Շելի Սաֆի և Թեհրանից ոչ հեռու Շահ Արդուկ Ազիմ սրբավայրերը, Խաֆաշանի Հայտնի և Մազրասնչ նույնպես մեծ թվով վակիթային հողեր ուներ, որոնց եկամուտները հատկացնում էին հողերը ուսումնարանի ժախսները հոգալուն: Բայց Զել էս Սոլթանը տուիճանարար բանագրավում է վակիթային այդ հողերը և յուրացնում նրանց եկամուտները⁶:

Վակիթային հողեր կային նաև երկրի այլ շրջաններում. Եիրազից ոչ հեռու 700 ծուխ քեակչություն ունեցող Շահշերազ գյուղը Եիրազի վակիթն էր, որը տարեկան 5250 թուման եկա-

¹ میلادی ... دهیار

² ЦГВИА, ф. 446, д. 319, л. 8.

³ G. N. Curzon, Persia and the Persian Question, vol. I, p. 162.

⁴ П. М. Власов, Краткий очерк Хорасана, 1894, Сборник материалов по Азии, СПб, 1894, стр. 189—190.

⁵ G. N. Curzon, Persia and the Persian Question, vol. I, p. 162.

⁶ И. Н. Огородников, Страны солнца, СПб, 1881, стр. 217—218.

⁷ G. N. Curzon, Persia and the Persian Question, vol. II, p. 489.

Ճուռ էր տալիս՝ Թերմանի Մահան դյուղը, մոտ 1200 շնչով։
Եաւ Դարվիշ Նեմաթուլլա շիրիմի սրբավայրի վակին էր²։

* * *

Հողատիրության մյուս ձևը Իրանում խորդմալերային մանր կալվածատիրական սեփականությունն էր։ Ինչպես գտրասկզբին, այսպիս էլ գարավերշին խորդմալերային հողատիրությունը տարրեր իմաստներով էր ըմբռնվում։ Այդ տերմինը օգտագործվում էր այս կամ այն գյուղում խոշոր կալվածատերերի ունեցած փոքր հողային սեփականության զիսդամում, փոքր կալվածք ունեցողների վերաբերյալ, ինչպես նաև խոշոր հողամաս ունեցող գյուղացիների նկատմամբ։

Միանգամայն հասկանալի է, որ երկրում տեղի ունեցած սոցիալ-տնտեսական տեղաշարժերը չեին կարող շանդրադառնեալ նաև հողատիրության այս ձևի վրա։ Եվ իսկապես XIX դարի երկրորդ կեսին խորդմալերների կողմը արմատապիս փոփոխության է ենթարկվում։ Ապրանքա-դրամային հարաբերությունների զարգացման և տարրեր խովերի ներկայացուցիչների կողմից հոգեր ձեռք բերելու հետևանքով առաջանում է մանր կալվածատերերի՝ խորդմալերների մի նոր խումբ, որը դուրս էր եկել առնտրականների, հոգենորականների, պաշտոնյանների և վաշխառուների խավերից։ Էզմիարդ Մթիւրը նշում է, որ խոշոր կալվածատերերի առկայությունը, որոնց մեծ թվով կալվածքներ ունենին, ինչպես օրինիակ Կավամի Եիրազիի, Մուշիրիի կամ Ֆիրուզարազի իշխանը շեր բացառում խորդմալերությունը այդ նույն վայրերում, որտեղ կային ընդունենք մեկ գյուղ ունեցող հողատերերու Գյուղացիները այս մանր կալվածատերական տիրություններում ավելի շատ անկախություն ունենին, քանի որ թույլ կալվածատիրու տեսօրինության տակ էին³։

Ինչպես արդեն նշեցինք, մանր կալվածատերերին չին պատկանում երկրում մշակվող հողերի մոտ 30 տոկոսը,

¹ ԱՐԲԱ, Փ. 2000, Ա. 985, Հ. 58.

² ԱՐԲԱ, Փ. 76, Ա. 235, Հ. 107.

³ E. Stack. Six Months in Persia, vol. II, p. 254.

Խորդիմալեթային գյուղերի մասին ուշագրավ տվյալներ են Հաղորդվում 1880—81 թթ. Ղարաղանի մասին հղած զեկուցագրում։ Այնտեղ կային երեք լրիվ կամ մասամբ խորդիմալեթային գյուղեր՝ 50 ընտանիքից պակաս բնակչությամբ, չորս լրիվ կամ մասամբ խորդիմալեթային գյուղեր՝ 50—100 ընտանիքից բազկացած, երեք այդպիսի գյուղեր՝ 100—200 ընտանիքով, և մեկ խորդիմալեթային գյուղ՝ ավելի քան 200 ընտանիքով¹, Բայց անզենցը այն էր, որ խորդիմալեթային գյուղերը կուլ էին զնում խոշոր հռատերերին։ Օրինակ, մի շրջանում որտեղ կային շորս խորդիմալեթային և 10 մասամբ խորդիմալեթային գյուղեր, կարճ ժամանակում ձեռքից ձեռք անցնելով, յոթը դարձան արրարի, երեքը զնեցին շահսենաները և երեքն էլ նաօր ոչ Մուրը²:

Խորդիմալեթային գյուղերին յուրացման զործում մասնակցում էին նաև Հոգևորականները։ Այդ տեսակնետից հետաքրքրիր է Հետայալ փաստը. Սեմեանի և Դամդանի շրջաններում Լասկերդ գյուղը, որը ժամանակին խորդիմալեթային է հղել և հատապայում նվիրվել է Խմամ Ռեզայի սրբավայրին, երկար ժամանակ շարունակում էր խորդիմալեթային Համարվել։ 1870 թվականին, երբ երկրում մոլեգնում է սովոր, մզկիթում հայտնաբերվում է Լասկերդ գյուղի նվիրատվության փաստաթուղթը և այն վարձով է տրվում նույն գյուղի բնակիչներին, Գյուղը տարեկան 1300 թուման կանխիկ և 100 խարվար հացահատիկ եկամուտ էր տալիս։ Դրանից հարյուր թումանը կանխիկ և 90 խարվար հացահատիկը տրվում էր պետությանը, 10 խարվարը ժախավում էր տեղական նպատակներով, իսկ մնացած 1200 թումանից ընդամենը 600 թումանը մուծվում էր մզկիթի գանձարանը³։

Կային մանր հողատերեր, որոնց հողերի տարածությունը կազմում էր մեկից մինչև 30 շարիք, կային և շրջաններ, որ-

¹ A. K. S. Lambton, Landlord and Peasant in Persia, p. 156.

² Եռև տեղում։

³ ԱՐՎԱ, Փ. 76, հ. 213, տր. 7.

տեղ որևէ գյուղ ուներ մի քանի տեր։ Հաճախ մասր այդ հոգատերերի վիճակը մռածնում էր գյուղացի հողատերերի զրությանը։ Խսկ գյուղացի-խորդեմալերների վիճակն էլ առանձնապես չէր տարբերվում ույա-գյուղացու վիճակից։

Խորդեմալերների մոտ 65 տոկոսը ըրավորներ էին. XX դարի սկզբներին մինչևն երկու գեսյատին հող ունեցող գյուղացիները կազմում էին բոլոր գյուղացիական տեսառությունների 68 տոկոսը, 2-ից մինչևն 20 դեսյատին հողամաս ունեցող միջակ գյուղացիները կազմում էին 12 տոկոսը, իսկ մեծացած 20 տոկոսը կազմում էին հողազուրկ գյուղացիները՝ բարբակենքը², Կային և այնպիսի գյուղեր, որոնց հողերը պատկանում էին բազմաթիվ մարդկանց. օրինակ՝ Զարանցի հովտի Եադրուտ գյուղի հողերը պատկանում էին մոտ 700 տերերի³. այս տիպի գյուղերը կոչվում էին սասյաթիւ։ Այսուղ պատահում էր, որ որպես հողատեր հանդիս էր գալիք առանց լրացացիշ աշխատութիւ օգնության հոգը մշակող գյուղացին Բայց դա հազվագյուտ էր։ Մազանդարանում նաև էղ Դին շահի ճամփորդության ժամանակ 1875 թվականին 53 գյուղերից միայն մեկն էր ույաթիւ նույն վիճակն էր տիրում նաև երկրի այլ մասերում։ Օրինակ, Ռումիայի շրջանում խորդեմալերային հողերից միայն 26%-ն էր գյուղացիներինը։ Դիլանում, Եիրազում և այլ շրջաններում նույնպիս խորդեմալերները գյուղավրապես գյուղացիներն էին⁴. Բայց կային նաև տոկոսային այլ հարաբերություններ. օրինակ՝ Թաշանի շրջանի 360 գյուղերից 160-ը գյուղացիական էր⁵.

Հստ Ավերյանովի Ասորպատականում գյուղացի հողատերեր համարյա չկային, միայն Արդարիլի շրջանում կարելի էր

1. Н. А. Зиновьев, Статистические сведения о провинциях Гилян и Шахруд-Бастам, СПб, 1887, стр. 28.

2. «Бюллетень прессы Среднего Востока», 1928, кн. 6—7, стр. 32.

3. E. Stack, Six Months in Persia, vol. II, p. 260.

4. ЦГВИА, ф. 76, д. 236, л. 53—54.

5. Отчет о поездке по Персии капитана генерального штаба Томилова в 1900 г., Тифлис, 1902, ч. I, стр. 62.

Հանգիպել փոքրաթիվ հողատեր գյուղացիներ, որոնց ինչ-որ ձևով հաշողվել էր հողային սեփականությունն անոք բերել¹:

Անհրաժեշտ է ընդունել, որ ուշամթի հողերը լպիտը է շփոթել գյուղացիների ուսեցած, այսպես կոչված, տնամերձ հողերի հետ Ռայամթի հողերը ավելի մեծ տարածություն էին ներկայացնում, քան վերջիններու:

Խոսելով գյուղացու տնտեսության անկայունության մասին՝ Կորսունը զրում է, որ կարելի էր խանից ու մոլլայից որևէ հոգամաս վեճը, սակայն զա զեռ գյուղացուն սեփականատեր չէր դարձնում: Խանը կարող էր զալ գյուղացու մհան և ասել, որ այդ հոգամասը նա մի քանի տարի առաջ վաճառել է ցածր զնով, իսկ այժմ զինը բարձրացել է և պահանջել զինի տարրերությունը եթե գյուղացին շահամաձայնվեր, ապա նախկին տերը՝ վերադարձնելով ստացած գումարը, նորից տիրանում էր հոգամասին²:

* * *

XIX դարի երկրորդ կեսին քոչվոր վաշկառուն ցեղերը իրանում զեռնա շոշափելի թիվ էին կազմում, բնակչության մոտ մեկ երրորդը այս ցեղերն էին: Ճիշտ է, ինչպես քիչ հետո կանոները, զրանց մի մասը XIX դարի երկրորդ կեսին արդեն սկսում է նստակյաց կյանք վարել, սակայն մի ստվար մասը շարունակում է առաջվա պես թուլվոր մնալ:

Ցեղային հասարակության ֆեոդալիզմացիան առաջացրել էր մի շարք անկախ կամ կիսանկախ խանություններ, որը ստեղծել էր որոշ ապակենոտունացում և արտհվածություն, մի հանգամանքը, որը հատուկ էր ֆեոդալական պետություններին: Թիական է, որ ցեղերը զբաղեցնում էին ընդարձակ տերիտորիաներ՝ ամառանոցներ (յայլաղներ), ձմեռանոցներ (զիշլաղներ), որոնք տրվում էին նրանց պետության կողմից:

¹ П. И. Аверьянов, Отчет о поездке по Северному Азербайджану... в конце 1889 года, стр. 19

² Корсун, Военный обзор персидского передового театра, Тифlis, 1909, стр. 91.

Մեծ թվով քուվոր ցեղերի գոյությունը Իրանում կասեցնում էր ընդհանրապես երկրի անտեսության և մասնավոր արդյունաբերության զարգացումը, քանի որ այդ ցեղերի զբաղեցրած շրջաններում անտեսությունը, որի մեջ գերիշխում էին տնտեսության հնագարյան եղանակները, ավելի քարացած էր: Մյուս կողմից ակնհայտ է, որ առօնացեղային հարաբերությունների քայլայման և ֆիոդալական հարաբերությունների ամրացման հետևանքով առաջացող իրավադուրկ և ընլազուրկ հոգ մասսան չէր կարող մասնակցների երկրի տնտեսական դարդացմանը:

Հայտնի է, որ առօնացեղային հարաբերություններին հատուկ են արտադրական հիմնական միջոցների նկատմամբ մասնավոր սեփականության բացակայությունը, որի հետևանքով և դասակարգային գիֆերենցիացիայի բացակայությունը, իրավահավասարությունը, ցեղի անդամների անձնական ազատությունը, նյութական բարիքների համասար բաշխումը և այլն:

XIX դարի Իրանի համար ընորոշ մի շարք հանգամանքները, պարզ է, չէին կարող իրենց ազգեցությունը չունենալ նաև ցեղերի ներքին կյանքում:

XIX դարի ընթացքում, հատկապես նրա երկրորդ կեսին, հողի նկատմամբ մասնավոր սեփականության զարգացման պայմաններում համապատասխան փոփոխություններ հնա առաջանում ենակ քոչվոր ցեղերի շրջաններում. ցեղերի ներսում առաջանում է շերտավորում՝ շահագործողների փոքրաթիվ խումբ և շահագործվողների հոծ մասսա: Բայց, իհարկե, շպետք է կարծել, որ այդ երկույթները միանգամից և լրիվ կերպով փոխում են առօնացեղային հարաբերությունները: Իրանի ցեղերի սոցիալ-տնտեսական կառուցվածքի առանձնահատկությունը կայանում էր հենց այն բանում, որ նրանում միանյուավոամ էին առօնացեղային և ֆեոդալական հարաբերությունները: Իրան պետք է ավելացնել նաև այն, որ Իրանի ոչ բարոր ժայրամասներն էին հավասար շափով ընդգրկվում այդ նոր խմբումների մեջ և համապատասխան փոփո-

խության ենթարկվում։ Հետևաբար այդ շրջաններում գտնվող ցեղերն էլ գտնվում էին զարգացման տարրեր աստիճանների վրա ։ Խստակյաց, ֆեռդայական հարաբերություններով ցեղերի կողքին շարունակում էին գոյաւթյուն ունենալ կիսաքոչվոր և լրիվ քաշվոր ցեղերը։

Իրանի սոցիալ-տնտեսական կյանքի փոփոխման պայմաններում, սկսած XIX դարի երկրորդ կեսից արագանում է զալկատուն ցեղերի խստակյաց դառնալու պրոցես։ Կառավարությունը իր հերթին նույնպես որոշ միջոցների է դիմում բռնվոր ցեղերին խստակյաց դարձնելու ուղղությամբ։ Այսպես, 1860 թ. կառավարությունը փորձում է խստակյաց դարձնել 4 հազար շահնշանների, 1500 շատրալինների և մուսանլինների, 1500 հաշիլինների և կարալուզունների և Մեշքինի շրջանում գտնվող 8000 քոլվորների¹։ Արտամանովը այն կարծիքին էր, որ XX դարի սկզբներին Աստրատականի քոլվոր ցեղերի նշանակալից մասը արդեն խստակյաց էր դարձել², ճիշտ է նըստակյաց դարձած քոլվորները որոշ իմաստով կապված էին իրենց նախկին կյանքին և դրա հետևանեցով կարելի է ասել, որ կային կիսաքոլվոր ցեղեր, որոնք պատվում էին և հոգագործությամբ և անանապահությամբ։ Մեծ մասամբ քոլվոր սպամիկները իրենք չեն մշակում Հողը, այլ ստանում էին նրա եկամուտը։ Հողագործությամբ էին գրաղվում աղքատ քոլվորները։

Տարրեր ցեղերին հատկացնելով պետությունը այդ հողերի գերազույն սեփականատիրական իրավունքը իրեն էր պահում։ Խալիխսեր ֆոնդից հատկացվող այդ հողերը տրվում էին ոչ թե ցեղապետին, այլ ամբողջ ցեղին և կոչվում էին իլլաթի, Ցեղապետներին որպես անձնական տիրույթ հազվագյուտ դեպքերում էին Հողամասեր տրվում։ Հողը պատկանում էր ամբողջ ցեղին և ցեղապետը չէր կարող այն իր հայեցողությամբ վաճառել, թայց ահա ապրանքա-գրամային հարաբե-

1 «Հայք», № 85, 1860.

2 Л. К. Артаманов. Персия как наш противник в Закавказье, стр. 36.

բությունների զարգացումով այդ վիճակը փոխվում է և ցեղի ազգեցիկ մարդիկ սկսում են հողամասերը յուրացնել: Հասկանալի է, որ մեծ թվով անասունների կենարունացումը խաների և ցեղապետների ձեռքում փաստորեն նրանց դարձնում էր արոտավայրերի տերը, որը ձեսականորեն շարունակվում էր համարվել ամբողջ ցեղի սեփականությունը:

Փաստերը ցույց են տալիս, որ արդեն XIX դարի կեսերին այլևս չեր կարելի հանդիպել թեկուզ մեկ ցեղապետի, որը, բացի մեծ թվով անասուններից և նրանց արոտավայրերից՝ լտիրեր և աւել նատակյաց զյուղերի՝ իրենց մշակելի հողերով. Այսպիսով, ցեղապետները վերաժվում էին զյուղատերերի:

1859 թ. կառավարությունը մի ֆիրմանով թույլատրում է, որ բոլվոր ցեղերին տրված հողերը դառնան նրանց պետերի սեփականությունը¹: Խաները և բնիկերը, այդ ֆիրմանից օգտվելով, ցեղերին պատկանող հողերը իրենց սեփականությունը դարձրին: Բայց դա, ինչարկե, դեռևս համատարած յէլ:

Զինովիը հայտնում է, որ 1879 — 1881 թթ. Դիլանում թնակվող ցեղերի տրամադրության տակ եղած հողերը դարձել էին ցեղապետների սեփականություն²: Լահիջանում 182 զյուղից 42-ը, Եաֆթում 26-ից 12-ը, Ֆումենում 110-ից մոտ 30-ը արդեն պատկանում էին խաներին³: Բախտիարի ցեղապետը համարվում էր Իրանի ամենախոշը կալվածատերերից մեկը: Սիսթանի թնակեցված հողերը նույնպիս անցել էին ցեղապետներին, որոնք ցեղի անդամներին առանձին հողամասեր էին տալիս՝ օգտագործելու համար: Արդարիլի շրջանի ցեղերի թնակեցրած 123 զյուղ դարձրել էին տարրեր մուլքադարների սեփականությունը:

Թուլվոր ցեղերի նստակյաց դառնալու պրոցեսը այնքան արագ էր տեղի ունենում, որ XIX դարի վերջին արդեն իլլաթի կամ համացեղային հողեր պահպանվել էին միայն առանձին

¹ 170 مصطفى عيد من قدراتي شرح ... ص

² Н. А. Зиновьев, Статистические сведения о провинциальных Гильях и Шахруд. Бакстам, СПб., 1887, стр. 24—34.

³ Խոյի անգամ, էլ 17—23.

լևանային շրանեներում, ուր որոշ իմաստով՝ շարունակվում էին պահպանվել նահապետական տոհմային հարաբերությունները: XX դարի սկզբներին այդ հողերը երկրի մշակելի հողերի ընդհանուր ֆռնդում արգեն լնչին տոկոս էին կազմում:

Մողաֆար է՛տ Դին շահն թագավորության օրոք 1895 թվականին առաջարկություն արվեց Հատուկ մինիստրությունն կամ բարձրագույն խորհուրդ ստեղծել՝ ցեղերի գործով զբաղվելու համար¹:

Նստակյաց դարձված քողմոր ցեղերի գյուղերը խաների կողմից յուրացվում էին տարբեր եղանակներով: Սրբեմն այն կատարվում էր ուղղակի բանագրավումով, իսկ Հաճախ՝ թիւլային հողերի սեփականացումով. ցեղապետները կամ ազդեցիկ անձինք որևէ շրջանում շահից և կամ նահանգապետից որովնու թիւու ստացած վարելահողերը աստիճանաբար սկսում էին լուրացնել և դառնալ նրանց սեփականատերը: Բնական է, որ չէին բացառված նաև զնման եղանակով հողային սեփականություններ ձեռք բերելու փաստերը: Այդպիսի առուժախ մեծ մասամբ տեղի էր ունենում քողմոր ցեղապետների և նըստակյաց հողատերերի միջև նեչ վերաբերում է գյուղացուն, ապա նա պետք է նոր տիրոջը հարկեր և տուրքեր տար նախկինում ահճանված շափերով:

Մենք նշեցինք, որ նստակյաց խաները կարճ ժամանակում վերածվում էին խոշոր կալվածատերերի և հսկայական հարստություններ կուտակում: Թայց այդպիսի պրոցես տեղի էր ունենում նաև քողմոր խաների հետ, որոնք նույնպես վերածվում էին խոշոր հողատերերի: Սակայն դա երբեք էլ չէր նշանակում, որ նստակյաց լինելը արագացվում էր: Նըստավում էր մինչևմիսկ հակառակ պրոցես, թաղի թահրամին ժերանի գյուղատնտեսության պատմությունը դրվում նշում է, որ գյուղացիները, պետական պաշտոնյաների հետապնդումից փախչելով, զառնում էին քողմոր: Այդ հանգայանքից

¹ A. K. S. Lambton, Landlord and Peasant in Persia, p. 159.

սդովում էին պաշտոնյաները, որութ իրենց շահերից ելնելով, հանախ հռվանավորում էին քոչվորներին Օրինակ, եթե որևէ քոչվոր ցեղ իր անասունների արոտի կապակցությամբ գյուղացիներին վեսա հասցներ և այդ հողի վրա քոչվորների և նստակյաց գյուղացիների միջև կոփի ժադեր, ապա պաշտոնյաները որպես կանոն պաշտպանում էին քոչվորներին նիմ պատահեր, որ այդ բախման ժամանակ որևէ քոչվոր ապանվեր, ապա թալանի էր ենթարկվում նստակյաց գյուղացիներին ունեցվածքը։ Մինչդեռ եթե գյուղացի սպանված լիներ, նրա զատին ու ոք չեր հասնի Այս ամենը հուսալիքում էր առաջացնում գյուղացու մոտ և նա իր բնակավայրը և տեսնությունը լրելով՝ գնում քոչվոր էր դառնում¹։

Անշուշտ պետք է նշել, որ այս երեսով բնորոշ չէր, չեալած որ այն գոյություն ուներ։

Այսուհեղ անհրաժեշտ ենք համարում նշել նաև այն փաստը, որ ցեղերի մեջ էլ տեղի էր ունենում շերտավորում։ Օրինակ՝ Մարզում Սարդարից արոտավայրեր վարձելու գործում նկատվում էր, որ ունեոր բազմաթիվ անասուններ ունեցող քրդերը վարձում էին ավելի շատ արոտավայր, իսկ չքավորները հավաքվում և ընդհանուր ուժերով էին արոտավայր գտրձում²։

Կախում ունեցող հողագործների դասակարգի առաջացումը նրա ֆեոդալիզացիայի խորացման պայմաններում կարելի էր զիտել ցեղի ներսում և նրանից դուրս Խնողական հողային սեփականության անկայությունը թույլ էր տալիս քոչվոր խաներին պահպանել տնտեսության նատուրալ բնույթը։

Ընդարձակ տնտեսության դեկավարումը, հարկերի ժամանակին գտնձելու գործի ապահովումը և այն պահանջում էր բավականին կազմակերպված մարմին, որը ենթարկվեր

¹ تاریخ کشاورزی ایران تهران ۱۹۵۰ م.

² Ученые записки Института востоковедения, VIII, Иранский сборник, Москва, 1953, стр. 127.

տիրուքը և իրականացներ նրա պահանջները, Եզ իսկապես
այդպիսի մարմիններ գոյություն ունեին և առները ունեին և
զինված ուժեր, որոնք բացի ռազմական պարտականություննե-
րից, մասնակցում էին նաև Հարկերի հավաքման գործին:

Խաները, ինչպես նաև Նրանց գործերի կառավարիչ քաղ-
յառաջնորդ անձամբ հողագործությամբ շէին զբաղվում կամ
անձնական հողագործական անտեսություն չէին պահում, այլ
իրենց հողերը վարձով էին տալիս գյուղացիներին:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ XIX դարի
կեսերին արգել քողապես հողատերերն իրենց եկա-
մուտեների նշանակալից մասը ստանում էին վարելահողերից,
որը և ապացույց էր ցեղերի նստակեցության:

Գ Լ Ա Ւ Խ Ե Ր Բ Ո Ր Դ

ՀԱՐԿԱՑԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԴՐԱՄԱԿԱՆ
ՀԱՐԿԵՐԻ ԱՆՑ

ՀԼՀ գարի երկրորդ կեսին իրանում կիրառվող հարկային ախտեմի, նրա շափերի, գանձման եղանակների և դրանց հետ կապված այլ հարցերի ուսումնասիրումը շատ կարևոր է ովզալ ժամանակաշրջանի իրանի սոցիալ-տնտեսական վիճակի, գյուղացիական բազմամիլիոն մասսաների շահագործման մասին պարզ և հատակ պատկերացում ունենալու համար։ Բայց այդ հարցի պարզաբանումը ունի իր որոշակի գծվարությունները, քանի որ պետական պաշտոնական վիճակագրություններ, զեկուցագրեր կամ նման այլ փաստաթղթեր չեն պահպանվել, թացի այդ, նման փաստաթղթերը լէին էլ կարող իրականության իսկական արտացոլումը լինել, որովհետև գոյություն ունեցող կարգը, նորմանները մեծապես խախտվում էին։ Այս ասպարեզում նույնական կատարյալ անարխիա էր տիրում։ Այնուամենայնիվ տարբեր սկզբնազրյութներում և ականատեսների վկայություններում բերված փաստական նյութը, որը երբեմն հակասական է և փրարամերժ, որոշ հեարավորություններ է տալիս հարկերի բնագավառում իշխող դրության մասին ընդհանուր պատկերացում կազմելու համար։

Վերոհիշյալ հարցերի մասին արժեքավոր տեղեկություններ է տալիս Թերզոնը, որը խոր կերպով ուսումնասիրել է իրանի սոցիալ-տնտեսական և քաղաքական կյանքը։ 1892 թվականին նրա հրատարակած երկհատորյակի նյութերը

Հետապայում սկզբնաղբյուր են դարձել բազմաթիվ հեղինակների համար:

Քերպունի տվյալների համաձայն Իրանի պետական ամրոց բյուջեն 1888—1889 թ. ըստ առանձին նահանգների ունեցել է հետևյալ պատկերը.

1. Եկամուտներ Հարկերից և մաքսերից

	Վճարում՝ Ներշ կան Խիճ՝ զրա- նոց	Վճարում՝ Ներշ բնա- մբերավ՝ խորզար	ընդհանուր ներշ զանվ
1. Թիջրանց և շրջանայրը	4,238,720	4,309	4,206,291
2. Արքայական	7,861,420	60,082	8,666,665
3. Խորսութ	5,052,688	12,424	5,555,932
4. Հարս	8,420,402	7,700	6,682,902
5. Խաչածուն և շրջանայրը	3,791,202	14,855	4,036,577
6. Թիջրան և Բաւարան	2,215,243	38,261	2,204,948
7. Արքունուն	1,427,350	3,400	1,455,538
8. Դիլան	3,450,000		3,450,000
9. Մազանդարան	1,393,470		1,393,470
10. Թուրքուն	673,457		673,457
11. Լորսուն	594,268	7,324	624,287
12. Իրաք, Թիգրան, Զարդան, Մահմադ, Սամի	727,357	19,633	1,200,000
13. Բարսիքերդ	609,573	5,307	638,505
14. Ջազզ	1,754,920		1,728,028
15. Թիջրանշան	930,935	12,970	1,104,685
16. Խաման	819,888	19,540	978,638
17. Ղազզին	952,018	18,772	1,159,798
18. Աստրաբազ	171,899	8,884	351,779
19. Բասին և Շահրուզ	53,366	7,359	188,369
20. Սեմեն և Պամզան	280,728	3,585	326,940
21. Ղում	293,620	3,754	368,700
22. Թաշան	712,006	1,973	786,780
23. Գոլփայեզան և Խոնար	225,811	1,982	269,986
24. Թամարաչ	91,041	1,829	127,821
25. Գարուս	129,365	1,982	169,805
26. Համազան	672,835	9,305	906,285
27. Մալային և Բույակրան	504,709	7,241	635,599
28. Խանգավանդ	280,303	13,258	446,407
29. Խաթանդ	311,588		311,588

ՀԱՐԿԱՑՄՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԴՐԱՄԱԿԱՆ
ՀԱՐԿԵՐԻ ԱՃԸ

XIX դարի երկրորդ կեսին նրանում կիրառվող հարկալին սիստեմի, նրա շափերի, գանձման հղանակների և դրանց հետ կապված այլ հարցերի ուսումնասիրումը շատ կարևոր է ովզաւ ժամանակաշրջանի նրանի սոցիալ-տնտեսական վիճակի, զյուղացիական բազմամիլիոն մասսաների շահագործման մասին պարզ և հատակ պատկերացում ունենալու համար թաց այդ հարցի պարզաբանումը ունի իր որոշակի դժվարությունները, քանի որ պետական պաշտոնական վիճակագրություններ, զեկուցազրեր կամ նման այլ փաստաթղթեր չեն պահպանվել: Բացի այդ, նման փաստաթղթերը չեն էլ կարող իրականության խնկական արտացոլումը լինել, որովհետև գոյություն ունեցող կարգը, նորմաները մեծապես խախտվում էին: Այս ասպարեզում նույնպես կատարյալ անարինիա էր տիրում: Այսուամենաւնիվ տարբեր սկզբնադրյալներում և ականատեսների վկայություններում բերված փաստական նյութը, որը երբեմն հակասական է և փրառամերժ, որոշ հնարավորություններ է տալիս հարկերի բնագավառում իշխող դրության մասին ընդհանուր պատկերացում կազմելու համար:

Վերոհիշյալ հարցերի մասին արժեքավոր տեղեկություններ է տալիս Թերզոնը, որը խոր կերպով ուսումնասիրների է իրանի սոցիալ-տնտեսական և քաղաքական կյանքը: 1592 թվականին նրա հրատարակած երկնատորյակի նյութերը

Հետագայում սկզբնաղբյուր են դարձել բազմաթիվ հեղինակների համար։

Թերդոնի տվյալների համաձայն Իրանի պետական աշխաղը բարու է 1888—1889 թ. ըստ առանձին նահանգների ունեցել է հետևյալ պատկերը։

1. Ակամուաներ հարկերից և մաքսերից

	Վճարում- Ները կան- խիկ՝ դրա- նով	Վճարում- Ները բնա- մբիրով՝ դարձար	Ընդհանուր էկամուաց՝ զրանով
1. Թերակը և շրջակաց	4,338,730	4,209	4,306,391
2. Ալրազանական	7,861,420	60,062	9,666,666
3. Խորսան	5,082,580	12,424	6,585,932
4. Տարս	8,420,402	7,700	6,659,903
5. Խաֆանան և շրջակաց	3,781,202	14,855	4,036,577
6. Թերակ և Բշուշխանան	3,215,242	36,261	2,804,945
7. Արարատան	1,427,350	3,400	1,466,228
8. Երևան	8,450,000		8,450,000
9. Մազանդարան	1,393,470		1,393,470
10. Քորդուան	673,457		673,457
11. Լորսան	594,263	7,834	594,267
12. Իրաք, Թեղաք, Զարանան, Մաշտամ, Սազե	727,357	19,633	1,200,000
13. Արարակը	605,573	5,807	698,905
14. Ցազդ	1,794,930		1,728,023
15. Թերակնշան	920,925	13,970	1,104,685
16. Խամս	819,585	18,540	978,628
17. Ղաղվին	912,018	18,772	1,169,798
18. Աստրաբադ	171,830	2,884	251,779
19. Ռուսամ և Ցամրոց	52,365	7,269	188,289
20. Սեմոն և Պալզան	280,728	3,685	326,940
21. Ղու	292,620	3,754	358,700
22. Բայան	712,006	1,973	726,730
23. Դոլֆայեզան և Խանոսր	225,811	1,863	262,986
24. Բամարս	91,041	1,639	127,821
25. Դարուս	129,965	1,982	165,805
26. Համազան	673,635	9,305	805,285
27. Մալային և Բույակրան	504,709	7,241	635,559
28. Նահավանդ	280,303	13,258	448,407
29. Նախանդ	211,588		211,588

30. Առաջարաց	22,435	8,372	87,735
31. Հովհանն	73,802	36	76,182
32. Խար	94,704	11,223	265,994
33. Ղարազակ	51,102	1,487	52,112
34. Չամազմած	22,010	1,447	23,057
35. Բաշիզստ	48,250		48,250
36. Թանգարակ	17,671	685	24,042
37. Ֆերուզանէ	18,716	197	18,162
38. Զահարյի Թալաթի	16,892	48	17,092
Ընդհանուր	44,076,757	262,197	54,177,740
Արից՝ պարեն և զարի		262,303	
զարման		83,843	
բրինձ		12,665	
և այլն		1,575	
Ընդհանուր զամաք՝			
1. Հարկեր՝ վճարված կանչելիկ	36,076,757		
Հարկեր՝ վճարված բնամթերքավ	10,100,983		
Ճարտիր	8,000,000		
		54,177,740	
2. Եկամուտներ ոչ ազրյութենակից		1,191,776	
Իրանի ամրաց եկամուտը		55,369,516	
Տեղական այն ժախասերը, որոնք նահանգներում և շրջան-			
ներում պակասեցվում են հեկամտից՝			
1. Հակ օլ նորումն—նահանգապետի ժախասերը, ժախասիր			
Հարկերը հավաքելու համար.			
2. Թախոֆիֆար—եկամտից պակասեցումներ անբերրիու-			
թյան, գյուղերի և շրջանների աղքատության և այլնի համար.			
3. Սարքի թամիր—պետական շենքերի կառուցում և			
նորոգում:			
Այս ամենը կազմում էր մոտ 2,633,472 դրան:			
Այսպիսով 1. Ժախասիր տեղական բնայթի	2,633,472		
2. Այսու ժախասերը		29,600,000	
		ամփոփում	
		42,233,472	
Ընդհանուր եկամուտը		55,369,516	
Ընդհանուր ժախասերը		42,233,472	
		10,136,041	

Ալնելով վերահիշյալ ազյուտակից՝ Թերզոնը հանգում է այն հղակացաւթյան, որ հարկերի հավաքման սիստեմը իրանում մեծապես թերի է: Պետական համարյա ամբողջ հարկերը ընկնամ էին Հոդագործ դասակարգի վրա, իսկ ամենածանր բռու՝ ուսուաթների կամ գյուղացիների վրա¹:

Ծկամուտների այս գումարը ցույց է տալիս, որ XIX դարի սկզբի համեմատ հարկերը բավական աճել էին:

Իրանական ազյուտները նույնպես թվական տվյալներ են տալիս երկրի եկամուտների մասին, որոնք որոշ չափով տարբերվում են վերը նշվածներից:

Արդյուաշ Մոսթաֆին Հաղորդում է, որ գարասկղրին հարկերի ընդհանուր գումարը կազմում էր երկումուկեն միլիոն թուման, այսինքն՝ 25,000,000 դրան, որը գանձվում էր հինգ մասի բաժանված երկրից, այն հաշվով, որ յուրաքանչյուր մասը կճարի 5,000,000 դրան²:

Մո՛համագ Ալի Ջամալզադեն Իրանի տնտեսական կյանքի վերաբերյալ թեուլինում հրատարակած զրքում տալիս է հետևյալ ազյուտակը³:

Իրանի ընդհանուր եկամուտները

Հետրի 1255 թ. (1840), ընդհանուր գումարը	34,525,150 դրան
Հետրի 1258 թ. (1853), բացի բնամթերքից	25,357,524 *
Հետրի 1270 թ. (1854), ընդհանուր գումարը	32,885,580 *
Հետրի 1293 թ. (1876) *	50,700,000 *
Հետրի 1302 թ. (1885) *	50,800,000 *
Հետրի 1303 թ. (1886), բացի բնամթերքից	48,201,520 *
Հետրի 1305 թ. (1889), ընդհանուր գումարը	54,687,530 դրան
Հետրի 1308 թ. (1891) *	60,000,000 *
Հետրի 1325 թ. (1908) *	80,000,000 *

¹ G. N. Curzon, Persia and the Persian Question, vol. II, p. 480—485.

² عبد الله مستوفى مشرح (تذگانی من ... حـ ۲۸

³ جمال زاده ... حـ ۱۱۸

Հեղի 1850 թ. (1852)	ընդհանուր գումարը	118,253,759	+
Հեղի 1881 թ. (1882)	" "	120,658,250	+

Այսուհետեւ նա տալիս է որոշ տարիների եկամուտների այսպիսի մասնամասնություններ.

Հեղի 1268 թ. (1852), այսինքն նասր էդ Դին շահի թագավորության շորորոդ տարում Իրանի եկամուտների ընդհանուր գումարը կազմելէ՝¹

1. Կաների	28,257,828 դրամ
2. Բնամթերքով	235,288 խարվար հացանառիկ
	6,134 " բրին:
	136,532 " գարման և այլ ճիշերքեր:

Իսկ Հեղի 1306 (1889) թվականին ամբողջ եկամուտը կազմել է 47,016,957 դրան կանխիկ, 265,306 խարվար հացանառիկ, 53,643 խարվար գարման, 12,665 խարվար բրինձ և այլն. Բայց, ինչպես նշում է Հեղինակը, այս գումարները միայն պաշտոնապես գրանցված գումարներն չեն, իրականում նահանգապետությունները և այլ պաշտոնյաները անհամեմատ ազելի մեծ գումարներ չեն գանձում բնակչությունից²:

Իրանի ֆինանսների պատմության հեղինակ Էսֆանդիար Բահրամ Շգանեգին տալիս է Հետելյալ թվերը. 1860—1890 թթ. տարեկան միջին եկամուտը եղել է 54,487,000 դրան, իսկ 1890—1900 թթ. 58,850,000 դրան. 1886 թ. պետության ընդհանուր եկամուտը եղել է 54,800,000 դրան, որը բազկացած էր Հողային Հարկեց, գլխահարկեց, մաքսերից և այլն. Այս

1 Խոյի տեղամաս, էջ 123.

Անգերք և Սասացք, որուք մի քանի տարի պաշտոնավարել էն Իրանը, 1885 թ. պատ էն, որ Իրանում գազանիք չէ. որ Հարկերը և մաքսերը են առանձիւ շափից տանըացն երիւ երրորդով ազնիք. (See— O. N. CURZON, Persia and the Persian Question, vol. I, p. 440).

գումարի մոտ 50 տոկոսը գնում էր բանակին, 12 տոկոսը պալատին, 15 տոկոսը թոշակներին, 15 տոկոսը արտաքին գործերի մինիստրությանը, իսկ մնացած 8 տոկոսը մյուս մինիստրություններին և լուսավորության ծախսերի համար¹:

Թե այդ գումարներից բացի ինչ էր պարտադրվում ժաղովրդին՝ զգացր է ասել, միայն կարելի է բերել Առողջեաթ այն վկայությունը, որի միայն 1890 թվականին ամրոցք նրանում ընակչությունից զանձվել էր սահմանված գումարից լրացնամ ավելի հարկ²:

Նրկում զանձվող հարկերի և նրանց ընդհանուր շափերի մասին հարուստ նյութեր կան նաև ոռուական աշքրյուրներում։ Այդ նյութերի ուսումնահրումը մեծապես օգնում է տիրող վիճակի մասին ընդհանուր պատկերացում ունենալու համար, բանի որ ոռուական պաշտոնական ներկայացուցիչները, ինչպես նաև տարրեր առիթներով նրան այցելած անձինք մեծ ուշադրությամբ նյութեր են հավաքել և այդ ամենը ամփոփել առանձին գրքերում։

Այսպէս, Ռիտիխը 1896 թ. գրել է, որ նրանի պետական եկամուտները կազմել են տարեկան 45—50 միլիոն դրան, այսինքն 4—5 միլիոն թուման։ Բառմագարտենը այն հետաքրքիր կարծիքն է Հայտնել, որ պետական հարկերն ու տարրեր տուրքերը իրականում կազմել են միշտակ ընտանիքի արքական եկամտի մինչև 80 տոկոսը³։

Գետական բյուջեի և բնակչությունից զանձվող ընդհանուր գումարի ասպարեզում XIX դարի ընթացքում տեղի էին ունեցել փոփոխություններ։

¹ E. B. Yagonegi, Recent Financial and Monetary History of Persia, New-York, 1934, стр. 14—15.

² Атռետ. Откупная система в Персии, Александриополь, 1909, стр. 125—6.

³ П. А. Риггих. Политико-статистический очерк Персии, СПб., 1896, стр. 132.

⁴ К. А. Баумгаартен, Посадка по Восточной Персии в 1894 году, СПб., 1896, стр. 241.

XIX դարի կեսերին պետության կողմից գանձվող բոլոր հարկերը և տուրքերը կազմում էին մոտ տասնմեկ միլիոն ուրիշ արժաթուվ։ Այդ ժամանակ չեայած պետական հարկերը աստիճանաբար աճում էին, բայց պետության շնորհանուր եկամուտները պահպանում էին¹:

Մոտ 25 տարի հետո պետական ամրողք եկամտի մասին կան այլ տվյալներ. Ծառողինիկովը գրում է, որ պետության տարեկան եկամուտները Հազիկ թե հայտնի էին հենց իրեն կառավարությանը, բայց հեթազորում է, որ այն չեղ գերազանցում տարեկան 25 միլիոն ռուբլուց, որի մեկ երրորդը ժախսվում էր Հոգևորականների, սեյիզների, մզկիթների, մզրինների, բաղնիքների և այլ նպատակների համար².

Գետական եկամուտների պականելու հարցին անդրագառնում են նաև այլ աղբյուրներ, չեայած ոչ միշտ է, որ նրանք փորձում են բացատրել դրա պատճառները. Թերենք մի երկու օրինակ:

Եթե Մալբոլմը նրանի ամրողք եկամուտը 1803 թվականին չափանցրած Համարում էր 150 միլիոն ֆրանկի հավասար գումար, ապա 1815 թ. այն արդեն իշել էր 75 միլիոնի, իսկ 1850 թ. 57 միլիոն ֆրանկի, Մինչդեռ 1889 թ. այդ գումարը արդեն կազմում էր ոչ ավելի քան 40 միլիոն ֆրանկ. Որոշ տվյալների համաձայն 1889 թվականին եկամուտը կազմում էր 41 միլիոն, իսկ ժախսները 31 միլիոն։ Եթե 1898 թվականին Մոզաֆար էղ Դին շահը գահ բարձրացավ պետական եկամուտները կազմում էին 32,5 միլիոն ֆրանկ, իսկ նրա թագավորության տարիներին այն տատանվում էր 22-ից մինչև 36 միլիոն ֆրանկի միջև³.

Երկրի եկամտի այսպիսի նվազումը, անշուշտ, ուներ իր օրինեկություն պատճառները, որոնցից հատկապես կարելի է նշել

¹ Н. Березин, Путешествие по Северной Персии, Казань, 1852, стр. 235.

² П. Осбордников, Очерки Персии, СПб., 1878, стр. 207.

³ М. Павлович, Экономическое развитие и аграрный вопрос в Персии XX века, М., 1921, стр. 21.

մասնավոր հողատիրության զարգացումը և կալվածատերների՝ մուլքադարների հզորացումը, որոնք խուսափում էին պետական հարկեր վճարելուց:

Թերզոնը ընդգծում է, որ եթե հարկերի սահմանված գումարները իսկապես մուծվեին պետական գանձարան և լզնային պաշտոնների բարձրության համապատասխան տարրեր պաշտոնյաների գրապահը, ապա բավականին զումարներ կստացվեն և հնարավոր կլիներ գումարներ հատկացնել հասարակական մի շարք ժախանքին համար, որոնք դատապարտելիորնեն այդքան անտեսվում էին¹:

Տաճը որպես պետության գլուխ նույնպես հսկայական եկամուտներ ուներ: Նրա եկամուտների մասին եղած տվյալները զանազան են և հաճախ հսկայական: Տոմարան գտնում է, որ գժվար է որոշել շահի եկամուտների իրական չափերը, բայց նա մասամբ որապես կազմում է 7 միլիոն թուման կամ 14 միլիոն ութրի: 1888—89 թթ. շահի եկամուտները չեին գերազանցում 5,537,000 թումանից, որից 800,000 թուման ստացվել էր մաքսերից, 25 հազար փողերանոցից, 21,000 հեռագրատնից, 451,000 ուղղակի հարկերից, այդ թվում 360,000 դրամով և 1000-ը հացահատիկով²:

Տաճի եկամուտների մեջ նշանակալից գումար էին կազմում, այսպես կոչված, փեշքաշները (նվերները), որոնք փաստորներ քողարկված կաշառքներ էին և արվում էին տարրեր տափթներով: Այդպիսի փեշքաշներ տալիս էին թե՝ պաշտոնական անձինք՝ նահանգապետներն և այլ պաշտոնյաները, և թե՝ տռանձին մարդիկ, այս կամ այն արտոնությունը ստանալու կամ հանցանեցը քողարկելու համար: Սակայն XIX դարի վերջերին նահանգապետների և այլ պաշտոնյաների շահին տված փշրանքները գնալով պակասում էին: Ազրյութները նշում են, որ XIX դարի սկզբներին Ֆաթհ Ալի շահը նոր տարվա կապակցությամբ նահանգապետներից և այլ մեծամեծներից

¹ G. N. Chayton, Persia and the Persian Question, vol. II, p. 485.

² M. J. Токара, Экономическое положение Персии, СПб, 1895, стр. 82.

ստանում էր 30 միլիոն թուման փեշքաշ, մինչզեռ XIX դարի հրկրորդ կեսին շահը ստանում էր այդ գումարի հազիվ կեսը:

Հստ Թերգուի հատկապես 30-ական թվականներին փեշքաշների գումարը շատ պահած և շահը ստիպված ակնց որոնել եկամուտների նոր աղբյուրներ և հարկադրման նոր եղանակներ Այսպիսով 1888—89 թվականներին երկու տարթով, այսինքն նոր տարթա և մարգարիթ ժննդյան առնի առթիվ, շահի ստացած փեշքաշի ամրող գումարը հասել էր ընդունել 120,000 թումանի, որը անհամեմատ չնշին գումար էր¹. Հանրի Ռենի Դալմանը կարծում է, որ շահի եկամուտների նվազումը ցույց է տալիս հարկատու աշխատավորության ժանր վիճակը, որը այնու ոչինչ չուներ վճարելու²:

Նահանգապետները նման ժննդերները կամ կաշառքները տարու համար հավաքում էին արտակարգ և արտահերթ հարկեր Տարածված երկույթ էր, երբ որևէ նահանգապետ ինչ-որ հանցաների համար ստիպված պետք է մեծ գումար կաշառը տար թեհրանում կամ թավրիդում: Այդ նպատակով նա անց էր կացնում հարկերի նոր հավաք, թեկուղ նախօրդ հավաքից անցած լիներ կարճ ժամանակ: Այդպիսի լրացուցիչ հարկերը գյուղացիներին պարտադրելու համար երբեմն կիրառվում էր հետեւյալ եղանակը. ժննդովրդին հայտնվում էր, որ նահանգապետը իր շքախմբի և հեծյալների հետ միասին պետք է այցելի ալյուրի դուռը: Քանի որ գյուղացիները շատ ընդունված կարգի պարտավոր էին նահանգապետին և իր հեծյալներին, որունց թիվը լինում էր 100—150 մարդ, ապահովիլ բոլոր տեսակի մթերքներով և հարմարանքներով, ուստի նրանք զերպառում էին անմիջապես ուղարկել պահանջվող գումարը, միայն թե խուսափեն այդպիսի հյուրերից: Այս ձևը կիրառվում էր նաև անհնագանդ խաների, բեկերի և այլ կալվածատերների նկատմամբ, երբ նրանք խուսափում էին տալ պահանջվող գումարը³:

¹ O. N. Carlson, Persia and the Persian Question, vol. II, p. 478.
² مازری رله دالماقی سەقۇتىامى

³ П. Н. Аверланов. Отчет о поездке по Северному Азербайджану... в конце 1899 года. Тифлисъ. 1900, стр. 24.

Դալով Հարկերի աղբյուրների և նրա շափերի հարցին, ովհետք է ասել, որ Հարկման էին ենթակա անշարժ գույքը, անառունները, ապրանքները և արհեստները։ Այդ եկամուտները կոչվում էին ռմողախելս և բաժանվում էին երեք կատեգորիայի։ Առաջինը կոչվում էր ռմալիաթս, որի մեջ մտնում էր կալվածքներից, ցեղերից, առևտութեակում էր արտակարգ հերթորդը՝ սոսուց, որը պարունակում էր արտակարգ Հարկերը, և երրորդը՝ տիեզերաց, որը փաստորների նվերների անվան տակ կատարված կորզումներն էին¹:

Արտակարգ Հարկերի մեջ էին մտնում սոսուաթը և ռուադրեա պվարեղը, որը Հավաքվում էր ուղամական արշավանքների ժամանակ և այլն²:

Նախքան Հարկերի այս ձևերի յուրաքանչյուրին առանձին-առանձին անդրադառնալը կարելի է գալ մի այնպիսի ընդհանուր հղուակացության, որ Հարկահանության գործը իրանում գրված էր միանգամայն անարդարացի և քմահամ էիմքի վրա։

Տարբեր հեղինակներ եկամուտների աղբյուրների և տեսահետեւ մասին տալիս են տարբեր վկայություններ, որոնց ուսումնասիրումը որոշակի զժվարություն ունի այն իմաստով, որ Հարկերի ընդհանուր գումարը կամ նրա մանրամասնություններն ու բազկացուցիչ մասերը իրանում չեն հրատարակվել:

Տարբեր սկզբնադրյուրների տվյալները ի մի բերելով՝ պետական ամբողջ եկամուտների երկու հիմնական աղբյուր կարելի է նշել, մեկը կոչվում էր ռմալիաթ, այսինքն սահմանված կամ կանոնավոր Հարկերը, իսկ մյուսը սոսուաթ, կամ անկանոն եկամուտները, որոնք ունենում էին իրենց արտահայտման տարբեր ձևերը։

¹ Н. Березин. Путешествие по Северной Персии. Казань, 1852, стр. 234.

² П. Осбордников. Очерки Персии. СПб, 1878, стр. 207.

Իրանի ֆինանսների ամերիկացի խորհրդատու Շուլտերը 1912 թ. գրում է, որ մայիսի Հասկացողության տակ մտնելը էին Հոգային Հարկը, տեղական տուրքերը, պետական Հողերից ստացվող հկամուտները, Հանքերից կամ այլ արդյունաբերական ձեռնարկներից ստացվող եկամուտները։ Դրա մեջ էին մտնում և զիտահարկն ու անասնահարկը։ Մայիսից բացի որոշ եկամուտների աղբյուրը էին Ժարսային վճարումները, կազի մինիստրության որոշ եկամուտները և արտասահմանայն անձնագրերից ստացվող գումարները¹։ Այս վերջիններս իշարկե, շոշափելի չեին։ Մինչեւիսկ Հանքերից և արդյունաբերական ձեռնարկներից գանձվող Հարկերն էլ մեծ գումար չեին կազմում, բանի որ դրանք առանձնապես զարգացած չեին երկրում։

Պետական Հարկերի կամ մայիսի զիտավոր առարկան Հոգային Հարկն էր, ըստ որում նրա մի մասը գանձվում էր բնամթերքով և կոչվում էր օգնեսա, իսկ մյուսը գանձվում էր կանխիկ դրամով և կոչվում էր սեազդու²։

XIX դարի երկրորդ կեսից սկսվում է անցումը նատուրալ Հարկերից դրամականին, ըստ որում դրանց Համայանությունը նայած վայրի և ժամանակի փոփոխական էր. Իրանի 1892 թվականի պետական բյուջեում նահանգների մեծ մասից գանձվող դրամային Հարկերը կազմում էին ամբողջ Հարկերի 80—90 տոկոսը, բայց և կային առանձին նահանգներ, ինչպես, օրինակ՝ Մազանդարանը և Գիլանը, որտեղ պետական բոլոր Հարկերը գյուղերում գանձվում էին միայն դրամով։

Նկատելի էր նաև Հետնյալ տենդենցի գյուղացիները Հարկերը մեծ մասամբ վճարում էին բնամթերքով, իսկ Հարուստ վարձականները գերադասում էին դրանք վճարել դրա-

¹ W. M. Shuster, The Strangling of Persia, London, 1912, p. 202.

² Л. Бодалов, Персия в географическом, религиозном бытосознании, торговле-промышленном и административном отношении, СПб., 1909, стр. 120.

անով, քանի որ դա ավելի պարզ էր և պետական պաշտոնյան և բարին առանձնապես առիթ չէր տալիս մեծ թալանի¹:

Այստեղ անհրաժեշտ ենք համարում նշել, որ հարկերի մասին եղած տարբեր թվական տվյալները զերլուսելիս պետք է հաշվի առնել, որ սկսած 1860 թվականից մինչև XX դարի սկիզբը, գրամական միավոր զրանը արժեքազրկվել էր մինչև իր արժողության 1/3-ի շափով:

Մալիաթի նադի կամ կանխիկ հարկերը բաղկացած էին լինում հետևյալներից. ռասրբալես, այսինքն՝ անասնահարկ, շխանեվարին, որը նշանակում էր զիխահարկ, Թափունեա՝ հարկ շրազացներից, ոժազրույթ՝ շրից վերցվող հարկ, ոչնամի վահուրֆաթշ՝ արհեստավորներից և առաջականներից զանձնող հարկ²: Խանեվարին կազմում էր 1.5 մինչև 5 զրան, թափունեն 30—35 զրան, իսկ մազրույթին՝ 30—35 զրան³:

Վերահիշյալ հարկերը մեծ գումար էին կազմում և որոշ վայրերում աստիճանաբար աճում էին: Անհրաժեշտ է նշել, որ թեամբերային հարկերը զրամական հարկերի վերածվելով մեծ մասամբ շարունակում էին կրել նույն անունը, ուստի հարկային տերմինները դեռևս հետավորություն չեն տալիս որոշելու հարկի բնամթերային կամ դրամական բնույթը:

Կառավարությունը իր հերթին այլևս շահագրգումած չէր տասնորդը և այլ հարկերը գանձել բնամթերով: Որոշ վայրերում մինչեսկ հարկերի լափիերը արդեն ցույց էին տրվում զրամով, օթե առանձին շրջաններում բնամթերային հարկը շարունակվում էր պահպանվել, ապա յուրաքանչյուր տարի թեհրանից գնեներու նահանգապետներին կարգադրում էր սահմանված զենքանակություն: Դեռերալ նահանգապահները և այդ զնին ավելացնում էին 20 տոկոս իրենց համար և համապատասխան գնացուցակ ուղարկում նահանգապետնե-

1. П. А. Риттих, Политико-статистический очерк Персии, СПб, 1896, стр. 134.

2. Н. Г., По Персии, Восточный сборник, СПб, 1913, кн. 1, стр. 163—64.

3. К. А. Баумгаартен, Поездка по Восточной Персии, СПб, 1896, стр. 242.

րին: Վերջիններս նույնպես մի տոկոս ավելացնում էին իրենց համար և այդպիսով պյուղացիներից դանձում անհամեմտառ ավելի մեծ քանակի հարկ: Առա հենց այդ պատճառով էլ հարուստ և խիստ բնակչություն ունեցող Ասրապատականը տարեկան 500,000 դրան պակասորդ էր ունենում¹:

Այս երեսույթը վերաբերում էր նաև մզուս բոլոր նահանգներին և շրջաններին:

Դրամական հարկերը գանձվում էին սովորաբար տարեկան մեկ անգամ: Արտակարգ դեպքերում ամենամեյա դրամային հարկերը տարբեր ժամկետներում գանձվում էին երկու երեք նվազով: Եթե դժվարություններ էին ծագում պարենտմթերքի գործում, ապա ավելի մեծ եկամուտներ ստանալու համար դրամային հարկերը փոխարինվում էին բնամթերքով՝ հացահատիկով: Այդպիսի դեպքեր եղել են Ասրապատականում, երբ Թավրիզի պես խոշոր կենտրոնում պարենամթերքի խիստ պակաս գտացվեց:

Ընդհանրապես այդ հողի վրա կարվածատերերը մեծ մեքենայությունների էին դիմում: Ավելյանովը հետարրից փաստեր է հաղորդում բնամթերային և դրամային հարկերը մեկը մյուսով փոխարինելու դեպքերի մասին: 1899 թ. Թավրիզում կյանքը բավական թանկանում է, հատկապես հացի գինը շեշտակի բարձրանում է: Մինչև այդ հարկերի մեծ մասը վճարվում էր մթերքով, այն էլ ցորենի խարվարը 25 դրան հաշվով, որը, իշարկի, սահմանել էր կառավարությունը: Բնակչությունը այդ վեհակ չէ վճարում էր հարկերը՝ բնամթերքի ձևով և Թավրիզում միշտ առկա էին ցորենի մեծ պաշարներ: Բայց ահա կալվածատերերը համոզում են թագաժառակին հարկերը գանձել, ոչ թե բնամթերքով, այլ դրամով: Դրա հետևանքը լինում է այն, որ կառավարությունը սկսում է ավելի փոքր գումար ստանալ և մյուս կողմից չէ դրկվում է ցորենի պաշարներից, որի վաճառքը մեծ եկամուտների աղբյուր էր: Նոր պայ-

¹ Корсун. Военный обзор персидского передового театра, Тифlis, 1908, стр. 93—95.

մաներում հացահատիկի ամբողջ պաշարը կենտրոնացվում է կալվածատերերի մոտ, որոնք գյուղացիների փոխարեն մուծում են դրամը, իսկ ցորենը թողնում իրենց մոտ՝ հետազայտում անհամեմատ ավելի բարձր գնով վաճառելու համար¹:

Ինչպես ասվեց հիմնական և ամենագլխավոր հարկը Իրանում հանդիսանում էր հողային հարկը: Այդ հարկը գանձվում էր ամբողջ երկրում բոլոր հողերից: Հողային հարկից ազատված էին միայն մզկիթապատկան, ինչպես նաև ուղղական ժառանգության դիմաց տրված հողերը²:

Պետությանը տրվելիք աասնորդից ազատված էին բոլոր հավատքների ներկայացուցիչ հոգմորականները, բայց եթե նրանք ունենային համեմատարար ավելի մեծ հողային սեփականություններ, ապա նրանք պարտավոր էին հարկ վճարել ընդհանուր հիմունքներով: Առապատականում հարկերից ազատված էին մոտ տասը մզկիթապատկան կալվածքներ, որից երկուուր՝ Սեյխը Համզեի և Սեյխը Իրրահիմի հողերը թավրիդում³:

Հողային հարկը ընդհանուր առմանը կազմում էր ամբողջ բերքի մեկ տասներորդ մասը, որը կոչվում էր սաշարք: Սակայն ժամանակի ընթացքում, հատկապես Ֆաթհ Ալի շահի թագավորության տարիներին այն բարձրացավ և դարձավ բերքի մեկ հինգերորդը: Դա տեսլի էր ունեցել հետեւյալ կերպ: Ֆաթհ Ալի շահի օրոք անց է կացվում հողային կադաստր, որը հետագայում մի քանի անգամ վերանայվում է: Այդ կադաստրը որոշ շափով սահմանում է հարկերի լափերը՝ բնամթերքով և դրամով: Որանք էին՝ մեծ և փոքր տասնորդը, անասնահարկը, կանաչ տասնորդը և այլն: Եամբ արվող հարկը սահմանված էր բերքի մեկ հինգերորդը: Բայց նա տարբեր անվան տես

1. П. Н. Азеряков, Отчет о поездке по Северному Азербайджану... в конце 1899 года, Тифлис, 1900, стр. 22—24.

2. П. А. Риттих, Политико-статистический очерк Персии, СПб., 1896, стр. 133.

3. Л. Ф. Тигранов, Из общественно-экономических отношений в Персии, СПб., 1909, стр. 35.

Աս նույնպես մեծ դժվարություններ էր առաջացնում հարկերի գանձման գործում, քանի որ ոչ միշտ էր սահմանված հարկը համապատասխանում ստացված բերքին: Ջրի պաշարը հիմք ընդունելով՝ ստեղծվում էր նաև այն բարդ վիճակը, որ շուրջ կարող էր պակասել կամ ավելանալ, իսկ հարկը մնում էր նույնը:

Անբերիությունը, մորեխի պատճառած վնասները կամ որնէ այլ կլիմայական անբարենպաստ պայման հաշվի չէր առնվում հարկերը զանձնելու ժամանակ: Այդ հարկերը բռնի կերպով գանձվում էին բնակլությունից, դատապարտելով նրան սովի կամ առնվազն ամբողջ տարվա ընթացքում թշվառ գոյություն քարշ տալու Հենց արդ պատճառով էր, որ 1860—61, 1869—72, 1879 և 1880 սովի տարիներին բնակչությունը ոչ մի պաշար չուներ և մահացությունը այնպիսի շափերի համար, որ երկրի բնակլությունը պակսեց համարյակիսով շագն:

* * *

Մենք նշեցինք, որ պետական եկամուտների ընդհանուր գումարի մեջ զգալի տեղ էին գրավում մաքսերից ստացված եկամուտները:

Իրանի արտաքին առևտության զարգացման հետ զուգահեռ ընդարձակվում էին նաև մաքսաները, սահմանվում էին մաքսերը: Մաքսատներ են հիմնաղրվում հարավային նահանգներում, հյուսիսային սահմաններում: Այնպիսի մաքսատներ, ինչպես հյուսիսում Քուվիայինը և հարավում Թուշենինը, հարուստ պատմություն ունեն և նրանց արխիվներում պահպանված փաստաթղթերը, արտահանվող և ներմուծվող ապրանքների դրանցումները վիճակագրական հավաստի աղբյուրներ են երկրի տնտեսության ընդհանուր վիճակի և հատկապես նրա արտաքին առևտության վերաբերյալ: Ռւսութեասիրողներից շատերը հաճախ օգտագործել են հենց այդ տվյալները և հանգել համապատասխան եղբակացությունների: Այդ նյու-

թերի կարևորությունը հատկապես պետք է ընդգծել, որովհետեւ այդ ժամանակվա Իրանում վիճակապրական առանձին մարմիններ շկային և նման ավշալներ չեն պահպանվել: Ֆինանսների մինիստրության արխիվներում պահպանված փաստաթղթերը, Հարկային մառյանները և այլ նյութերը միայն հարկերի վիճակի մասին են որոշ գաղափար տալիս, այն էլ ոչ ճիշտ և ստուգ, քանի որ, ինչպես կտևնենք հատակայում, Հարկային պաշտոնյանները, նահանգապետները և Հարկանենները մեծ կեղծիքներ էին թույլ տալիս:

Մաքսերի գանձման իրավունքը անուրդով վաճառվում էր առանձին պաշտոնյանների: Այսպես, Թուշենրում 1889—90 թվականներին նահանգապետուց 5000 թուման ենվերթ է վերցնում գործարքի մեջ մտած անձնավորությունից: Այսինքն պաշտոնյան պետք է մաքսեր հավաքեր 96000 թուման, բացի այն 20 տոկոսից, որ նա պետք է գանձեր իր օգտին: Այդպիսով ամբողջ գումարը կազմում էր 115,000 թուման: Նույն ավլյաններն է բերում Քերպանը, որը հանգում է այն նորակացության, որ այդ ժամանակ նեխված սիստեմ գոյություն ուներ Իրանում¹:

Մաշհադի մաքսերը գանձելու իրավունքը 1888 թվականին պետությունից գնել էին 50,000 թումանով: Հաշված էր, որ 30,000 թուման պետք է գանձմայի թանդար Արքասից եկող ապրանքներից, իսկ 20,000 թուման էլ երկրի այլ մասերից և մուսաստանից ստացվող ապրանքներից²:

Այս պրակտիկան կիրառվում էր բոլոր մաքսատների նըկատմամբ և մեծ գժվարություններ ատեղժում երկրի ներքին առևտուրի զարգացման և ազգային շուկայի ստեղծման գործում:

Տեղական առևտուրականները նախահանդիսաներում վճարում էին ավելի քիչ Հարկեր, քան օտարերկրացիներու: Նրանք,

¹ A. N. Медведев, Персия, военно-статистическое обозрение, СПб, 1909, стр. 517.

² G. N. Sargson, Persia and the Persian Question, vol. II, p. 474, Յուլյան տեղամաս, համ., 7, էջ 208.

որոնք կարգ վճարում էին մոտ երկու տոկոս, բայց փոխարեն են ենթակա էին ճանապարհանարկի, կամ քաղաքներից տնօնքներու հարկի, Այդ հարկը դանձվում էր ո՛չ թե ապրանքների արժեքից ենթակա, այլ բեռնաբանակի սկզբունքով։ Ընդունված լավը 4 դրան էր յուրաքանչյուր բնոից յուրաքանչյուր բաղադրում։ Միանգամայն հականալի է, որ մաքսերի և հարկերի նման սիստեմը տեղի էր տալիս մեծ քահանությունների և անօրինականությունների։ Ծթե դրան ավելացնենք նաև այն փաստը, որ երկրում մաքսային համընդհանուր և միատեսակ սակագին գոյություն լուներ, ապա պարզ կդառնա այն ընդհանուր բառը, որ այդ սիստեմը առաջացնում էր երկրի անահության մեջ։

Այսպիսի մաքսերի ընդհանուր նկատման մեջ շոշափելի մտա էին կազմում երկրի ներսում փոխադրվող ապրանքներից գանձվող հարկերը։ Մեզվեգեց նշում է, որ ստացվազ հարկերի կամ ոմայիսաթիւ 1/5-ը կազմում էին ներմուծվող և արտահանվող ապրանքներից երկրի ներսում գանձվող հարկերը։

Այդ հարկերը վերցված էին ճանապարհներին և քաղաքների մուսոքերի մոտ։ Հատուկ պաշտոնյաներ, որոնք կոչվում էին ռազմական (ճանապարհապան), ապրանքներ փոխադրուներից գանձում էին անհրաժեշտ հարկերը։ Զնայած պետությունը ճանապարհների հարկերը էր վերցնում, բայց իրեն պատասխանառու չէր համարում ճանապարհների բարեկարգման և ապահովության համար²։

Իրանում այդ ժամանակ առանձին քաղաքներում գոյություն ունեցող մաքսաները, ինչպես սահմանամերձ մաքսաները, կոչվում էին ոգոմրոք, չնայած փաստորեն հարկեր էին հավաքում ապրանքներից։ Բերյոզինը գետմ 1852 թվականին գրում էր, որ ապրանքները քաղաք մոտցնելու պահին հարկ էր գանձվում, որը բավական դժվարացնում էր ներքին առևտուրը։ Հարկեր էին գանձվում նաև անցնող քարավաննե-

¹ Նոյն տեղում, համ. 2, էջ 475.

² على أكبر بيتهنا تاريخ سياسي ... ص 59

բից, որոնք կուզում էին «ղաֆիլես»։ Այդ հարկերը կուզում էին ռուսարլիկ կամ ռուսարիչ։

* * *

Երկրի բյուջեն կազմող հասուկ պաշտոնյաները կուզում էին մոսթոֆի, որոնց պաշտօնը, ինչպես վկայում է ամերիկացի Ֆինանսական խորհրդատու Մորգան Շուտերը, շատ դեպքերում եղել է ժառանգական, հորից անցել է որդուն¹։

Ցուրաբանը նահանդ կամ շրջան ուներ իր հարկային դավթարը, որի մեջ նշված էին եկամուտների և ժախաերի տարրեր շափերն ու ձևերը։ Այդ դավթարները կենարնում պահում էին մոսթոֆիները և համեմատում տեղերում պահվող դավթարների հետ։ Հարկերի գրանցումների մեջ մացգում էին նահանգների, բոլուֆների կամ շրջանների անունները և նրանց հարկերի շափերը։ Կենարնում պահվող դավթարը կուզում էր սԴավթարե դաստիար ոչ ամալը, որի ընդհանուր գումարը համապատասխանում էր շրջանում պահվող դավթարի տվյալների հետ։ Այս վերջինը կուզում էր «Դավթար» ջուզին շամա։

Դավթարների բովանդակության վերծանումը ի վիճակի էին կատարելու միայն մոսթոֆիները։ Դավթարները կազմված էին բավական բարգ և անհանկանալի ձևով, հենց այդ պատճառով էլ տեղի էին տալիս մեծ շարաշահումների։ Մոսթոֆիները շատ հիվանդագին ձևով էին արձագանքում, եթե որևէ մեկը փորձում էր խորանալ երկրի հարկանության վիճակի մեջ, իմանալ զանձվող հարկերի շափը և պիտության եկամուտները։

Մորգան Շուտերը գրում է, որ մոսթոֆիները ստանում էին բարձր ռոմբի՝ ամսական մոտ 135 դոլարի հավասար գումար, բայց նրանք մի քանի տարվա ընթացքում հոկայական հարստություն էին զիջում, որը, բնական է, արտառունիկային եկամուտներից էր գոյանում։

¹ W. Morgen Shuster, The Strangling of Persia, p. 246.

Այսպիսով կարելի է վստահորնեւ ասել, որ կենտրոնական կառավարությունը շատ աղոտ պատկերացում ուներ սուացվող եկամուտների կամ նրանց գանձման եղանակների մասին¹,

Ահմադ Հումենը ռժողագործության անահառությունը գրքում հետևյալ կերպ է բնութագրում մոսթոֆիներին. սահմանադրությունից առաջ՝ Հարկերի սահմանումը, գանձման եղանակների որոշումը ամբողջովին գտնվում էր մոսթոֆիների ձեռքում, նրանք նրկրի այս կամ այն մասի եկամուտներն ու ժամաները զրում էին առանձին թերթիկների վրա, որոնք պահպատ էին կաշվե մի կազմի մեջ ։ Երկրի յուրաքանչյուր մասը ուներ իր մոսթոֆին, որը փաստորնեւ կենդանի արխիվ էր Նըրանք, համապատասխան թերթիկներ ներկայացնելով՝ թվարկում էին փրենց նեթակա շրջանի Հարկերը։ Շավթարի բողվեցած կոչվող դաֆթարների հիմքը հենց այդ թերթիկներն էին կազմում²։ Այս ամենը այնքան քամանակ էր և անհիմն, որ միանգամայն հասկանալի է գառնում թերարի հեգեանքը, երբ նա տում է, որ մոսթոֆիները այնպիսի ողարմանալի ճշգրտությամբ էին հասկանալի գավառում պետք է վճարի 819,888 դրամ, և ոչ մի զրան ավել կամ պակաս, Յարսի նահանգը բացի այլ Հարկերից պետք է առ 725 խարզար բրինձ, Թեհրանի շրքանը՝ 75 խարզար գարման, իսկ Աստրարադի նահանգը՝ մեկ ման մետաքս³։

Մոսթոֆիների գործունեության մասին հիշարժան տեղեկություններ կան նաև այլ աղբյուրներում։ Նրանք վկայում են, որ նահանգներում քարգողարի պաշտոնից հետո ամենակարեղոր և ազգեցիկ պաշտոնը մոսթոֆինն էր։ Մոսթոֆիի պաշտոնի կարնորությունը բխում էր նրանից, որ միայն նրանք էին զերծանում եկամուտի հաշիվները։ Այդ հաշիվները զրվում էին հատուկ թվերով, որը կոչվում էր սիխազ։ Դա ինքնին դժվա-

1 Նույն տեղում, էջ 245—7.

2 أحدى مدن الاقتصاد الكشاورزى ج اول ص 111

3 В. Берар, Персия и персидская смута, 1912, стр. 266.

բին ու բարդ հաշվարկում էր, որը միայն կատարում էին գործին լավառեզյակ մոսթոֆիները: Իհարկե այդ սիստեմը ուներ իր սառավելությունները, որոնք մեծ հնարավորություններ էին ստեղծում տարրեր կեղծիքների ու խարդախությունների համար: Եյթը նկարագրում է այսպիսի մի գեղարք: մի նահանգապետ պաշտօնից հեռացվում է: Այս ստուգում է կատարվում նրա հաշիվներում, պարզվում է, որ նա 80,000 թուման պարտը է պետությանը: Բայց պաշտօնագուրք նահանգապետը դիմում է մի ուրիշ մոսթոփիի, որը հաշիվները ստուգելուց հետո դուրս է բերում, որ ընդհակառակը պետությունն է նրան 40,000 թուման պարտը: Մա ցույց է տալիս, թե ինչպիսի բառու էր աիրում այդ գործում և ինչպես պետությունն ու պաշտոնյաները հնմթակա էին մոսթոփիների քառանուուցին¹:

Մոսթոփիները երրեծն կազմում և հսկում էին մի քանի շրջանների դաշինարները: Բացի կճնարունում թեակվող մոսթոփիներից, նահանգներում և շրջաններում էլ կային մոսթոփիներ:

Հարկերի գործով զրազվում էին նաև ավելի գործը պաշտոնյաներ, որոնք կոչվում էին սփիշցարց: Նրանք հաճախ նըշշանակվում էին շրջանների գեհկավարների կողմից, բայց պատահում էին նաև զննպեր, երբ նրանք անմիջականորեն պատասխանատու էին կճնարունին և վեզիրի առջն, որը հսկում էր Ֆիենանեների ողջ գործը²:

Ցուրաքանչյուր նահանգի ելումուտի ընդհանուր ցանկը, կամ սգամթուր ոլ ամալը կազմվում էր նոր տարուց առաջ, ստորագրվում էր Մոսթոփի ոլ Մամալիքի ու մեծ վեզիրի և հաստատվում շահի կողմից:

Մահալների դեհկավարները մեծ մասամբ շէին միշամում պետական հարկերի գանձման գործին, որը բնակչությունից անմիջականորեն հավաքվում էր նահանգապետի պաշտոնյաների և ոչափարների միջոցով³:

¹ C. E. Yate, *Khurasan and Sistan*, London, 1900, p. 44.

² مجيد يكتاشي تاريخ دارالشی اخوان تهران ۱۹۷۰ ص ۲۸

³ П. Н. Аверьянов, Отчет о поездке по Северному Азербайджану... в конце 1899 года, Тифлис, 1900, стр. 8.

Չեարած նախագես սահմանվում էր, թե յաւրաքանչլուր շըր-
շանից, մինչև բակ գուղղից, ի՞նչ գումար պետք է ոտացվի, բայց
նահանգապետները սովորաբար հարկի ենթակա վայրը անուր-
դով առանձին մարզկանց էին հանձնարարում, ավելիացնելով
նաև իրենց անձնական եկամուտները։ Այդ վարձակալն էլ, քաղ-
խուղաների հետ լիզու դանելով, իրեն եկամուտն էր հարկերի
գումարի վրա ավելացնում և բաժանում գյուղերի միջև։ Բայց
հաճախ գյուղացիները հարկանների ստոնձություններից
փրկվելու համար իրենցից պահանջվող գումարից մի թիվ էլ
ավելին վճարում էին կալվածատիրոջ՝ պետությանը փոխան-
ցելու համար¹։

XIX դարի կեսերին, Նասր էդ Դին շահի թագավորության
տասնին տարիններին, մեծ վեղիր էր Միրզա Թաղի խան Ամբր
Քարիրը, որը Իրանի պատմության մեջ հայտնի էր որպես մեծ
ոհիքրմատուր Իրանական բազմաթիվ հեղինակներ առանձին
ուսումնասիրություններ են նվիրել Ամբր Քարիրի կյանքին ու
դորժունեալիքանը։ Ամբր Քարիրի ոհիքրմաների հարցի վերլու-
ծությունը մեր այս թեմայից զուրս է, սակայն ուզում ենք ան-
դրադառնալ երկրի հարկային սիստեմի կամ հողային հարա-
յերությունների ընագավառում նրա կիրառած միջոցառում-
ներին, որոնք ոչ այնքան իրենց հետանեներով, որքան իրենց
նկարագրական կողմով կարող են օգտակար լինել երկրում իշ-
խող զրության մասին ընդհանուր պատկերացում ունենալու
համար։

Ամբր Քարիրը ձեռնարկում է երկրի ֆինանսների կարգա-
վորման գործությունը նա, ուսումնասիրելով ելումուտի գաֆթարը և
պարզելով, որ ծախսերը մոտ մեկ միլիոն թումանով գերա-
զանցում են եկամուտներին, որոշում է անցկացնել հետևյալ
միջոցառումները։ Նախ փոխում է եկամուտների հավաքման
գոյությունը ունեցող ձևը, չեղյալ համարում որոշ Հիմնավոր-
ված հարկեր և սահմանում որոշ նոր հարկեր։ Այդ գործը կար-
գավորելիս նա աշխատում է հնարավորին լափ ելնել իրերի
իշխող վիճակից։ Այնուհետև նա կրնատում է մի շարք անտե-

զի և անիմաստ ծախսեր, պահանջնում պալատականների, արքայագունդների, պալատական բանաստեղծների և մինչևիսկ իրեն շահի մեծ գումարներ կազմող ռուսիկները։ Այդ նպատակին հասնելու համար նա նախ և առաջ հենց իր, այսինքն մեծ վեզիրի ռուսիկը պահանջնում է տարեկան երկու հազար թումանով։ Տարիների ընթացքում պետական միջոցների պահապահի հատկաներով որոշ պաշտոնյաների ռուսիկների դիմաց մուրհակներ էին տրվել, որը նույնպես ֆինանսական մի թնջուկ էր և կարգավորվում է նրա միջոցով։ Նա հաջարում է տարրեր մուրհակներն ու պարտաթղթերը և պետական մուրհակների և ընդհանրապես փաստաթղթերի արժեքը պատշաճ մակարդակի վրա գետում։ Ամիր Թարիրը շատ լավ ըստում էր, որ երկրի զարգացման համար անհրաժեշտ է ավելացնել արտահանումները, իսկ գործից բերվող ներմուծումների քանակը հեարագորին լավ պահանջնել, այսինքն ունենալ ակտիվ առևտուր, որի հետևանքով երկրում կավելանար ուսկին ու օտար վայրուտան և երկիրը կհարստանար։ Այդ նպատակով էլ նա ձեռնամուխ է լինում որոշ արհեստանոցների կառուցմանը, որպեսզի ներքին պահանջները հեարագոր լինեն հոգաչ սեփական արտադրանքով և նվազեցնել արտասահմանյան ապրանքների կարիքը։ Այդ գործը նա սկսում է հնեց պալատից և մեծամեծներից, որոնց սուբյեկտ է օգտագործել տեղական ապրանքների Այս միջոցառումը այնպիսի ծավալ է ընդունում, որ մինչևիսկ բնակչության մեջ մրցակցություն է ստեղծվում ռատարերկրյա ապրանքների օգտագործումից խուսափելու համար։

Ամիր Թարիրը որոշ աշխատանքներ է ծավալում նաև գյուղատնտեսության բնագավառում։ Մազանդարանում և Խուզիստանում ընդարձակում է շաքարի եղեգնի մշակումը։ Այդ գործին անհրաժեշտ զարգացում տալու համար նա քաջալերում է այդ մշակությով զբաղվող գյուղացիներին, որոշ դիպլոմատ մինչևիսկ ազատում երանց պետական հարկերից։ Այսպիսով համեմատարար կարծ մամկետում Մազանդարանի և Խուզիստանի շաքարը իր տեղն է գտնում երկրին շու-

կայում, հատկապես, որ նա վաճառվում էր ավելի էժան զեռվ, և նպաստում էր արտասահմանքան շաքարի ներմուծման շեշտակի նվազմանը։ Ամիր Քարիբի հանձնարարությամբ Խորասանում ակնվում է զաաֆարանի և մի շարք այլ համեմունքների մշակումը, որը կրնառում է համեմունքների ներմուծումը ուստար երկրներից¹։

Այս ամենը ցույց է տալիս, որ Իրանի առաջավոր գործիշները ահսնում էին երկրի ֆինանսներում, հատկապես Հարկային օխտեմում գոյություն ունեցող արատները և ուղիներ էին որոնում զբանց վերացնելու համար։ Սակայն այդ ժամանակ իշխող պայմաններում նման փորձերը ու քանթերը ապարդյուն էին։

Այսուամենայնիվ XIX դարի երկրորդ կեսին Իրանի սոցիալ-անտեսական կյանքում տեղի ունեցած տեղաշարժերը ոչ միայն համապատասխան փոփոխություններ մտցրին հողագործության բնագավառում, այլև իրենց արտացոլումը զան Հարկային սիստեմի մեջ։ Տիգրանովը, ուսումնասիրելով այդ երևույթները, նշում է, որ XIX դարի սկզբներին անցկացված հողային կադաստրից հետո նոր կադաստր չեր անցկացվել և Հարկային սիստեմի հիմքում ընկած էին նախորդ կադաստրի տվյալները։ Դա իր որոշակի դերը ունեցավ երկրի ֆինանսներում, ինչպես նաև հողատիրության և ընդհանրապես երկրի կառավարման գործում՝ խոշոր և զգոր մուլտարաների ազդեցության ուժեղացման տևակիրակցք։

Պետության և մուլտարաների միջև առկա հարկային իրավահարաբերությունները կամ Հարկերի բաշխումը փոփոխության էր ննթարկվում, կազմած արտաքին առևտորի անի, հողատիրական դասակարգի ձևափոխման և կամ խոշոր և զորեղ մուլտարաների հողերում բնակչության թվի աճի հետ, միան, որը տեղի էր ունենում վարչական մարմինների հետա-

حسین مکی زندگانی میرزا تقی خان امیر کبیر تهران ۱۹۰۶ :

828 - ۹۶-۹۷

2. Л. Ф. Тиранов, Из общественно-экономических отношений в Персии, СПб, 1909, стр. 28.

պղնդումից գյուղացիների ազատվելու և խոշոր մուլժագար-
ների մոռ Հովանավորություն գունելու հետևեցով և վերջա-
պես մուլժագարների կողմից Հովի լիակատար մոնուպուլիդա-
ցիայի հետ Միանգամայն բնական է, որ այդ կալվածքներում
մուլժագարների եկամուռները գերազանցում էին պետության
եկամուռներին, այն էլ որոշ գեղքերում տանելյակ անգամներ¹:

Երկրի ֆինանսական և քաղաքական սնանելությունը իրեն
զգացնել ովեց 60-ական կամ 70-ական թվականներին, երբ
վերը նշված փոփոխություններին ազելացավ նաև դրամի ար-
ժեքազրկումը, որի հետևեցով և իշավ դանձված հարկերի
ընդհանուր արժենքը²:

Հառկանալի է, որ կառավարությունը հեշտությամբ չէր
կարող հաշվի ստեղծված դրության հետ նա դիմում է որոշ
միջացների, երկրի տարբեր մասեր են ուղարկվում կառավա-
րական հասուն հանձնաժողովներ, որոնք փորձում են հոգա-
յին նոր գրանցումներ անցկացնել, սահմանել տասնորդի և
դրամային հարկերի նոր շափեր, թեական է, որ խոշոր մուլ-
ժագարները պիտի դիմադրեին այս միջոցառումներին: Նրանք
ոչ միայն թույլ լավեցին ավելացնել իրենց կալվածքներից
գանձվող հարկերը, այլ մինչև իսկ ճգտեցին պահպանել դրանք՝
պատճեառ բանելով: Որ սրոշ պյուղեր քայլայի ին և ամայացի: Բայց
կառավարությունը հասավ այն բանին, որ տեղական
մարմիններին իրավունք վերապահեց հարկերը հավաքնու-
ժամանակ շափել բնիքը, հարկման ենթակա այլ պարագանե-
րը և բատ այնմ էլ հարկ զանձել³:

Ֆինանսական ծանր վիճակից գուրս գալու այլ եղանակ
չգտնելով, կառավարությունը դիմում է օտարերկրյա պարտ-
րերի, հատկապես, երբ սրոշ նահանջներ ստեղծում էին կեղծ
գեֆիցիաներ: Օրինակ, ինչպես որդեն եշել ենք, Աստրապատա-
կանը տարեկան 500.000 դրան դեֆիցիտ էր ունենում: Կառու-

1 Նույն տեղում, էջ 22:

2 Նույն տեղում, էջ 20:

3 Նույն տեղում, էջ 20—21:

վարությունը, լավատեղյակ լինելով, թե ուր են գնում այդ փողերը, չեր փակում զեֆիցիար, իսկ թագաժառանգն էլ, որ Ալեքսանդրականի նահանգապետն էր, առանձնապետն չեր պլըզում, գուշ մնալով, որ ազատվել է այդ գումարի վճարումից¹.

Համբառնը նշում է, որ պայտադի շվայց կյանքի, երկրի զեկավարման և բանակի պահպանման համար գրամական մեծ գումարի կարիքը հատկապն զգայի է գառնում կաշարական դինաստիայի վերջին շրջանում։ Սրկրի հարստության հիմնական աղբյուրը, ինչպես առաջ, մեռմ էր Հոգը և նրա արտադրանքը, բայց ահա այդ բնագավառում առաջացած փոփոխությունները նվազեցնում են պետության եկամուտները².

Որոշ գմբարություն էր բխում էր այն հանգամանեքից, որ հարկերի սահմանման եղանակները և նրանց կիրառումը առարենքում էին երկրի տարրեր մասնություն։ Կային շրջաններ, որունք գերծանրարենված էին հարկերով, իսկ որոշ շրջաններ, ընդհակառակը՝ թերթեռնված էին նասր էդ Դին շահի թագավորության վերջին շրջանում մի շաբթ միջնադարումներ են անցկացվում երկրի հարկային գործը միասնական դարձնելու, հարկերը ավելացնելու և հավաքված հարկերը պետական գունդարանը մուտքելու գործը ապահովելու ուղղությամբ։ Օրինակ, կառավարությունը 1885—86 թթ. հարկերի գանձման բնագավառում բարենորդագումների նախագիծ է հրապարակում, որը նախատեսում էր նոր կադաստրի հիման վրա հարկերի հավաքման նոր սիստեմ մատցնել, ըստ որում հարկային նոր կադաստր կազմվել էր այն ունեցվածքային փոփոխությունների համաձայն, որոնք տեղի էին ունեցել իրանական գյուղում, 1885—86 թթ. այս զեկրեսից հինելով՝ բարեփոխումների խորհուրդը կամ Շնորհայի թանդիմաթթք ընդարձակ բարեփոխումների նախագիծ է ներկայացնում։ Այդ զեկրեսից փորձում էր նահանգապետներին ֆինանսական պատասխանատվությունը սահմանել։ Ըստ նախագծի առաջին Հոգվածի՝ յուրաքանչյուր տարբա առաջին ամիսների ընթացքում նահանգապետները

¹ Խոյք տեղում, էջ 33—34.

² A. K. S. Lambton, Landlord and Peasant in Persia, pp. 151—152.

պետք է նահանգի կծնորունում ժողովները զումարեին զյուղերի բաղկուցաների և սիշածիդների մասնակցությամբ և ըստ մոսթոֆիների գրանցումների և նահանգային բարեփոխումների, անդական խորհուրդների առաջարկությունների պետք է որոշեին յուրաքանչյուր գյուղի Հարկը: Այդ գրանցումների պատճեն պետք է արվել Համապատասխան պյուղի բաղկառուգային: Հարկերի Հավաքման գործը դրվում էր բաղկառուգային վրա, որոնք պարտավոր էին կանոնավոր կերպով, ըստ ամիսների պետությանը զնարկել Հավաքած Հարկերը: Եթե բաղկառուգաները բարեխղճորեն կատարեին իրենց այդ պարտականությունը, Հարկահաններին արգելվում էր մտնել ավագ գյուղը¹:

Այսուհետև 1883—90 թվականներին որոշվում է ֆինանսների մինիստրության Հակողությամբ Հողային նոր Հաշվառում անցկացնել: Ըստ այս նոր Հաշվառման Հողերը բաժանվում են մի շարք կատեգորիաների և Հարկերը սահմանվում են 10.000 քառակուսի դարի արտադրանքի Հիման վրա: Հողային այդ կատեգորիաներն էին. 1. թագավորական Հողեր (սամլած սալթանաթիւ), որոնք բազկացած էին զններից, այդիներից, գործարաններից, պահանջաներից, անտառներից և այլն: 2. Համայնքական սեփականություն Հանդիսացող Հողեր, որոնք կոչվում էին սամլած ըմբռմիւ:

Դրանց մեջ չին մտնում մզկիթների, թեթևեների, շիրիմների, ջրամբարների և նման այլ Հողերը. 3. Այսպիս կոչված խեկան կալվածքներ, դրանց մեջ էին մտնում բազնիքները, քարվանսարանները, խանութները, ջրազացները և այն Հողամասները, որոնք գտնվում էին որևէ մեկի ժամանակավոր սեփականության ներքո: 4. Հողային մասնավոր սեփականություններ որոնց մեջ մտնում էին մշակելի Հողերը, այդիները և այլն:

Որոշ միշոցառումներ են կիրառվում նաև տարրեր կալվածքների պիճակում առաջացած փոփոխությունները դրանց հետո: Համար, Ըստ նոր գեկրեակի յուրաքանչյուր 18 տղամար-

¹ A. K. S. Lambton, Landlord and Peasant in Persia, p. 167.

զուց մի մարդ ամեն տարի պետք է վերցվեր զինվորական ծառայության. դա, ի՞նչորպէս, վերաբերում էր մուսուլմաններին, իսկ ոչ մուսուլմանները պետք է յուրաքանչյուր 180 տղամարդ գու համար զնարեին 150 թուժանել¹.

* * *

Ինչպիս ասվեց, Հարկերը գանձվում էին ըստ նահանգների: Սրբ նահանգապետը, առաջին գումարը վճարելով, գնում էր իր պաշտոնը, ապա նրան շահի միջն համաձայնություն էր կայացվում նահանգի Հարկերի շափի վերաբերյալ, որը իր արտահայտությունն էր գտնում նահանգի ընդհանուր մասյանում: Այս համաձայնապիրը իր էությամբ շատ պարզ էր. այն բազկացած էր շորս կետից: Առաջին կետը վերաբերում էր արդին ընդունված հարկերին, որոնց սահմանվել էին ուսարթիներ առաջ և կրում էին ընդհանուր մասյաթ անունը. այս Հարկերի գանձումը շահը հանձնում էր նահանգապետներին: Սրկրորդ կետը վերաբերում էր այն ժախսերին, որոնց պատասխանատվությունը նահանգապետը վերցնում էր իր վրա. այդ ժախսերը բաժանվում էին երկու կատեգորիայի՝ նյութական գծով ժախսեր և ոռնիկների ժախսեր, իսկ վերշինս էլ բաժանվում էր երկու մասի՝ քաղաքացիական աստիճանների թոշակներ և զինվորական ոռնիկները: Սրրորդ կետը վերաբերում էր ժախսերը հանելուց հետո մեացած գումարին, որը նահանգապետը պարտավորվում էր ուղարկել շահին²: Սրրորդ կետի համաձայն շահին ուղարկվող գումարը կազմում էր մոտ 20 միլիոն դրամ: Աղյուսները վկայում են, որ նահանգապետները, նրանց տեղակալները և այլ պաշտոնյաներ գանձում էին ոչ պակաս, քան հինգ անգամ ավելին, որի մի մասն էլ որպես նվիր գնում

¹ A. K. S. Lambton, Landlord and Peasant in Persia, p. 168.

² Սախսերը զույգ զալուց հետո Հարկերի մեացած գումարը պետք է ուղարկվիր պետական գումարում: Բայց իրականում ուղարկվում էր միայն պաշտոնյան կամացիւրը ժամանակ ուսմանված գումարը, իսկ մեացածը վեռած էր նահանգապետների պահանջությանը:

П. Н. Аверьянов, Отчет о поездке по Северному Азербайджану... в конце 1899 года, Тифлис, 1900, стр. II.

էր շահեն: Պետք է հեթաղողնել, որ թռչակառուները և այլ պաշտոնյաներ նույնպիս հինգ անգամ ավելի էին ստանում: Դրան պետք է ավելացնել առևվազն 15 անգամ ավելի մեծ գումար, որ ստանում էին մոշինհիդները արդարադատության մոլլաները՝ հոգևոր ժառայությունների համար և առևտրականները՝ առևտրից և վաշխառություններց: Բերարը հազրողինվ այս տվյալները՝ ավելացնում է, որ այդ հաշիվները իր ներկայությամբ կատարել էին ռեֆորմատորական կուսակցության զնկավարեները: Այդ գումարը հասնում էր մինչև 300 միլիոն ֆրանկի, որը յուրաքանչյուր տարի քամուում էր ռայալից: Նրեք հարյուր միլիոն ֆրանկ, որից ոչ մի կոպիկ չէր ծախսվում պետության կարիքների, երկրի բարեկեցության կամ գոնեն հասարակության պաշտպանության հումար: Դրանից 50 միլիոնը ծախսվում էր պալատում, իսկ մենացածք ապահովում էր քաղաքային ապիկար բուրժուազիայի, հոգևորականության ու ֆուդալների գոյությունը¹:

Այսպիսի վկայություններ են տալիս նաև բազմաթիվ այլ հեղինակներ:

Զորբորդ կետը վերաբերում էր ցուցակների մեջ հզած այն տարբերությանը, որ կոլզում էր սթաֆավորթն ամալը: Եօւը թույլ էր տալիս նահանգապետներին զանձնելու այդ գումարները՝ իրենց անձնական ծախսների հումար:

Այսպիսով, Հարկերը գանձվում էին սահմանված դումարով առանձին նահանգներից, շրջաններից, քաղաքներից և գյուղներից: Պետությունը ստանում էր ընդհանուր զամարը, իսկ դրա հավաքումը, տեղաբաշխումը և այլ մանրամասնությունները թողնվում էին տեղական պաշտոնյաների և զեկավարների հայեցողությանը:

Ինչպիս առվեց, նահանգային գլխավոր Հարկահանները իրենց տրամադրության տակ ունեին մի մատյան, որանզ նշզած էին նահանգի ամրող եկամուտները և ծախսները: Այդպիսի մատյաններ կային նաև շրջաններում և կողման էին

¹ В. Берар, Персия и персидская смута, 1912, стр. 265—273.

«բնաթարշնես, Բայց հարկային այդ սիստեմը ուներ նաև այսպիսի մի թերություն, որ այդ թեթարչեները չեին արտացոլում իրերի իսկական վիճակը և նշտ կերպով չեին սահմանում հարկերի շափերը. շատ և շատ հարուստ թերթառատ շրջաններ և գյուղեր այլնայլ պատճառների հետևանքով ավերվել և տմայացել էին, կամ հակառակը, առաջացել էին նոր և բարգավաճ զյուղեր, և այդ ամենը իրենց արտացոլումը չեին գտնել բնիթարչեներում։ Այսպիսով՝ նախկինում հաղար բնակչություն ունեցած զյուղը, եթե այսօր ուներ ընդամենը մի քանի հարյուր շունչ, առա նա պարտավոր էր վճարել նախկին Հարկը։ Մի հանգամանք, որն ուղարկի անիրազորժելի էր և մեծ դժգոհություններ էր առաջացնում բնակչության մեջ։ Արդուզահ Մոսթոնին վկայում է, որ յնայած հարկերը սահմանվել էին որոշակի սկզբունքով, որոշվել էին Հարկային պաշտոնյաների գործողության շրջանակները, որպեսզի սանձգությունները լինեին, սակայն նահանգապետները իրենց տեղակալներից պահանջում էին ըթաֆավորի ամալը, այսինքն լրացուցիչ գումարներ, վերջիններս էլ զիմում էին բոլորքաշիներին, որոնք ընչափ էին գործադրում քաղբանակաների վրա և այլն։ Այսպիսով զյուղացու վճարած հարկը երբեմն երկու անգամ ավելին էր, քան գովթարով նախատեսված զումարը։ Որոշ աղբյուրներ նշում են, որ XX դարի սկզբին ըթաֆավորի ամալը անհամանաված ավելի էր, քան սահմանված հարկերը (մոտ 10 անգամ ավելի, քան 1836 թվականին սահմանված հարկերը)։

Հարկային սիստեմի արթափկ բնույթը պետության համար արտակարգ դժվարություններ էր ստեղծում իր եկամուտների շափք ստույզ կերպով իմանալու և երկրի բյուցին կազմելու գործում։ Բացի այդ, Հարյուրավոր Հարկահանների միջացով երկրի տարբեր ժայրամասերում բնամթերային Հարկերը Հավաքելուց հետո պետությունը պետք է կարողանար վիճակութել դրանք, ապահով տեղ կուտակեր, այնուհետև մա-

عبد الله مستوفى شرح زندقانى من ... ح ١٣٩

² *Amphora*, *frag.* *mag.*

ճառեր այն, կամ հենց բնամթերքով վճարեր առանձին ժախ-սերի դիմաց, Հենց այս վիճակից ելնելով էլ Մորգան Եռևան-ը դրել է, որ Իրանում երբեք չեղել Հարկերի այնպիսի դրա-ցում, որը լրիվ կամ մոտավոր պատկերացում տար պետա-կան եկամուտների մասին և Հենարան Հանդիսանար նրա հա-մար¹:

Այս վիճակը, իր հերթին, առաջացնում էր մեծ խառնա-շփոթություն և անարխիա: Իսկ այդ ամենից առավելագույնը տուժում էր գյուղացին:

Հարկերը գանձվում էին երբեմն հողատիրոջից, երբեմն՝ հողոր մշակողից: Այդ նույնպես կախված էր տեղի սովորու-թյուններից և ընդունված կարգից: Ծրբեմն զա կապված էր լինում նաև այն բանի հետ, թե ինչքանով էր դրանում շա-հագրգոված կալվածատերը:

Կառավարությունը իր եկամուտները բարձրացնելու հա-մար ավելացնում էր հողագործական միավոր Հանդիսացող բոնիշեներից գանձվող հարկը: Ազրյուղներում եղած փաստե-րը հիմք են տալիս նզրակացնելու, որ այդ կատարվում էր հա-ճախակի: Սթեյքը զրում է, որ Դեհիոտանում ծերութիները պատմել են իրեն, թե ինչպես մի ժամանակ բոնիշերից գանձ-վում էր 100 զրան, իսկ այժմ այդ գումարը հասել է 300 զրա-նի²: Որոշ ավալաներ կան հողատիրերից գանձվող հողային հարկերի մասին: Հողի հարկը՝ երկու զրան 10 շահի յուրա-քանչյուր հողաբաժնից, վճարում էին բոլոր հողատիրերը: Առ-այն հողային հարկն էր, որ արվամ էր շահին: Հողային հար-կի շափների մասին կան նաև այլ ավալներ: Այսպիս, հարյուր բաթման ցանկած հացահատիկից, բերքահավաքից ժամանակ պետությանն էր Հանձնվում 40 բաթման հացահատիկ, 50 բաթման դարման և հինգ զրան զրամ³: Գյուղացիներից գանձ-վող հարկերը որոշ գեպքերում նախապես տալիս էին կալվա-

1 W. Morgan Shuster, *The Strangling of Persia*, p. 244.

2 E. Stock, *Six Months in Persia*, vol. II, p. 263.

3 J. Bassett, *Persia, The Land of the Imams*, p. 177.

4 П. Овородников, *Очерки Персии*, СПб, 1878, стр. 210.

ժատերերը, որոնք հետո իրենց հերթին գանձում էին գյուղացիներից։ Այդ հարկերը կազմում էին հարյուր շնչին մինչև ութսում թուման։ Բայց այդ հարյուր շունչը կալվածատիրուց տալիս էր 100 թուման դրամ և 150 փութ հացահատիկ, որը կազմում էր մոտ 4 հազար ոռութ թղթադրամով¹։

Այս գումարի շափերը նույնպես երկրի բոլոր մասերում հավասար չէին։ Նայած տեղի առանձնահատկություններին՝ այն լինում էր ազելի կամ պակաս։

Սրբեմն կալվածատերերը պարտավոր էին որոշակի գումար վճարել տեղական հարժեներին, մի գումար, որը տարիների ընթացքում կերպարանափոխվել և վերածվել էր լեգալ հարկի։ Օրինակ՝ որմէ գյուղի հարկը նշանակվում էր 500 թուման և 50 թուման էլ ժառայությունների համար, որը կոչվում էր «ինեղմաթանե»։ Տարիների ընթացքում այս երկու պահանջները միացվել էին և դարձել 550 թուման՝ որպես հողային հարկ։ Բայց դրան նորից ավելացվում էր 55 թուման, որպես 10 տոկոս ժիհղմաթանե անվան տակ²։

Այն փաստը, որ կալվածատերերը գյուղացիներից գանձվող հարկերը իրենց էին վճարում պետությանը և հետո գյուղացիներից գանձում կրկնակի լափով, որոշ հեղինակների մոտ շփոթություն է ստեղծել, որ իր հարկերը տալիս էին միայն կալվածատերերը, ինչ գյուղացիները պատճառ էին դրանից։ Մակայն, ինչպես կտեսնենք թիւ հետո առանձին նահանգներում գանձվող հարկերի մասին խոսելիս, որոշ գիւղերում կալվածատերերը գյուղացու փոխարեն հարկերը վճարելով այնուհետեւ նրանից գանձում էին ավելին, քան ավել էին պետությանը։

Ֆիլատովը, ուսումնասիրելով իրանական գյուղացու վիշտակը, անդրագառնում է նաև այն հարցին, թե ինչպես կալվածատերերը բացի թերթի իրենց բաժնից, պետական հարկերի անվան տակ թալանում էին գյուղացիներին։ Նրանք հար-

¹ Н. Березин, Путешествие по Северной Персии, Казань, 1852, стр. 236.

² E. Stack, Six Months in Persia, vol. II, p. 256.

կերի անվան տակ վերցնում էին բերքի 20 տոկոսը, մինչդեռ պետությանը տրամադրությանը էին ընդամենը երեք տոկոսը։ Դա բացատրվում է նրանով, որ մալիաթի մասին օրենքը կազմվել էր 50 տարի առաջ, բայց գրանից հատու կալվածքների հկամուռները ավելացել էին, իսկ կալվածատերերը պետությանը տալիս էին նախկին շտուրով։ Այսուհետև Ֆիլատովը հանդում է այսպիսի եղանակացության։ ուղարկած այսպիսի ժամանակության այսպիսի թշվառ պատկերից և հողային այսպիսի ժամանակության հարկերից հարց է ծագում, թե ինչո՞ւ է ապրում զյուղացին, որտեղից նրա մոտ այդ թումանները, որ անխնդորեն նրանից քամում են նահանգապետներն ու նրանց գործակալները։

Սուլբադարները զիմում էին տարբեր միջոցների, որուն զի պետական պաշտոնյանները և հարկածանները իրենց կալվածքները մուտք չփորձեն, սովորաբար հարուստ մուլտադարները տարեկան 100—200 ռուբլու շափ փեշքաշներ էին տալիս նահանգապետներին և այդպիսով իրենց կալվածքները պատում վարչական մարմինների միջամտությունից։ Պատահում էին նաև դեպքեր, երբ հողատերերը իրենց հողերի պետական հարկերի թիւովը վերցնում էին, որպեսզի վերջնականապես ազատվեն հարկածաններից։ Դրա բացասական հետևանքը լինում էր այն, որ երբ պաշտոնյանները կորցնում էին նորանոր եկամուռների այդ ազրուրուր, ապա իրենց ամբողջ ուշագրությունը ուղղում էին դեպի ավելի թույլ մուլտադարների կալվածքները։ Գյուղացիական տնտեսությունները և խալիս հողերը Այդ կալվածքների և հողերի հաշվին նրանք պետք է լրացնեին այն բացը, որ առաջանում էր խոշոր կալվածատերերի հողերից ստացվող եկամուռների կորսարից¹։ Այդ մասին է վկայում նաև Բերյոզինը. մի շաբթ զյուղեր Բրանում մեծ արտոնություններ էին վայելում, իհարկե, ոչ որևէ արտակարգ իրավունքի պատճառով, այլ միայն նրա համար, որ եր-

1. П. Филатов, Письма из Персии, Одесса, 1909, стр. 109—110.

2. Л. Ф. Твердиков. Из общественно-экономических отношений в Персии, СПб., 1909, стр. 20.

շանկություն ունեին պատկանելու ինչ-որ գործղ կալվածատիրոց։ Այդ զյուղներում Հաճախ ի զորու շեին անգամ նահանգապատկաների հրամանները Թերյոզինը գրում է, որ Թավրիզից թե՛րան մանապարհորդելիս էք կարողացել մի զյուղում իրեվանել միայն այն պատճառով, որ գա պատկանում էր շահի ֆարաշքաշուն կամ ժառայապետին, Հետեաբար Առողջատականի նահանգապետի գրավոր հրամանը կամ ռուադամը այդանի ոչ մի ուժ չուներ Արգամինի զյուղերը Հողային, Հարկն էլ ին պակաս վճարում։ Բայց քանի որ նահանգը պարապվոր էր մարդկան որոշակի դումուր, ուստի այդ գյուղերի թերագանձումը պարտադրվում էր մյուս գյուղերին նթե պատահեր, որ որմէ զյուղի թեակը թյուն զինվորների կամ պաշտոնյաների մեջումներից ստիպված լրեր գյուղը, ապա նրա Հարկը անմիշապիս բաշխվում էր մյուս գյուղերի վրա։ Նրանք, ովքեր կարողանում էին, կաշառքով աղատվում էին այդ լրացուցիչ Հարկերից։ Թերյոզինը, նկարագրելով այս ամենը, Հանգում է այն նպակացության, որ նրանում շարժե ունենալ Հողային ինչ-որ սեփականություն, քանի որ գա միայն շարիթի ազգյուր կարուց է զուռնալ¹։

Հարկադրման լափերը և եղանակները տարրեր էին երկրի տարրեր մտսերում։ արբարի Հողերից որոշ վայրերում Հարկեր էին վերցվում Հետմարալ ձևով, եթե Հողերը ոռոգվում էին զանաթեներից՝ Հարկը կազմում էր տաս տոկոս, եթե ոռոգվում էին զետից՝ Հարկը կազմում էր 20 տոկոս, իսկ եթե ոռոգվեին և դանաթից և զետից, ապա Հարկը կազմում էր 15 տոկոս։ Որոշ կալվածքներից Հարկ էր գտնենալում ըստ մշակվող Հողերի տարածության, օրինակ, Գիլանում ըրնձի, ծխախոտի, շաքարի նզեգնի ցանքսերի յուրաքանչյուր շարիթից տարեկան 15 դրան էին Հարկ վերցվում²։

Հարկերը ընդհանրապես գտնենալում էին Հետեալ կերպ։ Ինքը ավագարի ժամանակ պաշտօնյան գնում էր գյուղ, բեր-

¹ Н. Березин, Путешествие по Северной Персии, Казань, 1852, стр. 239.

² مرتضى حسينى تهرانى أصول علم صالح .. ص ۷۷

թից 10 տոկոս վերցնում բնամթերքով և կուսակում պետական պահանջաներում, դա վերաբերում էր հացահատիկի ցանքարերին: Միախոտի, ափիոնի, բամբակի, շաբարի նակեղեղի, ինչպես նաև բանջարեղենի թերթից նույնպես վերցվում էր 10 տոկոս, բայց կանխիկ դրամով:

Երբեմն զժվար էր որոշել ավալ պյուղից դանձվող Հարկի ստույգ գումարը, բանի որ հաճախ գյուղերը նկատի էին առնըգում իրենց շրջակա պյուղերի կամ բոլուքների հետ միասին, որոնց թիվը կամ ընդգրկած տարածությունը հաւախ անսրոշ էր: Եթե դրան էլ ավելացնենք այն, որ խոշոր կալվածատերերը Հարկման ենթակա արտօնադրանքը ամեն եղանակով ավելի պակաս էին ներկայացնում և դրա հետևանքով անհամեմատ փորբ Հարկեր վճարում¹, ապա պարզ կդառնա մանր կալվածատերերի, Հողատերերի և գյուղացիների ժանր վիճակը, որոնք պետք է ընդհանուր գումարի պակասորդի բնոր իրենց վրա վերցնեին:

Ինչ վերաբերում է պետական խալիսի հողերից դանձվող Հարկերին, ապա փաստերը ցույց են տալիս, որ խալիսն զյուղերը ավելի ժանր Հարկեր էին տալիս, բան արդարի գյուղերը: Արբարը կամ Հողատերը ֆնչ որ զիմազդությունն կարող էր ցույց տալ Հարկահաններին, բայց խալիսն հողերում աշխատող գյուղացին բացարձակապես անզոր էր: Անհամեմատ ավելի ժանր էին գյուղացիներին պատկանող գյուղերից դանձվող Հարկերը: օրինակ, Եփրազի Հովտում գտնվող Դեհենո գյուղը վճարում էր տարեկան 400 թուման Հարկ: Նույնքան էր վճարում նաև Ֆաթեհարագ գյուղը Թավարի Հովտում, մինչդեռ ինքը Քավարը, որը ավելի մեծ գյուղ էր, բան նշված երկուուր, վճարում էր ընդհամենը 120 թուման կանխիկ և 40 խարվար Հացահատիկ՝ խարվարը հինգ թումանով Հաշված: Ջավարան գյուղը վճարում էր ընդհամենը 100 թուման, մինչդեռ նա անհամեմատ մեծ էր: բան Դեհենո գյուղը²: Եվ դա այն պատճա-

1 Խուճ տեղում, էջ 183:

2 E. Stack, Six Months in Persia, vol. II, p. 256.

ոռվէ, որ այդ թիշ վնարող գյուղերը պատկանում էին խոշոր կալվածատերների:

Անհրաժեշտ է կանգ առնել նաև այսպիսի մի երկույթի վրա. բոշվոր ցեղերի այն համագածերը, որոնք նստակյաց էին դառնում և հողագործությամբ զբաղվում, համենայն դեպք տարբերվում էին սովորական գյուղերից: Այդ գյուղերում յուրաքանչյուր ընտանիք ստանում էր մի հողամաս, որը նա մշակում էր և ստացած արդյունքն էլ ինքը տնօրինում: Արոտագայրերն էլ համարվում էին համայնքի սեփականությունը, միայն թե ամեն տարի նրանք վերաբաշխումում էին: Խևլ վերաբերում է պետական հարկերին, ապա հողային հարկեր այդ գյուղերից չէին պահպանում, այլ առաջվա պես հարկեր էին գանձվում ամրող ցեղերից: Այն փառուց, որ պետությունը գերազանում էր առաջվա պես գործ ունենալ ամրող ցեղի հետ, ինքնին բավական հնատաքրքիր երկույթ է: Մակայն ակնհայտ է, որ գա չէր կարող նպաստել բաշվոր ցեղերի նստակեցությանը, մի պրոցես, որը ընդհանրապես շատ դանդաղ էր տեղի ունենում և շարումակվում է գոյություն ունենալ մինչև ՀՀ գործի կեսերը:

Մի շարք շրջանների նկատմամբ կիրառվում էր հարկային հետեւալ քաղաքականությունը. սահմանամերձ այն շրջանները, որոնք մշտական հարձակման էին ենթակա հարեան ծրինների բաշվոր ցեղերի կողմից, ազատվում էին պետական հարկերից. օրինակ՝ Աստրաբազդի շրջանի գյուղացիները ազատված էին Մայիսաթից, բանի որ նրանք պանվում էին թուրքմենական ցեղերի հարկանություն մեջ և հաճախ հարձակման ու թալանի էին ենթարկվում նրանց կողմից¹: Հողային հարկերից ազատված էին նաև զինվորական ծառայության դիմաց տրված պետական հողերը²:

¹ Г. Казм, Персидские земли, Красноводск, 1914, стр. 99.

² М. Л. Томара, Экономическое положение Персии, стр. 77.

Մենք արդեն նշեցինք, որ Հարկերի շափնքի և նրանց գոհածման եղանակների հարցում երկրում միատեսակություն չկար, ուստի երկրի մասին ամբողջական տպավորություն ստանալու համար անհրաժեշտ էնք համարում կռնդ առնել այդ ասպարեզում առանձին նահանգներում և շրջաններում տիրող դրության վրա:

Թերմանի նահանգը և իրանական թլուքիստանը յուրաքանչյուր տարի պետական զանկարան էին մուծում 290,000 թուման հարկ, որից 220,000 թումանը կանխիկ, իսկ մեացածքը՝ թնամթերքով (ցորեն, գարի և դարման), թացի վերտնիշյալ գումարից ամեն տարի զանձվում էր նաև 6,000 թումանի թնամթերք՝ տեղական վարչական մարդիների կարիքների համար: Այս հարկերը սկզբում այսքան մեծ չէին, որոնք առաջնանարար անել էին և բավական ժանր անդրադարձում էին ունենում թնակլության անտեսական վիճակի վրա: Դա կարելի էր պարզորեն նկատել հարկերի այն անից, որ տեղի էր ունեցել մի քանի տասնյակ տարիների ընթացքում: Այսպես, 1810 թվականին Թերմանը վճարում էր տարեկան 100,000 թուման հարկ, իսկ 60 տարի հետո հարկերը բարձրացել և հասել էին մինչև մոտ 300 հազար թումանի: Դարձներշին այդ գումարը համարյա նույն լուսով պահպանվում էր, չնայած որ անբերի և սովոր տարիները կրկնվում էին անընդհատ, նահանգի թնակլության ընդհանուր անտեսական վիճակի վրա խիստ բացասարար է անդրադառնում նաև Թլուքիստանական միացումը Թերմանի նահանգին: այս միացումից նահանգի թնակլությունը աճում է մոտ երկու անգամ, մինչդեռ հարկերը ավելանում են մոտ երեք անգամ: Նասր էդ Դոլիի նահանգապետության տարիներին նահանգում համարած լրավորություն էր իշխում, հատկապես, որ նա սարսափնի ազահ, փառասեր, շվայտ կյանք վարող մեկը լինելով՝ նահանգի հասարակության թերզունը հա-

¹ К. А. Баумгартен, Поездка по Восточной Персии в 1894 году, СПб, 1896, стр. 192.

զորդում է, որ երբ 1871 թ. Մոքրանի սահմանային հանձնաւողովի անդամները Թերժանում էին գոռնօղում, ապա նահանդի Հարկը կազմում էր 310,000 թուման կամ 124,000 ստերլինգ, իսկ 1888—89 թթ. այդ Հարկը իրանական թուրքիստանի հետ կազմում էր Համարյանույն գումարը¹:

Թերժանում տիրող դրության, Հարկահանության միջնադրյան ձևերին, բռնությունների ու կեղծքումների մասին արձեքավոր Նյութեր են թերզած Թերժանում գործող գաղտնի կազմակերպության մի բանաձևում, որը 1823 (1905) թ. ուղարկվել էր կենտրոնական կառավարության անդամներին և թերթերի խմբագրություններին: Այդ բանաձևում, որ տպագրովել է Կայսերաթայում լույս տեսնող «Հարլ ոլ մաթին» թերթում, ասված է, թե ինչպես մեկ թուման էշի Հարկը լվճարելու համար գյուղացուն կապում են ծափին և մարակում², թե ինչպես գյուղացին իր աղջկան կես թումանի կամ մեկ թումանի դիմաց ստիպված է տալ պաշտոնյային, կամ ազդիկ երեխաներին ինչպես են պաշտոնյաները զաղանարար խլում ծնողներից և տանելով առար երկներ, վանառում կենդանիների նժամներ:

Բանաձևում ասված է, որ խեղճ ույյաթի արյուն քրտինքով ստեղծված արդյունքը և նրա զավակների գինը կուտակվում է մայրաքաղաքում՝ Թերժանում, որտեղ մի զիշերում մի ամբողջ պալատ որևէ պարունու է նվիր տրվում կամ մյ ծախսվում մեծամեծների կամ նրանց կանանց գեղի նվազական կատարությունների համար³,

¹ G. N. CURZON, Persia and the Persian Question, vol. II, p. 245.

² Խազեմ ու Խազմ Թերժանում գրում է, որ էշի Հարկը զաւեցած լր երանցից, ովքեր մի էշ կամ մի կոմ ունեին: Դա կազ լուսներ զիյանարկի հետ, ուստի մի հոգուց կարող էին երեք Հարկ պահանջել՝ լուսից, անսառելից և իրենից որպես զիյանարկի:

³ ظالم الاملاع كرماتي تاريخ بيداري ايرانيان مجدد اول تهران

من ۱۳۴۴

3 Խոսք տեղում:

Առա այսպիսին էր Թերմանում ակրող դրությունը:

Նույնպիսի ծանր վիճակ էր տիրում Թերմանի նահանգի մեջ մասն Բլուզիստանում: Բլուզիստանի ողջ բնակչությանը ենթակա էր Հարկերի, ասկայն որոշ ցեղեր հրաժարվում էին դրանք վճարել, մինչև կոնկակ ապստամբվում էին: Փաստերը ցույց են տալիս, որ Հարկան Հնդկաստանում գերիշխող անդիմացիները օպաազործում էին այդ Հանգամաները և Հաճախ ազգեցություն ձեռք բերելու նպատակով Հովանավորում խաներին և զինված ուժերով ձևշում ազատամք ցնդերին: XX դարի սկզբներին Բլուզիստանից գահձվող Հարկերը արդեն հասնում էին մինչև մեկ միլիոն ոռուրու¹:

Իրանի խոշոր նահանգներից էր Խորասանը: Դարասկզբին՝ Յաթէ Ալի շահի թագավորության տարիներին Խորասանից գուհձվում էր տարեկան 200.000 թուման դրամ և 50.000 խարզար Հացահատիկ: 1875 թվականին այդ գումարը արգեն Հասել էր 240.000 թումանի և 45.000 խարզար Հացահատիկի, իսկ 1889 թվականին՝ արգեն դարձել էր 539.000 թուման կանինիկ, 43.000 խարզար Հացահատիկ ու 13.600 խարզար դարման: Այս ընդհանուր գումարից շահը ստանում էր 87.200 թուման կանինիկ և 9.200 թումանի Հացահատիկ: Մեացածը գնում էր բանակի, վարչական ապարատի, թոշակենրի և այլ ծախսերի Համար²:

Խորասանում, ինչպես վերը ասվել է, կային մեծ թվով վակֆային կալվածքներ, որոնք պատկանում էին Խման Ռնդացի սրբավայրին և ազատված էին պետական Հարկերից:

Նախկինում պետության կողմից սահմանված Հացահատիկի գինը անհամեմատ ցածր էր շուկայական գինից, որին ակ, Խորասանում Հացահատիկի շուկայական գինը խարզարին 50 դրամ էր, մինչդեռ պետությանը հանձնվող Հացահատիկի գիմաց տրվում էր խարզարին 25 դրամ: Բնական է, որ մեացածը ամրոցվին անցնում էր նահանգապետին³:

¹ В. Колокольников. Очерки Афганистана, Белуджистана и Персии, М., 1907, стр. 49.

² G. N. Curzon, Persia and the Persian Question, vol. I, p. 181.

³ C. E. Yate, Khorasan and Sistan, p. 83.

Խորասանի նահանգի մեջ էր մտնում Ղուզանի շրջանը, որը յուրաքանչյուր տարի պիտօքան գանձարան էր մուժում 35.916 թուման դրամ, 8428 խարզար ցորեն և 1355 խարզար դարման։ Ակղբնազբյուրների տվյալները ցույց են տալիս, որ Մոզաֆար էդ Դին շահն օրոք Ղուզանի թնակլությունը բողոքեց լրացրցից Հարկեր գանձելու կապակցությամբ պաշտոնյաների դաժան վերաբերմունքի գնեմ։ Դրա հետևանքը նզավ այն, որ կառավարությունը հատուկ հանձնաժողով ուղարկեց Ղուզան Հարկերի ստուգման և նրանց գանձման գործը կարգավորելու համար։ Տվյալներ կան այն ժամանքն, որ սահմանված 26.000 թումանի փոխարեն Հարկահանները փաստորեն գանձում էին 150 հազար թուման²,

Մարզիկարի շրջանը, որը նույնպես մտնում էր Խորասանի նահանգի մեջ, վճարում էր տարեկան 40.000 թուման, 5000 խարզար ցորեն և 2.300 խարզար դարման³, Քայինաթի շրջանը՝ 50.000 թուման դրամ և 15.000 թումանի հացահատիկ⁴,

Ցաղդի նահանգը 1870 թվականին վճարում էր 100.000 թուման, բայց 1888 թվականին կառավարությունը այն բարձրացրեց մինչև 250.000 թումանի, որի մեջ չեղ մտնում մաքսերից ստացվող 47.000 թումանը⁵,

Թարասից գանձվող ընդհանուր գումարը կազմում էր տարեկան 30.000 թուման, որը բաշխվում էր նրա մեջ մտնող շրջանների վրա՝ հետևյալ լափերով. Գումարագի և թումի շըրշանները տալիս էին յուրաքանչյուրը 10.000 թուման, իսկ Թարասը և Թիգիսանը՝ յուրաքանչյուրը 5000 թուման,⁶ Սիսթանը

¹ ۱۸۷۰ تهران کشاورزی تاریخ ایران

² Озрановский, Военно-статистическое описание Северо-восточной части Хорасана, «Сборник Материалов по Азии», 1896, вып. XVIII, стр. 78.

³ К. А. Бадміяրտен, Поездка по Восточной Персии в 1894 году, СПб., 1896, стр. 49.

⁴ Նոյն տեղում, էջ 241.

⁵ G. N. CURZON, Persia and the Persian Question, vol. II, p. 242.

⁶ C. E. YATE, Khurasan and Sistan, p. 58.

զմարում էր 30,000 թուման դրամ և 15,000 թումանի հացահատիկ։ Սյթը, որը անզիհական հյուպատոս է եղել Սիսթանում և շրջադարձություններ է կատարել այնտեղ, արժեքավոր տվյալներ է տալիս նահանգից գանձվող հարկերի շափերի և ձեզերի մասին։

Սիսթանում արտադրվող հացահատիկի մոտ կեսը սպառվում էր երկրի ներսում, իսկ մյուս կեսը, այսինքն՝ մոտ 50,000 սուզտի բեռ հացահատիկ, արտահանվում էր երկրից։ Այդ տարիներին Սիսթանից գանձվող հարկերի մեծ մասը դեռևս բնամթերքով էր և կաղմում էր տարեկան 24,000 խարվար հացահատիկ, որից 6850 խարվարը հատկացվում էր տեղական պաշտոնյաների և զորքերի կարիքների համար։ Նահանգապետ Հեջամաթ ու Մոլքը եկամտի մնացած մասը հանձնում էր պետությանը, բայց միայն դրամով՝ խարվարը յոթը զրանի հաշվով, որը կազմում էր 12,000 թուման։ Նա պարտավոր էր այդ դրամարը հանձնել անկախ տվյալ տարվա բերքի արգյուսքից։ Հացահատիկի այդ գինը, այսինքն՝ խարվարը յոթը դրանով հաշվելը, բավականին ցածր գին էր և ցույց է տալիս, թե հարկի ընդհանուր գումարը սահմանելու ժամանակ ինչքան էժան է եղել հացահատիկը Սիսթանում։ Խակ հետագարում, երբ զները շոշափելի շափով բարձրացել էին, ապա նահանգապետը շարունակում էր վճարել նախկին գներով և ստացվող նշանակալից տարբերությունը յուրացնում էր¹.

Սիսթանի հարկերի մասին թիւ այլ տվյալներ է հազարդում Թերզոնց։ Նա նշում է, որ 1889 թվականին Սիսթանը տալիս էր 26,000 թուման կանխիկ և 24,000 խարվար հացահատիկ²։

Սիսթանը որոշ նահանգների բազմատմամբ ուներ որոշ առանձանահատկություններ և բնորոշ չէր կարող համարվել ամբողջ երկրի համար։ Սիսթանում մասնավոր հոգատերներ չկային, ամբողջ հողը և շուրջը պատկանում էր պետությանը, որը վերցնում էր արտադրանքի մեկ երրորդը։ Հետեարար, եթե

¹ C. E. Yate, Khorasan and Sistan, p. 83.

² G. N. Carzon, Persia and the Persian Question, vol. I, p. 200.

դանձվում էր 24,000 խարվար, ապա դա նշանակում էր, որ
ամբողջ թերթը պիտք է կազմեր 72,000 խարվար: Թայց իրա-
կանում ընդհանուր թերթը կազմում էր 85,000 խարվար: Տար-
բրդությունը պատկանում էր մոտ 500 սիրթանցի հեծելազո-
րայիններին, որոնք ոռնիկ չէին սուանում և Հարկ էլ չէին վճա-
րում, բայց յուրաքանչյուրը ուներ մշակելի հողամաս: Այդ Հո-
գոմաներից ամեն մեկը տարեկան մոտ 18 խարվար թերթ էր
առաջին:

Սիսթանի գլուղացիները մշական պարտի մեջ էին
անանատիրերին, որոնցից բանող տավար էին վարձում, և
քաղաքուղաներին, որոնցից ավանով հացահատիկ էին վերց-
նում: ԱՄիսթանի բնակչությունը, — գնահատում է Սիսթանի
գլուղացիների վիճակը. Եյթը — ընդհանուր առմամբ ծայրաշեղ
աստիճանի աղքատության մեջ էր: Ծա լիմ կարծում երբնից
ավելի թշվառ մասսա տեսած լինեմաւ:

Որոշ տվյալներ կան նաև հուղիսանի արարարնակ շըր-
շաններից գանձվող Հարկերի մասին: Արարեները վճարում էին
յուրաքանչյուր խիշ հողից երկու թուման կամ ավելին: Ոռոգ-
վագ հողերը սահմանված Հարկեր շունեին, նրանցից գանձում
էին առաջիկագույն շափով: Այդ շրջաններից գանձվագ կանո-
նավոր Հարկը 13,000 թուման էր, իսկ արտակարգ Հարկը
1,500 թուման: Այս գումարները գլուղացիների հնարավորու-
թյուններից ավելին էին, որի հետևանքով և գլուղացիները
մասսայարար քայլայլում էին: Բացի այդ Հարկերից նրանցից
պահանջում էին բազմաթիվ այլ տուրքեր, ինչպես օրինակ՝
տարիանեղիս (տնազլուխ) տուրքը, որը նայած ընտանիքնե-
րի թվաքանակին կազմում էր յուրաքանչյուր անից 5—10 թու-
ման: Այդ շրջաններում, հատկապես Շամաց Հորժողում նախ-
կինում կային մեծ թվով պաղատռ այգիներ, բայց առա
1851—82 թթ., ինչպես նկատել է Նաշմ օլ Մութը իր այցելու-
թյան ժամանակ, մնացել էր միայն մեկ այգի: Նա այդ քայ-

¹ C. E. Yate, Khorasan and Sistan, p. 84.

² նույն տեղում:

բայցումը իրավագիրութեն վերադրում է հարկածանների մնշում-ներին։ Նաշմ ոլ Մոլը նույն միտքն է արտահայտում 1882—83 թթ. մի այլ զեկուցագրութեա, ասելով որ Ռամ Հորմոզի քայլայումը հարկածանների մնշումների և նահանգապապետների հաճախակի փոփոխման արդյունքն էր¹։

Աղբյուրները վկայում են, որ արար շնչիսերը որոշակի հարկեր էին գանձում թերթից Օրինակ թենձի հարկը կազմում էր թերթի կեսը, ըստ որում պետությանը հասանելիք բաժնորդը պատկանում էր շեյխին, իսկ եթե նա լիներ միաժամանակ և սեյխը (Մոհամեդի շառավիղներից), ապա կստանար կեար Ռուգվող հողերից պետությունը գանձում էր թերթի մեկ երրորդը, որի մեկ երրորդն էլ կազմում էր շեյխի բաժինը²։ Անշորոջի հողերից պետությունը գանձում էր մեկ հինգերորդը կամ մեկ չորրորդը, որից շեյխի բաժինը նույնպես կազմում էր մեկ հինգերորդը կամ մեկ չորրորդը։ Եթիները իրավունք չունեին որևէ այլ հարկ գանձել, բայց դա, ի՞նչարկե, միայն տեսականութեն էր այդպես։

Հավիգի շրջանից հավաքած հարկի կեար մոլա Մոթալիլը վճարում էր պետությանը, իսկ մյուս կեսը պահում իրեն։ Նու հացանատիկը մի քանի տարի թողնում էր զյուղացիների մոտ, մինչև որ զնիքը բարձրանալին նաշմ ոլ Մոլը իր սՊաֆար-նամեյք Արարիստան գրում նշում է, որ 1881—82 թվականներին կատարված գաղտնի հետաքննություններից պարզվել է, որ արարարնակ վայրերի գյուղացիները տառապում էին տրար շեյխերի անարդարություններից, որոնք հարկ էին հավաքում աւարեկան հինգ կտում վեց անգամ։ Ֆալահիյենամ արար շեյխերի կորպումների հետևանքով մեծապես պակասել էր իկամատի հիմնական աղբյուր հանդիսացող արմավիք ժառանգի թիվը։ Այդ շրջանում շեյխերը յուրաքանչյուր իրշ հողից գանձում էին երեք թուման հարկ³։

1 A. K. S. Lambton, Landlord and Peasant in Persia, p. 171.

2 Նույն տեղում, էլ 159.

3 Նույն տեղում։

4 Նույն տեղում։

Հետարքիր ազյակներ կան Հորեստանում կիրառվող Հարկեր և տուրքերի գունձան շափերի և եղանակների մասին։ Սանսթացումը այդ Հարկերին գողափար է տալիս ընդհանրապես իրանում իշխող Հարկային և ֆինանսական սիստեմի մասին։

Այսպէս. Հորեստանի յուրաքանչյուր շրջան կամ ենթաշրջան պետք է վճարեր տարեկան 25—50 զրան՝ շահի, այսպես կոչված, դեպի նվրուպա կատարած առաջին ճամփորդության օրադրի Համար։ Այս Հարկը մացվել էր 1873 թվականին, որը, ինչպես ասվել է ուսպատակ ուներ հպատակներին տեղյակ պահել իրենց տիրակալի Հպորության հետ, իսկ շահին ժանութացնել իր հպատակների գրամտական աղբյուրներին։

Դոյություն ուներ նաև այսպիսի Հարկ. ինչ-որ մի ժամանակ Բորուշերդից անցնելիս շահի սիրված ձին սատկում է, շրջանը, պատաժանաւուու Համարվելով այդ տգծրախառնությանը Համար՝ տուգանվում է։ Այս տուգանքը հնտագայում առարիներ շարունակ գանձվում էր աեղական զեկավարների կողմից։ Դոյությանը հորդելու մեթոդ էր նաև այն, երբ որոշ ընտիր արդուագայրեր օգուազորժման Համար Հատկացվում էին կոռավարությանը, իսկ հետո որոշակի Հարկի դիմաց նորից վերադարձվում էին իսկական տերերին¹։

Հարկահանեների դաժան թալանի ապացույց կարող է հանդիսանալ և այն փաստը, որ Դարագաղի խանությունում սահմանված վեց Հազար թումանի Հարկի փոխարեն պաշտոնյաները գանձում էին 20,000 թուման², նույնը կարելի է ասել Թերգնուուզի, Մաալումի և Մասալի շրջանների մասին։ Առաջինում հինգ Հազար թումանի փոխարեն գանձվում էր 24 Հազար թուման, երկրորդում 1500 թումանի փոխարեն՝ 5000 թուման, իսկ երրորդում 750 թումանի փոխարեն՝ 2000 թուման³.

¹ G. N. Carzon, Persia and the Persian Question, vol. II, p. 473.

² Охрановский, Военно-статистические описания Северо-восточной части Хорасана, «Сборник материалов по Азии», 1896, вып. XVIII, стр. 78.

³ Н. А. Зиновьев. Статистические сведения о провинциях Гилян и Шахруд-Бастам, СПб, 1887, стр. 6—9.

Այսպիսի վիճակ էր տիրում Հարավային և արևելյան
Իրանի բոլոր նահանգներում։

Հատուկ ուսումնասիրման արժանի է Հյուսիսային և Հյուսիս-
արևմտյան նահանգների Հարկային սիստեմը։

Առաջատականի նահանգը բաժանված էր մի շարք շրջ-
շանների, որոնցից յուրաքանչյուրը հանձնված էր առանձին
Հարկահանի։ Այդ շրջաններն էլ բաժանված էին հեթամասերի,
որոնք նույնպես տրված էին առանձին Հարկային դրդակա-
տարների։ Սրանք էլ իրենց հերթին Հարկերի Հավաքման գոր-
ծը հանձնարարում էին գյուղապետներին կամ քաղխուղակե-
րին։ Այսպիսով, Թավրիզի գլխավոր Հարկահանին հանձնա-
րարվում էր աստիճան սահմանված գումարով գրամային և
ընամթերային Հարկեր Հազարքել և գնել կենտրոնական կառա-
վարության տրամադրության տակ։ Այդ հանձնարարությունը
կատարվում էր կառավարության կողմից առանց Հաշվի առ-
նելու այդ Հարկերի աղյուրները կամ նրանց գանձման հղա-
նակները, շափերը՝ ըստ առանձին շրջանների և այլն։ Կառա-
վարությունը ճանաչում էր միայն Թավրիզի գլխավոր Հարկա-
հանին և նրան պատասխանատու Համարում պահանջված գու-
մարը ժամանակին և սահմանված շափով վճարելու գործում։
Գլխավոր Հարկահանը իր հերթին գիտեր, թե շրջանների Հար-
կահանները ինչպիսի գումար պետք է վճարեին, նրան չե-
տաքրքրում, թե ինչ աղյուրներից նրանք պետք է զանձերին
անհրաժեշտ գումարները¹։

Առաջատականը նրանի գյուղատնտեսության գլխավոր
նահանգն էր։ Հարկերը այստեղ գանձվում էին և հողից և նրա
արտադրանքից։ Բայց որոշ գեղքերում հարկը սահմանվում էր
վար ու ցանքի համար օգտագործվող տավարի թվի Համա-
ձայն, կամ հիմք էր ընդունվում հողն ու առվարը միասին՝
ավելացրած գլխահարկն ու անասնահարկը²։

XIX գարի վերջներին Առաջատականում գանձվում էին 17

¹ W. M. Shuster, *The Strangling of Persia*, p. 245.

² G. N. Curzon, *Persia and the Persian Question*, vol II, p. 471.

մշտական հարկներ և 19-ժամանակավոր, պատահական հարկներ:

Արխիվներում պահպանված է ցարական Ռուսաստանի թիշբանի ներկայացուցչի մի զեկուցագիրը, որը շատ արժեքավոր նյութեր է պարունակում հարկների գանձման գործում Ալեքսանդրականում անցկացված որոշ միջոցառումների մասին: 1871 թ. հունիսի 18-ի այդ զեկուցագրում նշված է, որ իրանական կառավարությունը թիշբանում վարչական բարեգործումների մի նախագիծ է մշակել, որը սկզբում՝ պետք է դորժագրվի Ալեքսանդրականում: Նախագծի համաձայն բարձրացվում էին գրամային և բնամթերային հարկները, թիուլային սևփականությունները դրվում էին պետության հսկողության ներքո և փոխվում էին զրուաշավաքի սկզբունքը:

Բնամթերքով վճարվող հարկները, որոնք առանց այդ էլ շատ ժանր էին, նոր նախագծով էլ ավելի ժանր դարձան, հատկապես երր մատցվեց կշռի նոր սիստեմ: Կառավարությունը զինապարտների հավաքման մինչ այդ գոյություն ունեցող սկզբունքը փոխարինեց յուրաքանչյուր գյուղի համար սահմանված հարկների շափերի համապատասխան զինվորներ տրամադրելու սկզբունքով: Կառավարությունը այս նոր օրենքին կցեց մի բարդ կանոնադրություն, որը իշխանությունների համար չարաշահումների լայն հնարավորություններ էր ստեղծում:

Այս նոր միջոցառումները դիպլոմ էին Ալեքսանդրականի բնակչության բալոր խավերի շահերին, ժողովրդի այդ լժոգությունը իր արտահայտությունը գտավ բողոքի մի դիմումի մեջ, որը բազմաթիվ ստորագրություններով ներկայացվեց Ալեքսանդրականի նահանգապետ-թագաժառանգին:

Դիմումի բովանդակությունը հետևյալն էր.

1. Զինակոչների վերաբերյալ նոր կանոնադրությունը անհրաժեշտի է և ոչ ոք գրան չի ենթարկվի: Ղաշարների զինաստիքի հաստատումից մինչև այսօր երբեք զինակոչերը կապված չեն եղել հարկերի հետ, չեն եղել պարտադիր վճարումներ զինվորների համար և ոչ էլ այլ բնույթի պարտավորություն-

Ներ: Զինվորական ժառայությունը միշտ էլ կամավոր է եղել, ի չարն օգտագործելով նոր կանոնադրությունը՝ մեկ տարվա ընթացքում զինվորական իշխանությունները մողովողից ավելի քան 100 հազար բուման փող են զանանել և նրան կործանման առաջ կանգնեցրել:

2. Կառավարությունը ժառագիր է Առրապատականի գրամով և բնամթերքով գանձվող հարկերը ավելացնել մեկ տասներորդով: Ժողովուրդը գտնվում է կործանման եղրին և ի միանուն չէ այս նոր հարկի բեռք կրել:

3. Կառավարիչներն ու պաշտոնյաները եկամուտներ ձեռք բերելու նպատակով միջամտում են զյուղերի և թիուլների ներքին գործերին, որը մեծ խառնաչփորմություն է ստեղծում զյուղացիների կյանքում: Մենք խնդրում ենք, որ զերականգնությի նախկին պրակտիկան և գյուղերի և թիուլների սեփականատերերը անձամբ կառավարությանը վճարեն հասանելիք հարկերը՝ առանց պաշտոնյաների միշտամության¹:

Նկատի առնելով Թավրիզի բնակչության թշնամական վերաբերմունքը այդ նախագծի նկատմամբ և գրության լուրջ սրումը, թագածառանցը խոհեմարար այդ հարցի վերջնական լուծումը թողեց շահին:

1871 թ. Հուլիսի 2-ի մի այլ զեկուցագրում արդեն հաջորդվում է, որ իրանական կառավարությունը շնորհայ է համարել նոր օրենքները, որոնց կենսագործումը հանդիպի է Առրապատականի ժողովուրդի ընդհանուր դիմագրությանը: Այդ օրենքները գործադրելու հանձնարարություն ուներ Մոշիր էղ Դոլին, բայց զբանց շեզյալ հայտարարելուց հետո շահը այդ միջոցառումների ձախողման պատասխանատվությունը վերաբերեց ուրիշի: Տարածված էր այն կարծիքը, որ այդ միջոցառումների նախաձեռնողը եղել էր Նեզամ օլ Մոլիքը, որը հուսով էր զբանով մոտ 40,000 բուման լրացուցիչ եկամուտ ձեռք բերել²:

1. АВПР. Главный Архив. V Аз. д. 19, л. 81—87.

2. Խայր անդամ, л. 95.

Աստրապատականի նահանգի ամբողջ հարկը 1888—89 թվականներին, ըստ որոշ ազդյուրների, կազմում էր 786.142 թուման կանխիկ դրամ և 60062 խարվար հացահատիկ։ Ամբողջ գումարը դրամի վերածած կազմում էր 2 686 666 թուման¹. Անգլիական Հյուպատոսների ղեկուցադրերում թերվում էն նաև այսպիսի մանրամասնություններ. ամբողջ մալիաթը, այսինքն հողային հարկը, խալիս հողերի եկամուտները, անասնահարկը և առևտորի հարկը կազմել է 750 000 թուման։ Բացի այդ՝ բնամթերքով զանձվել է 15200 խարվար հացահատիկ, 7000 խարվար դարման, մաքսերից ստացվել է 271 000 թուման, իսկ անձնագրերից 20 000 թուման եկամուտ².

Կորսունը գրում է, որ նահանգապատեների և այլ պաշտոնյաների թալանը Աստրապատականում այնպիսի շափների էր հասել, որ նահանգը տարնկան 50 000 թուման պակսորդ էր ունենաւ։ Մինչևիսկ հետագաժ դաֆթարների համաձայն նրա եկամուտները պետք է կազմեին 860 000 թուման կանխիկ, 52 000 խարվար հացահատիկ, 20 000 բաթման բրինձ և 600 000 բաթման դարման, Այդ գումարներից բանակի համար ծախավում էր 300 000 թուման, զարարական դիմաստիայի անգամների ապրուստի ապահովման համար 250 000 թուման, իսկ մնացածը՝ թոշակների և այլ նպատակների համար³.

Այսպիսով, Իրանի ամենաեկամատարեր նահանգներից մեկը համարվող Աստրապատականը գոյություն ունեցող հարկային սիստեմի և պետական ապարատի նեխվածության շնորհիվ տիտեական աննախանձելի վիճակում էր։ Տեղական իշխանությունների և պաշտոնյաների թալանն ու ուսնձգությունները այնպիսի շափների էին հասել, որ բնակչությունը կանգնել էր կործանման եզրին։

Այդ պատկերը ավելի պարզ կդառնա, եթե ժանոթանանը Աստրապատականի նահանգի առանձին շրջանների վիճակին։

¹ G. N. Carson. Persia and the Persian Question, vol. I, p. 517.

² Խոյի անգամ։

³ Կօրսոն. Военный обзор персидского передового театра, Тифлис, 1909, стр. 95.

Նամինի խանությունում պետական հարկեր էին հավաք-
վում 7000 թուման դրամով։ Այս խանության միայն երեք ժա-
շալիքից բնամթերքով գանձվում էր 800 խարզար հացածա-
տիկ, որի 2/3-ը ցորեն էր և 1/3-ը գարի։ Արդարիլի շրջանում
Խառնակյաց գյուղացիներից գանձվում էր 27 հազար թուման
դրամ և 3 200 խարզար հացածատիկ։ Քուվոր շահսեւաններից
Խախառեսզում էր գանձել 15 000 թուման։ Բայց խանը գան-
ձում էր սովորաբար երկու անգամ ավելին։ Այդ թվերը գա-
րավերչին արդեն փոխվել էին։ 1900 թվականին Արդարիլի
գավառը, որը ուներ 300 000 բնակչություն, արդեն տալիս էր
40 000 թուման դրամ և 3,200 խարզար հացածատիկ, մինչ-
դեռ 1875 թվականին նրա հարկը եղել էր 30,000 թուման դրամ և
5750 խարզար բնամթերք, որը կազմում էր բերքի մոտ մեկ
հինգերորդ մասը։ Այս գումարներից տեղական ծախսների հա-
մար հատկացվում էր 3000 թուման դրամ և 450 խարզար հա-
ցածատիկ։ Այսու աղբյուրներ, Արդարիլից գանձվող այլևայլ
հարկերը գումարելով, գայիս են այն հզրակացության, որ Ար-
դարիլի գավառը տալիս էր ոչ պակաս քան 47,000 թուման
դրամային հարկ և 5750 խարզար հացածատիկ։ Այդ գումարից
տեղական մարմինները պարտավոր էին 18,000 թուման ու-
ղարկել թավորից, այն էլ երեք նվազով, յուրաքանչյուր անգամ
6000 թումանն։ Արդարիլի հարկերի մասին շատ ավելի մեծ
թվեր են ցույց տրվել Շարլ օլ Լաբինի թերթում։ Թերթը
գրում էր, որ 1900 թվականին Արդարիլի հարկերը կազմում
էին 70,000 թուման կանխիկ, բայց բնակչությունից գանձվում

1. Л. К. Арутаманов, Северный Азербайджан, Тифлис, 1890, стр. 25.

2. Նույն տեղում, էջ 28.

3. П. Н. Аверьянов, Отчет о поездке по Северному Азербайджану... в конце 1899 года, Тифлис, 1900, стр. 2.

4. И. Оганесян, Провинции Персии, Ардабильская и Серабская, 1875, стр. 38—39.

5. Նույն տեղում.

էր 185,000 թուման¹, Այս թվերը ըստ նրեուլիքին որոշ չափով չտիտղանցված են:

Արդարինի և Սարարի գավառների հարկերի հավաքը կատարվում էր հետեւյալ կերպ: Հարկերի ընդհանուր գումարը սահմանվում էր նաև բազարային և գյուղական բնակչությունից, ինչպես և բռնկոր ցեղերից զանձվող հարկերի չափը: Թավրիդից ուղարկվում էին մեկ կամ երկու հարկերի համարական, որոնք տեղական իշխանությունների հետ միասին ձեռնամուխ էին լինում հարկերի զանձման գործին՝ ըստ նախապես կազմված ցուցակների²:

Բացի պետական հարկերից և բերքի կալվածատիրական բաժից Ատրպատականի նահանգի Արդարինի և Սարարի գավառների գյուղացիները պարտավոր էին յուրաքանչյուր ժխից տալ երեք հավ, երկու թեռ ցախ, հինգ թեռ քակոր, երեք ֆունտ յուղ, երեք ֆունտ ոլխարի պանիք, 50 կուպեկից մինչև մեկ ռուբլի գրամ, երկու թեռ դարման, տասը կապ խոտ, հինգ համի ձու, 1—3 թեռ միրգ և ամեն մի ժխից տարեկան երեք օր բեղարություններ:

Ինչպես տեսնում ենք, դրությունը մխիթարական չէր և Արդարինի գավառում: Ուստի պատահական չէր, որ այսուհետից ամեն տարի մեծ թվով գյուղացիներ հեռանում զնում էին Կովկաս և այլուր՝ ապրուստի միջոցներ հայթայթելու համար:

Ատրպատականի նահանգում է զանձում Ղարաղաղի գավառը: Պետությունը այստեղից գանձում էր տարեկան 40.000 թուման դրամ և 3000 խարզար հացահատիկ³: Ըստ ուրիշ աղբյուրների ավագաների պետությունը նախկինում սահմանված դումարների չափով Ղարաղաղից պետք է գանձեր 34.000 թուման հարկ և 4.000 խարզար հացահատիկ, որը առանձնա-

¹ 19.. جولای 16.. المتنين

² Ա. Օքրամօսն, Պրօնացք Պերսկ, Արձակուլսկայ և Սերաբսկայ, 1875, стр. 29.

³ Խութ անգում, էջ 39.

⁴ Լ. Կ. Արդամանօս, Հայոց Ազերբայջան, Թիֆլիս, 1890, стр. 30.

պես ծանր շէր լինի, քանի որ գավառը ուներ ավելի քան 150,000 բնակչություն։ Սակայն գյուղացիները շգիտեին վճարվելիք հարկերի ստույգ շափերը, ուստի նրանցից վերցնում էին ինչ-քան կարողանում էին։ Բայց որոշ զյուղերում աշդրանով էլ չէին բավարարվում և գյուղացուց վերցնում էին իրեն ձեռք բերած ամրող արտադրանքը, որից հետո երան մնում էր կամ ոռվա-մահ լինել, կամ փախչել որևէ այլ տեղ, մի երեսով, որ այդ տարիներին լայն ծավալ էր ընդունել։

Ղարագոյի կարասու և Աղարշայ կիրճերում գտնվող գյուղերում 1898 թվականին բնակչությունը խանին վճարում էր բերքի 2/3-ը։ Բացի այդ, նրանք նաև անպատճեների հարկա-հանեներին առին էին յուրաքանչյուր ժամից 7—8 ուրեմի։ Այդ նույն գավառի մյուս գյուղերում նահանգապետի հարկահան-եները բացի դրամից վերցնում էին նաև յուրաքանչյուր տար տուղրակ ցորենից երկու տոպրակ և յուրաքանչյուր տարը ոչ-խարից՝ մեկ ոչխար¹։

Առրաջատականի Մարանդի գավառը տարեկան պետք է վճարեր 16,000 թուման և 8,000 խարզար հացահատիկ։ Այդ գումարը կազմում էր գյուղացիների ստացած բերքի 1/5-ը որ-պես պետական հարկ, չհաշված կալվածատիրական բաժինը և բազմաթիվ այլ տուրքեր²։

Հարկային սիստեմը նույնպիսի պատկեր ուներ նաև կենտրոնական ու Հյումիսային իրանում։

Թեհրանից ոչ հեռու գտնվող Ղազվիլի գավառում XIX դարի երկրորդ կեսին կազմվել էին հարկերի ցուցակներ, որոնց մեջ ստույգ կերպով նշված էր բոլոր գյուղերի հարկերի շափը՝ գրամով և հացահատիկով։ Ըստ որում, դրայական հարկերը վճարում էին բացառապես գյուղացիները, իսկ հա-ցահատիկը՝ կեսը գյուղացին, կեսը կալվածատերը։ Այս ցու-ցակների համաձայն Ղազվիլի գավառի ներքոհիշյալ բոլոր-

¹ П. И. Аверьянов, Отчет о земледелии по Северному Азербайджану... в конце 1899 года, Тифлис, 1900, стр. 21—22.

² Նույն տեղում, էջ 22.

³ Նույն տեղում, էջ 20—21.

ները պետք է զնարկին՝ էղբալը 2342 թուման և 311 խարզար Հայանատիկ, Դաշտեարին 2207 թուման և 2473 խարվար Հայանատիկ, Աֆշարը 2032 թուման և 480 խարզար Հայանատիկ, Հարասուղը 2855 թուման և 686 խարվար Հայանատիկ, Կազազանը 3061 թուման և 528 խարզար Հայանատիկ, Ռուդրուրը 1011 թուման և 708 խարզար Հայանատիկ, Բաշարիաթը 2849 թուման և 459 խարվար Հայանատիկ, Արգարոսուղը 366 թուման և 634 խարվար Հայանատիկ, Ֆեշկալդերը 1117 թուման և 1189 խարվար Հայանատիկ, Ալամութը 1808 թուման և 210 խարվար Հայանատիկ, Զանրան 575 թուման և 872 խարվար Հայանատիկ, Գոփային 1948 թուման և 282 խարվար Հայանատիկ, Ռամենուղը 1848 թուման և 282 խարվար Հայանատիկ¹:

Այս թվերը ցույց են տալիս, որ Ղազվինի գավառի տարրեր գլուխերը եռույնուս մեծ հարկեր էին տալիս պետությանը: Թե՛րանի մոտակայքում գտնվելու հետևանքով, խոշոր կալվածատիրությունը այս գավառում ավելի շուտ էր առաջացել: Մյուս կողմից էլ՝ մի քանի կարող ճանապարհների խաշմերուկում գտնվելու պատճեռով նա համախ էր ասպառակումների ենթարկվում: Այս ամենը, անշուշտ, գլուղացու վիճակը դարձրել էին անառանելի:

Համարունը, որ իր մեծությամբ Իրանի շորորոդ քաղաքն էր Համարզում, ուներ մոտ 450 գլուխ նրա ենկամուտը կազմում էր տարեկան 60,000 թուման, որից միայն 11,000 թումանն էր վճարվում պետությանը²:

Գիշանի հարկը 70-ական թվականների վերջերին կազմում էր 335,000 թուման³, Այդ գումարը 1888—1889 թվականներին գարձել էր 345,000 թուման, որից 24,430 թուման պականցվում էր տեղական ժոխություն Համար, իսկ մասնաւոր Հանձ-

1. П. И. Аверьянов, Отчет о поездке по Северному Азербайджану... в конце 1899 года, Тифлис, 1900, стр. 25.

2. I. B. Blighop, Journeys in Persia and Kurdistan, vol. II, p. 146.

3. Н. А. Зиновьев, Статистические сведения о провинциях Гилянь и Шахруд-Бастам, 1879—1881, СПб, 1887, стр. 2.

նըզում պետությանը՝ Մազանդարանը 1888—1889 թվականին տալիս էր տարեկան 139,350 թուման կանխիկ դրամ, որից 4590 թումանը պահանջվում էր տեղական ծախսերի համար, իսկ մնացածը հանձնվում¹:

Հետաքրքիր տվյալներ կան նաև հարավային մեժ նահանգ Զարսի հարկային սիրտեմի մասին: Այսունդ ևս տեղի էին ունենաւ մեծ կամայականություններ: Այսպես, XIX դարի կեսին ցուցակագրել էին ժառքի բանակն ու նրանց տերերը: Այդ ցուցակը գտնվում էր Խաչանգապետի տրամադրության տակ և այդ ժամանակվանից հետո տեղի ունեցած փոփոխությունները իրենց արտացոլումը չէին զանել նրա մեջ: Այսունդ տարածված էր մի հարկ, որը ժամանակավոր էր և կողմում չու է չմզագիշ կամ ժամանակության հարկ, որի բանակը կախված էր բնակչության համբերատարությունից: Կամ աղբյուրները նշում են մի հարկի մասին, որը կոչվելիս է եղիլ և Առողջապահականի վրա քրգերի հարձակման հարկու: Այս հարկը մացվել էր անցյալում Առողջապահականի վրա քրգերի հարձակման ժամանակ, երբ զրամական միջոցների կարիք էր եղիլ, բայց հետազոյում նա շարունակվել է գտնվել բնակչությունից որպես ժամանակավոր հարկ: Յուրաքանչյուր շնչից գանձվող այդ հարկը նայած հանգամանքներին տարրեր էր: Մեկից կարող էին վերցնել մեկ դրամ, իսկ մյուսից մինչև 50 դրամն²:

1882 թվականին Զարսի որոշ գյուղերում հարկերը ստումանվում էին ըստ բանող տավարի կամ արսրի բանակի: Դրա դումարը տարրերվում էր 4-ից մինչև 16 թուման՝ նայուծ հոգի սրակին:

Մենք մանրամասն խոսեցինք Իրանի առանձին նահանգների, զավառների և շրջանների հարկային սիրտեմների, երրանց շափերի և զանձման եղանակների մասին: Չնայած տվյալները բազմազան են և տարատեսակ, սակայն դրանց ապացուցում են, որ երկրի ֆինանսական և հարկային սիրտեմում փշխում էր կատարյալ անարխիա: Նահանգապետները,

¹ G. N. CURZON, Persia and the Persian Question, vol. I, p. 371.

² E. STACK, Six Months in Persia, vol. II, pp. 249—250.

մոռթօֆիները և այլնայլ պաշտոնյաներ ոչ մի միջոցի առաջ կանգ չէին առնում թնակլությանը և առաջին հերթին զյուղացիությանը թալանելու գործում։ Այս ամենի հետևանքով իրանական զյուղացիությունը ապրում էր ամենաշարքաշ կյանքով և ելութական ոչ մի հնարավորություն չուներ երկրի տնտեսությունը զարգացնելու համար։

* * *

Ինչպես արդեն նշել ենք, ի անում գոյություն ուներ նաև մի հարկ, որը կուվում էր ռազմական Սուրսաթը անսպասելիութեն զանձգող հարկ էր՝ ժամանակավոր կարիքները հոգալու համար։ XIX դարի երկրորդ կեսին նա գեռնե լայն տարածում ուներ երկրում։ Այս հարկը միշտ բարզվում էր անօգնական դյուզացու վրա, որը բազմաթիվ այլ պարտականություններից բացի պարտավոր էր այդ բնոր ևս իր վրա կրել։ Դրա էությունը կայանում էր նրանում, որ եթե շահը կամ պետական բարձրաստիճան պաշտոնյաներն ու այլ պաշտոնյաներ ուղարկի անելիք գտնվել երկրի որևէ մասում, ապա այդ վայրի թնակլությունը պարտավոր էր Հոգալ նրանց և նրանց բազմամարդ շքախմբի հյուրասիրման ամբողջ ժախանքը։ Այդպիսի գեղքերում հաճախ նահանգապետներից գանձմում էր որոշակի գումար, որը նա հետագայում իրավունք ուներ զանձել թնակլությունից իր ուղած ձևով։

Այս հարկը երրեմն այլանդակ ձևեր էր ընդունում։ Օրինակ, եթե նահանգապետը հսկի շրջագայություն էր կատարում որևէ շրջանում, ապա նրա ճամփորդության կարիքները հոգալու համար թնակլությունից գանձմում էր այնքան թնամթերք, որ դրա ավելցուկները հետագայում վաճառվում էին իրենց իսկ դյուզացիներին¹։

Հասկանալի է, որ այս հարկը շատ ժանր էր դյուզացիների համար և միանգամայն իրավացիորեն ատված նրանց

¹ G. N. Carzon, Persia and the Persian Question, vol. II, p. 477.

կողմից Դա Հատկապես սարսափելի էր զորամասերի տեղաշարժերի ժամանակ:

Թանի որ խոսք եղավ բանակի մասին, ապա Համառուսակի կանգ առնենք այդ ժամանակ Իրանում ընդունված դինուրական ժառայության սկզբունքների վրա, քանի որ Իրանը սերտորեն կապված էին Հարկային սիստեմի հետ:

Չորրահավաքը Իրանում հիմնված էր նրկրամասային բաժանման վրա: Ցուրաքանչյուր մարդ արածադրում էր մեկ կամ մի քանի զորամաս, ըստ որում, մարզի կողմից արվելիք պիեվորների թիվը հիմնված էր Հողային Հարկերի քանակի վրա: և ոչ թե քանակության թիվի վրա: Խոկ Հարկերի քանակը, ինչպես արդեն նշել ենք, նույնպես չէր Համապատասխանում երկրի քանակության թվին: Հնաց այդ պատճառով էլ զորահավաքը շեր ընդողրկում ամրաց երկիրը, այլ միայն առանձին մարզեր, այն էլ անհավասար լավով: Այսպիսով, քանի որ քաղաքային քանակությանը պատճառ ապատված էղ Հողային Հարկերից, քնականարար ազատված էր նաև պինակարոտությունից¹: Այսպիսով, պինակուներ էին տալիս միայն գյուղերը, այսինքն գորահավաքի հիմնական բեռը ընկենում էր ուայաթների վրա: Նախապես ունեմանվում էր յուրաքանչյուր գյուղից Հազարվող պիեվորների թիվը: Կարգաժամանակներին առաջարկվում էր տալ սրոշակի թվով պինակուներ՝ կախված Հարկի քանակից: Թնական է, որ ինչքան շատ լիներ պետական Հարկը, այնքան շատ էլ պինակուր էր պահանջվում²: Այս սիստեմը մեծ լարաշահումների աղբյուր էր Հանդիսանում: Մի կողմից՝ մեծ կաշառքներ էին վերցվում որևէ զյուղ ընդհանրապես պինակուրական ժառայությունից աղատելու համար, մյուս կողմից՝ կաշառքներ էին վերցվում առանձին պինակուրներին զինվորական ժառայությունից ազատելու համար:

Աղբյուրները վկայում են, որ այդ ժամանակ առաջված էր այն երկույթը, որ ավազակները և քանդիսները պետական

1. А. К. Артамонов, Персия как наш противник в Закавказье, Тифлис, 1889, стр. 24.

2. П. Филатов, Письма из Персии, Одесса, 1909, стр. 111.

Հարկերից խուսափելու, ռայաթին ցանկացածի շատ թալանելու, և բանի կերպով նրանց հմեցվածքը յուրացնելու համար, դինվորագրվում էին և գննորը ձեռքին վերադառնում գլուղ¹:

1870 թվականից երկրում զրահազարի նոր կարգ է մացվում, որի համաձայն յուրաքանչյուր խորդեմայեցալին պյուղ 20 թուման հարկից մեկ զինվոր պետք է ներկայացներ. զյուղը պարագուր էր այդ զինվորին ապահովեր մաս 15 ռուբլի դրամով, 100 բաթման ցորենով, հագուստեղենով և մեկ էշով։ Սուսայության ժամկետը սահմանվում էր 20 տարի։ Եարբից դուրս եկած յուրաքանչյուր զինվորի փոխարեն համայնքը պարագուր էր տալ մեկ նորը։ Գյուղերում զինվորներին ընտրում էին վիճակահանությամբ²:

Այս բոլորը բավական ժանր պարտականություն էր գյուղացիների համար, բանի որ անկախ այն բանից կանոնավոր բանակ կազմվեր, թե՛ ոչ, զյուղացիները ստիպված էին վճարել սահմանված տուրքերը։

Քրիստոնեաները նրանում ազտակած էին զինվորական ժառայությունից, բայց փոխարենը նրանք հարկ էին վճարում պետությանը տարեկան հինգ դրանի շափով³։

Ինչպես նշեցինք, գյուղացիները պարտավոր էին տալ նաև անասնաշարկ, ծառերի հարկ և զինահարկ։ Այժմ կանգ առնենք դրանցից յուրաքանչյուրի վրա։

Անասնահարկը տարբեր շափեր ուներ երկրի տարբեր մասերում։ Աղբյուրներում նշված անասնահարկի շափերը նույնական տարբեր էին։

Յուրաքանչյուր զյուղի կամ ցեղի անասունները ամեն տարի զարնանը հաջվագում էին, ըստ որի և գանձվում էին հետեւյալ հարկերը. յուրաքանչյուր ուղարկ համար Յ դրան, կովի համար՝ մեկ դրան, ձիու համար՝ երկու դրան, էշի համար՝ մեկ

1. نظام الإسلام كرمانى تاريخ بيدارى ايرانيان تهران مجلد اول

ص ۱۴۵

2. Н. А. Ограновец, Провинции Персии, Записки КО ИРГО, 1876, т. 10, вып. 1, стр. 150.

3. G. N. Curzon, Persia and the Persian Question, vol. I, p. 547.

զրան, ոչխարի համար՝ կեռ զրան¹, Տիգրանովը տալիս է ա-նասնահարկի հետևյալ շափերը. ոչխարից և այժերից 0,5—1 զրան, էշից 1—5 զրան, կովերից և եղներից 1—7 զրան, ձիուց և ջորուց 1,5—10 զրան, զռմեշից 2—15 զրան, ուղտից 5—50 զրան².

Սիսթանում կիրառվում էին անասնահարկի հետևյալ շափերը: Այս նահանգում բացի 24,000 խարվար հացահատիկից, որը գանձվում էր որպես հարկ, գանձվում էր նաև 2600 թուման կանխիկ դրամ: Սա անասնահարկ էր, որը գանձվում էր 20 ոչխարից մեկ զրան, 100 ոչխարից երկուս ու կես զրան հաշվով: Եղներից հարկ չէր վերցվում և առարրինակն էլ այն է, որ Սիսթանում գյուղացիները եղներ չեին էլ պահում, այլ անհրաժեշտության դեպքում վարձում էին անասնատերերից կամ մալզարներից, որոնք նեյզարում մնեն թվով եղներ էին պահում հենց վարձով տալու նպատակով³:

Սա ևս բխում էր Սիսթանի առանձնահատկություններից և բնորոշ համարվել չեր կարող ամրաց երկրի համար, ուստի և Ասորպատականում վճարած անասնահարկը մեծապես տարբերվում էր Սիսթանում կիրառվող շափերից: Ասորպատականում գյուղացիները վճարում էին եղների և ձիերի համար տարեկան 60—80 կոպեկի շափեր, մեկ ոչխար հինգ կամ տասը ու-խարից, որոշ քանակի մու հավել դիմաց, մեկ արլոր հինգ ար-լորից և այլն⁴: Մի ուրիշ ազրուոր տալիս է անասնահարկի հետևյալ շափերը. երեք ոչխարից տարեկան 30 կոպեկ, էշից 30 կոպեկ, ջորուց և բնունատար ձիուց 60 կոպեկ⁵: Բասենից զրում է, որ կովից և այլ խոշոր եղչերավոր անասններից գանձվում էր 30 շահը, ոչխարից և այժից 2—4 շահի և այլն⁶:

1. К. А. Баумгартен, Поездка по Восточном Персии в 1894 году, СПб, 1896, стр. 241.

2. Л. Ф. Гиграмов, Из общественно-экономических отношений в Персии, СПб, 1909, стр. 39.

3. С. Е. Yate, Khurasan and Sistan, p. 83.

4. Максимович-Васильковский, Отчет о поездке по губернаторствам Западной Персии... Тифlis, 1903, стр. 27.

5. П. Овородников, очерки Персии, СПб, 1878, стр. 210.

6. J. Bassett, Persia, The Land of the Imams, p. 277.

Անասնահարկը կոչվում էր «մալիաթեմալ»: Մա Նույնագետ տարրեր բնույթի էր լինում: Երբեմն լինում էր Հողային հարկի լրացուցիչ մասը, իսկ երբեմն զանձվում էր ընդհանուր գումարով քաշվոր վաշկատուն ցեղերից, որոնք կամ ընդհանրապես հոգագործությամբ չէին զրադվում, կամ եթե մասամբ էլ զրադվում էին, ապա նրանց գլխավոր եկամուտը գալիս էր անասնապահությունից: Այս գեպքում էլ պետությունը հարկերը սահանում էր ընդհանուր գումարով, իսկ նրա բաշխումը և այլ մանրամասնությունները կարգավորվում էին իշխանների, խանների և այլ ղեկավարների կողմից:

Այսպիսով, անասնահարկը գալիս էր լրացնելու գյուղացիներից զանձվող առանց այն էլ ժանր հոգային հարկը:

Հարկեր չին գանձվում նաև այդիներից և ժառիրից: Այսինքն հարկերը նույնպես տարրեր են և չափեր չին ընդունում, նայած տեղի ընդունված կարգին: Սովորաբար մեկ շարիր տարածություն ունեցող այգուց գանձվում էր 10 զրան¹: Ասրպատականում շատ հաճախ հարկը զերցվում էր բերքի քանակի համաձայն՝ խարվարից 5—15 թումանի չափով: Ղազզինում և եամակյում հարկ չին վճարում բայ խաղողի ողկույզի, ուստատելում էր յուրաքանչյուր 50 ողկույզից 5 շահի մինչև յուրաքանչյուր մեկ ողկույզից և շահի չափերի միջնաւ: Այս հարկը մեծ գումար էր կազմում հատկապես խաղողագործական շրջաններում, ինչպես, օրինակ՝ Ղազզինում կամ Ռումիայում: Հետագայում այդ հարկից ստացվող գումարները ավելի եշանակալից լափերի հատան, երբ մրգի արտադրությունը նույնպես ապրանքային բնույթ կրեց:

Որպես օրինակ նշենք Ռումիայի և Խուզիստանի շրջանները: Ռումիայի շրջանի ասորաբնակ գյուղերում հիմնականում զրագվում էին խաղողագործությամբ: Նրանց արտադրանքը արգելվում էր նշանակալից լափերի հատան, երբ մրգի արտադրությունը նույնպես ապրանքային բնույթ կրեց:

1 К. А. Баумгартен, Поездка по Восточному Персии в 1894 году, СПб, 1896, стр. 24.

2 Корсун, Военный обзор Персидского передового театра, Тифлис, 1909, стр. 100.

Հոգը վարձում էին աղաներից, որի դիմաց հարկ էին տալիս թէ այգուց՝ ըստ նրա տարածության, և թէ որոշակի գումար յուրաքանչյուր թանարից օթե խաղողի այգին վարձով էր արվում մեկ տարով, ապա յուրաքանչյուր թանարից գանձվում էր 10—12 դրամ¹:

Հարավային Իրանում աճում էին մեծ թվով արմավենիներ, որոնցից զանգված հարկը շոշափելի գումար էր կազմում: Արմավենիներից վերցվող հարկն էլ տարբեր շափերի էր լինում: Օրինակ, Դարագիենում յուրաքանչյուր արմավենուց սրենքով պետք է պահանջվիր կես դրամ, բայց իրականութ զանձվում էր շատ ավելին²:

Խուղիստանի Նահանգապետ Շեյխ Խաղալը արմավենիների լայնատարած հիգամասեր ուներ: Այդ այգիների բերքի երկու հինգերորդը նա վերցնում էր որպես պետական հարկ և մեկ հինգերորդն էլ որպես կալվածատիրական բաժին: Սթելայիները իրենց չեին, ապա միայն բերքի երկու հինգերորդն էր վերցնում: Շեյխ Խաղալի գործերին մասնակից և լավատեղյակ մարդիկ վկայում են, որ նա այդ եղանակով հակայական հկամուտներ էր ձեռք բերում: Միայն արմավի վաճառքից սրոց տարիներ նա մինչև հարցուր հազար ստեղծինդ շահ էր ստանում³: Փաստեր կան նաև այն մասին թէ Շեյխ Խաղալը հարկերի հավաքման և ծառերի բերքի բաժինը սահալու դրույթ ինչպիսի դաժան միջոցների էր զիմում: Օրինակ, նրա ներկայացուցիլը, երբ զնում էր արմավի բերքի լափը զնահատելու և համապատասխանորներ հարկ նշանակելու համար, հաճախ բերքի քանակը երկու անգամ ավելին էր ցույց տալիս: Դժբախտ պյուղացին, որը մի ամբողջ տարի այգիները մշակել և խնամել էր, զրկվում էր իր արտօնդրաներից և ամբողջ բերքը հարկերի և կալվածատիրոջ բաժնի անվան տակ զնում էր շեյխի պահանջմանը⁴:

¹ J. B. Bishop, Journeys in Persia and Kurdistan, vol. II, p. 239.

² E. Stack, Six Months in Persia, vol. II, p. 248.

³ احمد کسری تاریخ پا تصد ساله خوزستان تهران ۱۳۷۷

ص ۱۷۶

⁴ Խուղիստան, էջ 177:

Զավեշտական է Հետնյալ փաստը: Թասեթը հաղորդում է,
որ յուրաքանչյուր այգեգործ պարտավոր է մի բեռ ազնի և երկու
շահի դրամ տալ այսպես կուզօմք ավյալ շրջանի ումից դաշտա-
րին (գահների): Սա, ինարկե, արդեն հեղնանք էր. դատա-
պարտայլը պարտավոր էր վարձատրել դահներն:

Իրանում, ինչպես ասացինք, զանձվում էր նաև զիխա-
հարկ: Այս հարկը XIX դարի երկրորդ կեսին որոշ փոփոխու-
թյուն ապրեց: Մի կողմից զյուղացիությունը քայլայզելով՝
աղքատացել էր և պակասել նրա մշտական հոգատարածությու-
նը, իսկ մյուս կողմից՝ առանձին վայրերում աճել էր գյուղա-
ցիական բնակչություն թիվը: Հաշվի առնելով այս հանգա-
մանքները՝ նասր էդ Դին շահի օրոք երկու անգամ բարձրաց-
վեց զիխահարկը, որի գումարը աճեց մոտ 40 տոկոսով, մինչ-
դեռ հոգատին հարկը մնում էր նախկինը:

Պիխահարկը որոշ տեղերում ուզգում կուզվում էր սարս,
զա կազմում էր յուրաքանչյուր աշխատուեակ տղամարդուց
տարեկան մեկ թուման: Թե ո՞վ էր ենթակա այդ հարկին,
որչզում էր գյուղի ավագների կողմից: Նրանք կարող էին
որևէ մեկին զնահատել որպես կես մարդ և նա պետք է վճա-
րիր զիխահարկի կեսը¹:

Պիխահարկի տարածված շահը կազմում էր 1,5—3 և 5
զրան: Բայց աղբյուրները տալիս են նաև տարբեր թվեր: Օրի-
նակ, որոշ վայրերում զիխահարկ էր զանձվում յուրաքանչյուր
տղամարդուց 4 զրան, իսկ կանանցից և երեխաներից 2.25
զրան: Այլ ամյալները զիխայում են, որ ամուսնացած գյուղա-
ցիները զիխահարկ են վեցարում 1—1,5 թուման, իսկ ամու-
սները և աշխատունակ 12—15 տարեկանները՝ 0,5—1 թու-
ման:²

Երբզուք զբում է, որ Պուլանի խանի հետ ունեցած հան-
դիպման ժամանակ նա ի վիճակի լի եղել պատասխանելու այն

¹ J. Bassett, Persia, The Land of the Imams, p. 277.

² Խոշիք անդամ, էջ 277.

مِرْقَضِي حُسَيْنِي تَهْرَانِي اصْوَلْ عَلَمْ مَالِيَّه ... مِنْ ١٢٥

⁴ Корсун, Военный обзор Персидского передового театра, Тиф-
лис, 1909, стр. 98.

՝արցին, թե ինքը ինչքան հպատակներ ունի, քանի որ մարդահամար երբեք չէր անցկացվել։ Բայց նա ասել է մի շափազանցված թիվ, որ իրր իր իշխանության ներքո ապրում է 40,000 ընտանիք, որոնցից յուրաքանչյուրը վճարում է մեկ թուման գլխահարկ¹։

ԸստՀանրապես ընդունված էր համարել, որ Իրանում քաղաքային բնակչությունը ազատված էր գլխահարկից։ Բայց որոշ աղբյուրներ փաստեր են հազմրդում, որ քաղաքային բնակչությունն էլ գլխահարկ էր տալիս։ որը կազմում էր տարեկան 18 զրան յուրաքանչյուր շնչից²։ Այս Աքրար թինան գշռում է, որ քաղաքային բնակչությունը երկու ձեռի հարկ էր վճարում, մեկը կուլվում էր տիսանեցամարի, այսինքն աներից ստացվող հարկ, իսկ մյուսը ստարշումարի։ այսինքն գլխահարկ, որը գտնձվում էր ըստ ընտանիքի անդամների թվի³։

Ուրմիայի շրջանի որոշ գյուղերում գոյություն ունի մի հատուկ հարկ, որը կուլվում էր պարարիթք, և գանձվում էր մուսուլմաններից տարեկան հինգ զրան, իսկ քրիստոնյաներից ութ զրան⁴։

Անհրաժեշտ է նշել, որ բացի վերոհիշյալ հարկերից գոյություն ունենին նաև կրոնական հարկեր, որոնք գանձվում էին կալվածատերերից և կուլվում էին ողաքյաթ և խոմօ։ Զարյաթը կազմում էր տարեկան եկամտի տասնորդը։ կամ թերքի տասնորդը։ Կոմար կազմում էր տարեկան եկամտի 20 տոկոսը կամ ունեցվածքի 20 տոկոսը։ Հասկանալի է, որ կալվածատերերը այս հարկերը տալով՝ հետո նրա ամբողջ բեռը բարդուլ էին գյուղացիների վրա։

Որոշ տարածում ուներ նաև բեգարային աշխատանքը։ Մեր կողմից արգելն էին վածքած է 1889—90 թ. օրենքով նաև որոշ ծառայություններ էր պահանջվում բնակչությունից նաև ա-

¹ 150 մլն մալից ... Հարավի հաստի առաջնային տեղական քառականքը։

² Корсун, Всемирный обзор Персидского передового театра, Тифлис, 1909, стр. 98.

³ على أكبر بيننا تاريخ مصيادي ... Հարավի հաստի առաջնային տեղական քառականքը։

⁴ G. N. Curzon, Persia and the Persian Question, vol. I, p. 547.

ապարհների կառուցման համարը Ըստ այդ կարգի 16—50 տարեկան բոլոր տղամարդիկ տարբեկան մի քանի որ պետք է աշխատեին ճանապարհների վրա, իսկ նրանք ովքեր չեն աշխատի, պարագոր էին որոշակի կանխիկ գումար վճարել, որ ովհազի նրանց փոխարեն աշխատողներ վարձվեն: Ավելի մոտ զայրերում պետք է աշխատեին ճական որ, իսկ հեռու տեղերում ճական որ¹:

* * *

Մենք արդեն նշեցինք, որ հարկերի հավաքման գործը կապահով էր արևում առանձին մարդկանց. որինակ՝ Զարմանայի հարկերի հավաքումը արվել էր Բախտիարի խանին՝ տարբեկան 20,000 թումանի դիմաց, իսկ նրա նորայր Ռեզա Չուկի խանը նշանակվել էր նույն շրջանի հարեմ²: Ըստ որում, հարկա հավաքությունը հանձնարարակում էր նրան, ով ավելի շատ դումար էր վճարում: այսպէս՝ 1894 թվականին Բորուշերդի շրջանի հարկերի հավաքումը կապաշով էր արվել 10,000 թումանի դիմաց, բայց մայիս ամսին մի ուրիշ անձնավորություն տաշարկեց 11 000 թուման և այդ գործը հանձնարարվեց նրանք³:

Այս երեսությթը շատ բնորոշ էր և ցույց է տալիս, թե ինչպիսի քմահաճույք էր տիրում հարկային սիստեմում: Թիստկանէ, որ ավելի մեծ գումար վճարող հարկանց այդ գումարը, իթի ոչ ավելի ինքը է կորզեր գյուղացիությունից: Պրան պիտի ավելացնել նաև այն, որ հաճախ առաջին կապալառուն դորժը կիսատ թողած հեռանում էր, իսկ նոր հարկանցը՝ չեղյալ համարելով նախկին գանձումները, նորից էր սկսում հարկանավարքը:

Հարկային ընդհանուր սիստեմը և հարկանաների գաֆոն բաղադրականությունը մեծ ավերածություններ էին կատարում իրանական գյուղական:

¹ A. K. S. Lambton, Landlord and Peasant in Persia, p. 169.

² J. B. Bishop, Journeys in Persia and Kurdistan, vol. I, p. 309.

³ М. Л. Томара, Экономическое положение Персии, СПб., 1895, стр. 79.

Նաշմ ոլ Մուլբը 1881—82 թվականներին շրջել է Հարավային Իրանի մի շարք շրջաններում և հետաքրքիր տեղեկություններ է Հաղորդում իր տպավորությունների մասին ու Ասֆարինամեյի Արարատանեա գրքում նա նկարուդրում է նույնիստանի, կամ ինչպես այն ժամանակ ընդունված էր անմանել Արարատանի, բայցքայված և ավերված վիճակը։ Խուզիստանը ընդհանրապես հարուստ և քերի երկրամաս է, բայց այդ ժամանակ անտեսական անկում էր ապրում։ Նաշմ ոլ Մուլբը այդ վիճակի պատասխանատվությունը դնում է կենտրոնական կառավարության, տեղական շեյխների, Հաղեմների ու Հողատեղերի վրա, որոնք զաժանորեն շահադորժում էին ժողովրդութիւնների վրա։ Ազիլիում յուրաքանչյուր շարիր հողամասի հարկը հասել էր 20—30 թումանի, իսկ մի զույգ տագարից վերցվում էր երեք թուման։ Այս ամնենը հասցրել էր այն բանի, որ պյուղացիները լրել էին իրենց թնակավայրերը ու հեռացել նույն էր նաև Դեղֆուզում և Եռուշթարում, որտեղ զյուղացիները ի վիճակի չեին վճարել պետական հարկերը և խալիսի հողերի բերքաբաժինը։ Այս երկու թնակավայրերում ոչ մի բարեկեցիկ ընտանիք չկար, նրանք բայցքայվել և ազքատ ու թշվառ գրյություն էին բարզ տալիս։ Նույն էր Ռամշառուզում, որի թնակավայրում մնացել էր ընդամենը 200 ընտանիք, այն էլ ամենաթթվառ վիճակում¹։

Խոսելով հարկանաների և այլ պաշտոնյանների ստեղծությունների ու դաժանությունների մասին՝ Թերյուղինը գրում է. «Դժվար է, և մինչևիսկ անհեար, թվարկել իրանում վաղուց արմատացած բոլոր շարաշանութեները, որ տեղի էին ունենում հարկերը հավաքելու ժամանակ, և որոնք զնալով ազնվի մեծ շափեր էին ընդունում։ Դա նախ և առաջ արտահայտվում էր նրանում, որ ունեցվածքի, հողային հարկի, աշխատանքի և ապրանքի սահմանումը և գնահատումը կատարվում էր միանգամայն քմահան ձևով։ ... Երկրորդ, զնկավարները, մեծ մասամբ իրենց իսկ մարզի եկամուտների հավաքը գեներվ.

¹ A. K. S. Lambton, Landlord and Peasant in Persia, p. 170.

կամ շանում էին վերցնել Շարավոր ամեն ինչ՝ և զտանելով
պհաւկան շահերի մասին, կամ էլ Շարկանանությունը կա-
շառավագ տալիս էին նոր գնորդների և այդպիսով գլուղացու
մաս բարդմազ բեր կրկնակի դարձնում։ ...Սեփականատերի-
ուր, երբ Շարավորություն էին ունենում՝ կաշառում էին Շար-
կանաներին, առևտրականները կաշառում էին մարսատան
աշխատաղներին և այսպիսով ընդհանուր գողությունը հաս-
կում էին մինչև առաջին մինիստրը¹։

Այսպիսի և բազմաթիվ այլ հանգամանքներ խանգարում
էին նրկրի անտեսության զարգացմանը, քանի որ մինչեւիսկ
կարգածատերերն էի առանձնապես շահազրդովածություն
և նդս չեին բերում այդ գործում։ Վլասովը 1892 թ. գրում էր,
որ Խոյաստանի Հողատերերը պետական Շարկերի ժանրության
Շահանքով քանը ըստ էին դորժադրում գյուղատնտեսությունը
զարգացնելու համար²։

Շարկերի հավաքման գործում թույլ տրված շարաշահում-
ների մասին էլ է խոսւմ Թերյոզինը։ Նա գրում է, որ XIX
դարի կեսերին ստացականների կամ բարաթների շարաշա-
հումները՝ մի կողմից, և Շարկերի հավաքման գործում խանե-
րի ոտնձգությունները՝ մյուս կողմից, մեծ շափերի էին հասել
Երկրի տարրեր շրջանների զեկավարները, որնի կերպով Շար-
կերը հավաքելով, ուինչ չեին մուժում պետական գանձտրանը։
Կառավարության պարտքատերերին նրանք այնքան էին քաշ-
քըշում, որ վերջիններս համաձայնվում էին բարաթները վա-
հառի չելին դնով, մինչդեռ նահանգապետները այդ բարաթ-
ները ներկայացնում էին կառավարությանը որպես ամբողջու-
թին վճարված փաստաթղթեր։ Այդ սիստեմը այնքան էր կա-
տարելագործվել, որ արդեն պարտքատերերից շատերին
հայտնի էր բարաթների իսկական գինը, որը փոփոխական էր
տարրեր նահանգներում։ Այսինքն մի նահանգում վճարում էին

1. Н. Березин. Путешествие по Северному Персии. Казань, 1852, стр. 235—237.

2. П. М. Власов. Извлечение из отчета о поездке в 1892 г. по Северному окружам Хорасана. «Сборник Материалов по Азии», том. 52, 1893, стр. 14.

բարախների միայն կես գինը, մյուսում միայն մեկ տասնհրորդը և այլն¹:

Եվ, այսպիսով, պետական այդ հարկերի գանձման հնարավորությունների մասին խռովով՝ Թերզոնը հանգում է այն նորակացության, որ միայն իրանական գուրղացու և ստորին դասակարգերի, որոնց վրա բացառապես բարզված էր հարկերի ամբողջ բեռք, արտակարգ սակավապետությունն էր, որով կարելի էր բացատրել, թե քեզօնանրապես ինչպես էր հնարավոր այդպիսի շափների հարկեր հավաքել²:

Հարկային սիստեմի նեխավածության և այդ ասուարենում պայությունը ուժեցող շարաշահումների մասին նյութերի կարելի է հանդիպել և ժամանակի մամուլի առանձին ձշերում։ Իհարկե, պետք է եշել, որ մեզ հետաքրքրող ժամանակաշրջանի հրանում մասունք այսօրվա հասկացողությամբ գոյաթյուն շուներ, բայց դարավերջին արտասահմանում մի բանի իրանի ական թերթեր էին լույս տեսնում, որոնք այս կամ այն շափով արտացոլում էին Իրանի ներքին կլանքի մուտավոր պատակերը։ Այդ թերթերից էր նաև Կալկաթայցում լույս տեսնող ոչարչ ոչ ժաթինչեց՝ թերթի առանձին համարները որոշ նյութեր են պարունակում Իրանի XIX դարի երկրորդ կեսի սոցիալ-գուստակարգային հարաբերությունների, գյուղացիության, հարկային սիստեմի և այլ հարցերի մասին, որոնք մեծ հետաքրքրություն են ներկայացնում ուսումնասիրողների համար։ Թերթի 1900 թվականի ապրիլի 23-ի համարում ասված է, որ Իրանի բնակչությունը շորս դասակարգի է բաժանված։ Նախ ազնվականությունն ու հոգևորականությունը, երկրորդ՝ արքայազնությունը, խաները, պաշտոնյաները, մեծահարուստները և այլն, երրորդ՝ զինվորականները, շորորորդ՝ գյուղացիությունը և աշխատավորությունը, որոնք պահպանում են նյութապես ապահովում են

1 Н. Березин, Путешествие по Северной Персии, Казань, 1852, стр. 239.

2 G. N. Cargan, Persia and the Persian Question, vol. I, p. 440.

3 ոչարչ ոչ ժաթինչ թերթի որոշ համարներ պահպանվում են Հեքիզարդ գիտական արքելյան ֆիլոսոփեակի գրադարանում։

առաջին երեք դասակարգերին: Եթե վերջին դասակարգը անկում ապրի, ապա ապահովված է նաև մըուս երեքի անկումը: Այս հենց այդ պատճառով էլ առաջազրո երկրներում շորրորդ դասակարգի պահպանումը պարտադիր են համարում և ոչ մի շանր չեն խնայում նրան առաջնորդելու համար¹:

Այս խոսքերով մի կողմից թերթը իր համակրանքն էր հայտնում դյուլացի աշխատավորության նկատմամբ, իսկ մյուս կողմից՝ նշելով այդ դասակարգի անմիտար վիճակը, շահագործող գառակարգերին զգուշացնում է, որպեսզի նրանք վերջնականապես շրամեն զյուլացիությանը, քանի որ գրանով նրանք կզրկվեն հենց իրենց հսկայական նկամուսներից և կկանգնեն ոչնչացման վտանգի առաջ: Թերթը անդրագառնում էր նաև այն հսկայական թալանին, որ տեղի էր ունենում հարկեր կամ ոննուա հավաքելու անվան տակ:

1900 թ. ապրիլի 2-ի համարում, խոսելով նրկրում իշխող անարխիայի մասին, գրում էր, որ գրամ ձեռք բերելը նրանում նիշա օրենքներ շունի: Դա կախված է ուսյաթից: Եթե ուսյաթը խեղճ լինի, ինչպես օրինակ՝ Թերմանի զյուլացիությունը, ինչ անվան առակ էլ որ ցանկանան նրան կթամեն: Իսկ եթե զյուլացին զիմադրի, ինչպես, օրինակ՝ Ցաղցամ, ապա գործը առանց վերադաս մարմինների միջամտության զլուխ լի գա՞:

Այստեղ զասառիքն թերթը քողարկված ձևով հասկացնում էր, որ պետք է դիմադրել և տեղի շտալ: Միայն այս դիմադրում կարելի էր ազատվել կալվածատերերի և պաշտոնյաների ստեղծություններից, այլպես նրանք գյուլացիներին կհաս-ցընեն մինչև ոչնչացման հզրը:

Խոսելով հարկային սիստեմի և հարկային ասպարեզում եղած անարդարությունների մասին, թերթը գրում էր, որ նրանի պետական նկամուսները օրենքի բացակայության պատճուռով ոչ մի կարգ ու հանոնի ենթակա չեն: Կառավարությունը նահանգները հանձնում է ավելի մեծ կապալավճար տվող

1 حبـل المـقـيـن ٢٣ أورـيل ١٩٠٠

2 حبـل المـقـيـن ٢ أورـيل ١٩٠٠

Նահանգապետներին: ...Հարկերի հազարման այս հղութեակի հետևանքով, մի կողմից՝ պետության հկամաւուներն ձև եվազում, մյուս կողմից՝ գյուղացիության մասսայական քայլայման պատճառ գառնում: Նահանգապետները պետության տալիս են տարեկան 15 միլիոն թուման, իսկ դրա փոխարին նրանք բնակչությունից գանձում են երեք անգամ ավելին¹:

Ստեղծված գրությունից դուրս գալու համար թերթը ստացարկում էր, որպեսզի իրանի կառավարությունը լրջործի վերանայի կալվածքների զրանցումները, Հարկերը սահմանի արդարացի լավերով, վերացնի առանձին ժառայիւթյունների դիմաց կալվածքներից բերքարաժին և Հարկեր հավաքումը տալու պրակտիկան, որպեսզի պաշտոնյաները իրենց ուժիկները կամ թոշակները պետությունից սահանան և հազարած Հարկն էլ պետությանը հանձնեն²:

١ 1900 Հյուն ի Հիմ ամայն
٢ 1900 Հյուն ամայն ի Հիմ ամայն

ՀՈՂՅԻՏԱՆԱՐՄԱՐԱՆ ԵՎ ՎԱՐՉԱԿԱԼՄԱՆ ՆԱՐ
ԵՎԱՆԱԱՆԵՐԸ, ՀՈՂԱՏՄԱՆ ՌԻՆՏԱՆ ԵՎ ՆԻԱ ՏԱՐԱՏԵՍԱԱԿՆԵՐԸ

Մինչև XX դարի 20-ական թվականները, երբ իրանում մացվեց ազգայտային օրենսդրություն, կալվածատիրոջ և պյուղացու փոխհարաբերությունները կարգավորող օրենքներ գոյացվում շունեին: Այդ պատճառով էլ ոչ միայն առանձին նահանգներ, այլ մինչև իսկ առանձին շրջաններ ունեին իրենց սովորություններն ու ընդունված կարգը, որոնք վոփոխության էին ննթարկվում նահանգապետների, խաների և կալվածատերների հայեցազությամբ:

Սակայն, այնուամենայնիվ, Հողի վարձակալման պայմանների հիմքում, ինչպես առաջ, ընկած էին պյուղատնտեսության բազկացուցիչ հիմք տարրերը՝ Հռովը, Չուրը, Ակրմացուն, տավարը և աշխատութը: Այս տարրերի պատկանելիությունից էլ բխում էր բերքի բաշխման շափները: Իհարկե, ինչպես հետազայտմ կանենք, ոչ միշտ էր, որ այդ տարրերին հազարար բաժին էր հասնում: Հանախ պատահում էին գեղցիքներ, որ, տարրեր հանգամանքներից հենելով, այս կամ այն տարրը ավելի մեծ բաժին էր առանում: Եթեն, օրինակ, կալվածատերն իրեն առամազրած որևէ տարրի համար ավելի մեծ բաժին էր վերցնում, իսկ աշխատութը և գործիքները մեկ տարր էր հաշվում: Բայց, ընդհանրապես, Հողի և ցորի տերը՝ Հողամասը վարծով ու լով պյուղացուն, նայած Հողի բերրիու-

թյան, Նրանից ստանում էր բերքի երկու ձրբորդը կամ հրեց հինգերորդը¹:

Արքան մի բան պարզ է, որ ինչպիսի մաս էլ տրամադրութեր առանձին տարրերին, բոլոր գնաթերում ու լինում էր կարվածատիրոջ օգտին:

Ինչպես արդեն նշել ենք՝ Հողը վարձակալելու եղանակը կոչվում էր ամողարեն, իսկ այդիները վարձակալելու հղանակը՝ ամուակաթու: Այդ համաձայնապեսը լինում էին տարրեր ժամկետներով և տարրեր պայմաններով: Անկախ նրանույթից հողային վարձուկալման կապակցությամբ ժամկետները կարգավորվում էին կրտսեական օրենքներով: Գոյություն ունեն ընդհանուր այն կարգը, որ բոլոր տեսակի հողերը կարեիլ էր հու պահանջել քառասունինը տարին անցնելուց հետո: Որոշ ամյալներով այդ ժամկետը իննունինը տարի էր: Սակայն միանգամայն հասկանալի է, որ այդ օրնենքները հեշտությամբ շրջանցվում էին²:

Մողարեն կոչվող վարձակալման պայմանները երկրի տարրեր մտահերում տարրեր բովանդակություն էին ունենում: Ինչպես կանոններ առանձին նահանգներում կիրառվող վարձակալման հղանակների մասին խոսելիս, գյուղացու և կարվածատիրոյ բաժինները, մեծ մասամբ կանգագ տեղի տառենահանատկություններից, սովորություններից, երրիմն էլ կարվածատիրոջ քմահաճույթից, տարրեր լավեր էին ընդունում:

Այն վայրերում, որտեղ ավելի նպաստավոր պայմաններ կային հողագործության համար կամ մշակվում էին ավելի արժեքավոր կուլտուրաներ, մուլքագարները զշխահարեկը և անասնահարկը փոխարինում են դրամային հարկով՝ մշակվող հողի միավորից: Այս վերջինը երկորի տարրեր շրջաններում տարրեր էր թե իր մեծությամբ և թե իր անունով: Ըստ որում, անունների միասնակությունը դեռևս լէր նշանակում շափի

¹ J. Bassett, Persia, The Land of the imams, p. 253.

² Խովն տեղում. էլ 278.

«ավասարություն» մինչեփսկ Հարևան գյուղերում։ Դրա մեջ արտահայտվում էր ցանքսի որբակը, ռառզումը, հողամասի եկամտարերությունը և այլ հանգամանքներ։ Մյուս կողմից էլ շատի միավորի Հավասարությունը չէր նշանակում Հարկադրման միասնակություն, քանի որ վերշինս բացի բաղմաթիվ պատահական պատճառներից, արտահայտում էր նաև գյուղի ամրոցը անտեսության վիճակը¹։

Այս այսպիսի գրություն էր տիրում Հողի վարձակալման բնագավառում։

Հասկանալի է, որ նոր տիպի կալվածատիրոջ՝ մուլքագարի հանդեմ զայր իր հետ բերեց նաև որոշ փոփոխություններ ապրարային Հարաբերություններում, որոնք ծնունդ էին սոցիալ-տնտեսական նոր պայմանների։ Միանգամայն նիշտ է զնարատում նիտիինը, որ մասնավոր հողատիրության պայմաններում լայն տարածում գտագ հողը վարձով տալու պրակտիկան, որը շատ ձեռնատու էր կարգածատերերին, որովհետեւ առանց որևէ հողով ձեռք էին բերում մեծ հկամուտների Վարձակալը ընդհանրապես այդպիսի տնտեսություններից մեծ օգուտ չէր բաղում, հատկապես եթե նկատի ունենանք Հողատերների անօրինական վերաբերումները վարձակալների նկատմամբ, որոնք երբեմն ստիպում էին գյուղացի վարձակալին յքի տնտեսությունը և փախչել ուրիշ նահանգներ՝ ավելի մորդկային վերաբերումների հանդիպելու և պակաս ծանր տուրքեր տալու հույսերով²։

Փաստերը ցույց են տալիս, որ նոր Հողատիրոջ՝ մուլքագարի իշխանության և իրավունքների անը՝ մի կողմից, և կառավարության իշխանության թուլացումը՝ մյուս կողմից, Հացանում են այն բանին, որ մուլքագարները փոխում են գյուղյուն ունեցող Հարաբերությունները իրենց օգտին՝ ի վնաս գյուղացիության և մինչեփսկ ի վեաս պետության շահերի։ Պե-

¹ Л. Ф. Гагарин. Из общественно-экономических отношений в Персии. СПб., 1909, стр. 39—40.

² П. А. Риттик. Политико-статистический очерк Персии. СПб., 1896, стр. 81.

տությունը, տարիներ առաջ սահմանելով գյուղերից դահճվող տուրքերի որոշակի գումարը և այնուշատե հաշվի շառնելով երկրի տնտեսական զարգացումը և Համապատասխան փոփոխության շննդարկելով այդ ցուցակները, ոչ միայն թույլ էր տալիս մուլտպարին լուրացնելու ավելցումները, այլև փաստորեն օրինականացնում էր մուլտպարի իրավունքները այդ գրամական տուրքերի նկատմամբ և սահմանափակում իր ինչ իրավունքները¹.

Այդ պրոցեսը շարունակվում է մինչև XX դարի վերջը և XX դարի սկզբները, երբ մուլտպարները վերջնականապես իրավական ձևակերպում են տալիս իրենց այն արտօնություններին, որ ձեռք էին բերել ժամանակի ընթացքում։ Պնառը յունի ոչ միայն ի պիճակի շնորազ խանգարել այդ պրոցեսը, այլ մինչեւսկ ստիպված եղավ օրենսդրական ակտերում օրինականացնել առեղծված դրությունը։

Անշնչատ, նոր պայմաններում մուլտպարներին հանդիս գտնը և այլ հանգամանքներ մնենապես փոխեցին երկրում իշխող ազրարային հարաբերությունները և, ինչպես միանդամայն նիշտ կերպով նշում է Կայիմը, Հարցի ուսումնառիրման տեսակետից շամենածանր և դժվարին խնդիրը դառնում էր այն, թե այդ ամենից հետո ինչպիսի իրավունքներից էր սպարվում գյուղացին և ընդհանրապես ինչպիսի պիճակում էր նաև²։

Նախկինում պիճակը ավելի պարզ էր, Խաները գյուղերում տնտեսությամբ էին զրազվում։ Նրանք համարվում էին միայն կարգ ու կանոնի պահպանողներ և պետական պաշտոնյաներ։ Այդ ամենի համար նրանք ստանում էին բերքի մեկ տասներորդ մասը։ Գյուղացիները բերքի մեկ տասներորդն էլ վճարում էին պետությանը որպես Հարցի, ինչպես նաև գյուղաշարկ և այլ տուրքեր, որնց մասին արդեն նշել ենք։

1. Л. Ф. Твераков, Из общественно-экономических отношений в Персии, СПб, 1909, стр. 38.

2. Г. Кази, Персидские земли или «Новая азия», Краснодарск, 1914, стр. 118.

ХХХ դարի երկրորդ կեսին շատ բան էր փոխվում, տղթ-ը արխառ ռաշաթը, — գրում է Կայիմը, — տալիս էր այն ամենը ինչ նա վաստակում էր: Նրան թողնում էին միայն այնքան, որ ևս յաջական առվից¹:

Ենչպիս առվեց՝ ըստ շարիաթի օրենքների զյուղացին պարտավոր էր կալվածատիրուք տալ բերքի տասնորդը, պետությանը նույնական տասնորդը, այսինքն ընդամենը իր բերքի մեկ հինգերորդը: Բայց նոր պայմաններում նա մուլքագարին տալիս էր բերքի մեկ երրորդը, եթե հողից բացի հողագործության համար անհրաժեշտ բոլոր մյուս տարրերը տրամադրեր ինքը: Խոկ եթե մուլքագարը գյուղացուն տար նաև սերմացու, ուղարք, զյուղատեսանական դործիքներ, ապա նու ստանում էր բերքի ճճ առկուսը²:

Սա արդին բերքի բաշխման նոր համաշխափություն էր, որը անհամեմատ ծանր էր զյուղացու համար: Երկրում զարգացող ապրանքա-դրամային հարաբերությունների պայմաններում կալվածատերը ձգում էին առաջիկ շափով բաժին ստանալ բերքից և այն իրացնել շուկայում՝ վերածելով գրամի, որի կարիքը շատ մեծ էր: Գյուղացին կալվածատիրական և պետական բաժինները և այլ տուրքեր տալուց հետո, եթե որևէ ավելցուկ մթերք էլ ունենար, ապա գրա իրացման գործում հանդիպում էր մի շարք դժվարությունների, քանի որ շուկան գոտնվում էր կալվածատեր-առևտուրականների ձեռքում:

Այստեղ անհրաժեշտ ենք համարում համառոտակի կանգ տևել այն հարցի վրա, թե ինչպիս են դմանատում և ընութագրում հողի վարձակալման մերը Իրանի իշխող խավերի գաղափարախոսները: Արգուլահ Մոսթոֆին, որը դաշարների օրոք պետական բարձր պաշտոններ է զբաղեցրել, իր հուշերում, որը նա վերևագրել է ոհմ կենսագրությունը կամ զարարների շրջանի հասարակական և վարչական պատմությունը, անդ-

¹ Դայի տեղում, էջ 120:

² М. Павлович, Экономическое развитие и аграрный вопрос в Персии XX века, М., 1921, стр. 22.

բազմանեալով հողի վարձակալման Իրանում կիրառվող հզանեակին, բանագենի ձևով տալիս է նրա ընութագիրը։ Նա նշում է, որ XX դարի սկզբներին Հանդիպում է մի և վրոպացու, որը աշխարհագրության միջազգային ընկերության անդամ էր և ու...իր մտքերից երևում էր, որ ազատամիաներից էր...։ Նա Հարցնում է Մոսթոֆուն, արդյո՞ք Իրանում գյուղացիներին հոգ տալու հարց կարող է ծագել։ Մոսթոֆին բացասական պատասխան է աւալիս։ Այդ մարդը վարժանքով հարցնում է պատճեռը։ Մոսթոֆին պատասխանում է, որ Իրանի գյուղացիններուն հվառպահան պատասխանում է աւալիս վարձեկան չել, այլ նա կալվածատիրության ակից ընկերն է։ Նա այնուհետեւ բացատրում է զյուղատնտեսագրության հինգ ստարտերը՝ Հողը, Չուրը, տավարը, սերմացուն և աշխատութը, և ավելացնում, որ կալվածատիրերից և գյուղացիներից ով ինչ տրամադրի այդ հինգ ստարտերից, զրա գիմաց էլ կատանա բերքի համապատասխան մեկ հինգերորդ մասը։ Իհարկե այդ գործում դեր է խանում նաև առաջարկն ու պահանջը, օթե Հողը բերքի չէ և ավելի շատ աշխատանք է պահանջում, ասկա զյուղացիները գժվարությամբ կհամաձայնվեն մշակել արդպիսի Հողը և այդ գիպքում կալվածատերը ստիպված է ավելի մեծ բաժին հատկացնել զյուղացուն, նոյն Հակառակը, բերքի Հողերում, հատկապես այն վայրերում, ուր բնակչությունը խիստ է ու աշխատող ձեռքբերուշատ, կալվածատերը ավելի մեծ բաժին է հատկացնում իրեն։ Բայց Մոսթոֆին ավելացնում է, որ այդ տարբերությունը ընդհանրապես մեծ չէ։ Անշրջի՝ զեմք Հողերում կալվածատերը տրամադրում է միայն Հողը, հետեւարար և վերցնում է բերքի շրութից մեկը։ Կամ զյուղից Հեռու ընկած Հողերից նա մինչեւիսկ վերցնում է հինգից մեկը։ Մոսթոֆին շարունակում է, որ իր զյուղակիցը ուշադրությամբ լսել է իրեն, լրացնեցի բացատրություններ պահանջել և խոստացել է իր Հոգմածը տպագրվելու դեպքում մի օրինակը ուղարկել նրան։ Եվ ահա շուտով նա ստանում է Հոդվածի մի օրինակը, որի մեջ հեղինակը, Մոսթոֆու հասարակական գիրքը հիմք ընդունելով, գո-

վարանում է Իրանում գոյություն ունեցող պյուլացու և կալվածատիրու այդ հարաբերությունները¹:

Ինչպես տեսնում ենք, սա մի փորձ է արդարացնելու Հոգային հարաբերությունների այն վիճակը, որ աիրում էր Իրանում մինչև վերջինը Այս տեսակետը կրկնել են պարսիկ միշտը այլ հեղինակներ և քաղաքական գործիչներ Նրանք փորձել են այնպիս մեկնարաւնել, որ իր Իրանում կիրապվող Հոգի վարձակալման հղանակները փառարրեն ոչ թե շահագործողական էին, այլ փոխադարձ Համաձայնության և մասնակցության արգյունքի Գյուղացին ոչ թե շահագործվում է կալվածատիրու կողմից, այլ նու իր հոգար կամքով մասնակցում է Հոգագործությանը և ստանում իր Համապատասխան բաժինը: Ինչպիս արգել ցուցը տրվեց նախորդ պետիներում այս տեսակետը զարկ է ճշմարտությունից և նպատակ ունի պաշտպանել շահագործող դասակարգների շահերը և բթացնել պյուլացիության ինքնադիտակցությունը:

Հոգագործութման հղանակները տարրեր էին երկրի տարրեր մասերում: Այդ հղանակների որոշման գործում նկատի էին առնվազ բազմաթիվ Հանգամանքները:

Այստեղ անհրաժեշտ է պարզել՝ արդյո՞ք մշակվող Հոգագործության էին տրվում գյուղացուն, թե՝ վերաբաշխվում էին ամեն տարի:

Տիգրանովը նշում է, որ խաները Հանդիսանում էին շահնահամական վարձակալները՝ ունենալով նաև որոշ վարչական իրավունքներ կալվածքների նկատմամբ, ինչ պյուլացիները անհամկետ վարձակալներ իրենց մշակած Հոգամասի՝ ունենալով որոշ կախվածություն խանից²: Դա նշանակում է, որ գյուղացիները սերնդ սերում վարձակալում և մշակում էին միենույն հողը և այդ հողի վարձակալման իրավունքը իրենց էին վերապահում: Գյուղացիներին այդ իրավունքից զրկել չէր կարելի:

¹ ՀՎՀ-9 1920 թ Հ 29 ս

² Л. Ф. Тагранов, Из общественно-экономических отношений в Персии, СПб, 1909, стр. 3.

Բայց փաստերը ցույց էն տալիս, որ այդ երկույթը՝ շամատարած է էր. երկրի տարբեր շրջաններում այն տարրեր էին բառում էր ունենում: Այսպիս, օրինակ՝ Թերժանում Հողը վարձով էր տրվում 4—6 տարի ժամանակով: Գիշանի մի շարք զյուղներում կարվածաները հողը վարձով էր տալիս 10 տարի ժամանակով՝ պայմանագրում նշելով վարձակալման պայմանները¹:

Յարսի որոշ շրջաններում գյուղի մշակելի Հողերը բաժանվում էին առանձին մասների, որոնց կողման էին սահմանաշխատ նայած գյուղի դիրքին կամ տեղական պայմաններին: Ջնունը, համարյա ցանքսի նախորյակին Հողերը բաժանվում էին գյուղի կողմից տրամադրվելիք արորների թիվ համապատասխանեան: Սահրաները բաժանվում էին երկար շերտերի և յուրաքանչյուր արորին հատկացվում էր մեկ կամ մի քանի շնորհարուցանքի համար: Բայց որոշ շրջաններում գյուղացիները համեմատարար երկարատև ժամանակով էին հողամասեր ստանում մշակելու համար: Օրինակ՝ Զավաքանում ոռոգվող Հողերը բաժանվում են գյուղացիներին էին տրվում երկարատև ժամանակով: Եթե որևէ գյուղացի մահանար, ապա հողամասը անցնում էր նրա ժառանգներին: Եթե որևէ ընտանիք բերանեապիս ոչնչանար կամ հեռանար, մի որևէ ուրիշ մարդ կարող էր բերգել նրա տեղը: Բայց հողը մշակողի իրավունքները առ ու ժամանակա շէին²:

Եիրազից մինչև լար և լարից մինչև Ֆորդ ընկած շրջաններում ոռոգվող Հողերը ամեն տարի բաժանվում էին առողութեանցող գյուղացիների միջև: Այդ շրջանների գյուղերի մաս բաժանման ենթակա Հողերը առանձնապիս մեծ տարածություն էին կազմում, արորներն էլ բազմաթիվ չէին³: Ֆահրաշի Հողերը պետական էին, բայց դրանք նույնպիս մշակելու համար յուրաքանչյուր տարի բաժանվում էին գյուղացիների միջև: Դա գուցե և նրա համար էր արվում, որ գյուղա-

1. АВІР. ф. перснц. стол. д. 74, л. 24.

2. A. K. S. Lamerton, Landlord and Peasant in Persia, p. 171.

3. E. Stack, Six Months in Persia, vol. II, p. 253.

ջին որեւէ Հավակենությունը շունենար իր մշակած հողի նկատմամբ, չնայած որ, կարող էր նա մի քանի տարի շարունակ միննեությ հողամասը մշակել¹: Ֆարսի որոշ շրջանների գյուղարում ոռոգվող հողերը բաժանվում էին մի քանի տարին մեկ անգամ: Բայց այդպիս չէր, որինակ, եիրում, որը պետական անգանեություն էր և հողը ամեն տարի էր բաժանվում գյուղացիների միջև: Այդ հողերի հեկամուտների զանձումը 1881 թ. անձնվել էր երկու անձնավորությունների, որոնք գյուղացիներից գանձում էին բերքի երկու երրորդը բնամթերքով և ամեն տարի հողերը վերաբաժանում էին գյուղացիների միջն²:

Խելպես ցույց են տալիս վերը բերված փաստերը՝ հողը մշակելու համար գյուղացում տրված ժամկետների հարցում նույնական երկրում համընդհանուր կարգ գյուղացում շուներնայտ աեղի պայմաններին և առանձնահատկություններին դա փոփոխական էր լինում: Սակայն նեկատվում էր հողի բաշխումը համախափի դարձնելու մի ընդհանուր միտում՝ բանի որ դա գյուղացու շահագործումը ուժեղացնելու ահսակիուց մեծ հարավորություններ էր ստեղծում կալվածատերների համար:

Ինչպես ասացինք, կալվածատերները մեծ մասամբ բնակվում էին քաղաքներում և անմիջականորեն հողագործությամբ էին զրազվում: Բայց ի տարրերություն խոշոր կալվածատերների, միջին և մասն հողատերերը հաճախ իրենք էին հոգագործությամբ զրազվում: Օրինակ, Ղազվինի և Էննապուղի մեջանզում ընկած վիլա գյուղի տնտեսությունը զեկավարում էր տերը՝ Միքրա Թարիմը, Խճարկե, պատահում էին նաև տռանձին դեպքեր, երբ խոշոր հողատերները իրենք էին զեկավարում անտեսությունը: Օրինակ, Մարզի շրջանի գյուղերի մեծ մասի տերը և միաժամանակ կառավարության ներկայացուցիչը՝ Մարդարը, մոտ 150 օգնականներով ինքն էր զեկավարում ամբողջ տնտեսությունը³: Բայց սա բնորոշ չէր ամբողջ երկրի համար: Աղբյուրները վկայում են, որ կալվածա-

1 Խոյք անգամ, էք 279.

2 Խոյք անգամ, էք 253.

3 ԱՇԲԱԼ. Փ. 76. Ձ. 197. Ա. 14.

4 «Материалы по изучению Востока», вып. I, 1909, стр. 13.

Բայց փաստերը ցուց էն տալիս, որ այդ երեսով մատարած չէր. երկոյի տարրերը շրջաններում այն տարրեր եիրառում էր անհնում: Այսպիս, օրինակ՝ Թերմանում Հողը վարձով էր տրվում 4—6 տարի ժամանակով: Դիլանի մի շարք գյուղերում կալվածատերը հողը վարձով էր տալիս 10 տարի ժամկետով՝ պայմանագրում նշելով վարձակալման պայմանները¹:

Ֆարսի որոշ շրջաններում դյուզի մշակելի հողերը բանվում էին առանձին ժամաների, որոնք կոչվում էին տանրաշ՝ նայած գյուղի դիրքին կամ տեղական պայմաններին: Ջմաները, համարյա ցանքսի նախօրյակին հողերը բաժանվում էին գյուղի կողմից տրամադրվելիք արորենքի թվի համապատասխան: Սահրաները բաժանվում էին երկար շերտերի և յուրաքանչյուր արորին հատկացվում էր մեկ կամ մի քանի շերտ վարուցանեցի համար: Բայց որոշ շրջաններում գյուղացիները համեմատարար երկարատև ժամանակով էին հողամասեր ստանում մշակելու համար: Սրինակ՝ Զավթացանում ոռոգվող հողերը բաժանվում են գյուղացիներին էին արվում հրազդակում նույնականացնելու համար, ապա հողամասուր անցնում էր նրա ժառանգներին: Եթե որևէ ընտանիք ընդհանրապես ոչնչանար կամ հնուանար, մի որևէ ուրիշ մարդ կարող էր բերվել նրա տեղու Բայց հողը մշակողի իրավունքները առ ու ժախտ ենթակա չեին²:

Եիրազից մինչև կարև և կարից մինչև Ֆորդ ընկած շրջաններում ոռոգվող հողերը ամեն տարի բաժանվում էին արոր ունեցող գյուղացիների միջև Այդ շրջանների գյուղերի մեծ մասում բաժանման ենթակա հողերը առանձնապես մեծ տարածություն չեին կազմում, արորներն էլ բազմաթիվ չեին: Ֆահրազի հողերը պետական էին, բայց դրանք նույնպես մշակելու համար յուրաքանչյուր տարի բաժանվում էին գյուղացիների միջև: Դա գուցե և նրա համար էր արվում, որ գյուղա-

1. АВИР, ф. персид. стол. д. 74, л. 24.

2. A. K. S. Lambton, Landlord and Peasant in Persia, p. 171.

3. E. Stach, Six Months in Persia, vol. II, p. 253.

ըին որևէ հազակեռություն չունենար իր մշակած հողի նկատմամբ, չնայած որ, կարող էր նա մի քանի տարի շարժուած մինենուքն հողամասը մշակել։ Ֆարսի որոշ շրջանների գյուղառում սոսպվող հողերը բաժանելում էին մի քանի տարին մեկ անգամ։ Բայց այդպիս էքը, օրինակ, Խիրում, որը պետական սեփականություն էր և հողը ամեն տարի էր բաժանվում գյուղացիների միջին։ Այդ հողերի հկամուտների գանձումը 1881 թ. հանձնվել էր երկու անձնավորությունների, որոնք գյուղացիներից զանձում էին բերքի երկու երրորդը բնամթերքով և ամեն առարի հողերը վերաբաժանում էին գյուղացիների միջև։

Ինչպես ցույց են տալիս վերը բերված փաստերը՝ հողը մշակելու համար գյուղացուն տրված ժամկետների հարցում նույնպես երկրում համընդհանուր կարգ գյուղացուն չուներ։ Կայած անդի պայմաններին և առանձնահատկություններին դա փոփոխական էր լինում։ Սակայն նկատվում էր հողի բաշխումը համախակի դարձնելու մի ընդհանուր միտում՝ բայց որ զա գյուղացու շահագործումը ուժեղացնելու տհակերպից մեծ հարավորություններ էր սաեղծում կալվածատերերի համար։

Ինչպես ասացինք, կալվածատերերը մեծ մասամբ բնակելում էին քաղաքներում և անմիջականորեն հողագործությամբ էին զբաղվում։ Բայց ի տարրերություն խոշոր կալվածատերերի, միջին և մասն հողատերերը հաճախ իրենք էին հողագործությամբ զբաղվում։ Օրինակ, Զաղվինի և Լենգառուցի մեջանդում ընկած վեյրա գյուղի տնտեսությունը զհկավարում էր տերը՝ Միրզա Թարիմը, Խարկի, պատահում էին նաև տուանձին դեպքեր, երբ խոշոր հողատերերը իրենք էին զեկավարում տնտեսությունը։ Օրինակ, Մարզի շրջանի գյուղերի մեծ մասի տերը և միաժամանակ կառավարության ներկայացուցիչը՝ Մարգարը, մոտ 150 օգնականներով ինքն էր զեկավարում ամբողջ անտեսությունը¹։ Բայց սա բնորոշ էքը ամբողջ երկրի համար։ Աղբյուրները վկայում են, որ կալվածա-

1 Խոյն տեղում, էջ 279.

2 Խոյն տեղում, էջ 265.

3 ԱՐԲԱՆ. Փ. 76. Ճ. 197. և. 14.

4 «Материалы по изучению Востока», вып. 1. 1909. стр. 13

աիրական շատ գյուղեր երբեք չէին տեսնել իրենց տերերին, բանի որ վերջիններս իրենց հողերը երկար ժամանակով վարձով էին տալիս կամ ավելի շուտ վաճառում էին արրեր և այսպիսն մեջ կարելի էր հանդիպնել ամեն տեսակ մարդկանց մկան մոլունակով մինչև ուռաւճպատակ հայ առևտրականների, հանդիսանում էին նույնպիսի լիիրավ տերեր այդ հողերում ապրող և աշխատող գուղացիների նկատմամբ՝ ինչպիսից չենց իրենք կալվածատերերն էին¹.

Նշանակում է իրականում կալվածատիրոջից և գյուղացնց բացի հանդես էր գալիս նաև մի երրորդ՝ միքանկյալ անձ, որը, հողը վարձակալելով կալվածատիրոջից, վարձով էր տալիս գյուղացուն՝ մշակելու համար։ Այսպիսով, գյուղացին կրկնակի շահագործման էր ենթարկվում կալվածատիրոջ և վարձակալի կողմից։ Երբեմն այս վերջիններին լուծը ավելի ծանր էր լինում, քան առաջիններինց։

Խոշոր առևտրականները նույնպես հանդի հողեր էին վարձում և իրենց կապիտալը շրջանառության մեջ զնում գյուղանասության առարեղում։ Օրինակ Սորուշյան և Թելյան առևտրականները, որոնք հայտնի էին ամրող իրանում, ընդարձակ հողեր էին վարձակալել². Հողատեր նայիմ էս Սութանը Բաֆահանից ոչ հեռու Մեհյարա գյուղը հինգ տարի ժամանակով, տարեկան 4000 թումանի զիմաց վարձով էր ավելի ինչ-որ առևտրականի Գյուղացիները իրենց բերքի երկու երրորդը տալիս էին այդ վարձակալին³. Սանի էտ Գուհն Սորոշառ գյուղը ուրիշ հինգ գյուղերի հետ միասին վարձով էր ավելի ինը հազար թումանով⁴.

¹ П. И. Аверьянов. Отчет о поездке по Северному Азербайджану... в конце 1899 года. Тифлисъ, 1900, стр. 19.

² АВПР, ф. перснл. стол. д. 185, л. 153.

³ ЦГВИА, ф. 76, д. 236, л. 87.

⁴ նույն տեղում, թ. 68.

Հողի վարձակալման եղանակների, բերքի բաշխման շահերի և ընդհանրապես գյուղացիության շահագործման առափնչության մասին լայն գաղափար կազմելու համար անհրաժեշտ է ուսումնասիրն առարեն նահանգներում տիրող գրությունը, երեան բերել այն առանձնահատկությունները, որ կային այդ նահանգներում, որոնք և իրենց արտացըլումն էին գանում ադրաբաջին հարաբերությունների մեջ:

Հարավային իրանում գյուղացիուն ունեցող հաղալին հարաբերությունների և հողը վարձակալելու պայմանների մասին շատ արժեքավոր անզինքություններ է աւալիս Հույնի Պետքին, որը երկար տարիներ անզիհական ռեզիդենտ էր Բուշեռում:

Գյուղացիուն ունեցող պայմանները այնպիսին էին, որ գյուղացին տալիս էր շատ ավելի մեծ ռենտա, քան պետությանը հաստինելիք բաժինը: Պելին նկարագրում է, որ այդ կատարում էր այսպես, ինչ որ մեկը նահանգապետի պաշտոնը գնում էր շահից որոշակի գումարի գիմաց: Նահանգապետը իր հերթին նահանգը բաժանում էր առանձին շրջանների և պրանց ղեկավար պաշտոնները վաճառում առանձին մարդկանց: Այս վերջինները նույնպես առանձին գյուղների բերքարաժինները հավաքելու գործը վաճառում էին ուրիշների: Այդ ամենի հետևանքով գյուղացին պարտավոր էր բացի պետությանը արգելիք հարկից, բավարարել նաև նահանգապետի, շրջանների ղեկավարների և նրանց ստորագրա պաշտոնյանների պահանջները: Բնական է, որ գյուղացին ի վիճակի շեր վճարելու այդ գումարը Գյուղապետը գանգատվում էր շրջանի ղեկավարին: Նա էլ նահանգապետին, որը պարտավոր էր սահմանված գումարը ուղարկել մայրաքաղաք Նահանգապետը կարգադրում էր բռնի ուժ գործադրել գյուղացինների նկատմամբ: Այդ բանը կատարվում էր և արդյունքը լինում էր այն, որ գյուղացինները լքում էին հողը, փախչում ուրիշ վայրեր և հաշրդ տարի հողը մեռում էր անմշակ¹:

Այսպիսի պրակտիկա էր կիրառվում նաև երկրի մյուս նա-

¹ G. N. Carzon, Persia and the Persian Question, vol. I, p. 442.

Հանգներում, Իրանական սկզբնաղբյուրները բազմաթիվ են ան-
փաստեր են հաղորդում, որոնք պահպանվել են Իրանի ֆի-
նանսների մինիստրության արխիվներում:

Երկրի որոշ մասերում, Համակապես Խուզիստանում Հոգի
վարձակալման գործում կիրառվում էր այսպիսի կարգ: Հաֆե-
ղիեյում և այլ շրջաններում ամբողջ իրավունքը անցնում էր
պետքի՝ վաղին կամ շեյխին: Մինչև իսկ նախորդ վաղիի կամ
շեյխի մշակելի հողերը և աները անցնում էին նոր պետքին:
Այդպես էր եղել, օրինակ, Ֆալաճիյեյում, Մոհամարայում և
Ռամշորձողում: Նազմ ու Մոլթը 1881—82 թ., շրբագայելավ
Խուզիստանում, նկատել էր, որ ոչ ոք չէր համարձակվում հո-
ղը մշակել: Գյուղացիները ոչ մի վատահություն չունեին
իրենց վաղվա որդա նկատմամբ, ուստի գտնում էին, որ իրենց
շանքերը կարող էին իզուր անցնել:

Հողային ռենտան երկրի տարրեր մասերում միատեսակ
չեր և այն բխում էր մեծ մասամբ տեղի պայմաններից: Այս-
պես, որոշ շրբաններում կալվածատերերը ստիպված էին պյու-
ղացում ինչ-որ լափով քաշալերել և բերդից նրան ավելի շատ
բաժին թողնել: Այդպես էր Կասպից ծովի ափերում, Թուրք-
մենսահրայում, Գորգանում, Աստարայում, որոնք մալարիա-
յի խիստ տարածված շրջաններ էին և գյուղացիները պարզո-
րեն խուսափում էին այդ վայրերում բնակվել և աշխատել:
Այդ պատճառով էլ կալվածատերերը իրենց բաժինը իշեցնում
են մինչև բերդի մեկ տասներորդը, գյուղացուն թողնելով ինք
տասներորդը:

Այդպիսի գեպքերի կարելի էր հանդիպել նույն Ատրպա-
տականի որոշ մասերում, որոնդ շնայած Հողը բերդի էր, ու-
կայն անապահով էր և մշտապես ծնթակա հարձակման ու
թալանի: Ուստի այդ վայրերում էլ կալվածատերերը իրենց
բաժինը իշեցնում են մինչև բերդի մեկ տասներորդը:

Ղաքարների թագավորության սկզբնական շրջանում ա-
ռաջացել էին նաև այսպիսի երեսութեր, կհնարինական շրր-

¹ A. K. S. Lambton, Landlord and Peasant in Persia, p. 157.

շանելերում, Խորասանում և Ֆարսի մի մասում կալվածատն-
րերը գյուղացուն արամադրում էին սերմացու և երբեմն էլ
աշխատառդ ասպար, պայմանով, որ բերբից ստանան համա-
պատախան բաժին: Ակզրում դա որոշ շափով գյուղացու օգ-
տաբն էր, քանի որ տավարը թանկ էր և գյուղացուն ձիւնուու էր
կարմածատիրոջ տավարը աշխատեցնել և համապատախան
բերբարաժին տալ: Կային նաև այնպիսի աղքատ գյուղացի-
ներ, որոնք նույնիսկ սերմացու շունեին և ստիպված հողը ան-
մշակ էին թողնում, ուստի սերմացուի դիմաց բերբի մի մասը
տալ նրանց ձեռնուու էր: Այսպիսով, վերոհիշյալ վայրերում
տարածվում է այն պրակտիկան, որ կալվածատերը բացի հո-
ղի և ջրի ռենուայից ստանում էր նաև սերմացուի ու բանող
տավարի ռենտա: Սա նշանակում է, որ կալվածատերերը,
ոռանց գոյություն ունեցող կարգը խախտելու, փաստորեն
իրենց բաժինը կրկնապատկում էին:

Սա, անշուշտ, եզակի դեպք չէր: այդպիսի փաստերի կա-
րելի էր հանդիպել երկրի բազմաթիվ շրջաններում:

* * *

Գետերից կամ աղբյուրներից ոռոգվող վայրերում, այ-
սինքն ամենաարերրի հողերում, ինչպես նաև ավելի արժեքա-
վոր կուլտուրաների մշակման տնտեսություններում կառավա-
րությանը և մուլքադարին տրվելիք բերբարաժնի ստույգ նոր-
մաներ շկային: Այդ հողերը որպես առավել ճկամտարեր ավե-
լի շուտ վերածվեցին կալվածատերերի մասնավոր սեփակա-
նության և դրանց վարձավճարն էլ բարձրացագ: Հենց այդ
պատճառով էլ մուլքադարները սկսեցին կաօկաժի տակ առ-
նել պետության իրավունքը այդ հողերի բերբից տասնորդ
ստանալու հարցում և պնդում էին, որ կառավարությանը մի-
այն կարմածատիրոջ բաժնի առանորդն է հասնում: Իրակա-
նում պետությունը այդ էլ չէր ստանում, քանի որ հարկային

զուցակներում նախատեսված գումարները մեծապես հետքին մնացել եղած աճից¹:

Գետերից և աղբյուրներից ռուգմաղ վայրերում բրնձի և ցորենի մշակույթների հողերի վարձակալման ամենաբնորոշ պայմանները հետևյալներն են. ա) կալվաֆառերը սաանում էր բերքի 22 տոկոսը, պայմանով, որ գյուղացին ամբողջովին ինքը մշակեր հողը. բ) սերմացուն կճար տալիս էր կալվաֆառերը և ամբողջ բերքը համասար կիսվում էր նրա և գյուղացու միջև. գ) մշակման համար անհրաժեշտ սերմացուն, գործիքները և տավարը տալիս էր կալվաֆառերը և սաանում էր բերքի 70—85 տոկոսը:

Առրապառականում գերազանցապես տարածված էին Հողի վարձակալման վերաբերյալ նրան ձևերը²:

Բայց պատահում էին նաև հողի վարձակալման այլ ձևեր՝ Օրինակ՝ հողատերը բնակչության օգնությամբ իր հողերում շրանցըներ էր անցկացնում, այսուհետեւ հողը վարձով էր տալիս գյուղացուն՝ կիսով կես պայմանով: Այն հողերում, որտեղ արհեստական ռուգումը բացակայում էր կամ ինչպիս ժաղավորդն էր անվանում տանձնային հողերում։ Հողը վարձով էր արգում բերքի տասը պարկից երեքը կամ ութը պարկից երկուսը կալվաֆառերով տալու պայմանով³:

Ըսդհանրապես վարձակալման պայմանները տարրերվում էին անշրջի կամ գերմի և ռուգմող հողերում: Բայց նախքան այդ հարցին անզրագառնալը նշենք, որ բոլը և նրա նըկառմամբ ունեցած սեփականատիրական իրավունքը զնական նշանակություն ուներ հողի վարձակալման գործում:

Իրանում գոյություն ուներ պետական հատուկ հանձեաժողով, որը հսկում էր ռուգման հետ կալված բոլոր հարցերը:

1. Л. Ф. Тигранов. Из Общественно-экономических отношений Персии, СПб., 1909, стр. 35.

2. Խոշի տեքստ, էջ 36:

3. Максимович-Васильковский. Отчет о поездке по губернаторствам Западной Персии..., Тифлис, 1903, стр. 27.

Այդ հանձնաժողովին նախազա՞ց կռւվում էր ոմիրաբը, որը նըշանակում էր իրի իշխան:

Դեսական ջրանցքներից սպավելու համար գանձվում էր որոշակի վճար¹: Ջրամբարների և ամբարտակների նորոգման և բարեկարգ վիճակում պահելու համար անհրաժեշտ շինունյութի հայթայթումը մտնում էր հողատիրոց պարտականությունների մեջ, իսկ աշխատութք տրամադրում էին գյուղերը²:

Խելափես տեսանում ենք, չուրը և նրա մատակարարումը նույնպես գյուղացիության շահագործման լրացուցիչ միջոց էր, քանի որ չուրը պատկանում էր կալվածատիրոջը, որի ղիմաց նա գյուղացի վարձակալներից ստանում էր որոշակի վճար և այդ չուրը մատակարարող ջրանցքների և այլ միջոցների նորոգման ժամաները նույնպես պետք է նա իր վրա վերցներ: Մինչդեռ, ինչպես ցույց են տալիս ազրյուղներում եղած փաստերը, նա օգտագործում էր գյուղացինների ձրի աշխատութք:

Չուրը իրենց մեջ բաժանում էին վարձակալները և վճարում էին մեկ բաժին հողի ղիմաց և մեկ բաժին ու երրեմն ավելին չորս ղիմաց³: Կալվածատիրոջը լրացուցիչ բաժին էին վերցնում ոռոգման համար, թեկուզ եթե այն կատարվեր ղետից: Այդ վարձավճարը նույնպես տարրեր էր: Այն կազմում էր 50 կոպեկից մինչև 8 ռուբլի 50 կոպ. լուրաքանչյուր ղետայտիններից: Երբեմն էլ ու կախված էր ժառերի ու վաղերի քանակից:

Եթե առաջ գյուղացին թերքի մեկ տասներորդը վճարում էր շահական կառավարությանը, մեկ տասներորդը գյուղատիրութը, ապա 80-ական թվականներից սկսած նա ստիպված էր բերքի մեկ տասներորդն էլ վճարի օգտագործված չրի ղիմաց,

1. П. А. Риттих, Политико-статистический очерк Персии, СПб., 1895, стр. 79.

2. E. Stack, Six Months in Persia, vol. II, p. 253.

3 Նույն ոճում, էլ 268.

4. Կարսու, Военный обзор Персидского передового театра, Тифлис, 1909, стр. 100.

իսկ բրեծի ոլյանաացիաներից ոչ թե մեկ տասներորդը, այլ բերքի կեսը¹:

Թիգշահրի, Խվաղի և Հարի գաշտերում, որտեղ ոռոգման համար օգտագործվում էին ջրհորները, պետությունը յուրաքանչյուր հորից գանձում էր մի Հարկ, որը կոչվում էր ուսարւարխից (անվազլում), ջուրը հորերից դուրս էր բերվում անիզներով, Թիգշահրում յուրաքանչյուր այդպիսի ջրանիվ վճարում էր ութը թուման։ Այդ հորերը, մինչեւիսկ պետական հոգերում, մասնավոր սեփականություն էին։ Այդ ջրհորների շրջակայրում գտնվող հողամասերը յոթ ութ տարի մշակելուց հետո շարքից դուրս էին գալիս²։

Ջուրը բաշխելու հղանակները զանազան էին։ Ամենապարզ անը այն էր, որ դյուզի հողերը բաժանվում էին վեց մասի, համաձայն վեց գանձերի և յուրաքանչյուր մասին թույլ էր տրվում մեկ որ օգտվելու ջրից։ Բայց յուրաքանչյուր գանձի սեփականատեր իր հայեցողությամբ ջուրը բաժանում էր մասերի կամ «Հարբաների»։ Կային իշարկն վայրեր, որտեղ ջրի առատության պատճառով արդպիսի բաշխման անհրաժեշտություն չէր ժագում և դյուզացին վերցնում էր այնքան ջուր, ինչ-քան իրեն պետք էր՝ համաձայնության գալով իր հարևանի հետ։ Այդպիսի էր, օրինակ, Զայենդեռութիւնի ջրակայրի դյուզի ռում, երբ զետր ջրառատ էր, կամ Եիրքունի և Զարմանայի դյուզի բառում՝ ձյումաշատ մահովանից հնատ։ Սակայն ընդհանուր կարգը այն էր, որ յուրը պետք է մեծ ուշադրությամբ բաշխվեր, Բաշխման ամենատարածված ձևը «Թազա» և «Թաշթ» ձևն էր։ Դրա բովանդակությունը այն էր, որ ամեն մի դյուզի շուրջ ուներ որոշակի թվով թազ Յուրաքանչյուր թազ տեսում է ու տասներկու ժամ։ այն էլ հաշվվում էր մոտավորապես արեածագից մինչև արեամուտ և արեամուտից մինչև արեամագ։ Եթե դյուզի ունենար տասնութ թազ շուրջ, ապա դա նշանակում էր, որ ջրի պաշարը կբավարարեր ամբողջ դյուզը

1 Г. Казм, Персидские земли..., Красноводск, 1914, стр. 125.

2 E. Stack, Six Months in Persia, vol. II, p. 259.

շրջյու ինը օրում, Յուրաքանչյուր թաղ պարունակում էր սրոշակի թվով թաշթ, ինչպես, օրինակ, Հարյուր երեսուն թաշթ, որը շատ սիրված էր Ցաղդի Հովտում։ Դա նշանակում էր վաթուն Հինգ թաշթ զուր ցերեկը և վաթուն Հինգ թաշթ զիշերը։ Եթե յուրաքանչյուր տասներկու ժամուն վաթուն Հինգ թաշթ էր, ապա ամեն մի թաշթ հավասար էր մոտ տասնմեկ բոլի ժամանակի շրի քանակի։ Այդ էլ չափվում էր այսպես, որ վերցվում էր մի պղնձե աման, որի տակում լինում էր մի փոքր անցք։ Այդ ամանը դրվում էր լրի վրա և երբ ամանը լցվում էր, Հայտնի էր դառնում, որ մեկ թաշթը լրացնէ է։

Ջրի չափերի Համար տարրեր տեղերում օգտագործվում էին տարրեր տերմիններ՝ Ֆահրազում այն կոչվում էր Շասրու, Արգարանում Շուրեն, Նայինում Շիրշե, Մահալաթում՝ Շառաւ և այլն¹։ Ֆերերունի որոշ զյուղերում շրի քանենումը ցերեկը շափվում էր մի մարգու շվարի երկարությամբ, իսկ զիշերը՝ առաղերով։

Հարկադրման եղանակը տվյալ զեպերում կատարվում էր ըստ թաղի։ Սակըրզում 24 թաղից յուրաքանչյուրը Հարկագրովում էր 15 թուման։ Դա թույլ էր տալիս տասներկու ժամ տեսզության շուր ստանալ ամեն տասներեքերորդ օրում։ Սթիրը գտնում է, որ դա, իշարկե, արտակարգ երևույթ էր, որ հարկադրման ժամանակ հողի քանակը թվում է թե Հաշճի շեր առնվում։ Թայց որքանով ինքն էր ականատես նղել, դա այդպիս շեր Ջրի պաշարի հիման վրա կատարած Հարկագրումը բացառում էր նաև Ծողի Հարաբերական բնորիությունը։ Միայն Թայզույտում նա Հանգիստի էր այնպիսի Հարկագրուման, որը հիմնված էր եղան Ծողի վրա, այն էլ կետ զրան մեկ շարիբից։ Դա կոչվում էր Շամմեի դավադդա շամմա²։

Այսպիսի տարրերակներ կային նաև երկրի այլ շրշաններում, Շահրութում, օրինակ, ընդունված էր այսուհիսի կարգ։

¹ E. Stack, Six Months in Persia, vol. II, pp. 264—265.

² Խոյք տեղան 276.

շրի տերերը զյուղացուց շրի օգտագործման համար գանձում
էին տարեկան 12—15 ռուբլի յուրաքանչյուր բազանից, այսինքն շրի այսպիսի քանակից, որը անհրաժեշտ էր տասը
խարվար ցորենի կամ գարու ցանցին ոռոգման համար։ Այդե-
տերերից գանձում էին երկու ռուբլի 40 կոպեկից մինչև 4 ռուբ-
լի 50 կոպեկ՝ շորս ժամ տևողության շրի անընդհատ հոսքի
դիմաց, եթե հացահատիկային գաշտերում թերը արգելն հա-
սած լիներ և շրի կարիք չդդացվեր, ապա ալգիներին արվելից
այդ քանակի շրի համար գանձում էր ընդամենը տասնհինգ կոպեկ¹։

Զրի բաշխման բաղմաթիվ ստարերակների կարելի է
հանդիպել, որոնք վերաբերում են երկրի աարեք նահանգնե-
րին և առանձին գավառներին։ Այդ հարցին անզրադին
են նաև հմրոպացի հանապարհորդները։

Մթեյքը նկարագրում է Լահինչանի և Զարմահալի շրջան-
ները, որտեղ կար ոռոգման կանոնավոր սխառեմ թե զանաթ-
ներից և թե զետերից։ Այդ գաշտավայրերի զյուղերը պատկա-
նում էին բաղաբեներում թնակվող մեկ կամ երկու հարուստ
հողատիրոց։ Լահինչանում երա հանդիպած առաջին զյուղը
զնված է եղել Բոֆահանի իմամջումալից 4750 թումանով՝
հինգ տարի առաջ։ Նա այդ զյուղի զանաթների վրա ժախատած է
եղել մոտ 14 հազար թուման։ Կալվածատերը արդ զյուղից
ստանում էր տարեկան 1400 թուման եկամուռով²։ Այս զյուղը
հաճախ միրարին կաշտուիլ, արտաշերք կերպով բար էր
ստանում³։ Նույն վիճակն էր ափրում Զարմահալի իլիսանի զյու-
ղերում։ Լոհինչանի Հասանարակ զյուղում հողը մշակում էին
զյուղացիները, որոնք իրենց մեջ էին բաժանենուզ պահանջմուն
հարկը, ըստ իրենց օգտագործած շրի և հարրաներից, յուրա-
քանչյուր հարրայի զիմաց 15 դրան երեք շահի հաշվով։ Հար-
րաների ընդհանուր քանակը կազմում էր 92, իսկ հարկերը
1400 թուման։

1. П. Овородников, Очерки Персии, СПб, 1878, стр. 212.

2. E. Stack, Six Months in Persia, vol. II, p. 277

3. Խոյք տեղում, էջ 278.

Զարմանալի իլիւանին պատկանող թաշթենս գլուզը վճարուո՞ւ էր 500 թուման կանխիկ և 200 խարզար հացանատիկ, որը գյուղացիները բաժանում էին իրենց մեջև՝ ըստ իրենց զրագնցրած հոգի։

Արկրի այս շրջանում նույնպես Հարկադրման հղանակներու կապված էին չըի բաշխման սկզբունքի հետ։ Սրինակ, Թուշրանանանում Հարկերը սահմանվում էին ըստ տրոնիչեիր։ Յազդի հովտում և Եիրուշում գյուղի Հարկադրումը հիմնվում էր նրա չըի պաշարների հաշվումների վրա։ Ամենապարզ ձևը, ինչպես արգեն նշել ենք, այն էր, երբ որոշակի գումարը էր սահմանվում ըստ թաշթի։ Այսպիս Յահրաշում 130 թաշթ էր հաշվում բանաշրջում ժամում և յուրաքանչյուր թաշթից զանձվում էր 18 զրան Բառ որում, այդ հողերը ամեն տարի վերաբաժանվում էին գյուղացիների միջև այնպես, որ զրա ընդհանուր Հարկը կազմեր 234 թուման։ Չնայած որ թաշթի գինը սրիկան 18 զրանի հաշվով գյուղացին պետք է վճարեր ամբողջ տարզա համար, բայց իրականում երկու ամսվա ընթացքում ընդամենը հինգ անգամ էր նրա հերթը հասնում և նա չուր էր սուանում իր հողերը մշակելու համար։ Սա վերաբերում էր գյուղի վարիչահողերի այն ժամանք, որոնք պետական սեփականությունն էին։ Իսկ գյուղի վարելահողերի մասնավոր անգամանատիրական մասում յուրաքանչյուր թաշթ չըի գիմաց վրաբիւմ էր ընդամենը յոթը զրան։¹

Մարզպաշտում, Եիրազում և Թավարի հովտում, Զավարանում և Ֆիրուզարադում անշրջի (դեյմի) հողերից ստացված բնիրի կալվածատիրական բաժինը մեկ հինգմերորդն էր, այն էլ որոշվում էր կաշում։ Խիրի և Լարի, ինչպիս նաև Էարի և Ֆորգի միջև ընկած երկրամասում, որտեղ լինեները շատ փարք էին և դանաթները քրով անուցել չէին կարող, գյուղատնտեսությունը ամբողջովին կախված էր տեղումներից, որոնք առանձնապես

1 Նույն տեղում, էջ 279։

2 Նույն տեղում, էջ 171։

տուա չէին: Ալդ պատճառով էլ այդ վայրերում բերքից գանձ-
վող սահմանված բաժինը մեկ տասնորդն էր¹:

Եիրազի և Լարի միջև ընկած գյուղերում գյուղացիները
կալվածատիրուց տալիս էին բերքի երկու երրորդը: Մարզպաշ-
տում, Եիրազում և Թավարի հովտում ու Ֆիրուզարազում վր-
շարվում էր բերքի երկու երրորդը, կամ նրա զինը գրամով՝
ըստ կալվածատիրուց ցանկության, Խավարանում գյուղացի-
ները վճարում էին բերքի կիսը: Նիշափուրում կալվածա-
տերերը վերցնում էին բերքի երկու երրորդը, ինենց վրա վերց-
նելով պետությանը տրվելիք բոլոր առուրքերը²:

Ֆարսի գյուղերում ոռոգմազ հողերի վարձակալը տալիս էր
բերքի երկու երրորդը, այսինքն՝ մի բաժին հողի, մի բաժին
շրի գիմաց և միայն մնացած մեկ երրորդը պահում իրեն: Եի-
րազի մուտակայեցում գտնվող նաևնեին Ձենիան գյուղում, ինչ-
պես նաև նրա հարևան վեց այլ գյուղերում գյուղացիները
իրենք էին սերմացում տրամադրում և վերցնում էին բերքի
երկու երրորդը³:

Քահեա գյուղը Ֆարսի նահանգում պատկանում էր Հոբ-
թայի խանին: Նա գյուղացիներին տալիս էր նաև սերմացու և
բանող տագար, իսկ բերքի բաժանումը տեղի էր ունենում հե-
տեղալ կերպ: Լոթֆալի խանը բերքի մեկ տասներորդը վերց-
նում էր իր համար, մեկ տասներորդը սերմացուի դիմաց, մը-
նացած շորս Հինգերորդից կեսը նա վերցնում էր տագարի
դիմաց, իսկ մնացածը բաժանում էր ընդունված ձևով՝ մեկ
բաժին հողի համար, մեկ բաժին շրի, վերցին մասն էլ գյուղա-
ցուն: Այսպիսով, գյուղացուն հանում էր բերքի երկու տասն-
հինգերորդ մասը⁴: Սա այն դեպքում էր, երբ հողատերը մի
անձնավորություն լիներ: Այն գյուղերում, որոնք ունեին մի
բանի տերեր, ապա նրանց միջն բերքաբաժնի բաշխման մի
բանի հղանակներ կային: Դա կատարվում էր կամ ըստ ռահ-

1 Նույն տեղում, էջ 258.

2 A. K. S. Lambton. Landlord and Peasant in Persia, p. 173.

3 ՇԳՎԱ, գ. 75, մ. 236, հ. 49.

4 E. Stack, Six Months in Persia, vol. II, p. 258.

միւ, այսինքն՝ նայած գյուղի ո՞ր մասը ո՞ւմ էր պատկանում, կամ է Հոգեբի ու վարձակալների բաշխման սկզբունքով¹:

Սմելքը, շրջելով Յարսի տարրեր շրջաններում, հատկապես Յորդից գեղի բարձր լեռները տանող շրջաններում, և դրա ու Սիրտանի մեջ ընկած երկրամասում, Հանդիպում է Շողային եկամուտների բաշխման միանգամայն այլ եղանակների. Դա գյուղի բաժանումն էր ըստ քրօնիշեներից, որը որոշակի թվով բազմապատկելով՝ ստացվում էր գյուղի ամբողջ եկամուտը Բոնիշեն սովորաբար նշվում էր թուժանով և հոգացին եկամուտը ստացվում էր այսքան զրան զրանից, կամ փուլ փուլից, կամ շահի շահուց: Այսպիս, Քահայում բոնիշեն հինգ զրան էր, իսկ պահանջվող գումարը 300 փուլ էր յաւարանցուր փուլից, այսինքն 300 զրան բոնիշեն մեկ զրանից, որը նշանակում էր 5×300=1500 զրանի: Բիրաբանում և Դեհրուտանում էլ նույն եղանակն էր կիրառվում: Սիրտանից Հյուսիս գանգոզ լինաւային շրջանի գյուղերում այդ գումարը ավելի պակաս էր. այն կազմում էր 120—150 զրան՝ բոնիշեն յուրաքանչյուր զրանից: Զարանգի Հյուսիսում գտնվող Սար Ասիար, Խանուղ և Թողրայա գյուղերում բոնիշեն յուրաքանչյուր թուժանի զիմաց 40 թուժան էր վերցվում: Եթե բոնիշեն համեմատարար մեծ լիներ, ինչպես Սար Ասիարում, որտեղ այն կազմում էր 11 թուժան, ապա պահանջվող գումարը շատ մեծ էր լինում: Թողրայայի բոնիշեն լորս թուժան էր. շնայած որ մեծ և բարգավաճ գյուղ էր, նրանից պահանջվում էր 160 թուժաններ²:

Քաշխաման մի այլ եղանակն էլ զանգային եղանակն էր, երբ հիմք էր ընդունվում գյուղի վեց զանգը, յուրաքանչյուր զանգը բաժանելով 16 հարրայի, որը կազմում էր 96 հարրա: Այդ զանգերի կամ հարրաների որևէ մասը կարող էր պատկանել որևէ կալվածատիրոջ, որը բնականաբար կստանար համապատասխան բերքարաժինը:

1 Նույն տեղում, էջ 258.

2 Նույն տեղում, էջ 260.

Սար Ասիաբում գյուղի վեց դանգից լորսը պատկանում էր Թերմանի գարրերին (կրտքապաշտներին—Հ. Յ.) մեկը մասնավոր սեփականություն էր, կես դանգը պատկանում էր Թերմանի մոշթեհեղին, իսկ մնացած կես դանգը գյուղում ապրող հողատերներին: Գյուղի բռնիւն կազմում էր 11 բնան, այսինքն՝ ամեն մի դանցը $\frac{11}{6}$ թուման կամ $\frac{2200}{6}$ շահը:

Որոշ գյուղերի առանձին դանգերը պատկանում էին պետությանը: Այսպիսում, հիմ պետությունը տիրում էր որևէ պյուղի երկու գանգին, ապա իր վարձակալներից ևս վերցնում էր արտադրանքի յոթը տասներորդը: Այդպիսի բաժինն էր վերցվում, օրինակ, Ռաֆայելյանում: Այդտեղի վարձակալ գյուղացիները սովորաբար սերմացուն առանում էին կալվածատիրութից: Այրշանի հոգակ որոշ գյուղերում դանձվում էին ամենի մեծ բաժինները: Արբանարադի գյուղացիները սերմացուն առանում էին կալվածատիրութից, Հողը մշակում էին իրենց տավարով, բայց կալվածատիրութիւնը տալիս էին իրերի վեցերորդը: Ազելի մանր կալվածատիրերի վարձակալները տայիս էին թերքի 70—75 տոկոսութեաւ:

Խեղիս տեսնում ենք, Հողի վարձակալման ու թերքի բաշխման այս եղանակները բավական բարդ էին և խնճված: Հասկանալի է, որ խեղճ ու անգրագիտ գյուղացին դժվարությամբ պետք է գլուխ հաներ դրանից, իսկ կալվածատերը կամ նրա ներկայացուցիչը հեշտությամբ կարող էր խարել նրան, մի բան, որ անզի էր ունենում ամենուրեք:

Գետությանը, կալվածատիրոջն ու գյուղացուն հասնող թերքարամնի դրամական արտահայտության ակնհայտ օրինակ կարող է հանդիսանալ Հետևյալ պատկերը: Տիգրանովը որպես օրինակ նկարագրում է Հարավ-արևմտյան Ասրամատականում գանգող մի կալվածք, որը ուներ մոտ 1800 գյուղական ծուխ: Այդ վայրի ոռոգումը կատարվում էր գետից:

¹ Նույն տեղում:

² Նույն տեղում, էջ 553—554.

Կալվածատերը ստանում էր 35,600 թուման եկամուտ, որից պետությանը առլին էր միայն 1350 թուման։ Այդ կալվածքի ծախսերը կազմում էին 100 թուման հարեմին, այն բանի համար, որ նու բացարձակապն չի միջամտում կալվածքի ներքին գործերին, 180 թուման բանակին տրամադրվող վեց հեծյալներին և լուսապն ապահովելու համար, 1200 թուման մորացիրի ոռնիկը. ընդամենը 1480 թուման։ Մինչդեռ շարիաթի օրենքների համաձայն ամրող այդ եկամտից մուլքադարին կարող էր համանել միայն 7610 թուման, իսկ պետությանը՝ 11,170 թուման։ Այս թվերը ցույց են տալիս, որ ստացված եկամուտների բաշխման նորմաները կառավարության և կալվածատիրոջ միջև փոխվել էր հօգուտ կալվածատիրոց՝ ավելի բան հինգ անգամ¹:

Կարելի է բերել նաև մի ուրիշ օրինակ։ Արևելյան Ասորապատկանում գտնվող 160 գյուղական ծխից բաղկացած մի կալվածքից մուլքադարը ստանում էր 6,300 թուման։ Մինչդեռ շարիաթի օրենքների համաձայն նա պետք է ստանար 1745 թուման, իսկ պետությունը՝ 3415 թուման։ Մինչդեռ իրականում պետությունը հարկային ցուցակի համաձայն ստանում էր ընդամենը 6000 բաթման հացահատիկ և 140 թուման գրամ, այսինքն՝ ընդամենը 500 թուման։ Կարելի է բերել մի ուրիշ օրինակ ևս։ Մի թիուզար որպես ոռնիկ մի գյուղից ստանում էր 500 թուման, բայց նա հետապայում այդ գյուղը գարձրեց մուլք և սկսեց ստանալ 6000 թուման²:

Այս թվական տվյալները պարզ պատկերացում են տալիս իրանական գյուղացու շահագործման և նրկրում տիրող անօրինականությունների և կալվածատերների կողմից կատարվող ստանձնությունների մասին։

Գյուղացու ընտանիքի բյուջեի մասին գաղափար կազմելու համար բերենք հետեւակը օրինակը։

1. Л. Ф. Тигранов, Из Общественно-экономических отношений в Персии, СПб, 1909, стр. 47.

2. Նույն տեղամ, էջ 30։

Աստրապատկանում գյուղական ժողովը մեծ մտամբ քաղացած էր լինում 5—6 շնչից: Սուխը ունենում էր շարա գլուխ և կամ զոմեց, 1—2 կով, 1—2 էջ, մեկ ձի կամ չորի, 4—10 ոչխարի: Այսպիսի ծովար ի վիճակի էր մշակել մոտ վեց դիմայտին հողամաս՝ 80—90 փութ սերմացուով: Թացի արդ, նույնը բան հող մնում էր հանդիսատ վիճակում, 1—2 դեպատին խոռո էր յինում և 2—6 դեպատին էլ կազմում էին համայնքական արտավայրերը: Այսպիսով, լավագույն դեպքում գյուղացիական ծխին ընկեռում էր 15—20 դեպատին հողատարածություն: Գյուղացիական ծովար ստանում էր տարեկան 500 փութ հացաւատիկ:

Այդ ժամանակից ևս վճարում էր.

տասերգ պիտումաներ	59 փութ
տասերգ մալլազարին	49 *
պլանարկ և անառնեարկ	18 *
խոտից—զարմանեց	11 *
զամանակաց և բարերցն	17 *
մարմշիրին և պաշտոնային	14 *
մարմշիրին զաջոնի հերուս	16 *
նշերեւո, տականքներ և այլն	14 *
զամանակարին և հայիններին	12 *
շնորհություն և ձրի աշխատանք	60 աշխ. որ
ցաներսի համար վերցրուծ սերմացուի	22 *
հետի պարտց	45 *
պատկանեցը	11 *
հրոնական հարկեր	10 *

Ընդունեց... 306 փութ

Այսպիսով 15—20 դեպատին հողամաս ունեցող ծովար դոյմություն ունեցող պայմաններում ստանում էր մոտ 500 փութ հացահատիկ, որից ապրուստի և այլ ծախսերի համար նրան մնում էր ընդամենը 200 փութ, այսինքն 40 տոկոսը, այն էլ եթե նա ուժեղ մուլքադարի հովանավորության տակ զերծ մնար վարչական մարմինների և պաշտոնյաների սնանկացնող միշտությունից¹:

1. Л. Ф. Тагранов, Из общественно-экономических отношений в Персии, СПб, 1909, стр. 53—54.

Սա, իշտրկե, իրանի այն ժամանակվա պայմաններում իդաւական վիճակ էր: Բայց այդպիսի վիճակի կարելի էր հանդիպել միայն երկրի հյուսիսային և ավելի շուտ հյուսիսարևելյան շրջաններում, այսինքն Ասրապատականում:

Սակայն Ասրապատկանի նահանգի տարրեր շրջաններում էլ հոգի գարձակալման եղանակները զանազան էին: Տարրեր աղբյուրներում հղած փաստերի համաձայն Ասրապատականի որոշ մասերում կալվածատերերը վերցնում էին բերքի մեկ տասներորդը: Բայց երբ նրանք տալիս էին նաև սերմացու ապա վերցնում էին բերքի կեսը¹, նամեքնի խանությունում գյուղացիները կալվածատիրոջը տալիս էին բերքի 30 տոկոսից մինչև 50 տոկոսը: Բացի այդ, նրանք պարտավոր էին վրանարել նաև կանխիկ գրամ հետևյալ Հաշվով: Եթե, օրինակ, ոյուղը կալվածատիրոջը պետք է տար 10 խարվար հացահատիկի, ապա այդ դեպքում պետք է վճարեր նաև 20 թուման, իսկ եթե 20 խարվար, ապա պետք է տար 40 թուման և այլն²:

Ընդհանրապես պնտը է նշել, որ ապրանքա-դրամային հարաբերությունները և գյուղացուց բերքարաժինը ամբողջութեան կում մասամբ գրամական ձևով պահանջելը ավելի շատ տարածված էր հնոց Ասրապատականում: Քան երկրի այլ մասերում: Երկրի հարավում այդ պրոցեսը տեղի ունեցավ ավելի ուշ և զանգաղութեան մեջ:

Պատահում էին նաև դեպքեր, երբ ամբողջ կալվածքը վարձով էր արգում որոշակի պայմաններով: Օրինակ՝ Արդարիկի գավառում Սելիֆուլմուր Սուլթանի և Աշմեդ խանի ժամանական կալվածքները վարձով էին տրվում հետևյալ պայմաններով: Վարձակալին տալիս էին բուր, սերմացու և բանող տավար և փոխարինը ստանում ամբողջ բերքի 2/3-ը կամ 3/4-ը³:

¹ G. N. Curzon, Persia and the Persian Question, vol. II, 490.

² هاتری روز دنیاچی سقراطیه ... ح

³ Л. К. Артаманов, Северный Азербайджан, Тифлис, 1890, стр. 26.

³ А. К. Артаманов, Персия как наш противник в Закавказье, Тифлис, 1889, стр. 14.

Այս պրակտիկան կիրառվում էր բազմաթիվ շրջաններում, չնայած, որ դրա շափերն էլ միտտեսակ չէին:

Առողջապահանում բնակվում էին նաև ազգային փոքրամասնություններ: Կային Հայարնակ և ասորաբեակ գյուղեր, որոնց տերերը մեծ մասամբ ազրբեջանցիներ կամ քրդեր էին: Որոշակի Հետարքրություն են ներկայացնում այդ վայրերում Հողի վարձակալման պայմանները:

Հարադարձի գավառի Հայարնակ կալվածատիրական Հողերում աշխատող գյուղացիները արհեստական ոռոգման կարիք լուսնցող Հողերից կալվածատիրուցը վճարում էին ավելի պակաս բերքաբաժին: Ազրյաւրները վկայում են, որ այդ գյուղերում գյուղացիները կալվածատիրուցը վճարում էին ոչ ավելի քան բերքի 1/3-ը¹:

Հիշարժան տվյալներ կան Ռումիայի շրջանի տարարնակ գյուղերի Հողային Հարաբերությունների մասին: Այնահետ բնակվում էին մոտ 20,000 ասորիներ, որոնք ապրում էին քրդերից, պարսիկներից և Հայերից առանձին: Նրանց գյուղերը շրջապատված էին մուսուլմանական բնակչությամբ: Նրանց գյուղատերերը կամ արքաբները, ընդհանրապես մուսուլմաններ էին: Բիշովը գրում է, որ ասորիները աշխատամեր և արտադրող մարդիկ էին, ուստի նրանց գյուղերի սեփականատեր լինելը համարվում էր բավական ձեռնուուր:

Այդ շրջանը ընդհանրապես համարվում էր բերքատու, ուստի կալվածատերերը մեծ նախանձախնդրությամբ էին պահում իրենց Հողերը: Այդ գյուղերում Հողի վարձակալման այսպիսի եղանակ գոյություն ուների եթէ վարձակալը տրամադրում էր նաև սերմացուն, ապա նա կալվածատիրուշը տալիս էր բերքի մեկ երրորդը: Իսկ եթէ սերմացուն կալվածատերն էր տալիս, ապա նա վերցնում էր բերքի երկու երրորդը: Մշակվող Հողի վարձակալը կարող էր փոխվել ամեն տարի: Կալվածատիրությունը տրվում էր բնամթերքով և լիսարվելու համար նրանց

¹ П. Н. Аверьянов. Отчет о поездке по Северному Азербайджану... в конце 1899 года. Тифлисъ, 1900, стр. 23.

² J. B. Bishop. Journeys in Persia and Kurdistan, vol. II, p. 237.

պահանջում էին, որ բերքը կալվածատիրոց կալում։
Բացի այդ կալվածատիրոց ժառանիրը հերթով գիշեն ցեղենկ աշ-
տարակից հոկում էին բերքը, այնպիս, ինչպես հոկում էին
բանշարանոցները։ Կալվածատիրոց ներկայացուցիչը կամ
ուսաբը ժամանակ առ ժամանակ գալիս վերցնում էր տի-
րոջ բաժինը։ Թիշոփը, ուսումնասիրելով ասորաբնակ դյու-
զերի վիճակը, նշում է, որ վերաբերմունքը քրիստոնյա-
ոյուղացիների նկատմամբ համարյա նույն էր, ինչ նը-
րակց հարման մահմեդական գյուղացիների նկատմամբ։ Դոկ-
տոր կարարին, որը մոտ երեսուն տարի աշխատել էր
այդ շրջաններում, նույնպես խոսում է Ատրպատականում
իրանուկան իշխանության ներքո ապրող տարրեր ազգու-
թյունների վիճակի մասին։ Իրանում ապրող ասորիները
և հայերը, պրում է նա, իրենց Հարկան մահմեդական
ոյուղացիների հետ միասին տառապում էին նեխված հասա-
րակարգից և կառավարման արատավոր ձևերից, որը նը-
րանց վկին էր փաթաթված ավելի վաղ ժամանակներից։ Այն-
տեղ իշխում էին հողատիրության վատթարագույն ձևերը։ Խեղճ
ուայսթը կամ վարձակալը պարտավոր էր կալվածատիրոջը
վճարել իր ամրողք արտադրանքի կեսը կամ երկու երրորդը։
Դիմահարկից բացի նա վճարում էր հարկ իր տան, խոտի, ար-
տերի, պաղատու ծառերի և անասունների համար։ Բայց դա
գեռ ամբողջը չէր։ Նրա գործությունը ամբողջովին կախված էր
կալվածատիրոց խղճից։ Օրիներով կալվածատերը իր ռայաթ-
ներից պահանջում էր երեք օրվա անվճար բեզարություն։
Իրականում նա ստիպում էր նրանց աշխատել ինչքան ինքը
հարմար էր գտնում։ Երբ կալվածատերը այցելում էր իր գյու-
ղերը, ապա նա վերցնում էր ինչ նա ցանկանար։ Եթե զյուղա-
ցիները հացի կարիք էին զգում, ապա կալվածատերը նրանց
հացահատիկ և ալյուր էր վաճառում շուկայական գնից բար-
ձըր։ Ամենաշնչին զանցանքի համար նա ծեծում և խոշտան-
գում էր իր գյուղացիներին։ Նվազեն ինեղն գյուղացին այս ա-
մենի համար համարձակվեր գանգատվել, ապա նա ենթարկ-
վում էր ավելի խիստ հնտապնդումների։ Ահա այս տեսակի-

տից մուսուլմանները, բրիստոնյաները և հրեաները տառապում էին միատեսակ¹:

Ուրմիայի շրջանի ասորաբնակ գյուղերում ընդունված էին նաև հետևյալ տուրքերը. բացի հողային ոճնայից գյուղացիները պարտավոր էին տալ անտառաշարկ, երկու հավ, մի թեր քակոր, որոց քանակին ձու, երեք օրվա բեզարություն կամ նրա արժեքը և մի գումար յուրաքանչյուր ամուսնության առիթով։ Մի որշակի գումար և վատելափայտ էլ արգում էն մուսուլմանական զեկուգարին, որը կոչվում էր «սարփառստար»²։

Այս փաստերը ցույց ձն տալիս, որ Ասրուտականում մնակվող ազգային փոքրամասնությունները նույնպիսի շահագործման էին ենթարկվում Իրանի իշող շրջանների և կուվածատերերի կողմից, ինչպես իրենց հարևան մահմեդական գյուղացիները, ուստի միանգամայն հասկանալի է, որ ազատագրական պայքարի զարթոնքի շրջանում իրանցի գյուղացու կողքին պուրարի գուրս եկան նաև ազգային այդ փոքրամասնությունների ներկայացուցիչները, որոնք փայլուն էին զրեցին Իրանի հեղափոխական պատմության մեջ։

Հոդի վարձակալման տարբեր եղանակներ կային երկրի այլ նահանգներում և շրջաններում։

Աստրաբագի թուրքմենարենակ վայրերում տիրում էր հետեւյալ վիճակը. Այս գավառում հողը շատ բերրի էր, ուստի հեռավոր վայրերից, մինչև իսկ Աֆղանստանից գյուղացիներ էին գալիս այդտեղ բնակություն հաստատելու Այդ վայրերում ռազմադրդիկ և կանայք գույքային հավասար իրավունքներ էին վայելում և հավասար շափով ժառանգություն էին ստանում։ Այդ պատճառով էլ սկզբնական շրջանի մեծ կուվածքները աստիճանաբար փոքր մասերի բաժանվեցին. այնտեղ կարելի էր հանդիպել այնպիսի զեղութերի, երբ ընդամենը վեց ակր հողամասը ուներ ինը տերը Մանը հողատիրու-

¹ L. B. Bishop, Journeys in Persia and Kurdistan, vol. II, p. 239—241.

² Խոյի տեղանուն։

թյունը՝ մի կողմից, և շրջանում տիրող դրությունը՝ մյուս կողմից, բանը հասցերի էր այնտեղ, ինչպես անգլիական հյուպատոս վեղապես լովետն էր համբարգում իր զեկուցագրերից մեկում, որ ոչ միայն աղքատանում էր ողջ շրջանը, այլև անապարհությունն էր առաջանում բնակչության մեջ և խափանվում էր տնտեսության զարգացումը¹. Մազանդարանում բնիքը բաժանվում էր հինգ մասի. եթե գյուղացին կարողանում էր սերմացու և անասում տրամադրել, ապա նա ստանում էր բնիքի մեկ հինգերորդը². Դյուզացու բաժիննը ալստեղ համեմատաբար մեծ էր, քանի որ Մազանդարանում մշակմամբ էր զիսավորապես բրինձ, որը պահանջում էր տաճանակիր աշխատանք. Թացի այդ կիրայական պայմաններն էլ շատ աննպաստ էին բնակչության համար, տարածված էր մալարիայի ավերիչ հիվանդությունը, Կալվածատերերը ստիպված էին զյուզացիներին ինչ-որ չափով փոխառուցել, այսպիսս այդ վայրերը կարող էին անմարդաբնակ դառնալ:

Թնդրանից հարավ ընկած մի շարք գյուղերում, ըստ կողակ զինվորական Ալի ազայի 1898 թ. մի վկայության, բնիքի բաժանման հղանակը չփանցքությունը, Կալվածատերերը ստիպված էին զյուզացիներին ինչ-որ չափով փոխառուցել, այսպիսս այդ վայրերը հանձնում էր կալվածատիրոջը³.

Կալվածատերերի ներկայացուցիչների կամ յորաշիրների ուղղակիությունները մեծ չափերի էին հասնում. Պատահում էին զեպքեր, երբ կալվածատիրոջ ներկայացուցիչները, հակառակ նախապես կայացած պարմանավորվածության, գյուղացուց ավելի մեծ բաժին էին պահանջում. Օրինակ՝ Արարի շրջանում Կայեմ Մազամ Ֆարահանիի կալվածքներում մորաշիրը, կարող խախտելով, մեկ հինգերորդի փոխարեն անցրդի, բնիքի մեկ չորրորդն էր վերցնում⁴, Իրանական աղբյուրներում բազմաթիվ փաստերի կարելի է հանդիպել, թե ինչպես մորա-

¹ O. N. Carzon, Persia and the Persian Question, vol. I, p. 359.

² هاتوی رته دلایلی سفرنامه ... ج ۷۴

³ ЦГВИА, ф. 76, д. 213, л. 3—5.

⁴ محمد علی عبادی اصلاحات ارضی در ایران تهران ۱۹۴۰ ج ۱۳ ص ۲۰۷

շիրները բացի կալվածատիրու բաժնից, գյուղացուն բամում
էին և իրենց ևս բաժին հանում: Թիւ չէին դեպքեր, երբ մորու-
շիրները Հետազայում իրենք էլ հողեր էին ձնոք բերում և
վերածվում կալվածատերերի:

* * *

Իրանական Հեղինակները բազմաթիվ տվյալներ են հա-
ղորդում գյուղացիներին պարապրվող զանազան, երրեմն
աւարօրինակ և զավեշտական, տուրքերի մասին: Օրինակ՝
Թերմանի գյուղացիներից գյուղացիներից աւարիներ շարունակ
գանձում էին այսպես կոչված ռհաքնմի փայտը և աւա-
զաքավարության դրամք տուրքերը: Դրանց բովանդակու-
թյունը հետեւալն էր: Երբ Ալա ոլ Մոլոք ճամփորդում էր զեպի
Թլուղիստան, առաջին կանգառը Մահան գյուղն էր: Մահանի
Հարեմը տուշարկում է նրան պիտի փողը Հարկի ստացա-
կան տալ և դրամ ստանալու Ալա ոլ Մոլոք Հարցնում է, թե դա
ինչ բան է: Նրան բացարում են, որ անցյալում, երբ նահան-
գապետը գնալիս է եղել Թլուղիստան, Հանցավորներին
պատժելու և ծնծնիու Համար անհրաժեշտ ճիպուները Մա-
հանից է վերցնելիս եղել: Թևակէությունը մինչեխսկ տես-
սումներ է տրամադրել այդ ճիպուները նպատակատեղին
փոխազրելու համար: Նահանգապետներից մնկը գործը հեշ-
տացնելու Համար այն վերածել էր գրամի և, ստարեկան երկու
հարյուր թուման փայտի դրամ ստանալով, ստացական էր
տալիս, իսկ հետո այն գանձում էր Մահալի ուայաթներից:

Խել վերաբերում է անթաղաքավարության Հարկին, ապա
զրա իմաստն էլ Հետեւալն էր. մի անգամ մի գյուղի բաղիու-
զա նահանգապետի մոտ գտնված ժամանակ անհրազարավա-
րություն է թույլ տալիս: Նահանգապետը, խիստ վիրավորանը
զգալով, հրամայում է քաղիուգայի սպիտակ մորուքը խուզել:
Քաղիուգան ստիպված է լինում իր մորուքը փրկագնել լոթա-
նասուն թուժանով: Դրանից հնառ տարիներ շարունակ նա գյու-

զացիներից գանձում էր այդ տուրքը՝ անցաղաքավարության գրամ անունով։ Հազորդելով այս տվյալները, Նազեմ ոչ Բալամ Թերմանին դրում է, որ եթե Թերմանի այդ ժամանակվա հարկային մասյանը ստուգինք, այդպիսի շատ տուրքերի կհանդիպենք, Հենց ալդ պատճառով վէ Թերմանի հարկերը 400 հազարից ավել էին։

Այսպիսի առուրենքի կամ բեղաթների կարելի էր հանդիպել երկրի բոլոր մասերում։

Այդ տուրքերից ամենածանրը սուրսաթն էր, որի մասին արդեն խոսնէ ենք։ Մեծ վեղիր Միրզա Թաղի խանը կառավարակուն մի պրոկլամացիայով վերացրեց այդ տուրքը նրանի ու աղային էթեֆաղիյեա առաջին թերթի հրարութ համարում տպադրվեց կառավարության հայտարարությունը, որտեղ ասված էր, որ ույաթի բարեկեցությունից ելնելով՝ որոշվում է արգելել պաշտոնյաներին մի տեղից մի այլ տեղ գնալիս սուրսաթ պահանջել, բայտի որ այդ պատրովակով ույաթներին տանդում են ու վնասում։ Սուրաբանշյուրը պետք է իր սուրսաթը ընդունված ձեռվ ձեռք բերի և ույաթին շվենասիր Թայց դա լի վերաբերում բանակին, որը պետք է լինի կառավարության հրամանով միայն։

Սակայն այդ հրամանը լիրագործվեց և գյուղացիները շարումակում էին իրենց վրա կրել այդ ժանր բեռը։

Դյուզացիներին պարտադրվող տուրքերից էր տղասթանողագործ կամ ռավարեղը։ Դա կայանում էր նրանում, որ գյուղացիներն ընտանիքը պարտավոր էր մննդամթերք մատակարանի կարգածատիրուց հետևյալ շափերով։ Մեկ ույնար կամ զառ, 5—15 հատ հավ և ճուտ, 25—300 հատ ձու, 0,5—1 փութ ալյուր, 3—15 ֆունտ յուղ, 2—10 ֆունտ պանիր, սեր, կաթ, չարար և այլն։ Համախ այդ ամենի գումարը մի քանի անգամ գե-

قاسم الاصلاخ كرمانی تاریخ بیداری ایواتیان مهند اول تهران ۱۳۵۲

فرویدون آنیت فکر آزادی و مقدمه نهضت مشروطیت ایران ۱۹۶۱ تهران ۱۳۶۰ ص ۱۰

բազանցում էր մինչև իսկ մի քանի ընտառելիք ունեցող կալվա-
ծատիրոջ կամ պաշտոնյաների կարիքները¹:

Կար նաև մի տուրք նո, որը կոչվում էր բարբարդեց, որը
նշանակում էր կալվածատիրոջ կարգադրությամբ ապրանքներ
փոխադրել նշանակված վայր. կալվածատիրոջ պարտադրում
էին գյուղացիներին իրենց անառուներով՝ առողջին հերթին
կալվածատիրոջ բաժինը առջապնիք շուկա, իսկ վաճառքը
չկարանալու դեպքում նրանք պարտավոր էին ապրանքը փո-
խադրել մի ուրիշ վայր, մինչև որ մի որոշ տեղում վաճառվինք²:

Բնական է, որ սա բեղարային աշխատանքի նման մի ժա-
ռայություն էր, որը բավական ժանր էր գյուղացու համար,
հատկապես եթե նկատի ունենալոց, որ ապրանքա-գրամային
հարաբերությունների զարգացման պայմաններում զյուղա-
տեսանական մթերքները մեծ քանակով շուկա էին դուրս
բերվում:

Տարբեր ժառայությունների համար նույնպես գյուղա-
ցուց տուրք էր պահանջվում: Գյուղացուն ուներ այսպիսի
կարգ, որ պետության և մուլտադարի բաժինը զանձնելու ժա-
մանակ գյուղացուց գանձվում էր նաև բնամթերքային և դրա-
մային տուրքերի 10 տոկոսը՝ պաշտոնյաներին և 2,5 տոկոսը՝
մորաշիրի համար³:

Թեգարի տուրք էր գանձվում նաև, եթե շահը կամ իշխան-
ները զնում էին որսի, թա նշանակում էր, որ գյուղացիները
պարտավոր էին սպասարկել շքախմբին՝ անվճար մատակա-
րարելով սննդամթերք և այլ հարմարանքներ⁴:

Կային նաև փաստեր, եթե կալվածատիրոջ իրենց հողե-
րի մի մասը մշտկում էին թեգարային աշխատանքի միջոցով:
Օրինակ՝ 1894 թ. Թուրքարունում և այլուր ավելի քան 50 000

¹ Л. Ф. Тиаганов, Из Общественно-экономических отношений в Персии, СПб, 1909, стр. 43.

² Л. Ф. Тиаганов, Из Общественно-экономических отношений в Персии, СПб, 1909, стр. 44.

³ Նույն տեղում, էջ 43:

⁴ J. Bassett, Persia, The Land of the Imams, p. 277.

ծիր աիրող նույն էս Սոլթանը գյուղացիներին ստիպում էր բեզուրային աշխատանք կատարել¹: Որոշ շրջաններում բեզգայացին աշխատանքը փոխարինվում էր դրամային տուրքով:

Բացի վերոշիշյալ հարկերից և տուրքերից երրեմն լինում էին արտակարգ գանձումներու նթե որևէ մեկը հրաժարվեր այն վճարել, ապա խանը նրան բանտարկում էր կամ այնքան մտրակահարում մինչև ստանում էր պահանջված գումարը²:

Ընդհանրապես կալվածատերների կողմից գյուղացիների խոշտանգումների և այլ հարաժանքների մասին բազմաթիվ փառատեր կան իրանական ազրյուրներում: Իշխանության և գառական օրենքների, ինչպես նաև գյուղացու անձը և ունեցվածքը ապահովող օրենքների բացակայությունը մեծ հետապնդություններ էր ստեղծում կալվածատերների համար գյուղացիների հետ վարպետու որպես ստրոկների: Երբեմն կալվածատերները դաֆանության և պատիժներ հնարելու տեսակներից իրար հետ մրցակցում էին, իսկ գյուղացիները տառապում առավելագույն շափով:

Օգործներկովը դրում է, որ գյուղացուց գանձվող բոլոր հարկերին ազելանում էր նաև բազմաթիվ այլ պարտականություններ, եթե կալվածատերը ապրում էր գյուղում³:

Գյուղացիների համար ժանր էր նաև բնամթերքը դրամի վերածելու և դրամային հարկ վճարելու գործը: Իր մթերքները վաճառուելու ժամանակ գյուղացին իհարկե չէր կարողանում մրցակցել կալվածատիրոջ հետ և մեծ կարուսաներ էր ունենում: Բացի այդ, յուրաքանչյուր փութ մթերքի գինը, որով թերանը հրամայում էր վաճառել մթերքը, մինչև գյուղացուն հանելը մեծանում էր առնվազն 40 տոկոսով և դանում նշանակալից շափով ավելի բարձր, քան շուկայական գինը: Այս ամենի հետևանքով գյուղացին սովորաբար ընկնում էր

1. ШГВИА, ф. 76, д. 179, л. 25.

2. Максимович-Васильковский, Отчет о поездке по губернаторствам Западной Персии, Тифлис, 1903, стр. 27.

3. П. Овородников, Очерки Персии, СПб, 1878, стр. 208.

վաշխառուների ճիրանը, վաշխառուներ, որոնց համայն Շնչաց
իրենք մուլքագաղները կամ մորաշիրներն էին¹.

Մուլքագաղները լայն չափերով կիրառում էին նաև
պարտքեր տալու հղանակով գյուղացիությանը վերջնական
կախման մեջ գցելու պրակարիկան։ Մուլքագաղն դնինչխանու-
թյան պարմաներում դա փաստորին վաշխառության մի քո-
ղարկված ձև էր, քանի որ այն կատարվում էր աժանգակու-
թյան և օգնության քողի տակ։ Այդ պարտք-օգնությանը կա-
րող էր լինել և դրամով և բնամթերքով։ Եթե պարտքը արվում
էր դրամով, ապա վերցվում էր 40 տոկոս, այսինքն մեկ թու-
ման պարտքին ավելացվում էր երկու զրան և պարտաթուղթը
գրվում էր վեց ամիս ժամկետով։ Եթե պարտքը արվում էր
բնամթերքով, ապա վերցվում էր 50 տոկոս, այսինքն յուրա-
քանչյուր երկու խարզար հացահատիկին դիմաց դյուղացին վեց
ամիս հետոք է վերցադաներ երկու ու կես խարզար։
Բացի այդ, իրեն հայտնար ժամանեակ պարտք ստանալու համար
գյուղացին ստիպված էր 2—5 տոկոս էլ կալվածատիրոջ ներ-
կայացուցիլ յորաշիրին տալ²,

Անգրածեցած է անգրագառնալ նաև վարձու աշխատանքի
կիրառման հարցին։ Վարձու աշխատանքը դժուն ՀIX դարի
երկրորդ կեսին մեծ տարածում չէր գտնել։ Բայց արգելն առկա
էին առանձին փաստեր։ Վարձու աշխատանքը հատկապես կի-
րառվում էր տեխնիկական կուլտուրաների մշակման շրջաննե-
րում։ Բաֆահանի և Աստրապատականի որոշ շրջաններում նույն-
պես վարձու աշխատանքը էր օգտագործվում³, Վարձով աշխա-
տող գյուղացու վիճակը երբեմն ավելի լավ էր լինում, քան
հողամաս ունեցող գյուղացու վիճակը⁴։ 70-ական թվական-
ներին Եազրուկի մոտակայքում Մուղան գյուղում հնձող վար-

¹ Л. Ф. Тагранов, Из Общественно-экономических отношений в Персии, СПб, 1909, стр. 55.

² Նոյն տեղում, էջ 44:

³ مصاری ... ص

⁴ АВПР, ф. Главный Архив, д. 11, л. 23.

ձու գյուղացիները ստանամ էին օրական հիգ բաթման ցորեն կամ դարի¹:

* * *

Մենք որոշ մանրամասնությամբ խոսեցինք կալվածատիրական հողերի վարձակալման եղանակների և պայմանների մասին։ Որպեսզի պարզորեն գծագրվի երկրում տիրող տեսքինակ շահագործումը, այժմ համառոտակի տնօրադառնանը խալիսն և իլյաթի հողերի վարձակալման հարցին։

Խայիսն հողերը մեծ մասամբ մշակելու համար վարձով էին տրվում առանձին մարդկանց։ Թայց լինում էին նաև զեպքեր, երբ պետությունը ինքն էր մշակում հողերը։ Օրինակ՝ Եահրութի շրջանում կային խալիսն հողեր, որոնց մի մասը պետությունն էր մշակում ցանելով մոտ 200 խարվար սերմացու, իսկ մյուս մասը վարձով էր տալիս մասնավոր անձանց՝ յուրաքանչյուր շարիբից տարեկան 20 բաթման հացահատիկ ստանալու պայմանով²։

Խայիսն կալվածքների վարձակալման եղանակները առանձապես չեն տարբերվում մասնավոր կալվածքների վարձակալման պայմաններից։ Թայց երբեմն լինում էին ինչու առանձահատկություններ կամ տարբերություններ։ Որպես օրինակ կարելի է նշել Աստրաբադի գավառի պետական հողերի վարձակալման եղանակները։

Աստրաբադի գավառում պետական հողերը մեծ տարածություն էին կազմում։ Պետությունը հողը վարձով էր տալիս գյուղացիներին՝ սահմանված լափի բերքաբաժին ստանալու պայմանով։ Աստրաբադը բրնձի մշակման շրջան էր, թրնջի ցանքսերում վարձակալման պայմանները հատկալին էին։ Հողի տարածության միավորը այստեղ կոչվում էր սղմաթը։ Բրնձի ցանքսի յուրաքանչյուր զսմաթից գյուղացին պետությունը կամ կալվածատիրորդ տալիս էր հինգ խարվար բրինձ։

1. П. Н. Осороðմակօ, Очерки Персии, СПб, 1878, стр. 355.

2 Խոյն տեղում, էջ 211։

Բարեհաշող տարիներին դամաթը տալիս էր բան խարվար րինեի բերք. Դա ցույց է տալիս, որ վարձակալ գյուղացին Հազարիովը կամ պետությանը տալիս էր բերքի մեկ քառորդը. Եթե տարին բարեհաշող Ալիներ, ապա գյուղացին կարող էր գիմել կալվածատիրոջը կամ պետությանը և խնդրել իրենց բերքաբաժինը իշեցնել կիսով չափ. Այն Հողամասերում, որտեղ արհեստական ոռոգում չէր պահանջվում, կալվածատերը կամ պետությունը սաանում էին բերքի մեկ ութերորդը, իսկ մնացածը մնում էր վարձակալ գյուղացւում, որը տրամադրում էր սերմացուն, Հողագործական գործիքները, բանող տավարը և աշխատանքը¹.

Խալիսեները սովորաբար մեկ տարի ժամանակով էին վարձով տրվում. Բայց պատահում էին նաև երկարատև վարձակալման դեպքեր. Օրինակ, Մասուդ Միրզան Ֆարսի նահանգութեատ եղած ժամանակ խալիսեները վարձով էր տվել Ռաշիմ խանին. Գյուղացիների և վարձակալի միջև վարձակալման պայմանները սրոշվում էին նահանգապետի կողմից².

Սրբամն խալիս հողերը վարձով էին տրվում ժառանգուար. Օրինակ, Մազանգարանի գյուղերից Մուլեդիմ և Մորիսուտ խալիսեները նասր էին Դին շահի օրոք վարձով էին տրվել Միրզա Աղախանին և Ահմադ խան նավայուն, իսկ նրությ մահից հետո վարձով արգեցին նրանց զավակներին³. Անսարին դրում է, որ XIX դարի երկուորդ կեսին խալիսեները զտեվում էին պետական մորաշիրների անօրինության տակ, որոնք կամ իրենց հսկողությամբ մշակում էին հողը, կամ վարձով էին տալիս միջնորդին. Պատահում էր նաև, որ հողը վարձով էին տալիս հենց հողը մշակող գյուղացիներին⁴. Խալիս հողերը վարձակալող այդ միջնորդները, հասկանալի է, որ իրենք հողը չէին մշակում, այլ վարձով էին տալիս գյուղացիներին.

¹ Баде, Очерки Туркменской земли и юго-восточного прибрежья Каспийского моря, 1890, стр. 138.

² تاریخ سرگذشت مسعودی ۱۷۷۰ ص ۲۲۶

³ سیرنامہ ناصر الدین شاه چهراسان ۱۳۰۲ ص ۲۰۵-۲۰۶

⁴ انصاری ۱۸۹۰ ص ۲۷

որինակ, և նետրութեական իրանում գտնվող Ջոհար զյուղը ոյն-
տությունը վարձով էր տալիս ինչ-որ միջնորդի տարեկան
1200 թումանով։ Վարձակալը իր հերթին հողը վարձով էր տա-
լիս զյուղացիներին՝ բրնձի բերքի կեսը, իսկ ցորենի և զարու-
ից ստանալու պայմանով¹։

Կերիմս Հողերում սերմացում մեծ մասամբ պետությունն
էր տրամադրում²։ Այն դեպքերում, եթե պետությունը զյուղա-
ցուն տալիս էր նաև սերմացու, ապա բերքի մեծ մասը պե-
տությանն էր անցնում և միայն լեշին մասը մնում զյուղա-
ցուն։ Իսկ եթե ամեն ինչ տրամադրում էր զյուղացին, ապա
նու բերքի երկու երրորդը իրեն էր վերցնում և մեկ երրորդը
պետությանը տալիս³։

Սթեյքը, որ ուսումնասիրել է պետական Հողերի վիճակը,
այն կարծիքն է Հայտեում, որ պետական Հողերը մեծ մա-
սամբ անցրի (գեյմի) Հողեր էին։ Մինչևիսկ այն շրջաններում,
որ զյուղառանակառությունը կիսով շափ ոռոգվում էր, ապա
ոռոգվող մասը մասնավոր կալվածատիրական էր, իսկ անցրր-
դի մասը պետական։ Այդ Հողերում մեծ մասամբ սահմանված
ոճնոտա չկարէ ։ Հողը մշակողը իր նախաձեռնությումը էր ոխիսի
դիմում և Հողը վարձակալում։ Ծին նա բերք ստանար, ապա
դրա որոշակի մասը վճարում էր պետությանը որպես զյուղա-
տեսնական Հարկ, իսկ եթե լստանար, ապա բնական է ոչինչ
չէր կարող տալ։ Պետությունը կամ կալվածատերը զյուղացուն
չէին օգնում սերմացուով կամ որևէ ավանուով նա այդ գործը
ձեռնարկում էր ամբողջովին իր պատասխանավորությամբ⁴։

Սիսթանում խալիսն Հողերը վարձակալում էին բերքից
պետությանը մեկ երրորդ բաժին տալու պայմանով⁵։ Պետու-
թյունը խալիսն այդիները նույնպես վարձով էր տալիս տան-

¹ АВПР. Ф. Персия. стол. д. 28, л. 49.

² Հ. Վ. ... ս. اقصاری

³ هاتری و نه دانانی سفرنامه من

⁴ E. Stack, Six Months in Persia, vol. II, p. 251.

⁵ ЦГВИА. Ф. 76, д. 211, п. 251.

ձին մարդկանց Օրինակ՝ 1885 թ. աշուբների վարձակալութիւն
պետությունը ստանում էր աարեկան 6500 թուաման¹:

Թի ի՞նչ պայմաններով էր շահը իր ռողերը վարձակալու պա-
լիս, ընդհանրապես գժվար է որոշել: Սակայն, ըստ երևույթին
ճիշտ է Մորթեզա Հոսեխնի թեհրանքի այն թերթագրուած, թե
քանի որ կալվածատերերի բաժինը ստացված բերքից երանի
բոլոր մասերում միասնակ չէր և դրանք տարբերվում էին
ըստ նահանգների, գավառների և շրջանների, ապա խալիս
և շահի կալվածքների բերթարաժինը նույնպես տարբերվում
էր: Բայց ընդհանուր առմամբ այն կազմում էր բերքի մեկ եր-
րորդից մինչև երկու երրորդը: Որոշ ազրյուրների վկայու-
թյամբ, եթե վարձակալը ինչնին պատճառներով հողը շմշա-
կեր, շահը իրավունք ուներ հողը նրանից վերցնելով՝ տալ ու-
րիշի:

Դրությունը նույնն էր նաև թիուլային կալվածքներում:
Վարամինի շրջանում եղած թիուլային գյուղերում հողը և ջու-
րը պետությունն էր տրամադրում, սերմացուն, տավարը և ոշ-
խառութը՝ գյուղացիները: Այդ գյուղերում բերքը հավասար
բաժանվում էր թիուլայրի և գյուղացիների միջև Վարամինի
գյուղացիները բերթարաժնից բացի յուրաքանչյուր խորվա-
րին մեկ խուման էլ կանխիկ էին աւալիս²:

Եաւ Արդուկ Ազիմի մոտակայքում դանվող Ամինարա-
դում թիուլայրը վերցնում էր բերքի 4/5-ը, որը կազմում էր
400 խորվար բերք և 400 թուաման կանխիկ գրամ³:

Ինչ վերաբերում էր թոշվոր ցեղերի վրազեցրած, այսպես
կոչված, իլլաթի հողերի վարձակալման նշանակիներին, ապա
պետք է ասել, որ այն առանձնապես չէր տարբերվում կալվա-
ծատիրական հողերի վարձակալման պայմաններից:

Թիշտից՝ շրջելով Թախթիարի ցեղերի բնակված շրջա-
նում, պատմում է, որ նա հանդիպել է մի քանի ցեղապետնե-

محمد حسن خان اعتماد سلطنه کتاب اثار و الآثار⁴
تهران ۱۳۰۵ ج ۲۴۴

² مرتضی حسینی تهرانی اصول علم مالیه ... ص ۱۱۶

³ ԱՐԲԱ, ֆ. 76, լ. 213, լ. 2-3.

⁴ Դոյլ տեղամաս:

բի, որոնք երան բացատրել են իրենց մոտ իշխող մշակելի հոգերի վարձակալման եղանակները։ Վաղ ժամանակից որոշ շակի հոգեր զբաղեցվել էին որոշակի ցեղերի կողմից և բաժանվել տարրեր ընտանիքների միջև։ Ծեղերը ունեին մինչև յսկ համապատասխան փաստաթղթեր, որոնք ապահովում էին այդ իրավունքները։ Դրանք ցեղերին տրվել էին բախտիարցի թագավոր Ալի Մարդաս խանի կողմից՝ Նադիր շահի մահվանից հետո ընկած խառն ժամանակաշրջանում։ Այն ցեղերը, որոնք այդպիսի փաստաթղթեր չունեին, այդ հոգերին տիրում էին օգտագործման իրավունքը։ Համարյա բոլոր ցեղերը մշակելի հոգածաներ ունեին և մեծ աշխատանքներ էին տանում գրանք ոռոգելու և բարեկարգելու ուղղությամբ։ Այդ հոգերը մշակելու համար ամեն տարի մի գումար էր վճարվում իլիխանին՝ դրամի կամ անասունի ձևով։ Անասուններին արածոցներու համար զոյություն ուներ եհաստատված կարգի իրավունքը, ըստ որի արուտ պատ էր իլիխանելու տարածությունների համար յուրաքանչյուր ցեղ ուներ իր հատուկ եհաստատված կարգը, որը կարող էր փոխվել միայն իլիխանի հրամանով¹։

Այնուհետև հեղինակը նկարագրում է ցեղերի կյանքի մակարդակը և թշվառ վիճակը։ Նա նշում է Հաշի Թելմուրի շրջակայիշի ժայրահեղ թշվառության մասին և զրոյ, որ ինքը մեծապես ազդված էր բռվոր ցեղերի այդ սարսափելի վիշակից։ Պետությունը սեղմում է երանց և քամում նրանց արյունը։ Հատկապես մեծ ավերածություններ են կատարում նաև անգամաները և տեղական պաշտոնյաները։ Նա օրինակ է բերում Բորուջերի շրջանը և նկարագրում պաշտոնյաների դաժան վերաբերմունքը բռվոր ցեղերի նկատմամբ²։

* * *

Գրակոնության մեջ լայն կերպով քննարկվել է երանի աղորարյին հարաբերությունների հետ կապված մի հարց և,

¹ J. B. Bishop, Journeys in Persia and Kurdistan, vol. II, pp. 9—10.

² Խոյի անդամ, էլ 54—55.

որը տեղի է տվել սրոշ թշուրիմացությունների: Դա իրանական գյուղացու, այսպիս կոչված, ազատ վիճակի և նրա ունեցած անձնումբելի հողամասի հարցն է:

Գյուղացու անձի ազատության մասին հետաքրքրից տեղեկություններ կան ուսւ հեղինակների գրքերում: Մաքսիմովին Վասիլկովսկին, որը շրջել է Արևմտյան Իրանում, գյուղացու այդ իրավումքի մասին այսպիսի մանրամասնություններ է տալիս: Գյուղացին իր ցանկությամբ կարող էր գնալ ուր որ ցանկանար, երբ որ ցանկանար, բայց նա այդ բանը անում էր սովորաբար զիշերը, որպեսզի խուսափի խանի և նրա ժառաների բռնությունները: Գյուղացիները կարող էին նաև բռնի կիրպով հեռացնել խանի հրամանով: Կանխատեսելով այդ հեռավորությունը՝ գյուղացիները գերադասում էին իրենք հեռանալ: Հեռացած գյուղացին կարող էր ժամանակավորապես վերադառնալ, բերքը հավաքել, կազմակատիրոշ բաժինը տալ և նորից գնալ¹: Գյուղացին իրավունք ուներ իր ցանկացածի շատ հողամաս վերցնել, ունիայն նա, դիտակցելով, որ ինչ-քան շատ հաց ունենա, այնքան էլ շատ պետք է տա խանին, վերցնում էր այնքան տարածություն, որ բավարարի իր ապրուտին, իսկ ավելորդ պաշար նա շէր կուտակում: Մաքսիմովիլ-Վասիլկովսկին զայիս է այն եղբակացության, որ իրանի հողազուրկ գյուղացին համենայն դեպք կախման մեջ էր խանից, չեալամատ որ նա ազատ էր զնալու մեկ խանից յլուսի մոռ², բայց նա, մի դաժան կալվածատիրողից հեռանալով, կարող էր ընկենել ավելի վատ խանի հանկը, հեռանարար հանախ ստիպված էր լինում համբերատար համակերպվել իր ժանր վիճակին: Այս բոլորով հանդերձ ամեն տարի յուրաքանչյուր գյուղից մեկ կամ երկու ընտանիք հեռանում էր Դա հանախ կատարվում էր գյուղացու և նոր բնակավայրի խանի նախնական համաձայնությամբ, որից հետո գյուղացին իր ընտանիքով վերաբնակվում էր նոր վայրում: Այսպիս էին հիմնադր-

¹ Максимович-Васильковский, Отчет о поездке по губернаторствам Западной Персии., Тифлис, 1903, стр. 26.

² նույն տեղում, էջ 29:

վում նաև նոր գյուղերը, ըստ որում քանի այդ գյուղերը Նոր էին, խռները նշանակալից գիշումներ էին անում գյուղացիներին: Այդպիսի գյուղերում համախմբվում էին առաջին հերթին համազյուղացիները, ուստի չին գյուղերը աստիճանաբար զատարկվում էին և պատճառ դառնում նրա քայլայմանց:

Թերարը նշում է, որ տասնորդը գանձելու իրավունքը երրորդ անձնավորության վաճառնը մեծ բնու էր դառնում գյուղացու համար: Ստեղծված քառային վիճակում ոչ ոք վստահություն չհմտեր իր իրավունքների նկատմամբ: Գյուղացիների անձնական ազտության և հողերի ֆիսկալ ազատության վրա հիմնված հողօգտագործման ընդունված սիստեմը իրանում մշտական անուրդն էր: Գյուղացին որոշակի հողատարածություն կրաղեցնելով, ուժով պարտադրվում էր կատարելու իրեն պարտականությունները: Բայց նա կարող էր դրանցից ազատվել փախուստով: Եսկը, նրա ներկայացուցիչը կամ նրանից հող ստացած անձնավորությունը կարող էն պահանջել հողատուրք, բայց նրանք ստիպված են հաջող առնել գյուղացիների տրամադրությունները, քանի որ զերշիներին փախուստը նրանց համար սնանկացուցիչ էր:

Համեմատարար ավելի խոր կերպով այս հարցին անցրագրաձեռ է Տիգրանովը նա գրում է, որ շարիաթի օրենքների համաձայն և իրականում մինչև վերջին ժամանակներս գյուղացու անձը եղել է ազատ, հետևաբար նա միշտ էլ մհենակ կամ ընտանիքով կարող էր տեղափոխվել մի տեղից մյուսը: Կամ մինչևսկ ընդհանրապես հնուանալ երկրից², Օրենքի և մինչ մեզ հետաքրքրող ժամանակաշրջանը պահպանված սովորությունների համաձայն մոլորդադարը բացարձակապես չէր կարող գյուղացուն հեռացնել իր մշակած հողից: Հասկանալի է, որ նոր տիպի մուլքագարի առաջին հոգահրից մեկը գյուղացու այդ իրավունքի ոչնչացումն էր: Կալվածատերը

1. В. Берар, Персия и персидская смута, 1912, стр. 262.

2. Л. Ф. Тигранов, Из Общественно-экономических отношений в Персии, СПб, 1909, стр. 3.

կարող էր գլուզացում հեռացնել իր Հողամասից, եթե նա վճարեր այդ Հողամասի կամ, ինչպես այն ընդունված էր առ-վանել, ուժաշալիք, ինչպես նաև դաշտում եղած քանրսի գինը¹:

Բայց Տիգրանովը ավելացնում է, որ մի քանի տասնյակ տարիներ առաջ գյուղացու իրավունքը հողի նկատմամբ, որը հիմնված էր Հոգիոր օրենքների վրա, իսկապես որ անձնու-մխելի էին, թայց այն բանից հետո, եթե Հոգիորականությու-նը ինքն էլ դարձավ Հողատեր, գյուղացին ոչ միայն կորցրեց իր վերջին հենարանը, այլ հենց այդ նույն Հոգիորականությու-նը ինքը սկսեց համախակի խախտել շարիաթի գոգմաների համաձայն գյուղացու ունեցած իրավունքները²: Գյուղացու և մուլգադարի Հողի նկատմամբ ունեցած իրավական հարարե-րությունների փոփոխությունը չեւայած որ սասանեց գյուղացիա-կան տնտեսության հիմքերը, բայց շկարողացավ այն ամբող-ջովին և ամենուրեք ոլնացնել³:

Իրանական աղբյուրները այս Հարցին միանգումայն այլ գնահատական են տալիս:

Թաղի Թաճրամին տերանի գյուղատնտեսության պատմու-թյունը գրքում հաղորդում է, որ իրը նասր էդ Դին շահից առաջ գյուղացիները չեին համարձակվում իրենց գյուղերից հեռանալ, քանի որ կալվածատերերը նրանց հետապնդում էին և բռնի կերպով վերադարձնում: Նա նշում է, որ այդ իրավա-գրիկությունը, իհարկե, ուստական մուժիկների իրավադրկմա-նը լէր հասնում, սակայն զնալով, կալվածատերերի փշխա-նությունը ուժիղանում էր և երանց ունձգությունները ըն-դարձակվում: Թայց ահա նասր էդ Դին շահը գյուղացիներին ազատում է այդ կապանքներից և սահմանում, որ գյուղացի-ները իրավունք ունենան աշխատելու ցանկացած կալվածա-տիրոջ մոտ: Նույնը վերաբերում էր և քոլվորներին, որոնք

1 Նույն տեղում, էջ 22.

2 Նույն տեղում, էջ 24.

3 Նույն տեղում, էջ 22.

իրավունք էին ստանում փոխել իրենց ձմեռանոցը և ամբառ-
նոցը¹:

Ինչպես տեսնում ենք, վերը բերված վկայությունները
չենայած Հակասական են, բայց խոսում են ազրարային հարա-
բերությունների մի շատ կարևոր տոանձնաւութկության մա-
սին, որ գյուղթյուն ուներ Արևելքի մի քանի երկրներում, այդ
թվում և Իրանում: Թե իրականում ինչքանով էր գործնական
իրանական գյուղացու այդ տաղատ վիճակը, իհարկե, դժվար
չէ ասել: Բայց ազրյուրները նշում են գյուղացիների ունեցած
մի շարք կոնկրետ իրավունքների փաստերի մասին:

Օրինակ, ՍՄԵյքը նշում է, որ Զարսի Նահանգում ջրովի
Հոգերը բաժանվում էին գյուղացիների միջև և նրանք իրա-
վունքը ունեին մշտապես օգտագործել այդ հողերը: Եթե որևէ
մեկը մահանար, նրա օգտագործած Հողամասը անցնում էր
ժառանգներին, Այդ Հողամասը միայն այն դեպքում էր արր-
վում ուրիշի, եթե ընտանիքը ընդհանրապես ոչնչանում կայ
հեռանում էր գյուղից: Գյուղացիների այդ իրավունքը առու-
ժամի առարկա լինել է էր կարող², Նույնպիսի վկայությունն է
տայիս միսիոներ Ձերմո Բասիթը նա գրում է, որ գյուղացու
անձնական աղատությունը օրենքով նաևաշված փաստ էր:
Կալվածատերը իրավունք լուսներ վարձակալ գյուղացուն պա-
հել իր կալվածքում, բացի այն դեպքից, եթե այդ մասին պայ-
մանագիր գյուղում ունենար: Գյուղացիները իրավունքը ու-
նեին գնալ ուրիշ գյուղ և հող վարձակալել ուրիշ կալվածա-
տիրողից: Բասիթը գտնում է, որ այս երեսութը հետևանք էր
ընդհանրապես վարձակալ գյուղացիների պակասի՝ Հատկա-
պիս սովոր հաբորդող տարիներին: Նա գտնում է, որ միշտ էլ
այդպիս է եղիլ, Հողագործները բավարար շահով մեծաթիվ
չեին, որպեսզի բավարարենին կապիտալիստների պահանջ-
ները, եթե պարսիկ կալվածատերերին կարելի էր այդպիս
անշանել, կամ թե մասնակցել երկրի բնական հնարավորու-
թյունների զարգացման գործիք³:

¹ تاریخ کشاورزی ایران تهران ۱۳۷۰، ص ۲۷

² E. Stack, Six Months in Persia, vol. II, London, p. 255.

³ J. Bassett, Persia, The Land of the Imams, p. 280.

Մի ուրիշ ազգյուղում կարդում ենք, որ քանի դեռ զյուղացին պարտաճանալորեն վճարում էր Հողատիրոջ բաժինը, իրավունք ուներ այդ Հողամասը մշակել, իսկ նրանից հետո Հողամասը անցնում էր նրա ժառանգներին։ Միայն կալվածատիրոջ բաժինը չամասը անցնում էր նրա ժառանգներին։ Միայն կալվածատիրոջ բաժինը այդ Հողամասը առաջին էր, որ Հողատիրը այդ Հողամասը տալիս էր ուրիշի¹։

Ինչ վերաբերում է զյուղացու ունեցած Հողամասի հարցին, ապա փաստեր կան, որ զինու XIX դարի կեսերին զյուղացին իր կարիքները հոգալու համար ուներ մի կոռոր անձնումիսի մշակելի Հողամաս։ Գյուղացու այդպիսի Հողամաս ունենալու մասին է վկայում, օրինակ, Կորպունը, նա գրում է, որ զյուղացին բացի բնակելի շինություններց, ստունում էր նաև մշակելի Հող, այն էլ այնքան, ինչը ցանկանար և կարողանար մշակել։ Կային նաև այսպիսի դեպքեր։ Վարամինի շրջանի զյուղերում Հողատիրերը զյուղացիներին առանձին փոքր Հողամասեր էին տալիս, որոնք մշակվում էին կալվածատիրոջ տավարով և շրով։ սակայն բերքը ամբողջովին անցնում էր զյուղացուն։ Այդպիսի հողամասերը կոչվում էին սփառաշխատ, այսինքն վարձահատուցում²։

Վիճակը մեծապես փոխվել էր XIX դարի վերջին և XX դարի սկզբին։ Առաջ այս ժամանակ Առաջատականում, ինչպես նաև Բրանի մյուս մասերում զյուղացին այնու իրավունքը շուներ հեռանալ գյուղից՝ առանց կալվածատիրոջ թուլլավության։ Փաստեր կան այն մասին, որ, օրինակ, Մարվի խոնության գյուղացիները գյուղից հեռանալու դեպքում նեթարկվում էին հետապնդման և զաժան կերպով պատժվում էին կալվածատիրոջ կողմից։ Այդպիսի փաստերի կարելի է հանդիպել և երկրի մյուս նահանգներում ու շրջաններում։

Այդ բոլոր զաժանությունները կիրառվում էին ի ցույց մյուս գյուղացիների։ Ընդհանրապես զյուղացու անձնական

¹ Մ. ... Հանրայի Հայոց գույքական սպառապահության մասին հայոց պատմությունները

² Корсун, Военный обзор Персидского передового театра, Тифlis, 1909, стр. 91.

³ ЦГВИА, ф. 76, д. 213, л. 3.

աղատություն հասկացողությունը իրանում, ինարկե, հարուրական է: Ծիշտ է նշում Մաքսիմովիշ-Վասիլկովսկին, որ, չեայած արդ անձնական ազատության, կատարյալ Հռղապրկության պայմաններում հասարակ ժողովրդի ապրուատը միանգամայն կախված էր Հռղատերերից, քանի որ նրանց կենսական պահանջների բավարարությը համեմայն դիպու կատարվում էր այդ Հռղի արտադրանքներից¹:

Դյուղացու անձի ազատության իրավունքը նոր պայմաններում այլևս կիրառվել չէր կարող, քանի որ անհամեմատ մնացել էր նրա կախվածությունը այն Հռղից, որի վրա նա աշխատում էր, հետևաբար և այն Հռղատիրութից, որը ոչ մի միջոց չէր խնայում գյուղացուն կապանքների մեջ զննելու և վերջնականապես իրենից կախման մեջ զցելու ուղղությամբ: Լամբտոնը, ուսումնասիրելով գյուղացու իրավունքների հարցը, դաշիս է այն եղրակացության, որ չնայած դաշարների սրորդ կրօնական աւարության շափով թուլացել էր, բայց զրա փոխարեն ուժինացել էր միահեծանության աւարության արտակարգությունն ունեցավ հասարակական կյանքում, աղօնց Հռղի նկատմամբ ունեցած ընդհանուր վերաբերմունքի և գյուղացու դիրքի վրա: Մի շարք պրակտիկաներ, որոնք անցլացած միայն սովորություններ էին, թագավորական գեկրիտների միջոցով ստացան օրենքի ուժ: Այդ ամենի հետևանքով գյուղացին ավելի կապվեց Հռղին: Տեղական Հռղատերերի և թիուզարեների իրավունքները ընդարձակելու և ամրող իշխանությունը նրանց ձեռքում կենտրոնացնելու տեսքնեցը շարունակվեց դաշարների օրոք: Արդյունքը եղավ գյուղացու ավելի մեծ կախումը կարվածատերերից և խաներից²:

Այս պրոցեսը, անշուշտ, շարունակվեց նաև հետագայում և ինչպես ցույց են տալիս ուսումնասիրությունները, գյուղա-

1. Макеевовиц-Васильковский, Отчет о поездке по губернаторствам Западной Персии, Тифлис, 1903 г., стр. 25.

2. A. K. S. Lambton, Landlord and Peasant in Persia, p. 176.

ցիները գեալով էլ ավելի պրկվեցին իրենց ունեցած այդ
իրավունքներից:

* * *

Իրանի գյուղացիությունը վարում էր դաժան և շարքաշ
կյանք: Նա ստեղծում էր երկրի բարիքները, բայց դրա դիմաց
համարյա ոչինչ չէր ստանում: Ի՞նչարկե, գյուղացիությունը
միատարր չէր. նա ևս որոշ իմաստով շերտավորված էր: XIX
դարի երկրորդ կեսին արդեն պարզորեն կարելի էր զանազա-
նել գյուղացիության հետևյալ շերտերը. նախ՝ գյուղացի ռա-
յաթները, որոնք ֆեռզական կախման մեջ էին հոգատերե-
րից, այնունեան գյուղացի խորդեմալիքները, որոնք ինչ-որ
կտոր հոգամաս ունեին և հետևաբար համեմատաբար բարձոք
վիճակում էին, և վերջապես հոգազուրկ բարտակները, որոնք
կոչվում էին «գարա» և փաստորեն հանդիսանում էին ապա-
գայի բանվորական ուժը: Բայց գյուղացիության մեծագույն
մասը, ի՞նչարկե, գյուղացի ռայաթներն էին:

Ստարերկրյա համփորդները, քաղաքական, ուղղմական
գործիչները և այլնայլ մարդիկ, որոնք մեզ հետաքրքրող ժա-
մանակաշրջանում եղել են նրանում, ամենամռայլ գույներով
են նկարագրել իրանական գյուղացու վիճակը: Թերենք գրան-
ցից մի քանի օրինակ:

Գյուղացիության ժամբ վիճակի նկարագրությամբ հոն-
գես են եկել ցարական Ռուսաստանի առանձին ներկայացու-
ցիներ: Այսպիս, Կայեմը հանապարհորդել է նրան, որպեսզի,
ինչպես ինքն է գրում, ուսումնասիրի նրանում հոգեր ձեռք բե-
րելու նպատակաշարմարությունը, կապիտալ ներդրումների
շահավետությունը և այլն: Խոսելով գյուղացիության վիճակի
մասին, նա գրում է. «Պատվար է ապրում խեղճ ռայաթը, շեա-
յած երկրի հարաբության և հողի բերրիության՝ նրան ուինչ չի
մնում: Դրա համար էլ նա գերազասում է վերջապես սեվել
իռուզ և շորացած մրգով, քան թե աշխատել իրնն ճնշողների
համար և հետապնդվել նրանցից: Ահա ինչու այսքան շատ

Հոգեր մնում են անմշակ, իսկ ժողովուրդը, լքելով հոգը, զնում է գնակի Ռուսաստան։¹

Մեր կողմից արդին հիշված Մարսիմովիշ-Վասիլկովսկին զբում է, որ ճանապարհների, օրենքների, լուսավորության բացակայության հետևանքով ժողովուրդը կարծեմ թե սպասելիքներ չեն լուսի, ոչ մի հեռանկար չի տեսնում և չի էլ կարողանում պատկերացնել։ Քացի այդ,— զբում է հեղինակը, — ավելորդ եկամուտը և ավելորդ բարեկեցությունը վատանգավոր էր, որովհետեւ կզանի կամ նահանգապետի ծառաները և տեղի կունենան սաստիկ հարստանարում։²

Իրանական գյուղացու ժանր վիճակը բազմակողմանի և խոր ուսումնասիրել է Օգորոջնիկովը, որ 1871 թ. սովոր հետո ճամփորդել է Աֆղանստանի սահմանից գեղի Թիկրան։ Նա պատմում է, որ իր ճանապարհին համարյա չի հանդիպել ոչ մի երեխայի, բոլորը մահացել էին սովոր։ Ամենուրեք նա տեսնել է վիշտ, մահ և զարնուրելի աղբատություն, փողոցներում ընկած զիակներ, այն էլ վայրի գագանների կողմից հոշոտված, քաղաքներում մամայացած ամրող թաղամասեր և ամրողական գյուղեր։ Սովոր միայն եռորասանում խլել է 120.000, իսկ ամրող իրանում ոչ պակաս քան մեկ ու կես միլիոն մարդ։ Այսպիսի անսովոր սովոր և ընդհանրապես երկրի այս կամ այն մասում համախակի սովոր պատճառը ոչ թե տեղամասերի պակասն էր (այս և հաջորդ ընդգծուները հեղինակինեն են), ինչպես հաճախ փորձում էին հիմնավորել, այլ թանի պետական անների կարգերը։ Գյուղացու ցանքսերը շատ սահմանափակ էին, քանի որ նա լուսներ ոչ մի սրոշակի սեփականություն և գտնվում էր ծայրահեղ դժբախտ վիճակում, նրա վրա էր ընկնում հողային հարկերի և այլ ժանր տուրքերի ամրող բերու, նա էր իր վրա կրում պաշտոնյաների և հոգատերերի ճնշումները։ Հետևաբար սպիր տարվա նամաւունէ պաշտամությունը ոչ մի ննացավորություն չկար։ Եթե

1. Г. Казм, Персидские земли..., Красноводск, 1914, стр. 122.

2. Максимович-Васильковский, Отчет о поездке по губернаторству Западной Персии..., Тифлис, 1903, стр. 28.

նրա մոտ անգամ որոշ ավելցուկ էր մնում, ապա նա այդ շերտաբնում, քանի որ վախենում էր զրկվել նաև դրանից Դարիում է նրանից, որ մասնավոր սեփականությունը նրանում ապահով չէ վարչական մարմինների հաջախակումներից: Հացի այնպիսի պաշարների մասին, որոնք ի վիճակի լինենք ժողովրդին ապահովել անբերրիության ժամանակ, այստեղ դադարիար անգամ չկարու Աերշապես ոռոգման սիստեմի անբավարար վիճակը և փոխադրումների թանկությունը նույնացնա աստիճանաբար իրանի գյուղատնտեսաւթյունը անկման էր հասցեի, մինչդեռ այլ պայմաններում իրանը կարող էր իր հացը արտահանել արտասահման: Պարսիկ պյուղացու իրավունքը կայանում էր միայն հյուծվելու տատիճան ուրիշների սպառն աշխատելը և սովոր մահանալը: Աշխատանքի այսպիսի շահագործումը հարվածել է ժողովրդական հարստության գլխավոր ազդյուրին և երկիրը զցել է աղքատության և զրծախտության հատակը¹:

Հետաքրքիր նյութիր է պարունակում նաև Հետևյալ պեհուցագիրը, որը 1872 թ. օգոստոսի 7-ին Պետերբուրգ է ուղարկվել ռուսական գիլանադիտական ներկայացուցիչների կողմից: Ձեկուցման մեջ առված է, «Պետք է նախատեսել, որ այս տարվա սովոր հաջորդելու է թանկության մի ժամանակաշրջան, եթե անցած ձմեռվա շափ լինի, համենայն դեպուժուավոր զրկաները դեռ բավական մեծ կլինեն և առաջ բերքի մի քանի տարիներ են անհրաժեշտ, որպեսզի ժողովուրդը աղաւավի իր թշվառությունից և այդ հողի վրա կատարվող շարաշահումներից: Երկրի կրած ճնշաժամը վնասնեց նրա ամբողջ տնտեսությանը և շատ ժամանակ ու չանքեր հարկավոր կլինեն, որպեսզի առնտուրն ու արդյունաբերությունը վերականգնվեն, որովհետեւ նրանց ազդյուրները լրջորեն վնասված են: Երեք տարվա ընթացքում ամենաշափավոր վնասատականների համաձայն նրանք կորցրել է մոտ մեկ միլիոն բնակիչ՝ սովոր, թշվառությունից կամ զրկաներից առաջացած զանգան համաճարակներից: Մահացությունը հատկապես

¹ П. Овородников, Очерки Персии, СПб., 1878, стр. 207—208.

բարձր է եղել իսֆահանում, Թերմանում, Յաղցում, Համազանում և Խորասանում¹:

Դյուլացու անասնի ժանր վիճակին են անդրադարձել նաև մի շարք այլ չեղինակները Օրինակ՝ Բոգրովը զբում է, որ վարձակալ գյուղացին, ստացած բերքի երկու երրորդը կամ երեք քառորդը կալվածատիրոջը տալով, մնում էր միանդամայն թշվառ վիճակում։ Պատահում էր, որ անելանելի կարիքը գյուղացուն երրեմն այնպիսի վիճակի էր հասցնում, որ նա հրկիքում էր իր տնակը, կտրում իր ձեռքով իսկ տնկած ծառերը՝ լցանկանալով դրանք թողնել կալվածատիրոջը։ Դյուլացին լրում էր հողը և գնում էր ուրիշ տեր որոնելու կամ էլ միանում էր քոշվորներին, զբաղվում անառնապահությամբ և թափառում Կենտրոնական Իրանի տափաստաններում։ Ընդհանրապես գյուղացու համար գժվար էր հարստանալ։ Հարկանաները նրանից շատ բան էին պահենում։ Իսկ եթե մորինը ավերի գաշտերը, այլև հարկեր վճարելու ոչ մի հարավորություն չի լինում և գյուղացին սևանկանում չի նա ոչ մի տեղ էլ զանդատվել չի կարող, քանի որ գատարանները անարդար են և զածան²։

Սուլյանպիսի վկայություն է տալիս նաև Ալիբերյանովը, ասելով, որ գյուղացիները, հաջարած բերքի երեք քառորդը կալվածատիրոջը կամ պետությանը տալով, ստիպված են լինում լինել իրենց տները և փախչել։ Ոմանք փախչում են զեպի քաղաքները, ավելացնելով քաղաքի տանց արդ էլ բաղմաթիվ մուրացկանների թիվը, մյուսները գաղթում են Անդրկովկաս, հատկապես ձկնորսային և նավթային արգյունաբերության, երկաթգծային շինարարության և այլ բնագավառներում աշխատանք որոնելու համար։ Վերջապես Ղարագաղի և Արդարիւի շրջանի մի շարք գյուղերի բնակիչներ փախչում են զեպի շահսմանները, որոնք ընդունելով փախստականներին, բնակեցնում են իրենց հողերում³։

1 АВПР, Главный Архив, V, Аз. д. 20, л. 109.

2 Е. Багров, Персия и персы, М., 1903, стр. 56.

3 П. И. Аверьянов, Отчет о поездке по Северному Азербайджану... в конце 1899 года, Тифлисъ, 1900, стр. 27.

Սկզբանը յուրեւում հղած նյութերը ցույց են տալիս, որ իրանական գյուղացու վիճակը սկսում է ավելի ժանրանալ հատկապես 1880 թվականից, երբ երկրում արտադրվող տարրեր մթերքները, ինչպես բամբակը, բրինձը, մետաքսը և այլն մեծ քանակությամբ երեան եկան եվրոպական շուկաներում, հատկապես Մուսաստանում, և այդ ամենի հետևանքով հողի զինը բարձրացավ։ Նոր հողատերերը՝ առնարականները, հոգնորականները և ուղիշներ՝ հողեր ձեռք բերելով, սկսեցին էլ ավելի ուժգին շահագործել գյուղացիությանը, ավելացնելով հարկերը, տուրքերը և այլն։ Այս նոր շահագործողների գիշատիչ թալանը վերջնականացես հյուծեց գյուղացի ույախնիքներին։

Ինչպես տեսնում ենք, ցարական Մուսաստանի պաշտոնական նորկայացուցիչները, ինչպես նաև առանձին ճամփորդներ ու ուղևորներ դիտել և նկարագրել են Իրանի գյուղացիության շարքաշ կյանքը։ Նրանք նկատել և պատկերովոր նկարագրել են այն անհուսալի և ոչ մարդկային վիճակը, որ այսում էր իրանական գյուղում և, առանձին դեպքերում, մինչեւ իսկ վորոճել են իրանալ նրանց պատճառների մեջ։

Իրանական գյուղացիության շարքաշ կյանքը չի պիտի և եվրոպացի գործիչների ուշադրությունից։

Մինիոներ Ջեյմս Բասեթը¹ 1887 թվականին գրել է՝ «Իրանի ժողովրդի մեծագույն մասը շատ աղքատ է։ Վարձակալ գյուղացիները ամենաազգաւոր դասակարգերն են»². Իսկ իրանական հասարակության լավատեղյակ Քերգոնը գրում է, որ ամենուրեք կարելի էր տեսնել ավերված քաղաքներ, լքված գյուղեր և ամայի շուկաներ։ Ղանաթների երկար դժեր, հասարակական տարրեր կառուցվածքներ, որոնք ոգնում էին մշակելու ընդարձակ շրջաններ, այժմ անկում են

1. М. Павлович, Экономическое развитие и аграрный вопрос в Персии XX века, М., 1921, стр. 24.

2. J. Bassett, Persia, The Land of the Immortals, p. 264.

ապրում, իսկ մի ժամանակ մշակելի լայնատարած հողամասերը, այժմ վերափուլ էն ավազի և քարի:

Բիշովից նույնպես անդրագառում է պյուղացիության ձևեր վիճակին նա դրում է, որ Իրանում ճանապարհորդող անձանց ընդհանուր վճիռը այն է, որ ասդիկար զեկավարումը, ժանր հարկերը, անդական իշխանավորների ազահությունը, ինչպես նաև հաջորդական սովերը բնակչությանը խղճալի աղքատության և թշվառության աստիճանի են հասցրել: Դա անկառիկած վերաբերում էր համարյա ամրող երկրին և հատկապես այն մասերին, որոնց ականատես էր եղալ ինքը: Բիշովից դային է այն հղակացության, որ երկիրը կարիք ունի վարչական և հարկային սիստեմի կատարյալ բարեփոխության՝:

Բարեփոխության մասին խոսել են նաև ուրիշ շատ հեղինակներ:

Դյուլացու դժվարին կյանքի նկարագրությունների կարելի է հանդիպել և պարսիկ հեղինակների գործերում: Նազեմ ոյ Խոյամ Թերմանին իր, մեր կողմից արգելն հիշատակված գրքում, մեշքերում է կատարում Ստամբուլում հրատարակվող պարսկերեն «Ալաթար» թիրթի խմբագրի խոսքերից՝ ուղղված ծխախոռի կոնցիսիայի ընկերության անդամներին: Խմբագիրը՝ անգրագունդով եվրոպական երկրներից վերցրած ստրկացուցիչ պարտքերի հարցին, ասել է: և վերջապես այս պարագը ով ովեար է վերագրանի, եթե ոչ խեղճ ժաղովուրդը, այն էլ եթե ոչ ույաթների ունեցվածքից, ապա էլ որտեղից պետք է տա: Զգիտեմ: զուցի իրենց աշխատանքից կամ իրենց պապերի կուտակումներից: Ո՞չ աստված վկա, ո՞չ Այդ զումարների վերադարձ պետք է կատարվի հողագործների, պյուղացիների, այդ խեղճերի հաշվին:

Հիշարժան են հայտնի հասարակական գործիլ Բարեփառայու 1324 (1906) թ. Եիրազում արտասանած ճառի հանկայալ խոսքերը: Իրանի գժրախտ ույաթը և նրա ընտանիքը գարու

¹ G. N. Curzon, Persia and the Persian Question, vol. II, p. 491.

² J. B. Bishop, Journeys in Persia and Kurdistan, vol. II, p. 188.

نظام الاملاع کرمانی تاریخ پیدادی ایرانیان مجلد اول تهران ³

և հպիպտացորենի հաց է ուսում, որովհազի կարողանա պետական հարկերը վճարելու ո՞չ ռայաթ է մնացել և ո՞չ էլ շահի գանձարանում որևէ բան։ Արգութ' Պաւանի պատմությունը չե՞ց լսել Անցյալ տարի անբերդի տարի էր, բայց յուրաքանչյուր զուշանցի պարտավոր էր երեք ռեյ կամ առաներկու ման ցորեն հարկ տալ Սակայն քանի որ նրանց ի վիճակի չեն վճարել և ոչ ոք էլ երանց դասին չհասավ, նահանգապահար հարկի դիմաց երեք հարյաւր աղբիկներ վերցրեց և յուրաքանչյուրը տասներկու ման ցորենի դիմաց վաճառեց թուրքմեններին։

Ինչպես տեսնում ենք, պարսիկ առաջավոր գործիչները և պատմաբանները չեին կարողանում անտարբեր նայել երկրում տիրող վիճակին և սրտի խոր կսկիծով նկարագրում էին գյուղացու ժանր կյանքը, կալվածատերերի և պաշտոնյաների կողմից երանց նկատմամբ կիրառված ոտեղությունները և քմահանությունները, որոնք անսանլի շափների էին հասնում։

Ինական է, որ այսպիսի անտանելի վիճակ չէր կարելի հանդուրժել ևզ առա իրանի շարքաշ և քայլքայված դյուզացիոնան մեջ առաջացած ուժեղ զժուհությունը ունեցավ իր պոռթկումները, պյուղացիությունը պայքարի ելավ իր ննշողների գիմ։ Այդ պայքարը XIX դարի վերջում իր արտահայտությունը դառնալ հարկերի վճարումից խուսափելու, տարերային պյուղացիական բունակերի, կալվածատերերի դիմ ուղղված խռովությունների, պետական պաշտոնյաների վյան հարձակման և այլքայլ երեսւթերի մեջ։ Այդպիսի բունակերից կարելի է նշել 1886 թվականին տեղի ունեցած խռովությունը Դարագեղի խանության մեջ։ Վլասովը հազորդում է, որ դյուղացիները հարձակվում են շրջանի ղեկավար Մահմեդ Ալի

խանի, գոյակի վրա, ծեծում ևն նրան և մերկ զինակում վանդում Դարագեղից¹.

Ալդպիսի խոշոր բունտ տեղի է ունեցել նաև Թավրիզում՝ 90-ական թվականներին։ Այդ շարժումը տարածվել է նաև Թավրիզի շրջակայթում։ Պոռթկումը սկսել է նրանից, որ 1888 թվականին խոշոր կալվածատերերը հացահատիկի մեծ կուտակում կատարելով, պարենային մեծ զժվարություններ էին ստեղծվել։ Սա, իհարկե, եղակի զեպք չէր։ Դյուզատերերը համարուարհեատականներն բարձրացնում էին հացի գինը քաղաքներում։ Պետությունը ոչ թե պայքարում էր այդ երևույթի զմմ, այլ, ընդհակառակը, շահավետ էր համարում նրանց հետ գործակցել և ալդպիսով ճնշել մասն առևտրականներին, քաղաքական աշխատավորությանը և արհեստավորներին։ Այս ամենը նույնպես անհնանաք մնալ չէր կարող։ Թաղաքանիրում նու պոռթկումներ են առաջանում, որոնց մասնակիցները հարձակուած էին գյուղատերերի տների և հացահատիկի պահանջման վրա և թալանում ամրարներում կուտակված հացահատիկը²։

Այդ տարիներին քաղաքում և գյուղում մզկած պայքարը տարբեր արտահայտություններ և դրանորումներ է ունեցել։ Մեր խնդրից գուրս է տալ այդ շարժումների պատմությունը, սակայն պայքարի գրանորման մասին ընդհանուր գաղափար կազմելու համար բերենք մի քանի փաստեր։

Որոշակի հետաքրքրություն է ներկայացնում երկրի տարբեր մասերում տարածված ռէզիստակիյում առյունք սոցիալ-դեմոկրատական կուսակցության կուլ՛ ուղղված իրանական ժողովրդին։ Կուլի մեջ ասված էր. Իրանի թշվառ մարդիկ համախմբվեցեք, Իրանի աշխատավոր ժողովուրդ, Հողագործ-

1 П. М. Власов, Извлечение из отчета П. М. Власова о поездке по Северным окрестам Хорасана, Сборник материалов по Азии, 1893, LII, стр. 18.

2 Г. Кази, Персидские земли..., Красноводск, 1914, стр. 125.

ներ, գյուղացիներ, աշխատէցնք միավորվել, համախմբվել և ազատվել, փրկվել այս բռնի դաշնաներից¹:

Քիչ շնչ եղել այսպիսի կոչերը այդ տարիներին, որոնք հասկանալի պատճեռներով իրանական հասարակայնության զարգացման այդ շրջանի պայմաններում ոչ միշտ էին բարը ընկույտ և հետառօքներ ունենում: Սակայն փաստը մեռմ է փաստ, որ դրանք եղել են և գյուղացիությանը կոչ են արևի ապստամբության:

Իրանի բազմահազար քայլայված գյուղացիությունը, իրանական քաղաքներում ապրուստի որևէ միքոց չկանելով, ստիպված հեռանում էր երկրից և այլ երկրներում գոյությունը քարշ տալու առաստարան որոնում: Հակարակոր այսպիսի գյուղացիներ հյուսիսային նահանգներից գնում էին զեպի Անդրկովկաս կոտ Միջին Ասիա: XX դարի սկզբներին Աստրապատականից, Գիլանից, Մազանդարանից, Խորասանից, Աստրաբադից և այլ վայրերից ամեն տարի Ռուսաստան էին գնում ոչ պակաս քան 300 հազար մարգ: Այդ գյուղացիության զգալի մասը սեղուատչին աշխատանքի էր զնում, բայց մի մասն էլ ավելի երկար ժամանակով էր բնակվում այդ վայրերում: Այս շփումը ունենում է հսկայական դրական նշանակություն երանի հետագա դարացման համար: Սակայն մենք այս աշխատության մեջ այդ հարցին շնչ անդրադառնա:

Կալվածատերների և պաշտոնյաների մեջումների հետևաներով երկրից հեռանալու պերճ օրինակ է հետևյալ փաստը.

Ռուսական մի թերթի թղթակից 1877 թ. մարտի 19-ին թավրիզից ավարկել է հետևյալ թղթակցությունը: Ղարազադի շրջանի Հայարենակ մի գյուղի բնակչությունը գանգատ է ներկայացնում, որ նրանց գյուղատերը թալանում է, պատժում և խոշտանգում գյուղացիներին: Նրանք հայտնում են պետությանը, որ եթե նա իրենց շպոշտապանի, ապա նրանք ստիպված մտ 200 մարդ կզնան Ռուսաստան: Սահեր դիվանը խոստանում է օգնել և մի հայ պաշտոնյա է ուղարկում Թավրիզից՝

نظام الاسلام کوچانی تاریخ جیداری ایرانیان مجدد اول تهران²

ص ۵۱۹

գյուղացիներին պաշտպանելու համար։ Ընդամենը մեկ ամիս հետո գյուղատերը գալիս է Սահեր գիվանի մոտ և 300 թուման կաշառը տալիս նրան։ Այդ կաշառքից հետո Հայերի պաշտպանությունը նորից հանձնարարվում է գյուղատիրոջը։ որը՝ գյուղ վերազանալով, սկսում է ժողովրդից գանձել այդ 300 թումանը։ Դյուլացիները հավաքվում և գնում են Թավրիզ Սահեր գիվանի մոտ իրենց դատը պաշտպանելու համար¹։

Այսպիսի բազմաթիվ փաստերի կարելի է հանդիպել սկզբնազրուրներում և ժամանակի մամուլի էջերում։

Կառավարության հանդիպ ժողովրդի վերաբերմունքը պարզորշ տրված է «Հարլ օլ Մաթին» թերթի 1900 թվականի հունիսի 16-ի համարում։ Ժողովուրդը, ասված է այնտեղ, պետությունից Հռուաճառաված է և իր գնմքը շուրջ է տվել նրանից։ Երկիրը քայլայված է և ավերակ, գանձարանը դատարկ է, ռանակը անկանոն և անտեր։ Ժողովուրդը հավատացած է, որ պետությունը երկրի և ռայաթի մասին չի մտածում²։

Այս հանգամանքը, անշուշտ, որոշ իմաստով, անհանգըստացնում էր նրանի իշխող շրջաններին, որոնք շատ լավ հականում էին, որ գյուղացիության մասսայական քայլայումից և Շռուացումից կոռումն նաև իրենք, զրկվելով եկամուսների ազրուրից։ Ուստի գյուղացիներին հանգստացնելու և նրանց որամադրությունները փոխելու նպատակով, կառավարությունը գիմում է որոշ առերիս միջցուառումների։

1888 թ. կառավարությունը մի պաշտոնական հայտարարություն է հրապարակում, որը իրը հոչակում էր բոլոր քաղաքացիների ազատություն և նրանց կյանքի ու ունեցվածքի անձինչին լինությունը։

Հայտարարության մեջ ասված էր, որ ներկա ֆիրմանով հայտնվում է պարսիկ ժողովրդին, որ նրանի բոլոր հպատակ-

¹ «Газетные вырезки из русских, английских и немецких газет относительно Персии в 1875—1901 гг. (Библиотека им. Салтыкова Щедрина)». От корреспондента СПб Ведомостей, 19-го марта 1877 года.

² جولای مختین ۱۳ جلد

ները կարող են իրենց կյանքի ու ունեցվածքի նկատմամբ
ազատ և լիիրավ զգալ և առանց վախի ու կաշկանդվածության
տնօրինել իրենց ունեցվածքը։ Նրանք կարող են իրենց կապի-
տալը միացնել, ընկերություններ ստեղծել, գործարաններ,
և անապարհներ կառուցնել և քաղաքակրթություն տարածել։
Իրանի կառավարությունը մեծ ուրախությամբ կընդունի այդ
միջոցառումների իրականացնումը և իր վրա է վերցնում
զրանց հոգանավորությունը։ Աչ ոք իրավունք չունի ուրիշի
կյանքի ու ունեցվածքի նկատմամբ ոտնձգություն կատարել
կամ պատժել պետության հպատակներին։

Սակայն այս հայարարարությունը, ինչպես և կառավարու-
թյան մյուս միջոցառումները մնացին թղթի վրա։ Երկրում
տիրող անիշխանությունը և ապօրինությունները շարունակ-
վեցին մինչև 1905—1911 թթ. սահմանադրական հեղափոխու-
թյունը։

¹ АВПР, Главный Архив, V, Аз, л. 36, л. 53.

Ե Զ Ր Ա Կ Ա Տ Բ Յ Ա Խ Ն Ն Ե Բ

XIX դարի երկրորդ կեսին աստիճանաբար սկսում է Իրանի գյուղատնտեսության մեջ կապիտալիստական հարաբերությունների ներթափանցումը։ Երկրի անտեսության մեջ թեկուզ ստղմնային ձևով մուտք են գրդում հողատիրության կապիտալիստական ձևերը։ Այդ տարիներին շեշտակի կերպով առում է արտաքին տուեաուրը, որը իր հետ բերում է ապրանքային արտադրություն և անհրաժեշտություն է առաջացնում հողային սեփականությունների կուտակումների։ Սկսում է կապիտալի հոսքը դեպի հողագործություն։

Այդ շրջանում Իրանում հողատիրության բնույթի մեջ ամենաաշըրի ընկնող փոփոխությունը մուլքագարական հողատիրության համբնդանուր զարգացումն էր, որը հողի մասնավոր սեփականություն էր և մեծապես տարբերվում էր ֆեոդալական հողատիրությունից։ Առաջային հողագործությունը, անշուշտ, առաջագոր երեսույթ էր Իրանի տնտեսության մեջ և ոգնում էր երկրի ներքին շուկայի հետագա զարգացմանը։ Արդին 80-ական թվականներից նկատվում է քաղաքային խավերի ուժեղ ձգում՝ հողամասեր ձեռք բերելու ուղղությամբ։ Տեղի է ունենում տուեականների և կալվածատերների միաձուլում, ըստ որում տուեականների դերում հանգես են զալիս պաշտոնյաներ, մինչեւսկ հոգնորականներ և այլ խավերի ներկայացուցիչներ։

Ֆեոդալական-ազնվական դասակարգը և Իրանց շահերի պաշտպան շահը նոր պայմաններում այլն ի վիճակի շէին

իսանգարելու անխուսափելի այդ պրոցեսը, ընդհակառակը, երանց իրենք էլ Համակերպվելով նոր պայմաններին, ընդպղիվեցին ընդարձակ Հողային սեփականություններ ձեռք բերելու մըսավաղքին:

Իրանի Հողային Հարստությունների մեջ նշանակալի տեղ էր պրավում պետական կամ խալիսի Հողատիրությունը: Սակայն սկսած XIX դարի երկրորդ կեսից խալիսի Հողատիրությունը կորցնում է իր նշանակությունը, որովհետեւ տարրեր ժամանակներում և առարել նշանակեներով բռնադրաված ու պետական Հողերի ֆոնդը մտած հակայական տարածություններ ընդդրկող խալիսի Հողերը անցնում էին կարվածատերերի ձեռքի: Մի կողմից առանձին մինծառարուստներ, օգտագործելով կենարունական իշխանության թուլությունը յուրացնում էին պետական ընդարձակ կալվածքներ և մյուս կողմից ինքը՝ պետությունը, խոշոր զումարների կարիք զգալով, կալվածքները վաճառում էր առանձին մարդկանց և վերածում դրանց մասնավոր սեփականության: Նույնը կատարվեց նաև թիուային Հողերի հետ, եթե սկզբում թիուլը իրենից ներկայացնում էր վարչական, զինվորական կամ այլ ժառարարությունների դիմաց Հողից ստացվող նկամուսը զանձնուու պայմանական իրավունք, առաջ հետագայում այն վերածվեց Հողի պայմանական տիրման իրավունքի, XIX դարի վերջներին վերացած նաև այդ պայմանականությունը և թիուլդարները Հրաժարվեցին ընդհանրապես իրենց պարտականությունները կատարել պետության նկատմամբ: Դարավերջին և XX դարի սկզբին ժառանգական թիուլը արգեն դարձել էր ընդունված և թիուլդարները փաստորեն վերածվել էին Հողատիրերի: Իրերի փոփոխված այդ փաստական վիճակը հետագայում իր իրավական արտացոլումը գտավ քաղաքացիական օրենսդրություն: XIX դարի երկրորդ կեսին դեռևս շարունակում էին շոշափելի շափեր կազմել մզկիթապատկան կամ զատկային Հողերը: Բայց զարավերջին այդ Հողերի մեծ մասը նույնպես անցան մասնավոր անձանց սեփականության ներքու: XIX դարի երկրորդ կեսին երկրում տեղի ունեցած սոցիալ-տեսական տե-

դաշտարժերը չէին կարող շանդրադառնալ նաև խորդեմալեքացին կամ մանր կալվածատիրական սեփականության վրա: XIX դարի երկրորդ կեսին խորդեմալեքների կազմը արմատապիս փոփոխության է հնթարկվում, առաջանում է մանր կալվածատերների նոր խումբ, որը դուրս էր եկել առևտրականների, Հոգևորականների, պաշտոնյանների և վաշխառուների խավերից:

XIX դարի երկրորդ կեսին հարկանշանության գործը Բրանում դրված էր միանգամայն անարդարացի ու քմահան հիմքի վրա: Զնայած հարկերի ընդհանուր գումարը կամ նրա մանրամասնությունները Բրանում չէին հրապարակվում, սակայն տարրեր ազրյուրներում եղած տվյալները ցույց են տալիս, որ պետական ամրողջ եկամուտների երկու հիմնական տղրյուր կար, մեկը կոչվում էր մալիաթ, այսինքն սահմանված կամ կանոնավոր հարկերը, իսկ մյուսը սուրածաթ, կամ անկանոն եկամուտները, որոնք ունենում էին իրենց արտահայտման տարրեր ձևերը: Մալիաթի զլիավոր առարկան հռոգային հարկն էր, որի մի մասը գանձվում էր թնամթերքով, իսկ մյուս մասը կանխիկ գրամով: XIX դարի երկրորդ կեսից սկսվում է անցումը նատուրալ հարկերից դրամականին, ըստ որում գրանց համամատնությունը նայած վայրին և ժամանակին փոփոխական էր: Կառավարությունը այլն շահագրգուժած չէր տամնորդը և այլ հարկերը գանձնել թնամթերքով: Որոշ վայրերում մինչևսկ հարկերի շափերը արդեն ցույց էին տըրգում գրամով: Հողային հարկը ընդհանուր առմամբ կազմում էր ամրողջ բերքի մեկ տասներորդ մասը, սակայն ժամանակի ընթացքում այն բարձրացել և հասել էր բերքի մեկ հինգերորդի: XIX դարի երկրորդ կեսին Բրանի սոցիալ-տնտեսական կյանքում տեղի ունեցած տեղաշարժերը ոչ միայն համապատասխան փոփոխություններ մտցրին հողագործության թնադավառում, այլև իրենց արտացոլումը գուան հարկային սիստեմի մեջ: Պետության և մուլգադարների միջև տակա հարկային իրավահարաբերությունները կամ հարկերի բաշխումը փոփոխության էին ճնթարկվում, կապված արտաքին տակորդի:

ամի, Հողատիրական գաստիարդի ձևափոխման և կամ խոչըն
ու զորեղ մուլքագարների Հողերում բնակչության թվի ամի
հետ Սրբի Ֆինանսական և քաղաքական սեանկությունը իրեն
զգացնել տվեց ՅՅ-ական կամ ՅՅ-ական թվականներին, երբ
վերը նշված փոփոխություններին ավելացավ նաև զրածի ար-
ժեցազրկումը, որի հետևանքով և իշավ գանձված հարկների
ընդհանուր արժեքը, Հարկային սիստեմի արխարիկ բնույթը
պետության համար արտակարգ գծվարություններ էր ստեղ-
ծում իր եկամուտների չափը ստույգ կերպով որոշելու և երկրի
բյուջեն կազմելու գործում: Կառավարությունը իր եկամուտ-
ները բարձրացնելու համար ավելացնում էր Հողագործության
միավոր հանգիստացող բռնիշեներից գանձվող Հարկը Աղյուր-
ներում եղած փաստերը հիմք են տալիս եղբակացնելու, որ
այդ կատարվում էր հաճախակի: Հարկադրման չափերը և
եղանակները առընթեր էին երկրի առընթեր մասերում:

Մինչև XX դարի ՅՅ-ական թվականները, երբ Իրանում
ժողովեց պղպարային օրենսգրություն, կալվածատիրություն և պյու-
ղացու փոխհարաբերությունները կարդավորող օրենքները դո-
յություն շունեին: Այդ պատճառով էլ ոչ միայն առանձին հա-
ճանակները, այլև մինչմիսկ առանձին շրջանները ունեին իրենց
սովորություններն ու ընդունված կարգը, որոնք փոփոխության
էին ենթարկվում և առանգային պետերի, խաների և կալվածա-
տերերի հայեցողությամբ: Սակայն, այսուտենայինիվ, Հողի
վարձակալման պայմանների հիմքում, ինչպես առաջ, ընկած
էին գուլանտեսության բաղկացուցիչ էինք առընթերը, չա-
յած, որ ոչ միշտ էր այդ առընթերին հավասար բաժին հաս-
նում: Այն վայրերում, որտեղ ավելի նպաստավոր պայման-
ներ կային Հողագործության համար կամ մշտակվում էին ավելի
արժեքավոր կուլտուրաներ, մուլքագարները դիմանարկը և
անասնահարկը փոխարինում էին դրամային հարկով: Մաս-
նավոր հողատիրության պայմաններում լայն առածում
գտավ Հողը վարձով տալու պրակտիկան: Նոր Հողատիրությունը
մուլքագարի իշխանության, իրավունքների անը և կառավա-
րության իշխանության թուլացումը հասցեում էին այն բանին.

որ մուլքադարները գոյություն ստեղծող Հարաբերությունները փոխում էն իրենց օգտին։ Պետությունը օրինականացնում էր մուլքադարի իրավունքները, մի պրոցես, որը շարունակվեց մինչև XX դարի սկզբները, երբ մուլքադարները վերջնականապես իրավական ձևակերպում են տալիս ժամանակի ընթացքում իրենց ձևոր բերած արտոնություններին։

Պետությունը ոչ միայն ի վիճակի շանդարն արդ պրոցեսը, այլ մինչեւիսկ ստիպված եղավ օրենսդրական ակտերով՝ օրինականացնել ստեղծված դրությունը։ Այսպիսով, Նոր պայմաններում մուլքադարների հանդիս գալը և այլ Հանգամանքներ մեծապես փոխեցին երկրում իշխող ազգաբային Հարաբերությունները։

РЕЗЮМЕ

Вторая половина XIX в. характеризуется зарождением капиталистических отношений в сфере сельскохозяйственного производства Ирана. Это выражается, в частности, в развитии капиталистических форм землевладения, вызванных расширением внешней торговли, а вместе с ней и товарного производства. Зарождение капитализма вело к концентрации земельной собственности и проникновению капитала в сельское хозяйство, в результате чего мулькадарное землевладение, являвшееся частной формой землевладения, становится ведущей формой отношений собственности в сельском хозяйстве. Она стала прогрессивной формой в экономике Ирана и способствовала дальнейшему развитию иранского национального внутреннего рынка. Уже с 70-х годов заметно стремление городских слоев к приобретению земельных участков. Происходит процесс превращения торговцев в помещиков, причем в их роли выступают чиновники, священнослужители и представители других слоев.

Феодально-дворянский класс и защитник их интересов шах в новых условиях уже не в состоянии помешать этому процессу. Напротив, приспосабливаясь к новым условиям, они, в свою очередь, приобретают обширные земельные участки. В земельном фонде Ирана заметное место занимало государственное землевладение (*«халисе»*), однако начиная со второй половины

XIX в. эта форма утрачивает свое значение, так как огромные территории, конфискованные государством в разные времена и разными путями, переходили в частное владение помещиков: с одной стороны, феодальная аристократия, пользуясь слабостью шахской власти, присваивала обширные государственные поместья, с другой,— само государство, нуждаясь в деньгах, продавало свои поместья частным лицам. Это вело к превращению земель халисе в частную собственность.

То же происходило и с тиульными землями. Если ранее тиул представлял собой условную собственность, даруемую государством за военную, административную и иную службу, то впоследствии он фактически превратился в частную собственность. В конце XIX в. исчезла «условность» права тиульдаров на владение землей, они стали ее полными хозяевами, свободными от обязанностей по отношению к государству. Так, к концу XIX началу XX в. тиул уже стал общепринятой формой, и тиульдары в действительности превратились в землевладельцев. Это фактическое положение вещей впоследствии было узаконено и нашло свое отражение в государственном кодексе.

Во второй половине XIX в. немалая часть земельного фонда все еще находилась в вакуфном владении мечетей. Однако к концу века большинство вакуфных земель также перешло в частную собственность—во владение высшего мусульманского духовенства.

Социально-экономические сдвиги, произшедшие во второй половине XIX в., не могли не затронуть мелкопоместную собственность (хордемалеки). В этот период происходят изменения в сфере хордемалеков. Возникает новая группа мелких помещиков, вышедших из среды торговцев, священнослужителей, чиновников и ростовщиков.

Несмотря на эти изменения, во второй половине XIX в. налоговая система в Иране оставалась все еще неупорядоченной. Мы не располагаем данными об общей сумме налогов или же отдельных ее частях в Иране, однако содержащиеся в разных источниках сведения показывают, что существовали две основные формы налогов. Одна из них называлась машиет, которую составляли узаконенные и упорядоченные налоги, а другая — сурсат. Под этим последним названием объединялись все те формы налогового обложения, которые землевладелец мог «взыскать» с крестьян. Основным сбором машиета являлся земельный налог, часть которого взималась натурой, а другая — в виде денежной ренты. Земельный налог составлял $1/10$ часть урожая, но со временем он достиг $1/5$. Начиная со второй половины XIX в. происходит переход от натурального налога к денежному, причем их пропорциональность в разных местах и в разные периоды различна. Правительство уже не заинтересовано в том, чтобы взимать натурой десятину и другие налоги.

Во второй половине XIX в. перемены, произошедшие в социально-экономической жизни Ирана, не только внесли соответствующие изменения в землевладение, но и нашли свое отражение в налоговой системе. Правовые взаимоотношения государства и мулькадарства в области распределения налогов строились в зависимости от роста внешней торговли, изменения состава класса землевладельцев и увеличения населения на землях крупных мулькадаров. Огромное влияние на это имел финансовый и политический кризис, охвативший Иран в 60—70 годах. Он привел к денежной инфляции и снизил общую стоимость налогов. Архантность налоговой системы создавала огромные затруднения при определении прибылей и составлении бюджета страны. Для того,

чтобы увеличить прибыли, правительство повышало налоги, взимаемые с бониче, являвшихся единицей земледелия, не заботясь о последствиях такого ограбления масс крестьянства. Оно не вело даже учета налогов и тем самым создавало условия для всякого рода злоупотреблений чиновников.

До 20-х годов XX в., когда в Иране был принят аграрный законопроект, не было законов, регулировавших взаимоотношения помещика и крестьянина. Поэтому не только отдельные области, но и районы имели свои, узаконенные временем обычай и порядки, которые изменялись по усмотрению местных властей, ханов и помещиков. Однако в основе арендных отношений как и прежде лежали пять составных элементов сельского хозяйства. В местах, более благоприятных для земледелия, или там, где возделывались более ценные культуры, мулькадары заменили подушный налог и налог на скот денежным налогом. В условиях частного землевладения широкое распространение получила практика сдачи земли в аренду. Рост власти нового землевладельца-мулькадара и ослабление правительственной власти давали мулькадарам возможность изменять существовавшие отношения по своему усмотрению и, конечно, в свою пользу. Государство узаконивало права мулькадаров, и это вело к еще большему их усилению.

Таким образом новые условия коренным образом изменили существовавшие прежде в стране аграрные отношения, ускорили процесс первоначального накопления в сельском хозяйстве и рост калигалистического землевладения, являющегося основой сельскохозяйственной экономики современного Ирана.

ՑԱՆԿԵՐ

ԱՆՎԱՆԱՑՈՒՅԹ

- Արտասրագ 220
 Արդաւուզ 183
 Արդաւուզի խան 108
 Աղքակ 194
 Ազում և Մամալիկ 104
 Աթարեկ 104
 Աթարեկ Աղամ 70
 Աշոմեյք 182
 Աշու և Մուլ 228
 Աշի Արագ, 41
 Աշի Ազու 227
 Աշի Մարգարի խան 237
 Ախտար 18, 242
 Ահար 83
 Ահար 74
 Ակս Մանամազ խան 98, 22
 Աղարշակ 182
 Ամերիկա, ամերիկաներ 18, 27, 41,
 90
 Ամինարազ 111, 225
 Ամին և Առային 24, 105, 111
 Ամին Խովութ 108
 Ամին և Չուկ 70
 Ամիր Միք Աղամ խան 100
 Ամիր Թորիք Միրզա Թաջի խան
 87, 118, 153—155, 229
 Անդրիա, անդրիական 17—24, 27,
 39—43
 Անդրիական 247, 253
 Անդրէ 126
 Անուշիր 81, 82, 101, 102, 234
 Անտարաց 184
 Առաք Էք Դուք 55
 Առիս 31
 Առուար 210
 Առուրագ 74, 79, 81, 82, 95,
 133, 151, 166, 226, 229, 252
 Ազկրամենզ 34, 54, 71, 75, 116,
 134, 144, 247
 Ավոտրիս 20
 Ավորուտովան 18, 21, 24, 29, 36,
 37, 48, 68, 72, 74, 85, 86, 111,
 113, 119, 124, 127, 133, 144,
 145, 156, 187, 188, 176—179,
 181, 182, 188, 189, 210—212,
 220—225, 232, 243, 253
 Ավորովան 5, 8, 21, 70, 82, 137
 Ավորովստան 58, 122, 194
 Աբազ 73
 Աբար 40, 63, 227
 Աբգորի 48, 70, 73, 76, 106, 111,
 120, 121, 124, 128, 180, 181,
 228, 247
 Աբզարան 215
 Աբիձիք 22
 Աբումալիս 127
 Աֆղանստան 16, 26, 27, 226, 245
 Ափչար 163

- Բախտարք 126, 192, 206
 Բաբրուի Բազի 39, 52, 103, 129,
 240
 Բազմագ 20, 21
 Բան 16
 Բահկոր Արքու 31, 41, 148
 Բաշտիաթ 183
 Բատմ Ձեյս 43, 57, 188, 190,
 241, 248
 Բատման 183
 Բախու 75
 Բայրու Թիսֆելդիի 51
 Բառամպարտե 26, 137
 Բաղդաս 41
 Բայրին 125
 Բերար 47, 112, 151, 160, 232
 Բերյոզին 149, 164, 165, 194, 195
 Բիշապ 214
 Բիես Ալի Աքրար 64, 192
 Բիզով 29, 45, 46, 60, 87, 92, 224,
 225, 226, 249
 Բիշիստ 171
 Բիբարտ 219
 Բօքով 216, 247
 Բարուիթը 36, 56, 132, 175, 197,
 227
 Բիւզիստն 19, 100, 122, 165,
 166, 170, 228
 Բուզիէր 27, 38, 147, 148, 209

 Յարև 123
 Յենէ 20, 23
 Յիշտ 35—38, 41, 70, 74,
 75, 88, 89, 85, 86, 98, 102,
 108, 109, 110, 118, 124, 128,
 132, 142, 165, 187, 206, 262
 Յիրա 18, 30
 Յոլփայկան 58, 133
 Յարան 210
 Յափայի 183
 Յակարագ 171
- Յալարիյի 150
 Յամազան 124
 Յամզան 73, 86, 129, 133
 Յաղթիե 217
 Յարազոց 17, 175, 250, 251
 Յաղթուց 194
 Յահն 166
 Յափատան 182, 219
 Յական Իրատին 63
 Յալզոռուկի 18, 90
- Յամնեցի 22, 126
 Յըթ 173
 Յարօս 6, 18, 19, 28, 26, 81, 25,
 61, 175, 204, 216, 248
- Յայիեկնուց 214
 Յական 103, 111
 Յարման 124, 219
 Յիշ չո Սուբան 85, 89, 98, 131
 Յիտ չո Գուն 73
 Յիենգի 128
 Յումր 235
- Երեմակ չո Սուբան 101
 Եմին չո Գուն 43
 Եմիր Լուսայուն 82
 Եյն ու Գուն 105
 Եյժան Թեյթ 105, 108
 Եղորու 14
- Քարսիմայի 104, 249
 Քարս 171
 Քարբիզիզան Ջավադ 10, 40
 Քալզան 124
 Քաղիշ 70, 110
 Քամառոց Ղուն 110
 Քամրիզ 11, 14, 21, 22, 36, 37,
 55, 57, 67, 76, 83, 84, 93, 140,
 144, 145, 165, 176, 178, 180,
 181, 251—253

- Բաֆը** 34
Բետրն 16, 21, 22, 42, 48, 49,
 71, 76, 82, 83, 85, 93, 95, 96,
 101, 105, 106, 110, 111, 113,
 118, 121, 123, 140, 143, 151,
 165, 168, 177, 182, 217, 231,
 245
Բագրիյում 218
Բակրարն 320
Բալմելյանց 85
Բալշերկան 188
Բառն 171
Բառքին 73
Բարբերենսերն 210

Բառած Անգամ 120, 121, 123, 170
Բառայիլ Բազմանի 33
Բաբահան 31, 36—38, 40, 69, 70,
 83, 95, 96, 98, 99, 102, 120,
 121, 183, 209, 216, 231, 247
Բայազ 214
Բրաց 76, 183

Լաբարի գոկառը 225
ԼաՇիբան 218
ԼաՇիչան 42, 188
Լամբան 24, 36, 86, 88, 187
Լառիկերգ 123
Լար 214, 217, 218
Լեկպուռոց 207
Լեկչուն 60, 84
Լեշանցան 70, 82
Լոթի Ալի խան 61
Լոկոն 89
Լովիտ 227
Լորիստան 98, 129, 175

Լուզալ 34, 100
Լուբլինորգ 82
Լուժն 98, 129, 151, 188
Լունել 215

Լույր 98, 101, 105, 134
Լոյր 207, 217
Լոյլ 16, 29, 54
Լուսար 98, 133
Լուրանին 15, 26, 27, 36, 37, 50,
 74, 88, 105, 120, 123, 170, 171,
 175, 214, 245, 247, 252
Լուսպատուկ 74, 75, 87, 103, 124,
 172, 189, 190, 194, 210

Կաշխարա 183, 196
Կազմակ 183
Կային 11, 17, 208, 209, 244
Կայիմ Մազման Յարաւանի 227
Կառույցի եղի 67, 210
Կավաս ու Մուլը 73
Կարասան 182
Կողաբեկու 108
Կոսովովսկի 70, 82, 115
Կովկաս 22, 121
Կորոնի 7, 78, 87, 111, 185, 179,
 242

Հարլ ու Մաթին 189, 190, 195,
 203
Համազան 21, 36, 95, 122, 183,
 247
Հանդիք Ուսել Դալման 44, 88, 140
Հայքից 174
Հային 127
Հասանորագ 218
Հարուուց 183
Հաֆեղիկ 74, 210
Հայշ Թեյմուր 227
Հայշ Պոլամ 85
Հայշ Միքայ Արգու Թարին 83
Հայշ Միքայ Ազատի 97, 99
Հայշ Միքայ Թարին Իմամլոյն 83
Հայշ Մողիր Մոլբատան 108
Հայշ Մողայ Իրրանին 83
Հայշ Նայիր 110

- Հայի Միրզա Էմինիկ 85
 Հողի Սովորություն 61, 68
 Հայի Սայան 68
 Հեղմանդ ոչ Մոլը Միր Ալամ խան
 70, 172
 Հեգիստան 16, 20, 21, 26, 37,
 37, 38, 41, 170
 Հեղակցին 20
 Հևամի 28
 Հևանին Բերքանի 58, 71, 236
 Հևանին Աշխատ 151
 Հևանին Մաքքեր 67
 Դագվիլ 81, 85, 98, 102, 133, 182,
 183, 188, 207
 Դարարեր 47, 67, 86, 97, 99, 108,
 112, 177, 179, 208, 211
 Դարձագ 70, 78, 116, 181, 183,
 184, 247, 252
 Դարձան 34, 80, 123, 124
 Դառ 29, 40, 118, 122
 Դալան 171, 181, 200

 Մազրանիյ Յալաւաթիյ Մուզա-
 ֆարի 12
 Մազմակորան 38, 37, 41, 74, 79,
 85, 95, 124, 133, 143, 154, 183,
 184, 227, 234, 252
 Մալային 84, 89, 98, 103
 Մաղրան 108
 Մալբուլ 188
 Մառարմ 69, 183, 215
 Մառնին 123, 226
 Մամուզարան 117
 Մաշտագ 16, 31, 118, 120, 121,
 145
 Մասուդ 175
 Մասուդ Միրզա 234
 Մարան 81, 77, 182
 Մարրին 69
 Մարզուլան 217, 218

 Մարսիմովիչ Վասիլեսկովի 81, 72,
 79, 238, 243, 245
 Մարտ 73, 82, 119, 180, 207, 243
 Մեղմեկն 80, 88, 149
 Մելեհցի 727
 Մելյուրա 208
 Մելքին 73, 111, 187
 Մեզ էղ Դուկ 102
 Մերձկառապին 9
 Մերմի Ասիա 18, 253
 Միրզա Արզու Հասենին 85
 Միրզա Արզու Վահար 98
 Միրզա Արզու Մաժիր 70
 Միրզա Աղախան 53, 234
 Միրզա Հուսեյն խան Մեփահաւար
 118
 Միրզա Ջավազ 11, 83
 Միրզա Թեկոն 65
 Միրզա Թարիմ 207
 Մօստիք էղ Դին շահ 12, 70, 74,
 87, 102, 103, 131, 138, 171
 Մուղնիար Մուր 48, 49
 Մուլ Մոթալի 174
 Մուսամադ Ազի Միրզա 87
 Մուսամադ շահ 86, 97, 99, 118
 Մուսամադ Փալա 83
 Մուտմար 74, 210
 Մոյին Հուկուր 105
 Մոյին ոչ Մուր 82
 Մոշիր էղ Դուկ 178
 Մութոփի Արզուն 58, 135, 161,
 203
 Մութոփի ոչ Մամակը 152
 Մորդար 208
 Մորրան 169
 Մուկիզն 234
 Մուզն 232
 Մուզիրի 122
 Մուսանի 127

 Ճազ 31, 36, 41, 133, 171, 197,
 216, 217, 247, 249

- Նազիր շահ 237
 Նազեմ Անդրեյ 111
 Նազիր ու Խոլաբ Թերմանի, 13, 67,
 68, 104, 169, 229, 249
 Նաբանջ 134
 Նաբազմակ 24, 134
 Նայիմ էս Սովորան 208
 Նայիր 215
 Նամիք 180, 223
 Նարը ու Մուզ 74, 173, 174, 194,
 210
 Նարը էղ Դիկ շահ 38, 39, 41, 50,
 65, 69, 74, 78, 83—87—
 102, 108, 211, 212, 224, 236,
 148, 163, 167, 234, 240
 Նարը էղ Գոչ 168
 Նարը էս Սովորան 81
 Նարը ու Մուզ 73, 123
 Նավարի Առագ խան 224
 Նեզամ էս Սովորան 74
 Նեզամ ու Մուզ 178
 Նեյիզան 39
 Նեյզար 188
 Նիշանիս 218
 Նյու-Յորք 22
 Նուր էս Սովորան 231

 Շագրուզ 124
 Շատ Արգաւ Ազիմ 118, 121, 236
 Շատ Չարմիշ Նեմաթուլա 122
 Շանձկրուզ 121
 Շանկան 80, 127, 180, 247
 Շառերուզ 25, 183, 215, 232, 233
 Շամի ու Մուզ 105
 Շատրույի 127
 Շարիֆարուզ 110
 Շաֆի 188
 Շեյխ Խազալ 74, 75, 190
 Շեյխ Սաֆի 121
 Շիհուդը 28
 Շիրազ 16, 31, 82, 102, 104, 121,
 126, 169, 208, 217, 218, 249
- Շիրզուց 214, 217
 Շուս էս Սալիման 70, 103, 104
 Շուշիմար 194
 Շուստիք 143, 150, 162

 Շորժանալ 84, 123, 214—217
 Շիհաստան 40

 Պավլովիչ 78
 Պարսից ծոց 40
 Պետ Լուսին 209
 Պետրովուզ 246

 Պատրիան 183
 Պատմազման 30, 41, 42, 101, 135,
 148
 Պամշիկայի 85
 Պավարան 168, 208, 217, 218
 Պեհիան 218
 Պուկան 134
 Պուշին 147

 Պաշիմիան 70, 234
 Պաշտամուրազ 53
 Պատենի 183
 Պատ Նորմազ 74, 173, 174, 210
 Պաշտ 31
 Պատուինան 28
 Պաթուներան 230
 Պեկս շահ 75
 Պեկս Պոլի խան 192
 Պիաչի 42
 Պիզ 85
 Պիտիի 29, 117, 157, 201
 Պուշտոր 188
 Պուշտոն 113
 Պուտաստան, պուտան 15—17,
 20—27, 36, 38, 41, 44, 77,
 108, 148, 177, 208, 244, 245,
 248, 252

Անուլում 178
Ասրդնար, 25, 171
Ասկեղ 212
Ասմառում ոչ Մուր 63
Ասյեղ ոչ Մուր 63
Ասիք չո՛ Դոլ 208
Ասվի 51, 62, 98, 133
Ասրուր 14, 67, 111, 181
Ասր Ասիք 219, 220
Ասրզս 62
Ահլուտիկիր 58
Ահյիդ Խըրամի 145
Ահյիդ Համզի 145
Ահյիդ ոչ Մուր Առվիան Ահմագ յան
70, 223
Ահմակ 72, 122, 132
Ահփանքսր Խար ոչ Ասլիթսկ 70
Արեյր Էպվար 61, 98, 146, 163,
215, 216, 219, 235, 241
Ահքարենք 67
Արտագևս 102
Արսիան 18, 33, 70, 99, 100, 125,
171—172, 188, 225
Արբան 219, 220
Արբիրսկ 224
Արրուզ 208
Առուզրուզ 29
Առամբու 18, 245
Առուց 186

Վարամի 105, 236, 242
Վիյա 207
Վլասով 121, 195, 250

Հիգրանգ 5, 72, 78, 80, 155, 188,
205, 220, 229, 240
Հոճարս 24

Ուիլ 37, 39, 40, 51
Ուրժիս 29, 124, 153, 193, 224,
226

Փշոր զսկոր 35
Քաշա 212
Քաշես 61, 218
Քամորուն 183
Քայլու 212
Քային 70, 100
Քայինսի 171
Քանգազսր 184
Քաղաք 16, 40, 67, 126, 133
Քաղեթ և Սովորուն 9
Քարտայի 75
Քազմար 166, 217, 218
Քորուն 69
Քեղու 132
Քելտիկ 208
Քերպինուց 175
Քերպին 20, 21, 27, 32, 33, 43, 51,
98, 121, 132, 133, 135, 139,
140, 148, 168, 212, 231, 196,
242
Քերպին 16, 31, 33, 39, 41, 69,
73, 98, 123, 133, 169—170,
197, 206, 220, 225, 229, 244
Քերմական 23, 29, 93, 98, 132
Քուճանակ 217
Քուդրայի 112
Քուրդիստան 29, 79, 95, 122

Ծաղրովելիքով 44, 181, 185, 231,
245
Ծըրանովիչ 211
Ծամելյան պհուաթյուն 21, 40

Յաբեհուրս 168
Յաբէ Ալի շահ 80, 97, 98, 130,
145, 146, 170
Յալաշիկ 74, 174, 210
Յաւրազ 208, 215, 217
Յարաւան 123
Յարմանեարդս 58
Յարո 33, 56, 89, 70, 72, 85, 95,

103, 104, 120, 133, 151, 153,
154, 206, 207, 211, 215, 219,
224, 241
Հեղիսակը 153
Հերձուն 215
Հերիզոն 84
Հերեմագ 111

Հելատով 85, 86, 163, 164
Հերուզարդ 122, 217, 218
Հերուզով 37
Հորդ 206, 217, 219
Հրանոր 20
Հռոմեն 128

ՀԱՐԿԱՑՄԻ ՏԵՐՄԻՆՆԵՐ

Աշար 145
Ազարեկ 229
Բարբարդ 222, 220
Բեզոր 220
Գարարյիք 197
Գասթանցաղ 222, 229
Ջարյաթ 122
Քասիր 24
Քափավոյն աճակ 160, 161
Խանձումարի 122
Խանձուքի 143
Խեղմաթոնի 163
Խոճա 193
Հոկ ոչ խոկիք 121

Հոկ ոչ հոքունի 154
Մայիսի 141—143, 149, 160, 161,
166, 179, 257
Մաշիաթի մոլ 189
Խոզո 143
Ջեն 142
Սադրե ավարեղ 141
Սարիանեղի 173
Սարրումարի 192
Սարշարին 214
Սարբակ 143
Սազուր 141
Սուրսաթ 141, 185
Փակբութ 227

ԱՊԵՆԱՎԱԿԱՆ և ՎԱՐՉԱԿԱՆ ՏԵՐՄԻՆՆԵՐ

Գարս 244
Գոմբոց 149
Դաֆբարի բանդիմար 108
Էմզազի 184
Էլլեմաիլուն ամյուն 251
Էսեաթ վա հուրբար 142
Քախիիթոր 124
Քերյե 158
Քիուզար 78, 108, 111—114, 221,
225, 243, 256
Քմամզադի 218
Քմամզուն 23, 115, 215
Կազասոր 8, 145, 155

Հոգիծ 46, 51, 54, 58, 184
Ղոզաւ 67
Մալզոր 189
Մառալ 71, 83, 111, 158
Մելին 97
Մեղին բանդիմար 119
Միրոր 213, 216
Միր զազար 191
Մորոչիր 97, 108, 221, 222, 227,
232, 234
Մողախել 50, 51, 141
Մոխավուի 118
Մոշիքիդ 11, 54, 82, 89, 115,
118, 119, 160, 220

- Մութովի 70, 150—152, 158, 182,
 204
 Մուլքագար-մուլքագարություն 5,
 7, 8, 42, 50, 62, 66, 74, 77, 89,
 87, 90, 92, 155, 156, 164, 200,
 203, 221, 222, 223, 239, 240,
 257—259
 Նախ 33, 225
 Շարիաթ 65, 89, 203, 221, 240
 Շեյխ ու իշակ 64
 Շուրոյի Խոհեղիծար 157
 Ռաճար 149
 Ռազմարեյ Նազերի 86
 Ռոյաթ 124, 125, 197, 203, 225,
 228, 229, 244, 248
 Ռիշուկի 158
 Ամառ 83, 225
 Ասրիաթ 155
 Ասրուրի 80, 81, 85—86, 101, 165,
 185
 Արրարիէն զադիր 64
 Արրարիէն շադիր 64
 Անումի 32
 Թիու 56, 76, 100, 101, 108—112,
 114, 164, 178, 226, 258
 Իլլարի 76, 128, 129, 236
 Խալիք 59, 63, 64, 69, 74, 79, 81,
 82, 83, 85—106, 108, 127, 165,
 179, 222—225, 258
 Կայիշակյաթի Բաղրի 36
- Ոյշուկի 158
 Զագար 153
 Աուլի 18
 Ասրզար 180, 207
 Ատրփարան 226
 Ատրփի թամար 134
 Անյիր 138, 174
 Վեհարաբի յալիսելաթ 101
 Վեհարաբի վազային վա սկաֆ 119
 Փազալ 242
 Փելքու 50, 129—141, 164
 Փիլքոր 152
 Քայինուպ 53, 58, 158, 161, 176,
 228
 Զարաշտրաշի 165

ՀՐԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Աճշտի բժումի 158
 Աճշտի Սալբահաթի 158
 Արրարի 80, 81, 85—86, 101, 165,
 185
 Արրարիէն զադիր 64
 Արրարիէն շադիր 64
 Անումի 32
 Թիու 56, 76, 100, 101, 108—112,
 114, 164, 178, 226, 258
 Իլլարի 76, 128, 129, 236
 Խալիք 59, 63, 64, 69, 74, 79, 81,
 82, 83, 85—106, 108, 127, 165,
 179, 222—225, 258
 Կայիշակյաթի Բաղրի 36
- Կայիշակյաթի Զարթի 36, 38
 Կայիշակյաթի չեթեղուի 94
 Կայիշակյաթի Սարթի 36
 Կայիշային Սաւերի Պիլանի 87
 Կայիշակյաթի Վազուզարի 94
 Կորդիմալիք, յորդիմալիքի 58—
 110, 122—124, 127, 244, 257
 Ոյշու 240
 Վակի 79, 85, 86, 99, 114—122,
 170
 Վակին աղի 120
 Վակին իների 120
 Վակին ովլագ 118
 Վակին ովլագի զոքուր 118

ՀՐԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԱՆԱՍՆԱԿԱՆ ՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՈՒԹԿԱՆ ԵՎ ԱՅՆ

- Դիլի 212, 217, 235
 Բախունի 143
 Ղական կամ Ղակաթ 83, 86, 87,
 185, 216, 248
 Ղիւազ 125
- Մագրուկի 143
 Մուզորի 200
 Մոստիաթ 200
 Թալազ 125

Բռնիչե 162, 217, 218, 220	Համեմկ զավարյա շամ 215
Դակդ 67, 214, 219, 220	Հարիբ 123
Ջոշ 25	Հուրի 215
Բաղ 214, 215	Սարս 215
Բահար 180	Սահրա 205
Բաշիթ 214, 215, 217	Սար 191
Հարրա 215, 216	Սիրչե 212
Ղամաթ 233	Սոսա 215

ԴՐԱԿԱՆԱԿԱՆ ՏԵՐՄԻՆՆԵՐ

Դավթար 153, 279	Ռազմա 183
Դավթարի զամբուր ոչ ամալ 180	Սահճը զիվան 252, 253
Դավթարի չողվե շամ 180, 181	Ժեթարչե 181
Դասթար ոչ ամալ 152	Ֆրուտն 81, 128, 262
Դիվանի 88, 102	

Թ Ա Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ա Խ Ե

Դիմում առաջին նոր անդաշարժիք Բրտնի սացիալ-անտառական հյանքում	5
Դիմում եւկառզ Հոգատիրության ձեռքի մեջ առաջացած վափաթության- ները և մասնագոր Հոգատիրության գորգացումը	59
Դիմում եւսուզ Հարհային բազարականությունն ու պրոմական հարկերի ամբ	132
Դիմում լարուրզ Հոգագուագրման և վարժակարգման նոր եղանակները, Հոգային ուսուուն և երա ապատեռակիները	199
Եղանակագրություններ	245
Ամփափում	249
Առներ	284

ՀԱՐԴԱՏԵՍԻ ՄԱՍԻՆԻ ԵՎԱԼԵԱԸ
ՂԱՄԼԵՏ ԱԽԱՑԱԿԱԽՈՎԻ ԲՐԱՅԻ

ԱԳՐԱՐԱՅԻ ՀԱՐԱՐԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԽՐԱՆՈՒՄ
XIX ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ

Տպագրվում է ՀՍՍՀ ԳԱ առենդովիազրյան ակադեմիա
գիտական խունցի պաշտոնական պահանջ

Դաստիարակության ակադեմիա
Հրատանակության պահանջ
Խունցի Ա. Ա. Պատմականաց
Խունցի Շ. Ա. Վագիսարաց
Խունցի Փ. Ա. Վագիսարաց
Խունցի Փ. Ա. Վագիսարաց

Կ.Բ. 03483 Պատճեն՝ 242 Ցուցանիմք՝ 1000
Խւնցի 1108, Երևան, 3097. Համաձայն է պահանջության 10/III 1989 թ.,
ստորագրված է անդամության 11/XI 1990 թ., տարբեր 17,18 մայ.,
Երևան, 11,08 մայ., պահ. 14,50 մատել, պահը 84 × 1081/₃₂
գրքը 1 ռ. 10 կ.

Համաձայն ՍՍՀ ԳԱ պահանջության ստորագր,
Երևան, Քարենիսարան, 34:

5

